

Հավելված  
ՀՀ կառավարության 2010 թվականի  
հունվարի 29-ի N 72-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔ  
(բարձրակարգ բույսեր և սնկեր)**

Երևան  
2009թ.

## **Բացատրագիր**

### **բուսատեսակների գնահատման համար օգտագործված կատեգորիաների վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության բույսերի տեսակների առկա վիճակը գնահատվել է համաձայն Բնության Պահպանության Միջազգային Միության կողմից մշակված սանդղակի («Կարմիր ցուցակի կատեգորիաներ և չափորոշիչներ» IUCN, 2001, տարբերակ 3.1), որին համապատասխան տեսակները գնահատվել են ըստ անհրաժեշտ չափանիշների՝ դրանց թվաքանակի, աշխարհագրական տարածվածության, որակական մի շարք ցուցանիշների, բազմացման առանձնահատկությունների և այլ: Դրա հիման վրա տեսակներին տրվել են հետևյալ կատեգորիաներ.

1.Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR): Տաքսոնը համարվում է «Կրիտիկական վիճակում գտնվող», երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Կրիտիկական վիճակում գտնվող» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

2.Վտանգված տեսակ (EN): Տաքսոնը համարվում է «Վտանգված տեսակ», երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Վտանգված տեսակ» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման շատ բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

3.Խոցելի տեսակ (VU): Տաքսոնը համարվում է «Խոցելի տեսակ», երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Խոցելի տեսակ» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

Հաշվի առնելով այն, որ սնկերի պահպանությունը զգալիորեն տարբերվում է բույսերի պահպանությունից, Կարմիր գրքում ընտրվելիք 40 տեսակի սնկերի նկարագրերը ներկայացվել են մակրոսկոպիկ սնկերի համար միջազգայնորեն ընդունված 6 կատեգորիայով՝ անհետացած /EX/, անհետացման եզրին գտնվող /NT/, կրիտիկական վիճակում գտնվող /CR/, վտանգված /EN/, խոցելի /VU/, տվյալներն անբավարար են վիճակը գնահատելու համար /DD/:

**Բ Ա Ճ Ի Ն Ի**  
**ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԲՈՒՅՍԵՐ**

## ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակների ցանկ

### **Acanthaceae - Ականթազգիներ**

*Acanthus dioscoridys* L.- Ականթ դիոսկորիդեսյանման - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

### **Acoraceae - Խնկեղեգազգիներ**

*Acorus calamus* L.- Խնկեղեգ ճահճային - EN B1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(ii,iii)

### **Adiantaceae - Ադիանտազգիներ**

*Adiantum capillus-veneris* L.- Ադիանտում Վեներայի վարս - VU\* B 1 ab(iii) + 2ab(iii)

### **Alismataceae - Հովվափողազգիներ**

*Sagittaria sagittifolia* L. - Նետախոտ նետախոտանման - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

*Sagittaria trifolia* L.- Նետախոտ եռատերև - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

### **Alliaceae - Մոխազգիներ**

*Allium akaka* S.G.Gmel.ex Schult. et Schult.- Մոխ ակակա - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Allium derderianum* Regel - Մոխ Դերդերիանի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Allium egorovae* M.V.Agab. et Ogan.- Մոխ Եգորովայի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Allium oltense* Grossh.- Մոխ Օլթիի - EN B 1 ab(iii, iv) + 2 ab(iii, iv)

*Allium rupestre* Stev.- Մոխ ժայռի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Allium scabriscapum* Boiss. et Kotschy - Մոխ անհարթացողուն - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Allium struzlianum* Ogan.- Մոխ Շուրուցլի - VU B 1 ab(ii, iii, iv) + 2ab(ii, iii, iv)

*Allium talyschense* Miscz. ex Grossh.- Մոխ թալիշյան - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Allium woronowii* Miscz.ex Grossh.- Մոխ Վորոնովի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Nectaroscrodum tripedale* (Trautv.) Grossh.- Նեկտարասկորդում եռատնաչափ - EN B 1 ab(iii,iv,v) + 2 ab(iii,iv,v)

### **Amaryllidaceae - Շքանարզիզգիներ**

*Galanthus alpinus* Sosn.- Չնձաղիկ ալպիական - EN B1ab(i,ii,iii)+2ab(ii,iii)

*Galanthus artjuschenkoae* Gabrielian - Չնձաղիկ Արստյուշենկոյի - VU B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

*Galanthus lagodechianus* Kuth.- Չնձաղիկ լագոդեխիի - EN B1 ab(i,ii,iii) + 2 ab(ii,iii)

*Sternbergia colchiciflora* Waldst. et Kit.- Շտերնբերգիա շնդեղածաղկային - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

*Sternbergia fischeriana* (Herb.) M.Roem.- Շտերնբերգիա Ֆիշերի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

### **Apiaceae - Հովանոցավորներ**

*Actinolema macrolema* Boiss.- Ակտինոլեմ խոշորաբաժակ - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab (ii, iii, iv)

*Aphanopleura trachysperma* Boiss.- Աննշմարակող անհարթապտուղ - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii, iii)

*Bupleurum kozo-poljanskyi* Grossh.- Եզմակոխ Կոզո-Պոլյանսկու - VU B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Bupleurum pauciradiatum* Fenzl ex Boiss.- Եզմակոխ սակավաճաճանչ - VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

*Bupleurum sosnowskyi* Manden.- Եզմակոխ Սոսնովսկու - VU B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

*Carum komarovii* Karjag.- Քեմոն Կոմարովի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Dorema glabrum* L.- Օշակ մերկ - CR B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii, iv,v)

*Eryngium wanaturii* Woronow - Երնջնակ Վանատուրի - EN B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)

*Falcaria falcarioides* (Bornm. et H.Wolff) H.Wolff - Միբեխ սիբեխսանման - CR\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Ferula szowitsiana* DC.- Նարդես Շովիցի - VU\* B 1ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Froriepia subpinnata* (Ledeb.) Baill.- Ֆրոբիպիա փետրավոր - CR B 1 ab(iii) + 2 ab(iii); D

*Grammosciadium pterocarpum* Boiss.- Գրամոսցիադիում թևապտուղ - EN\* B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v)

*Hohenackeria exscapa* (Stev.) Kos.-Pol.- Հոհենակերիա անցողուն - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Oenanthe silaifolia* M. Bieb.- Փինեծաղիկ գազարատերև - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Opopanax persicus* Boiss.- Ճավշիր պարսկական - CR B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Peucedanum caucasicum* (Bieb.) K.Koch - Մարգագնձու կովկասյան - VU B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Peucedanum pauciradiatum* Tamamsch.- Մարգագնձու սակավաճառազայթ - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

*Seseli leptocladum* Woronow - Կսսլոդեղ նրբաճյուղ - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Smyrniopsis armena Schischk.- Սմիրնիոպսիս հայկական - EN B 1ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Stenotaenia daralaghezica (Takht.) Schischk. - Ստենոտենիա Դարալագչազի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Szovitsia callicarpa Fisch. et Mey.- Շովիցիա գեղապտուղ - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Tamamschjaniella rubella (E.Busch) Pimenov & Kljuykov - Թամամշյանիելա կարմրավուն - CR B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v)

**Araceae - Նվիկազգիներ**  
 Arum conophalloides Kotschy ex Schott - Նվիկ կոնոֆալոսային - EN B1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

**Aristolochiaceae - Արիստոլոխիազգիներ**  
 Aristolochia iberica Fisch. et Mey. ex Boiss.- Արիստոլոխիա վրացական - EN B 1 ab(i,iii,iv) + 2 ab(i,iii,iv)

**Asphodelaceae - Թաղաղուազգիներ**  
 Asphodeline lutea Rechenb.- Թաղաղու դեղին - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Asphodeline taurica (Pall.) Kunth - Թաղաղու դրիմյան - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

**Aspleniaceae - Ասպլենազգիներ**  
 Asplenium woronowii Christ - Ասպլեն Վորոնովի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Asteraceae - Բարդաձողկավորներ**  
 Amberboa amberboi (L.) Tzvel.- Վարդաստերեփուկ սովորական - CR B 1ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Amberboa iljiniana Grossh.- Վարդաստերեփուկ Իլյինի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Amberboa moschata (L.) DC.- Վարդաստերեփուկ մուշկային - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Amberboa sosnovskiy Iljin - Վարդաստերեփուկ Սոսնովսկու - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Amberboa turanica Iljin - Վարդաստերեփուկ թուրանական - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Antennaria caucasica Boriss.- Կատվատոտիկ կովկասյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Anthemis caucasica Chandjian - Անթեմ կովկասյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Calendula persica C.A.Mey.- Վաղենակ պարսկական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Carpesium abrotanoides L.- Ազագու օշինդրանման - EN\* B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Centaurea alexandrii Bordz.- Տերեփուկ Ալեքսանդրի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Centaurea arpensis (Czer.) Wagenitz.- Տերեփուկ արփայի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Centaurea elbrusensis Boiss. et Buhse - Տերեփուկ էլբրուսյան - EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Centaurea erivanensis (Lipsky) Bordz.- Տերեփուկ երևանյան - VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Centaurea leuzeoides (Jaub. et Spach) Walp.- Տերեփուկ լեզեանման - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Centaurea phaeopappoides Bordz.- Տերեփուկ ֆեոպապուսանման - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Centaurea rhizocalathium (K.Koch) Tchich.- Տերեփուկ արմատազամբյուղային - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Centaurea schelkownikovii Sosn.- Տերեփուկ Շելկովնիկովի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Centaurea takhtadzianii Gabrielian & Tonjan.- Տերեփուկ Թախտաջյանի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Centaurea vavilovii Takht. et Gabrielian - Տերեփուկ Վավիլովի - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Cephalorrhynchus kirpicznikovii Grossh.- Գլխակտուց Կիրպիչնիկովի - EN B 1 ab(iii) + 2ab(iii); D  
 Chardinia macrocarpa K. Koch - Շարդինիա խոշորապտուղ - VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
 Cichorium glandulosum Boiss. et Huet - Ճարճատուկ գեղձավոր - VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
 Cirsium alatum (S. E. Gmel.) Bobr.- Տատասկ թևավոր - CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii); D  
 Cousinia erevanensis Bornm.- Խոզանափուռ երևանյան - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Cousinia fedorovii Takht.- Խոզանափուռ Ֆյոդորովի - EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)  
 Cousinia gabrieljanae Takht. et Thamanjan - Խոզանափուռ Գաբրիելյանի - EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)  
 Cousinia megrica Takht. - Խոզանափուռ մեդրիի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Cousinia qaradaghensis Rech. fil.- Խոզանափուռ դարաղաղի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Cousinia tenella Fisch. et Mey.- Խոզանափուռ բարալիկ - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Crupina intermedia (Mutel) Walp.- Կերեփան միջանկյալ - VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Doronicum balansae Cavill.- Դորոնիկում Բալանզայի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Echinops polygamus Bunge - Ոգնազլխիկ բազմատուն - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Echinops ritro L.- Ոգնազլխիկ սովորական - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii); D  
 Echinops tournefortii Ledeb. ex Trautv.- Ոգնազլխիկ Տուրնեֆորի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Grossheimia caroli-henricii (Gabrielian et Ditt.) Gabrielian - Գրոսհեյմիա Կարլ-Հենրիի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Gundelia rosea M.Hossain & R.A.Al-Taey.- Կանգար վարդագույն – EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Hieracium pannosum Boiss.- Ծուռակախոտ փրչոտ - EN\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Inula acaulis Schott et Kotschy ex Boiss.- Կղմուխ անցողուն - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Inula aucherana DC.- Կղմուխ Օշեի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Jurinea elegans (Stev.) DC.- Յուրինեա նրբագեղ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Jurinea praetermissa Galushko & Nemirova - Յուրինեա չնկատված - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Lactuca takhtadzhianii Sosn.- Կաթնուկ Թախտաջյանի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Psephellus debedicus (Gabrielian) Gabrielian - Պսեֆելուս դեբեդի - EN B 1 ab(i,ii)+2 ab(i,ii)

Psephellus zangezuri Sosn. - Պսեֆելուս զանգեզուրի - EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Rhaponticoides hajastana (Tzvelev) Agababian et Greuter - Տերեփուկ հայաստանյան - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Rhaponticoides tamanianae (Agababian) Agababian et Greuter - Տերեփուկ Թամանյանի - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Scorzonera gorovanica Nazarova - Խինձ գորովանի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Scorzonera szovitzii DC.- Խինձ Շովիցի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Sonchus araraticus Nazarova et Barsegian - Իշամառղ արարատյան - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Steptorhamphus czerepanovii Kirp.- Ստեպտորամֆոս Չերեպանովի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Steptorhamphus persicus (Boiss.) O. et B.Fedtsch.- Ստեպտորամֆոս պարսկական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Tanacetum zangezuricum Chandjian - Լվածաղիկ Ջանգեզուրի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Tomanthea carthamoides (DC.) Takht.- Տոմանթեա կանճրականման - CR A 2abc; B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii,iv,v); C 1 + 2(i); D

Tomanthea daralaghezica (Fomin) Takht.- Տոմանթեա դարեղեգիսի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Tragopogon armeniacus Kuth.- Մինձ հայկական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Tragopogon collinus DC.- Մինձ բլրակային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Tragopogon tuberosus K. Koch.- Մինձ պալարակիր - VU B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

**Athyriaceae - Չարխտագիներ**

Athyrium discentifolium Tausch ex Opiz.- Չարխտո քանճատերև - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Berberidaceae - Ծորենագիներ**

Leontice armenica Belanger - Առյուծաթաբ հայկական - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Boraginaceae - Գաղտրիկագիներ**

Myosotis propinqua Fisch. et Mey. ex DC.- Անմոռուկ գեղակից - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Nonea polychroma Selvi et Bigazzi - Նոնեա բազմագույնանի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Nonea rosea (Bieb.) Link.- Նոնեա վարդագույն - VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Paracaryum laxiflorum Trautv.- Պարակար նոսրածաղիկ - CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Rochelia cardiosepala Bunge - Ռոխելիա սրտաձևաբաժակ - EN B 1 ab(i,ii,iii,v)+2ab(i,ii,iii,v)

**Botrychiaceae - Ողկուզապտերագիներ**

Botrychium lunaria (L.) Sw.- Ողկուզապտեր կիսալուսնաձև - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Brassicaceae - Խաչածաղկավորներ**

Alyssum hajastanum V. Avet.- Վառվռուկ չայաստանի - EN B 1 ab(ii) + 2 ab(ii)

Arabis laxa Sibth. et Smith - Արաբախոտ փխրուն - CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Asperuginoides axillaris (Boiss. et Hohen.) Rauschert - Բուխինգերա սնուքային - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Crambe armena N. Busch.- Ծովակաղամբ հայկական - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Didymophysa aucheri Boiss.- Ջուխտակ Օշեի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Diptychocarpus strictus (Fisch.) Trautv.- Երկպտղիկ սեղմված - CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Draba araratica Rupr.- Դրաբարուկ Արարատի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Draba hispida Willd.- Դրաբարուկ խոզանավոր - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Erucastrum takhtajanii V.I.Dorof.- Երուկաստրում Թախտաջյանի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Erysimum eginense Bornm. - Չազախոտ էգինյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Erysimum lilacinum E. Steinb.- Չազախոտ կարմրակապույտ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Erysimum macrostigma Boiss. - Չազախոտ խոշորասպի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Eunomia rotundifolia C.A.Mey.- Էվնոմիա կլորատերև - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Hesperis persica Boiss.- Երեքօրնիկ պարսկական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Isatis karjaginii Schischk.- Լրջուն Կարյագիինի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Isatis sevagensis N. Busch - Լրջուն Սևանի - CR B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

- Isatis takhtajanii V.Avet.- Լրջուն Թախտաջյանի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Lepidium lyratum L.- Նվարդակ քնարածն - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Leptaleum filifolium (Willd.) DC.- Նրբախոտ թելասերն - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pachyphragma macrophyllum (Hoff.) N. Busch - Պախիֆրագնա խոշորատերն - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Peltariopsis grossheimii N. Busch.- Վահանակերպ Գրոսհեյմի - CR B1 ab(iii) + 2 ab (iii)  
 Peltariopsis planisiliqua (Boiss.) N.Busch - Վահանակերպ տափակապատիճակ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Physoptychis caspica (Habl.) V.Boczantzeva - Գնդապտուղ կասպիական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pseudoanastatica dichotoma (Boiss.) Grossh.- Կեղծանկաթաթիկ դիխոտոմիկ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pseudovesicaria digitata (C.A.Mey.)Rupr.- Կեղծափուշիկ մատնածն - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Rorippa spaskajae V.I.Dorof.- Բողկուկ Սպասկայի - CR B1 ab(iii)+2ab(iii)  
 Sameraria cardiocarpa Trautv.- Սոնարթջուն սրտապտուղ - CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)  
 Sameraria glastifolia (Fisch. & C.A.Mey.) Boiss.- Սոնարթջուն լրջունատերն - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Thlaspi umbellatum Stev.- Շնկոտեմ հովանոցավոր - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Thlaspi zangezuricum Tzvelev - Շնկոտեմ զանգեզուրի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Zuvanda meyeri Boiss.- Չուվանդա Մեյերի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)
- Caesalpiniaceae - Ցեզալպինազգիներ**  
 Cercis griffithii Boiss.- Հողայածառ Գրիֆիթի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)
- Callitricheaceae - Վարսագեղազգիներ**  
 Callitriche hermaphroditica L.- Վարսագեղ հերմաֆրոդիտ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)
- Campanulaceae - Չանգակազգիներ**  
 Campanula caucasica M.Bieb.- Չանգակ կովկասյան - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Campanula massalskyi Fomin - Չանգակ Մասալսկու - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Campanula minsteriana Grossh.- Չանգակ Մինստերի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Campanula propinqua Fisch. et C.A.Mey.- Չանգակ ազգակից - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Campanula zangezura (Lipsky) Kolak. et Serdjuk.- Չանգակ Չանգեզուրի - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)
- Caryophyllaceae - Մեխակազգիներ**  
 Allochrysa takhtajanii Gabr. et Ditr.- Ալոխրուզա Թախտաջյանի - CR B 1 ab(iii,v) + 2 ab(iii,v)  
 Arenaria brachypetala (Grossh.) T.N.Popova - Որմնարույս կարճաթերթիկավոր - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
 Bufonia takhtajanii Nersesian - Գողոշախոտ Թախտաջյանի - CR B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)  
 Cerastium capillatum I.V.Sokolova - Շնճուկ սագոտ - CR B 1 ab (ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v); D  
 Coccyanthe flos-cuculi L.- Կվվածաղիկ - CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
 Coronaria coriacea (Moench) Schischk.et Gorschk.- Կորոնարիա կաշեկերպ - EN B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
 Dianthus cyri Fisch. et Mey.- Մեխակ քուռի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
 Dianthus grossheimii Schischk.- Մեխակ Գրոսհայմի - EN B 1 ab(i,ii,iii) +2 ab(i,ii,iii)  
 Dianthus libanotis Labill.- Մեխակ Լիբանանի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Gypsophila aretioides Boiss.- Սապնարմատ արեցանման - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Gypsophila stevenii Fisch.et Mey.ex Fenzl - Սապնարմատ Ստենեի - CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
 Minuartia sclerantha (Fisch.et Mey.)Thell.- Մինուարցիա կոշտածաղիկ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Scleranthus perennis L.- Կարծրածաղիկ, կնճռուկ բազմամյա - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
 Silene araxina Trautv.- Ծվծվուկ Արաքսի - EN B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)  
 Silene arenosa K. Koch - Ծվծվուկ ավազուտային - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
 Silene chustupica Nersesian - Ծվծվուկ Խուստուպի - CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,v)  
 Silene eremitica Boiss.- Ծվծվուկ անապատային - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
 Silene meyeri Fenzl. ex Boiss. et Buhse - Ծվծվուկ Մեյերի - EN B 1 ab(i,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)  
 Silene raddeana Trautv.- Ծվծվուկ Ռադդեի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)
- Celastraceae - Իլենազգիներ**  
 Euonymus velutina Fisch.et Mey.- Իլենի թավշային - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)
- Chenopodiaceae - Թելուկազգիներ**  
 Anthochlamys polygaloides (Fisch. et Mey.) Fenzl - Անտոխլամիս կաթնախոտային - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Beta lomatogona Fisch.et Mey.- Դակնդեղ բաժանապտուղ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Beta macrorrhiza Stev.- Դակնդեղ խոշորարմատ - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Bienertia cycloptera Bunge - Բիեննեդցիա շուրջաթև - CR\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Halanthium kulpianum (K.Koch) Bunge - Աղածաղիկ կուլպական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Halocnemum strobilaceum (Pall.) Bieb.- Սարսազան կոնաձև - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Halostachys belangeriana (Moq.) Botsch.- Աղահասկիկ Բելանժեյի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Kalidium caspicum (L.) Ung.-Sternb.- Կալախտոս կասպիական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Microcnemum coralloides (Loscov et Pardo) Font-Quer - Միկրոկնեմոն մարգանանան - EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)  
 Salsola aucheri (Moq.) Bunge ex Iljin - Օջան Օջեի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Salsola soda L.- Օջան սոդակիր - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Salsola tamamschjanae Iljin - Օջան Թամամշյանի - EN B 1 ab(iv) + 2 ab(iv)  
 Salsola tomentosa (Moq.) Spach - Օջան թաղիքային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Colchicaceae - Շնդեղազգիներ**  
 Colchicum goharae Gabrielian - Շնդեղ գոհարի - EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
 Colchicum ninae Sosn.- Շնդեղ Նինայի - EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
 Colchicum umbrosum Stev.- Շնդեղ ստվերային - CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
 Merendera greuteri Gabrielian – Խլոպուզ Գրոյտերի - CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
 Merendera sobolifera Fisch.et Mey.- Խլոպուզ ընձյուղավոր - CR\* B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
**Cornaceae - Հոնազգիներ**  
 Swida iberica (Woronow) Pojark.ex Grossh.- Ճապկի վրացական - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Corylaceae - Տխիլազգիներ**  
 Corylus colurna L.- Արջատխիլենի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Crassulaceae - Թանձրատերևազգիներ**  
 Rosularia chrysantha (Boiss.) Takht.- Վարդակուլ սկեզոց - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Rosularia persica (Boiss.) Berger - Վարդակուլ պարսկական - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Sedum stoloniferum Gmel.- Թանթանիկ ընձյուղակիր - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Sedum tetramerum Trautv.- Թանթանիկ քառաչափ - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Cucurbitaceae - Գդնազգիներ**  
 Citrullus colocynthis (L.) Schrad.- Չմերուկ վայրի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Cupressaceae - Նոճազգիներ**  
 Juniperus sabina L.- Գիհի կազակական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Cyperaceae - Բոշխազգիներ**  
 Carex bohemica Schreb.- Բոշխ բոհեմական - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex capitellata Boiss. et Bal.- Բոշխ մանրագլխիկ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex cilicica Boiss.- Բոշխ կիլիկիական - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex depauperata Curtis ex With.- Բոշխ աղքատացած - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex oligantha Steud.- Բոշխ սակավածաղիկ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex pendula Huds.- Բոշխ կախված - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex phyllostachys C.A.Mey.- Բոշխ տերևահասկային - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Carex pyrenaica Wahlenb ssp. micropodioides - Բոշխ պիրենեյան - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Eriophorum latifolium Hoppe- Կիզխտոս լայնատերև - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Kobresia persica Kuek. et Bornm.- Կորբեզիա պարսկական - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Dipsacaceae - Ակրանազգիներ**  
 Cephalaria nachiczewanica Bobr.- Չիվան նախիջևանի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Dryopteridaceae - Վահանապտերազգիներ**  
 Polystichum braunii (Spenner) Fee – Բանպոս Բրաունի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Polystichum lonchitis (L.) Ruth.- Բանպոս նիզակաման - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Ericaceae - Հավամրգազգիներ**  
 Rhododendron caucasicum Pall.- Մրտավարդ կովկասյան - EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)  
 Vaccinium uliginosum L.- Հապալասենի ճահճային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
**Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ**  
 Andrachne rotundifolia C.A.Mey.- Աննեռուկ կորատերև - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Euphorbia aleppica L.- Իշակաթնուկ հալեպական - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
**Fabaceae - Լոբազգիներ**  
 Argyrolobium biebersteinii P.W.Ball - Արգիրոլոբիում Բիբերշտեյնի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Argyrolobium trigonelloides Jaub.et Spach - Արգիրոլոբիում հաղհամեմավոր - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Astragalus achundovii Grossh.- Գալ Ախունդովի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)



*Astragalus agasii* Manden.- Գազ Աղասու - CR B 1 ab(i,ii,iii) + 2ab(i,ii,iii)  
*Astragalus amblolepis* Fisch. ex Hohen.- Գազ բթաթեփուկ - CR B 1 ab (iii) + 2 ab(iii)  
*Astragalus basianicus* Boiss. et Hausskn.- Գազ բասիանիական - EN B 1ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus bylowae* Elenevsky - Գազ Բիլովայի - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus camptoceras* Bunge - Գազ կորաեղջյուրավոր - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2ab (i,ii,iii,iv)  
*Astragalus campylosema* Boiss.- Գազ կորասերմ - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus commixtus* Bunge - Գազ խառն - CR B 1 ab(i,ii,iii) +2 ab(i,ii,iii)  
*Astragalus corrugatus* Bertol.- Գազ կնճռոտ - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus divaricatus* Boiss.- Գազ չոված - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus eriopodus* Boiss.- Գազ թավոտ - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus globosus* Vahl - Գազ գնդաձև - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus grammocalyx* Boiss.et Hohen.- Գազ խզմզարածակ - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus guttatus* Banks et Sol. - Գազ բծավոր - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus holophyllus* Boriss.- Գազ ամբողջատերև - EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)  
*Astragalus humilis* M.Bieb.- Գազ ցածր - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus karabaghensis* Bunge - Գազ դարաբաղի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus karakusensis* Gontsch.- Գազ կարակուշի - EN B 1ab(i,ii,iii,iv) + 2 ab(i, ii, iii, iv)  
*Astragalus karjaginii* Boriss. - Գազ կարյազինի - EN B 1ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus kirpicznikovii* Grossh.- Գազ Կիրպիչնիկովի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus lunatus* Pall.- Գազ կիսալուսնաձև - CR B 1 ab(i,ii,iii) + 2ab(i,ii,iii)  
*Astragalus massalskyi* Grossh.ex Fed.- Գազ Մասսալսկու - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus montis-aquilis* Grossh.- Գազ արծվասարային - EN B 1 ab(iii) + 2ab(iii)  
*Astragalus ordubadensis* Grossh.- Գազ օրդուբադի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus paradoxus* Bunge - Գազ տարօրինակ - EN B 1ab (i,ii,iii,iv) + 2ab (i,ii,iii,iv)  
*Astragalus prilipkoanus* Grossh.- Գազ Պրիլիպկոյի - EN B 1 ab( i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus refractus* C. A. Mey.- Գազ բեկված - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus saganlugensis* Trautv.- Գազ սողանլուղի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus sangezuricus* Boriss.- Գազ զանգեզուրի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus schelkovnikovii* Grossh.- Գազ Շելկովնիկովի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus schuschaensis* Grossh.- Գազ շուշի - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Astragalus sukaczewii* Derv. et Jelenevsky - Գազ Սուկաչովի - VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus vedicus* Takht.- Գազ վեդու - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus xerophylus* Ledeb.- Գազ չորասեր - VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Astragalus xiphidium* Bunge - Գազ թրածև - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Cicer anatolicum* Alef.- Միտեռ անատոլիական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Colutea komarovii* Takht.- Պայթակենի Կոմարովի - CR B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii,iv,v); C 2a; D  
*Coronilla cretica* L.- Քարաովույտ կրետեական - EN\* B 1ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Glycyrrhiza echinata* L.- Մառուտակ խոզանավոր - VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv).  
*Hedysarum elegans* Boiss. et Huet. - Կուրկուրան հիասքանչ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Hedysarum micropterum* Bunge - Կուրկուրան կարճաթև - VU\* B 1 ab(i, ii, iii) + 2ab (i,ii,iii)  
*Lathyrus cassius* Boiss.- Տավողոռ կասսիայի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii)  
*Lathyrus setifolius* L. - Տավողոռ խոզանատերև - VU\* 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Lathyrus sylvestris* L.- Տավողոռ անտառային - EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Lens ervoides* (Brign.) Grossh.- Ոսպ ոսպնյականման - VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Medicago arabica* (L.) Huds.- Առվույտ արաբական - VU\* B 1ab(iii) + 2ab(iii)  
*Onobrychis hajastana* Grossh.- Կորնգան հայաստանի - EN B 1 ab(i,ii,iii,iv)+2 ab(i,ii,iii,iv)  
*Onobrychis major* (Boiss.) Hand-Mazz.- Կորնգան խոշոր - CR 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Onobrychis meschchetica* Grossh.- Կորնգան մեսխեթական - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Onobrychis takhtajanii* Sytin - Կորնգան Թախտաջյանի - EN B 1 ab (i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.- Գառնառվույտ հայկական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Oxytropis karjaginii* Grossh.- Գառնառվույտ Կարյազինի - EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)  
*Oxytropis lazica* Boiss.- Գառնառվույտ լազիստանյան - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Spaerophysa salsula* DC. - Սֆերոֆիզա աղուտային - VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Trifolium angustifolium* L.- Երեքնուկ նեղատերև - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Trifolium grandiflorum* Schreb.- Երեքնուկ խոշորածաղիկ - VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Trifolium sebastiani* Savi - Երեքնուկ Սեբաստիանի - VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Trigonella astroides* Fisch. et Mey.- Հացհամեմ աստղաձև - EN 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Trigonella capitata Boiss.- Հացհամեմ գլխիկավոր - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Vavilovia formosa (Stev.) Fed.- Վավիլովիա նրբագեղ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Vicia pisiformis L.- Վիկ նրոնաման - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

**Fagaceae - Հաճարագզիներ**  
 Castanea sativa Mill.- Շագանակենի ցանովի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Frankeniaceae - Ֆրանկենիագզիներ**  
 Frankenia pulverulenta L.- Ֆրանկենիա փոշապատ - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Fumariaceae - Ծխարույսագզիներ**  
 Corydalis marschalliana Pers.- Անձխոտ Մարշալի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Corydalis verticillaris DC.- Պոպուլիկ օղակադիր - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Gentianaceae - Բոգազիներ**  
 Gentiana olivieri Griseb.- Բոգ Օլիվյեի - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Lomatogonium carinthiacum (Wulfen) A.Br.- Լոմատոգոնիում կարինտյան - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Geraniaceae - Խորդենագզիներ**  
 Erodium sosnowskyanum Fedor.- Ծայկոտուց Սոսնովսկու - CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
 Geranium albanum Bieb.- Խորդենի արևելա-կովկասյան - EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

**Grossulariaceae - Կոկոռագզիներ**  
 Ribes achurjani Mulk.- Հաղարջենի ախուրյանի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Ribes armenum Pojark.- Հաղարջենի հայկական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Hyacinthaceae - Հակինթագզիներ**  
 Bellevalia longistyla (Miscz.) Grossh.- Բելվալիա երկարառնակ - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Hyacinthella atropatana (Grossh.) Mordak. et Zahar.- Հակինթիկ սառպատականյան - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Muscari pallens (Bieb.) Fisch. - Պապլոր դժգույն - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Ornithogalum gabrielianae Agapova - Աստղաշուշան Գաբրիելյանի - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Scilla mischtschenkoana Grossh.- Սկնասոխա Միսչենկոյի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Scilla rosenii K. Koch - Սկնասոխա Ռոզենի - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Hypericaceae - Սրճուկագզիներ**  
 Hypericum armenum Jaub.et Spach - Սրճուկ հայկական - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(ii,ii,iii)  
 Hypericum eleonora Jelen.- Սրճուկ Էլեոնորայի - CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Hypericum formosissimum Takht.- Սրճուկ գեղատես - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Hypolepidaceae - Հիպոլեպիդագզիներ**  
 Pteridium tauricum V.Krecz.- Արծվապտեր տավրիական - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Iridaceae - Հիրիկագզիներ**  
 Gladiolus dzhavakheticus Eristavi - Թրաշուշան Ջավախքի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Gladiolus hajastanicus Gabrielian - Թրաշուշան հայաստանյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Gladiolus szovitsii Grossh.- Թրաշուշան Շովիցի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Iris atropatana Grossh.- Հիրիկ սառպատականյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Iris elegantissima Sosn.- Հիրիկ նրբագեղ - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Iris grossheimii Woronow ex Grossh. - Հիրիկ Գրոսհեյմի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Iris iberica Hoffm.- Հիրիկ վրացական - CR B 1 ab(iii,iv,v) + 2 ab(iii,iv,v)  
 Iris lineolata (Trautv.) Grossh.- Հիրիկ նեղզայի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Iris lycotis Woronow - Հիրիկ գալլական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Iris musulmanica Fomin - Հիրիկ մուսուլմանական - EN B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii,iv,v)  
 Iris pseudocaucasica Grossh.- Հիրիկ կեղծ կովկասյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Iris sibirica L.- Հիրիկ սիբիրյան - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Juncaceae - Կնյունագզիներ**  
 Juncus acutus L.- Կնյուն սուր - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Luzula forsteri (Smith) DC.- Փայլուկ Ֆորսթերի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Lamiaceae - Ծրբնագզիներ**  
 Dracocephalum austriacum L.- Վիշապագլուխ ավստրիական - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
 Dracocephalum botryoides Stev.- Վիշապագլուխ ողկույզային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Micromeria fruticosa (L.) Druce - Միկրոմերիա թփային - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Nepeta lamiifolia Willd - Կատվաղաղձ խուլեղինջատերև - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Salvia spinosa L.- Եղեսապակ փշոտ - EN\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Salvia suffruticosa Montbr. et Auch. ex Bunth.- Եղեսպակ կիսաբնաշխարհային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
Teucrium canum Fisch. et C.A.Mey.- Լերդախոտ արևելյան - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
Teucrium hyrcanicum L.- Լերդախոտ հիբրանիական - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Lentibulariaceae - Ջրապղնկազգիներ**

Utricularia intermedia Hayne - Ջրապղնկ միջին - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Liliaceae - Շուշանազգիներ**

Fritillaria collina Adam - Արքայածաղիկ բլրակային - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Gagea lutea (L.) Ker Gawl.- Սագասոխոտ դեղին - EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
Rhinopetalum gibbosum (Boiss.) Losinsk.et Vved.- Կնճիթաբերթիկ սասպատավոր - CR\* B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
Tulipa confusa Gabrielian - Վարդակակաչ խճճված - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Tulipa florenskyi Woronow - Վարդակակաչ Ֆլորենսկու - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Tulipa sosnovskiy Achv. et Mirzoeva - Վարդակակաչ Սոսնովսկու - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Tulipa sylvestris L.- Վարդակակաչ անտառային - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,v)

**Linaceae - Կտավատազգիներ**

Linum barsegianii Gabrielian et Dittr. - Կտավատ Բարսեղյանի - CR B 1 ab(ii, iii) + 2 ab (i,ii,iii)

**Lycopodiaceae - Գետնամուշկազգիներ**

Lycopodium selago L.- Գետնամուշկ - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Malvaceae - Փիփերթազգիներ**

Alcea karsiana (Bordz.) Litv.- Տողտավարդ Կարսի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
Alcea sophiae Iljin - Տողտավարդ Սոֆիայի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
Malvella sherardiana (L.) Jaub. et Spach - Մոլոշիկ Ժերարի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Menyanthaceae - Ջրաերեբնուկազգիներ**

Menyanthes trifoliata L.- Ջրաերեբնուկ եռատերև - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Najadaceae - Ջրահարսազգիներ**

Najas minor L.- Ջրահարս փոքր - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Nitrariaceae - Բորակաթուփազգիներ**

Nitraria schoberi L.- Բորակաթուփ Շոբերի - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

**Nymphaeaceae - Հարսնամատազգիներ**

Nuphar lutea (L.) Smith - Կոկոռ դեղին - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
Nymphaea alba L.- Ջրաշուշան սպիտակ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Onagraceae - Ապուզանազգիներ**

Chamaenerion dodonaei (Vill.) Kost. - Նեղտերև Գողոմի - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Ophioglossaceae - Իժալեզվազգիներ**

Ophioglossum vulgatum L.- Իժալեզու սովորական - CR B 1 ab(iii, iv) + 2 ab(iii, iv)

**Orchidaceae - Խողորձազգիներ**

Cephalanthera kurdica Bornm. et Kraenzl.- Եղբորոսին քրդական - VU\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
Corallorhiza trifida Chatel.- Կորալորիզ եռաբաժան - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
Epipogium aphyllum Sw.- Էպիպոգիում անտերև - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Listera ovata (L.) R.Br.- Երկտերևի ձվածև - CR B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
Ophrys apifera Huds.- Սարդակիր մեղվակիր - CR B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v)  
Orchis punctulata Stev. ex Lindl.- Խողորձ կետավոր - VU\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
Orchis stevenii Rehb. f. - Խողորձ Ստենի - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,v)  
Orchis tridentata Scop.- Խողորձ եռատամ - EN\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,v)  
Steveniella satyrioides (Spreng.) Schlechter - Ստեվենիելա սատիրաման - EN B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

**Orobanchaceae - Ճրագախոտազգիներ**

Cistanche fissa (C.A.Mey.) G.Beck - Գևազի հատված - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Cistanche salsa (C.A.Mey.) G.Beck - Գևազի աղուտային - EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Paeoniaceae - Քաջվարդազգիներ**

Paeonia tenuifolia L.- Քաջվարդ նեղատերև - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Platanaceae - Մոսազգիներ**

Platanus orientalis L.- Մոսի արևելյան - EN B 1ab(iii)+2ab(iii)

**Plumbaginaceae - Արճնախոտազգիներ**

Acantholimon caryophyllaceum Boiss.- Ոգնաթուփ մեխակի - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
Acantholimon fedorovii Tamamsch. et Mirzoeva - Ոգնաթուփ Ֆեդորովի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

*Acantholimon festucaceum* (Jaub.et Spach) Boiss.- Ոգնաթուփ շյուղախոտային - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Poaceae - Հացազգիներ**

*Aegilops crassa* Boiss.- Այծակն հաստ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Aeluropus repens* (Desf.) Parl.- Որդանխոտ սողացող - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Aira elegantissima* Schur - Գնկոր նրբագեղ - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Amblyopyrum muticum* (Boiss.) Eig - Բթաթեփուկ անքիստ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Bromopsis gabrielianae* Ogan.- Բրոմոպսիս Գաբրիելյանի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Bromopsis zangezura* Ogan.- Բրոմոպսիս Չանգեզուրի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Elymus transhyrcanus* (Nevski) Tzvelev - Տիփիկ անդրկասպիական - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Enneapogon persicus* Boiss.- Իննաքիստ պարսկական - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Erianthus ravennae* (L.) P. Beauv.- Գեղմնախոտ ռավենյան - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Festuca drymeja* Mert. & W. D. J. Koch - Շյուղախոտ անտառային - VU B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Phalaris paradoxa* L.- Մերինոսախոտ տարօրինակ - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Psilurus incurvus* (Gouan) Schinz et Thell.- Մերկապոչուկ թեքահասկ - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Puccinellia grossheimiana* V. I. Krecz.- Անողնուցուկ Գրոսհեյմի - EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)  
*Rhizocephalus orientalis* Boiss.- Արմատազլխիկ արևելյան - VU\* B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)  
*Sclerochloa woronowii* (Hack.) Tzvelev ex Bor - Կարծրախոտ Վորոնովի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Triticum araraticum* Jacobuz.- Յորեն արարատյան - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Triticum urartu* Tumanian ex Gandilyan - Յորեն ուրարտու - EN B 1 ab(iii)+2ab(iii)

**Polygalaceae - Կաթնախոտազգիներ**

*Polygala urartu* Tamamsch.- Կաթնախոտ ուրարտական - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Polygonaceae - Մատիտեղազգիներ**

*Calligonum polygonoides* L.- Գեղածնկիկ մատիտեղամման - CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)  
*Rheum ribes* L.- Խանձիկ հաղարջի - CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

**Potamogetonaceae - Շերեփուկախոտազգիներ**

*Groenlandia densa* (L.) Fourr.- Գրենլանդիա խիտ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Primulaceae - Գնաբրուկազգիներ**

*Asterolinon linum-stellatum* (L.) Duby - Աստերոլինոն մատղափձև - CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
*Cyclamen vernum* Sweet - Արջտակ զարմանային - VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
*Primula amoena* Bieb.- Գնաբրուկ սրանչելի - VU B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
*Primula cordifolia* Rupr.- Գնաբրուկ սրատերև - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
*Primula vulgaris* Huds. ssp. komarovii - Գնաբրուկ Կոմարովի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
*Primula vulgaris* Huds. ssp. woronovii - Գնաբրուկ Վորոնովի - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

**Pyrolaceae - Սպնդուկազգիներ**

*Orthilia secunda* L.- Օրտիլիա փոքր - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Ranunculaceae - Գորսնուկազգիներ**

*Adonis eriocalycina* Boiss.- Կուժկարուկ բրդածաղկաբաժակային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Adonis wolgensis* Stev.- Կուժկարուկ Վոլգայի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Anemone ranunculoides* L.- Վարդակակաչ գորսնուկային - EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)  
*Clematis vitalba* L.- Հոտոտ խաղողատերև - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Delphinium foetidum* Lomak.- Ոջլախոտ գառշահոտ - VU B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Ranunculus cicutarius* Schlecht.- Գորսնուկ ցիկուտային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Ranunculus lingua* L.- Գորսնուկ երկարատերև - EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
*Ranunculus villosus* DC.- Գորսնուկ մազոտ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Thalictrum isopyroides* C.A.Mey.- Քնձմնձուկ իզոպիրոնման - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Resedaceae - Հափուկազգիներ**

*Reseda globulosa* Fisch. et Mey.- Հափուկ գնդապտուղ - CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

**Rosaceae - Վարդազգիներ**

*Amygdalus nairica* Fed. et Takht. - Նշենի մաիրյան - EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)  
*Crataegus microphylla* K.Koch - Ալոճ փոքրատերև - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Crataegus pontica* K.Koch - Ալոճ պոնտական - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Crataegus szovitsii* Pojark.- Ալոճ Շովիցի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Crataegus tournefortii* Griseb.- Ալոճ Տուրնեֆորի - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Crataegus ulotricha* Pojark.- Ալոճ զանգրամազիկավոր - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Crataegus zangezura* Pojark.- Ալոճ զանգեզուրյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
*Potentilla cryptophila* Bornm.- Մատնունի քարանձավային - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Potentilla erecta (L.) Hampe - Մասնունի ուղիղ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Potentilla porphyrantha Juz.- Մասնունի ծիրանավոր - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pyrus browiczii Mulk.- Տանձենի Բռովիչի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pyrus complexa Rubtzov.- Տանձենի խառնված - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pyrus daralaghezi Mulk.- Տանձենի դարեղեղիսի - EN B 1 ab(iii) + 2ab(iii)  
 Pyrus elata Rubtzov - Տանձենի բարձր - EN B 1 ab (iii) + 2 ab(iii)  
 Pyrus gergerana Gladkova - Տանձենի Գերգերի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pyrus grossheimii Fed.- Տանձենի Գրոսհեյմի - EN B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v)  
 Pyrus hircana Fed.- Տանձենի հիրկանյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pyrus raddeana G. Woronov - Տանձենի Ռադդեյի - EN B 1 ab (ii,iii)+2ab (ii,iii)  
 Pyrus theodorovii Mulk.- Տանձենի Ֆեոդորովի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Pyrus voronovii Rubtzov - Տանձենի Վորոնովի - EN B 1 ab(ii,v) + 2 ab(ii,v)  
 Rubus takhtadzianii Mulk.- Մոշենի Թախտաջյանի - EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)  
 Rubus zangezurus Mulk. - Մոշենի զանգեզուրի - EN B 1 ab(ii) + 2 ab(ii)  
 Sorbus caucasica Zinserl.- Արոսենի կովկասյան - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Sorbus hajastana Gabrielian - Արոսենի հայաստանյան - VU B 1 ab (iii) + 2 ab (iii)

**Rubiaceae - Տորոնազգիներ**

Asperula affinis Boiss. et Huet - Գետնաստղ գեղակից - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Asperula taurina L.- Գետնաստղ կովկասյան - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Cruciata sosnowskyi (Manden.) Pobed.- Կրուցիատա Մոսնովսկու - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Galium valantioides Bieb.- Մակարդախոտ վալանտանման - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Jaubertia szovitzii (DC.) Takht.- Ժորբերցիա Սովիչի - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Leptunis trichodes (J. Gay) Schischk.- Լեպտունիս մազանման - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Salviniaceae - Ծովնոսպազգիներ**

Salvinia natans (L.) All.- Ծովնոսպ լողացող - CR B 1 ab(iii)+2ab(iii)

**Santalaceae - Մանտալազգիներ**

Thesium compressum Boiss.et Heldr.- Թեզիում սեղմված - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Thesium procumbens C.A.Mey.- Թեզիում փռված - EN\* B 1 ab(iii)+2ab(iii)

**Saxifragaceae - Բարբեկազգիներ**

Saxifraga tridactylites L.- Բարբեկ երմասնանի - VU\* B 1 ab(iii)+2ab(iii)

**Scrophulariaceae - Խլածաղկազգիներ**

Chaenorhinum gerense (Stapf) F.Speta - Խենորին գերեյական - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Linaria megrica Tzvelev - Կտավախոտ մեղրու - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Linaria pyramidata (Lam.) Sprmg.- Կտավախոտ բրզաձև - CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)  
 Scrophularia amplexicaulis Benth.- Խլածաղիկ ցողունազիրկ - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Scrophularia atropatana Grossh.- Խլածաղիկ ատրապատականյան - CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
 Scrophularia takhtadzianii Gabrielian - Խլածաղիկ Թախտաջյանի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Verbascum atroviolaceum (Sommier et Levier) Murb.- Խոնդաս մուգ մանուշակագույն - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Verbascum erivanicum E.Wulf - Խոնդաս երևանյան - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Verbascum formosum Fisch.ex Schrank - Խոնդաս հիանալի - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Verbascum gossypium M. Bieb. - Խոնդաս բամբակալի - EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Verbascum megricum (Tzvel.) Huber-Morath.- Խոնդաս մեղրու - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)  
 Verbascum nudicaule (Wydl.) Takht.- Խոնդաս մերկացողուն - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

**Sinopteridaceae - Սինոպտերիդազգիներ**

Cheilanthes pteridioides (Reichard) C.Chr. - Չոքապտեր արծվապտերային - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Smilacaceae - Պարիլյակազգիներ**

Smilax excelsa L.- Պարիլյակ բարձր - EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

**Solanaceae - Մորմազգիներ**

Atropa belladonna L.- Շիկատակ - VU B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)  
 Lycium anatolicum A.Bag.et R.Mill.- Հազազ անատոլիական - EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

**Staphyleaceae - Կոռնազգիներ**

Staphylea pinnata L.- Կոռն փետրավոր - VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Tamaricaceae - Կարմրանազգիներ**

Tamarix florida Bunge - Կարմրան պայծառ - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Tamarix octandra Bunge - Կարմրան ութաւէջ - EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Taxaceae - Կենազգիներ**

Taxus baccata L.- Կենի հատապտղային - VU B 1 ab(iii)+2ab(iii)

**Thelypteridaceae - Տելիպտերազգիներ**

Thelypteris palustris Schott - Տելիպտեր ճահճային - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Thymelaeaceae - Գոճմակազգիներ**

Stelleropsis magakjanii (Sosn.) Pobed.- Ստելերոպսիս Մաղաքյանի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Valerianaceae - Կատվախոտազգիներ**

Centranthus longiflorus Stev.- Խթանաբույս երկարածաղիկ - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Valeriana eriophylla (Ledeb.) Utkin - Կատվախոտ բրդատերև - EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Valerianella kotschyi Boiss.- Աղբաղբուկիկ Կոչիի - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Violaceae - Մանուշակազգիներ**

Viola caucasica Kolenati ex Rupr.- Մանուշակ կովկասյան - CR B 1 ab(iii) + 2 ab(iii)


Angiospermae – Ծածկասերմեր - Покрытосеменные

1. Acanthaceae - Ականթազգիներ - Акантовые

*Acanthus dioscoridis* L.

Ականթ դիոսկորեանման

Акант диоскорейный



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ ոչ մեծ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից փոքր է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, ուղիղ կանգնած ցողունով, 30-40 սմ բարձրությամբ: Տերևները ամբողջական: Պսակը միաշուրթ, ծիրանի-վարդագույն: Ծաղկաբույլը խիտ, երկարավուն: Ծաղկակիցները սրացած, փշոտ-ատամնավոր, հաճախ մանուշակագույն: Շատ գեղազարդային տեսակ է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Գեղամի ֆլորիստիկական շրջանում, Հատիս լեռնանագագաթի ստորոտում: AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է Արևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1600—1700 մ բարձրությունների վրա, քարքարոտ աճելավայրերում, մարգագետնա-տափաստանային բուսականության կազմում, դաշտերի եզրերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, արածեցման, կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Acoraceae – Խնկեղեգազգիներ - Аирные**

**2. Acorus calamus L.**

**Խնկեղեգ ճահճային**

**Аир болотный**



**Կասեզորիա.** EN B 1 ab (i,ii,iii,iv) + 2 ab (ii,iii)

Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկ շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հնագույն ժամանակներում օգտագործվում էր խունկ պատրաստելու համար և հավանաբար աճեցվում էր հատուկ այդ նպատակով: Ներկայումս բնության մեջ տեսակի տարածումը շատ սահմանափակ է: Բնական աճելավայրերը գտնվում են անմիջական ոչնչացման սպառնալիքի տակ՝ տնտեսական գործունեության ակտիվացման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս մինչև 1,5 մ բարձրությամբ, հաստ սողացող կոճղարմատով և երկար մազարմատներով: Տերևները գծային-թրանման, տափակ, թեթևակի դեղնավուն-կանաչ: Ծածկոցը կազմում է սլաքի շարունակությունը, ստորին մասում՝ ցողունանման, վերին մասում՝ տերևանման: Ծաղկաբույլը՝ կողորը, եզրային, մի կողմ թեքված 4-6 սմ երկար., առանց հավելուկի: Ծաղիկները շատ մանր, երկսեռ: Պտուղը՝ չոր հատապտուղ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արևշատ, Մխչյան, Ծաղկունք, Փարաբար գյուղերի շրջակայքում): EOO՝ 180 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Տեսակի ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, մասնավորապես Նախակովկասը, Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Եվրոպան, Ասիան, Սիբիրը, Հեռավոր Արևելքը, Հյուսիսային Ամերիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ.մ. 900-1300 մ բարձրությունների վրա. գետերի ափերին, ճահճացած տեղերում, ռոտզման ջրանցքների երկարությամբ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում է հունիս-օգոստոսին: Հանդիսանում է լայն ճանաչում ունեցող դեղատու բույս, օժտված է անտիսեպտիկ՝ հականեխիչ հատկությամբ: Ծաղկող բույսերը հանդիպում են հազվադեպ: Լավ է բազմանում վեգետատիվ ճանապարհով՝ կոճղարմատների միջոցով:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Աճեցվում է ՀՀ ԳԱԱ-ի բուսաբանության ինստիտուտի Հայաստանի ֆլորայի հողամասում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ ու մոնիթորինգ:



Alismataceae – Հովվափողազգիներ - Частуховые

3. Sagittaria sagittifolia L.

Նետախոտ նետախոտանման  
Стрелолист стрелолистный



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii, iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Համարյա անհետացած է՝ Լոռու սարահարթի լճերի բուսածածկման և Արարատյան հարթավայրի բրնձի դաշտերի ոչնչացման հետևանքով: Վերջին հավաքը իրականացվել է 1960 թ-ին: Տեսակը չի կարող պատկանել EX կատեգորիային, քանի որ պարզ չէ նրա ներկա վիճակը՝ վերջին տարիներին հատուկ որոնումներ չիրականացնելու պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա ջրային կամ ճահճային բույս է ստորգետնյա պալարանման կոճղարմատով: Լողացող տերևները երկարավուն-նշտարած, ձվաձև կամ էլիպսաձև են երկու մոտեցած կարճ բլթակներով. ստորջրյա տերևները՝ նստադիր, թափանցիկ, բուր, վերջրյա՝ նետանման -եռանկյուն: Ծաղկաբույլը պարզ կամ հաճախ ճյուղավորված: Պսակաթերթերը սպիտակ մանուշակագույն եղունգիկով, փոշանոթները մուգ-մանուշակագույն: Պտղիկները կլորավուն, լայն-թևավոր, համարյա ուղիղ կտուցով: Գեղազարդային դեղատու բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում էր Լոռու (Օրան-Լորի) և Երևանի (Սայաթ-Նովա, Սարվանլար) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 110 կմ է: Հայաստանից բացի աճում է Կովկասի տարբեր շրջաններում, ինչպես նաև Եվրոպայում, Հին Միջերկրածովյան ավազանում, Սիբիրում, Ճապոնիայում, Չինաստանում և Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1500 մ բարձրությունների վրա. ճահիճներում, ծանծաղ լճերի, ջրավազանների ափերին, բրնձի դաշտերում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին: Հետերոֆիլ բույս է: Պալարանման գոյացությունները, որոնք ձևով նման են կադիսի և առաջանում են աշնանը տերևածոցերից դուրս եկող ընձյուղների ծայրերին, ուտելի են և երբեմն օգտագործվում են սննդի մեջ մշակված վիճակում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճահիճների չորացման և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հատուկ որոնումներ տեսակի հայտնաբերման նպատակով, իրականացնել հետազոտական աշխատանքներ և մոնիթորինգ:

4. *Sagittaria trifolia* L.  
**Նետախոտ եռատերև**  
**Стрелolist трилистный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Համարյա անհետացած է Լոռու սարահարթի լճերի բուսածածկման հետևանքով: Վերջին հավաքը իրականացվել է 1960 թ-ին: Տեսակը չի կարող պատկանել EX կատեգորիային, քանի որ հատուկ որոնումներ վերջին տարիներին չեն իրականացվել:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա ջրային կամ ճահճային բույս է ստորգետնյա պալարանման կոճղարմատով, առանց լողացող և ստորջրյա տերևների: Վերջրյա տերևները նետանման են, նեղ բլթակներով: Ծաղկաբույլը պարզ կան թույլ ճյուղավորված է: Պսակաթերթերը սպիտակ են, փոշանոթները՝ դեղին: Պտղիկները հակաձվածն են՝ լայն-թևավոր, կտրատված եզրերով, և կարճ, սուր, թեք կտուցով: Գեղազարդային դեղատու բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանում (Օրան-Լորի, Կղին): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Թալիշը, Սև ծովի առափնյա մասը, Աստրախանը, Սիբիրը, Սիջին և Կենտրոնական Ասիան, Իրանը, Հիմալայները, Հնդկաստանը, Հնդկաչինը, Հեռավոր Արևելքը, Ճապոնիան և Չինաստանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1500 մ բարձրության վրա. ճահիճներում, ծանծաղ լճերի և ջրավազանների ափերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին: Պալարանման գոյացությունները, որոնք ձևով նման են կաղինի և առաջանում են աշնանը տերևածոցերից դուրս եկող ընձյուղների ծայրերին, ուտելի են և երբեմն օգտագործվում են սննդի մեջ՝ մշակված վիճակում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հատուկ որոնումներ տեսակի հայտնաբերման նպատակով, իրականացնել հետազոտական աշխատանքներ և մոնիթորինգ:

5. *Allium akaka* S. G. Gmel. ex Shult. & Shult. f.

Սոխ ալակա

Лук акака



**Կաստեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն մեկ լոկալիտետ տեսակի ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված աճելավայրի կորստի հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ *A. akaka* անվան տակ սխալմամբ տրվել է *A. matriculae* Bordz. տեսակը:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Սոխակավոր բույս է 6-12 սմ բարձրությամբ ցողունով: Ծաղկաբույլը կիսագնդաձև կամ լայն փնջաձև է, բազմաժառիկ: Ծաղկապատը աստղաձև կամ ձագարաձև զանգականման, մասերը էլիպսաձև գծային, կլոր կամ գոգավոր ծայրով, խամրած սպիտակ կամ մանուշակագույն-վարդագույն, ծիրանի-մանուշակագույն ճղով: Տերևները 2-3(4) հատ են, (1)2-5 սմ լայնությամբ, երկարավուն-էլիպսաձև, վերևում կտրուկ նեղացող՝ կարճ վեղարաձև ծայրով, եզրերից թույլ ալիքավոր: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Ագարակի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի հանդիպում է

Նախիջևանում, Թալիշում, Արևելյան Անատոլիայում, Հյուսիս-արևմտյան և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-900 մ բարձրությունների վրա, ժայռոտ տեղերում քարաթափվածքների վրա, ֆրիգանանման բուսականության կազմում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին: Դեկորատիվ բույս է:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ Ագարակի շրջակայքում լեռնահանքային արդյունաբերության ընդարձակման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել նոր աճելավայրերի որոնում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակի շրջակայքում:

## 6. *Allium derderianum* Regel

Մոխ Գերդերիանի  
Лук Дердериана



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Գտնվում է տեսակի ընդհանուր արեալի ծայր հյուսիսային հատվածում: Հայտնի են 4 պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: *A. woronowii* տեսակը սխալմամբ տրվում է որպես *A. derderianum*-ի հոմանիշ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխուկավոր բույս: Յողունը 5-10(15) սմ բարձրություն ունի, բարակ, հաճախ կորացած է: Ծաղկաբույր լայն փնջածև կամ կիսագնդաձև է, սակավածաղիկ: Ծաղկապատը աստղաձև-լայն-ձագարաձև, մասերը գծային, գագաթում՝ կլորավուն կամ գոգավոր, կեղտոտ-սպիտակ կամ վարդագույն, ծիրանի-մանուշակագույն ջրով: Տերևները 2 (3), 0,4—1,2 սմ լայնությամբ, գծային, խիստ ալիքավոր ծայրերով, խիստնջածև ոլորված: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Բարգուշատի լեռնաշղթա, լեռնագագաթներ Կապուտջուղ, Խուստուփ, Բաղասար): EOO 400 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (լեռնագագաթ Մոյուխ), Հյուսիսային և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2700-3400 մ բարձրությունների վրա. ժայռոտ, քարքարոտ-խճաքարոտ տեղերում, քարաթափվածքների վրա: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

7. *Allium egorovae* M. V. Agab. & Ogan.

Մոխ Եգորովայի  
Лук Егоровой



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Հայաստանում հայտնի է միայն մեկ լոկալիտետ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է միակ աճելավայրի կորուստ՝ գերարածեցման և պատահականության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ մաս CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխուկավոր բույս է: Յողունը 7-20 սմ բարձրությամբ, ամուր, հաճախ կորացած: Ծաղկաբույլը կիսագնդաձև, բազմաձաղիկ: Ծաղկապատը աստղաձև լայն ձագարաձև, մասերը գծային, վերևում՝ կլորավուն, բութ կամ գոգավոր, կեղտոտ-սպիտակ կամ վարդագույն: Տերևները՝ 3, երբեմն 2-4 հատ, 0,8-3 սմ լայնությամբ, գծային-նշտարաձև, թույլ ալիքավոր եզրերով, հետ թեքված: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Կալեր գյուղի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի սահմաններից դուրս հայտնի են 3 աճելավայրեր Նախիջևանում՝ Չանգեզուրի լեռնաշղթայի վրա:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2300 մ բարձրության վրա. մարգագետիններում: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը գտնվում է նոր ստեղծված «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

8. *Allium oltense* Grossh.

Մոխր Երբի

Лук ольгинский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Վտանգված տեսակ: Գտնվում է ընդհանուր արեալի արևելյան սահմանին: Հայաստանում հայտնի են միմյանցից բավականին հեռու գտնվող չորս լոկալիտետներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ տափաստանների հերկման և արածեցման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ մաս CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխուկավոր բույս է: Ցողունը 30-50 սմ բարձրությամբ: Տերևները տափակ, գծային, խոզանանման ոլորված: Ծաղկաբույլը գնդաձև, բազմածաղիկ: Ծաղկապատը ձվաձև: մասերը նշտարած, սուր, հիմքում՝ սպիտակավուն, ավելի վեր՝ բաց-կանաչավուն-դարչնագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ծիրակի (Ջաջուռի լեռնանցք, Մաստարա, Լանջիկ, Բագրավան, Հացաշեն, Արագած գյուղերի շրջակայք) և Երևանի (Նոր Գեղի և Եղվարդ գյուղերի միջև) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1930 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանի սահմաններից դուրս տարածված է Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1500-2300 մ բարձրությունների վրա, քարքարոտ լեռնային տափաստանում: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ տափաստանների հերկման և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Ջաջուռի լեռնանցքում:

9. *Allium rupestre* Steven  
**Մոխր ժայռի**  
**Лук наскальный**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Գտնվում է ընդհանուր արեալի հարավ-արևելյան սահմանում: Հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնցից մեկը կարող է տուժել կրի արդյունահանման պատճառով: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխուկավոր բույս է՝ 10-30 սմ բարձրությամբ: Տերևները նեղ գծալին, ակոսավոր: Ծաղկաբույր փնջաձև, սովորաբար սակավածաղիկ: Ծաղկապատր զանգականման; մասերը կեղտոտ- սպիտակ կամ կեղտոտ-վարդագույն, ծիրանագույն կամ կանաչ ջրով, երկարավուն-էլիպսաձև, գագաթի մասում հետ թեքված սրածայրով:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Վերին Ախուրյանի (Ամասիա շրջակայք) և Շիրակի (Ջաջուռի լեռնանցք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 60 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի տարածված է Ղրիմում, Մեծ Կովկասում, Կենտրոնական Անդրկովկասում, Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, 1600-2200 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին և կրային ժայռերի վրա: Ծաղկում է օգոստոս ամսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ ճանապարհաշինության և կրի արդյունահանման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Ջաջուռի լեռնանցքում:





11. *Allium struzlianum* Ogan.

Մոխ Շարուցի  
Лук Штруция



**Կատեգորիա.** VU B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխուկավոր բույս: Յողունը 30-50 սմ բարձր.: Տերևները 2-7, գծային, սրացած, հետ թեքված: Ծաղկաբույր կիսագնդաձև: Ծաղկապատը աստղաձև- կամ աստղաձև - լայն ձագարաձև: մասերը արծաթավուն-սպիտակ, վարդա-մանուշակագույն կամ վարդագույն, վարդա-մանուշակագույն ջղով, նշտարաձև, սուր: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի (Յամաքասար, Կրաշեն գյուղերի շրջակայք, Ջաջուռի լեռնանցք), Երևանի (Երասխ գյուղի շրջակայք) և Մեղրու (Նոնաձոր գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 8480 քառ կմ. է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտուց մինչև վերին լեռնային գոտի, ծ. մ. 600-2000 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստանում, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս (հունիս) ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ հողերի հերկման և արածեցման արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Շիրակի լեռնաշղթայի վրա:

12. *Allium talyschense* Misch. ex Grossh.  
 Մոխր թալիշյան  
 Лук талышский



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ : Անդրկովկասի էնդեմիկ: Հանրապետությունում հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է միակ աճելավայրի կորուստ ներքին գործոնների, պատահականության և արածեցման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխուկավոր բույս: Յոդունը 10-30 սմ բարձր.: Տերևները տափակ: Ծաղկաբույլը գլխիկանման: Ծաղկապատր զնդածև-զանգականման: մասերը սպիտակ, ամուր, կեղտոտ-ծիրանեզույց ջրով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեզիսի ֆլորիստիկական շրջանում, Խաչիկ և Գնիշիկ գյուղերի միջև: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի սահմաններից դուրս աճում է Թալիշում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալյայան գոտում, ծ. մ. 2200-2400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ռեգրացիա՝ արածեցման արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

13. *Allium woronowii* Misch. ex Grossh.

Մոխ Վորոնովի  
Лук Воронова



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Գտնվում է ընդհանուր արեալի հյուսիսային սահմանին: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ներքին գործոնների և գյուղատնտեսական գործունեության հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ սխալմամբ ընդգրկված էր որպես *A. derderianum*-ի հոմանիշ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Սոխուկավոր բույս: Յողունը (5)15-50 սմ բարձր.: Տերևները (1)2-4, գծային-նշտարաձև կամ գծային, հետ թեքված: Ծաղկաբույլը լայն փնջաձև կամ կիսգնդաձև:

Ծաղկապատը աստղաձև-գավաթանման; մասերը նուրբ, վարդագույն կամ համարյա սպիտակ, ծիրանեգույն կամ կանաչ ջղով, նեղ-էլիպսաձև, մավականման: Գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի (Կրաշեն գյուղի շրջակայք) և Գարեդեգիսի (Վարդահովիտ, Բարձրունի, Խաչիկ, Գնիշիկ, Մոզրով գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 570 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ է, լոկալիտետները՝ 4: Հայաստանի սահմաններից դուրս նույնպես հազվագյուտ է. աճում է Նախիջևանում (գյուղ Ազմաբերդ) և Արևելյան Անատոլիայում (լեռնագագաթ Արարատ):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800-2300 մ բարձրությունների վրա. խճաքարոտ տեղերում, կրաքարային քարաթափվածքների վրա, քարքարոտ լեռնային տափաստանում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ հերկման և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Խաչիկ և Գնիշիկ գյուղերի միջև:



**Amaryllidaceae – Շքանարգիզազգիներ - Амариллисовые**

**15. Galanthus alpinus Sosn.  
Չնձաղիկ ալպիական  
Подснежник альпийский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(ii,iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը ինտենսիվ հավաքն է որպես գեղազարդային բույս և ապօրինի անտառահատումը, որը պատճառ է դառնում աճելավայրերի խախտմանը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս ոչ մեծ ձվաձև սոխուկով, 2 հակաձվաձև թխակապույտ վաղ գարնանը զարգացող տերևներով: Ծաղկակիրը ծաղկման ժամանակ տերևներից երկար: Ծաղկակիցը փոքր, կծկված: Ծաղիկները սպիտակ, 15-25 մմ երկ., թեքված, ծաղկապատի արտաքին թերթերը նկատելի սապատիկով, ներքինները՝ երիկամաձև կամ V-աձև կանաչ պուտերով: Տուփիկը տանձանման կամ տակառիկանման: սպին լայնացած, հարթ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Նոենքերյան, Վոսկեսյար, Աչաջուր գյուղերի շրջակայքում): EOO՝ 230 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավ-Արևմտյան և Հարավային Անդրկովկասը:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 750-1300 մ բարձրությունների վրա. լուսավոր կաղնու-բոխու, հաճարենու-բոխու և դաժենու անտառներում, հազվադեպ կենու ստվերոտ անտառում, նոսրացած թփուտների մեջ կամ շիբլակում: Ծաղկում է մարտին, պտղաբերում՝ ապրիլին: Գեղազարդային դեղաբույս է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառների հատման և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել հատուկ ուշադրություն, հետազոտական աշխատանքներ և պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

16. *Galanthus artjuschenkoae* Gabrielian  
 Չնձաղիկ Արտյուշենկոյի  
 Подснежник Артюшенко



**Կատեգորիա.** VU B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Խոցելի տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է Իջևանի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Հիմնական սպառնալիքը ծաղիկների հավաքն է որպես արժեքավոր գեղազարդային բույս և անտառների հատումը, որը առաջացնում է աճելավայրերի պայմանների խախտում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Galanthus transcaucasicus* 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, ոչ մեծ գնդաձև տխուկով: Տերևները երկարավուն-նշտարաձև, բաց-կանաչ, անփայլ: Ծաղկակիրը ծաղիկ ժամանակ տերևներից երկար: Ծաղկակիցը մանր, կծկված: Ծաղիկները սպիտակ կամ կրեմագույն, 35-40 մմ երկ., ներքև թեքված; ծաղկապատի արտաքին մասերը ոչ մեծ հարթ սապատիկով, ներքինները՝ վերին մասում շատ լայնացած, ՝ Տուփիկը գնդաձև կամ կարճ տակառիկանման:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Աչաջուր, Գետահովիտ, Թեղուտ գյուղերի շրջակայքում) և Ջանգեզուրի (Շուրնուխ, Վաչագան, Ծավ, Շիկահող գյուղերի շրջակայքում) ֆլորիստիկական շրջաններում: EOO 5300 քառ. կմ է, AOO՝ 48 քառ. կմ, լոկալիտետները՝ 8: Հայաստանից բացի աճում է Թաիլանդում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1100-1700 մ բարձրությունների վրա. հաճարենու, կաղնու-բոխտու անտառներում, մամռապատ ժայռերի մեջ, ընկած ծառերի բների մոտ, անտառի եզրերին: Ծաղկում է մարտ ամսին, պտղաբերում՝ ապրիլին: Գեղազարդային դեղաբույս է: Աճելավայրերում բավականին առատ է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառների հատման և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

17. *Galanthus lagodechianus* Kuth.  
 Չնձաղիկ լագոդեխիի  
 Подснежник лагодехский



**Վատեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2ab(i,ii iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը ծաղիկների հավաքն է որպես արժեքավոր զեղազարդային բույս և աճելավայրերի պայմանների խախտումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս ոչ մեծ ձվաձև սոխուկով: Տերևները նեղգծային, վերևում տափակ (առանց փականիկի), յուղալի փայլով, վաղ գարնանը զարգացող: Ծաղկակիրը ծաղկման ժամանակ տերևներից երկար: Ծաղիկները մանր, մաքուր սպիտակ, 20-25 մմ երկ; ծաղկապատի ներքին մասերի պուտերը փոքր ի շատե նեղ-նալաձև:



**Տարածում.** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի և Բերդի շրջակայքում): EOO 330 քառ. կմ է, AOO` 36 քառ. կմ, լոկալիտետները` 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավ-Արևմտյան և Հարավային Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1500 մ բարձրությունների վրա կաղնու-բոխու և հաճարենու-բոխու անտառներում, անտառի եզրերին, բացատներում, թփերի մացառուտներում: Ծաղկում է մարտ ամսին, պտղաբերում` ապրիլին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա` անտառների հատման և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

**18. Sternbergia colchiciflora Waldst. et Kit.**  
**Շտերնբերգիա շնդեղածաղկային**  
**Штернбергия зимовникоцветная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Նախկինում հայտնի էր մեկ աճելավայրից (Իջևանի շրջակայք): Վերջին տարիներին հայտնաբերվել է մաս Երևանի ֆլորստիկական շրջանում, Երևան քաղաքի հյուսիս-արևելյան սահմանների ընդլայնման և ամառանոցային հողամասերի տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս 5-7 սմ բարձր., գնդանման-ձվաձև սոխուկներով՝ ծածկված դարչնագույն կամ սևավուն թեփուկներով և մինչև 8 մմ երկ. վզիկով: Տերևները 3-6, ուշ զարգացող, գծային, գոտիանման, մուգ-կանաչ, մինչև 10 սմ երկ., 3-5 մմ լայն: Ծաղիկները դեղին, 2,5-5 մմ երկ., ծաղկակիցներով: Տուփիկը 8-10 մմ տրամագծով, գնդաձև կամ օվալ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Գետահովիտ գյուղի շրջակայք) և Երևանի (Երևանի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 230 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեալը ընդգրկում է Նախակովկասը, Արևելյան Կովկասը, Կենտրոնական և Հարավային Անդրկովկասը, Հարավային Եվրոպան, Բալկանյան թերակղզին, Մոլդավիան, Սևծովյան շրջանը, Ղրիմը, Փոքր Ասիան, Արևմտյան Սիբիրը, Իսրայելը, Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1500 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, երրորդական դարաշրջանի կավերի վրա, օշինդրային կիսաանապատում, մոսրացած թփուտային մացառուտներում: Ծաղկում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ ապրիլ-մայիսին: Կլեյստոգամ բույս է. ծաղիկները մեծամասամբ զարգանում են սոխուկների մեջ գետնի տակ, պտուղները դուրս են գալիս գետնի երես և հասունանում հաճորդ տարվա զարնանը: Երբեմն ծաղիկները դուրս են գալիս հողի մակերես: Հավանաբար այդ պատճառով տեսակը բնության մեջ դժվար է հայտնաբերվում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդլայնման, ամառանոցային շինարարության, կլիմայի գործալ փոփոխության հետևանքով

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:



19. *Sternbergia fischeriana* (Herb.)M.Roem.

**Շտերնբերգիա Ֆիշերի**  
**Штернбергия Фишера**



**Կաստեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանի մեկ աճելավայրից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում:

Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս 10-15 սմ բարձր.: Սոխուկները կլոր 2,5-3,5 սմ տրամագծով, ծածկված դարչնագույն կամ սևավուն թեփուկներով: Տերևները գոտիանման, տափակ, փայլուն, մուգ-կանաչ, բութ գագաթով, հիմքում՝ հազիվ ողնուցավոր, մինչ 20 սմ երկ.: Ծաղիկները վառ-դեղին, նստադիր կամ կարճ, մինչև 5 մմ երկ. կոթունով: Տուփիկը 10-15 մմ տրամագծով, երկարավուն-էլիպսաձև: Մերմը սերմնաթիկնոցով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Ներքին Վաչագան գյուղի շրջակայքում: АОО 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արելը ընդգրկում է Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Հարավային և Հարավ-արևմտյան Անատոլիան, Սիրիան, Իրաքը, Իրանը, Միջին Ասիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խոտածածկ, անտառային լանջերին, շիբլակում: Ծաղկում է փետրվար-մարտ ամիսներին, պտղաբերում՝ մայիսին: Ծաղիկները հայտնվում են վաղ գարնանը տերևների հետ միասին,

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա կապված գյուղատնտեսական հանդակների ընդլայնման և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:


Միակ պոպուլյացիոն կարիք ունի հատուկ ուշադրության, անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

## Apiaceae – Հովանոցավորներ - Зонтичные

### 20. *Actinolema macrolema* Boiss.

Ակտինոլեմ խոշորաբաժակ

Актинолема крупночашечная



**Կաստեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii, iii, iv)

Վտանգված տեսակ: Կովկասում հանդիպում է միայն Հայաստանում երկու պոպուլյացիաներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է աճելավայրերի խախտում՝ տնտեսական գործունեության, ինչպես նաև անասունների կողմից հողերի տրորման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավաքյալ տեսակ: Ընդգրկված է նաև ՍՍՀՄ Կարմիր գիրքում (1984): CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա բույս 10-25 սմ բարձր.: Հովանոցի ներքին ծաղիկները երկսեռ, համարյա նստադիր, արտաքինները՝ արական, երկար ծաղկակոթերով: Ծածկոցի թերթերը խոշոր, փշատատանավոր եզրով: Պտուղների մերիկարպակները՝ մեջքի կողմից սանրածև ատամնավոր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ուրծի լեռնաշղթա, Ողջաբերդի շրջակայք): EOO 420 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի հանդիպում է Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում, Հյուսիս-Արևմտյան Իրանում և Սիրիական անապատում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա. քարքարոտ կավային լանջերին, ցանքսերում, կիսաանապատում և չոր տափաստաններում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, փոքրաթիվ լոկալիտետներ: Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ տնտեսական գործունեության, գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և հողերի տրորման արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիաներից մեկը գտնվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

21. *Aphanopleura trachysperma* Boiss.  
**Աննշմարակող անհարթապտուղ**  
**Неясноберник шероховатоплодный**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Հայտնի է ընդամենը 3 պոպուլյացիա, որից մեկը Նախիջևանում: Հայաստանում տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից փոքրակաս է: Առկա է աճելավայրերի խախտման սպառնալիք՝ տնտեսական գործունեության, ինչպես նաև անասունների կողմից հողերի տրորման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 15-30 սմ բարձր.: Տերևները լայն-ձվաձև 2-3-փետրաձև բաժանված, մասերը գծային: Հովանոցները 7-15-ճառագայթներով: Ծածկոցի թերթերը և ծածկոցիկները թաղանթային: Պտուղը խիտ ծածկված ծծիչանման մազիկներով:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Վեդու շրջակայք): EOO 90 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1200 մ բարձրությունների վրա. կավոտ լանջերին, աղակալված տեղերում, կիսասանապատում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, փոքրաթիվ լոկալիտետներ: Աճելավայրերի կորուստ/ղեզրադաշիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և անասունների կողմից բուսածածկի տրորման արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը աճում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**22. *Bupleurum koso-poljanskyi* Grossh.**  
**Եզմակղիս Կոզո-Պոլյանսկու**  
**Володушка Козо-Полянского**



**Կատեգորիա.** VU B 1 ab (ii,iii,iv)+2 ab (ii,iii,iv)

խոցելի տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է Իջևանի և Գեղամի ֆլորիստիկական շրջաններից: Արեալը մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Առկա է աճելավայրերի խախտման սպառնալիք՝ անտառտնտեսական միջոցառումների, գյուղատնտեսական հանդակների ընդլայնման, անասունների կողմից տրորման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 4 կարգավիճակով՝ անորոշ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 25-40 սմ բարձր.: Արմատներ՝ տերևները կոթունավոր, լայն ձվաձև կամ էլիպսաձև: Հովանոցները 3-4 շատ բարակ մազանման անհավասար ճառագայթներով: Ծածկոցի թերթերը ձվաձև, եռաջիղ, ծաղկի ժամանակ հովանոցիկներին հավասար: Ծաղիկները դեղին: Պտուղները էլիպսաձև, նեղ թևավոր կողերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի և Գեղամի ֆլորիստիկական շրջաններում: EOO 2470 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 7: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ալպյան գոտի, ծ. մ. 1000-3000 մ բարձրությունների վրա. անտառներում, թփերի մացառուտներում, քարաթափվածքների վրա: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ/ դեգրադացիա՝ անտառահատումների, անտառտնտեսական աշխատանքների, անասունների կողմից բուսածածկի տրորման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը աճում է «Դիլիջան» ազգային պարկում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

23. *Bupleurum pauciradiatum* Fenzl ex Boiss.

Եզնակոխ սակավաճաճանչ  
Володушка малолучевая



**Կասեզորիա.** VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Խոցելի տեսակ: Հանդիպում է Իջևանի և Չանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Արեալը մասնատված է: Սպառնալիքի աստիճանը նվազեցվում է մինչև VU, քանի որ պոպուլյացիան սահմանակից է հարևան երկրների պոպուլյացիաների հետ: Առկա է աճելավայրերի խախտման սպառնալիք՝ տնտեսական գործունեության արդյունքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 4 կարգավիճակով՝ անորոշ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 30-60 սմ բարձր.: Ներքևի տերևները նշտարած, վերինները՝ համարյա բզած: Հովանոցները 2-3 ճառագայթով: Պսակաթերթերը մեջքի կողմից ծծիչներով, թեթևակի ատամնավոր եզրերով: Պտուղը ձվածև, հարթ:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Շամլուղ գյուղի շրջակայք) և Չանգեզուրի (Կապանի շրջակայք, «Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1770 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի հանդիպում է Արևելյան Անդրկովկասում և Հարավային Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1200 մ բարձրությունների վրա թփուտային մացառուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, փոքրաթիվ լոկալիտետներ, աճելավայրերի կորուստ/ դեգրադացիա՝ տնտեսական գործունեության և անասունների կողմից բուսածածկի տրորման արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը աճում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

24. *Bupleurum sosnowskyi* Manden.  
 Եզնակոխ Մսնովակու  
 Володушка Сосновского



**Կատեգորիա.** VU B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Խոցելի տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայտնի է երեք ֆլորիստիկական շրջաններից: Արեալը մասնատված է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 2000 քառ. կմ-ից պակաս է: Առկա է աճելավայրերի խախտման սպառնալիք՝ տնտեսական գործունեության հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավաքյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա թխակուպույտ խոտաբույս մինչև 1 մ բարձրության: Յոդունները վերևում ուժեղ գալարած, տերևները շատ ստվար, ծածկոցի թերթերը 5-8, խոշոր, պահպանվող, եթերայուղային խողովակները պտղի ակոսիկներում միայնակ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Վերին-Ախուրյանի, Շիրակի և Սևանի ֆլորիստիկական շրջաններում: EOO 5060 քառ. կմ է, AOO՝ 30 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Հարավ-Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում և Անատոլիայի հյուսիս-արևելյան մասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800-2000 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստաններում, մարգագետիններում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը գտնվում է «Սևան» ազգային պարկի և նոր ստեղծված «Արփի լիճ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

25. *Carum komarovii* Karjag.  
 Զեմնն Կոմարովի  
 Тмин Комарова



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 15-40 սմ բարձր.: Տերևների ծայրային մասերը ձվաձև-նշտարաձև: Հովանոցի ճառագայթները 5-10, շատ անհավասար: Ծածկոցը բացակայում է կամ այն վաղ է թափվում: Ծածկոցիկը 2-4 թերթիկներից, պտուղները ձվաձև, եթերայուղային խողովակները պտղի ակոսիկներում միայնակ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Խուստուփ լեռնագագաթում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2100-3000 մ բարձրությունների վրա, քարաթափվածքների վրա և քարքարոտ լանջերին: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

26. *Dorema glabrum* Fisch. & C.A.Mey.

Օշակ մերկ  
Дорема голая



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii, iv,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից: Պոպուլյացիան ներկայացված է 2 լոկալիտետներով: Տարածման շրջանի մակերեսը 100 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս: Աճելավայրերի տարածքում իրականացվում է ինտենսիվ տնտեսական գործունեություն:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Մոնոկարպիկ բազմամյա մերկ խոտաբույս մինչև 2 մ բարձրության: Ստորին տերևների ծայրային մասերը ձվաձև, 3-6 սմ երարությամբ: Հովանոցները պարզ, կարճ կոթերի վրա, 9-12 ճառագայթներով: Ծածկոցը բացակայում է: Պսակաթերթերը դժգույն դեղին: Պտուղները 5-8 մմ երկ., էլիպսաձև, մեջքի կողմից սեղմված; եթերայուղատու խողովակներն ակոսիկներում միայնակ:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երասխ, Չովաշեն): EOO 44 քառ. կմ է, AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա. քարքարոտ, կավային, գիպսակիր լանջերին, աղակալված տեղերում, Ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի մասնատվածություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ մելիորացիայի, գյուղատնտեսական հանդակների ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի կառուցվածքի և ծավալի ճշտման նպատակով, նոր աճելավայրերի որոնում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



27. *Eryngium wanaturii* Woronow  
 Երնջնակ Վանատորի  
 Синеголовник Ванатура



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)

Վտանգված տեսակ: Աճում է Ապարանի, Գեղամի և Գարեղեգիսի Ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Արեալը մասնատված է և կազմված 4 լոկալիտետներից: Առկա է տեսակի տարածման և բնակության շրջանների կրճատման սպառնալիք՝ կապված գյուղատնտեսական նպատակներով հողերի յուրացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 30-50 սմ բարձրության: Տերևները ամբողջական, գծային-նշտարաձև, կաշենման: Ծաղկաբույլը 2-5 գլխիկներից: Ծածկոցի թերթերը 7-9, գծային-նշտարաձև:

**Տարածում.** Հայաստանում աճում է Ապարանի (Արախլեռ, գյուղ Ֆանտան), Գեղամի (գյուղ Արթիզ) և Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում (գյուղ Կարմրաշեն): EOO 660 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Հյուսիս-Արևելյան Անատոլիայում և Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտում, ծ. մ. 1800-2450 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին, տափաստանում, մարգագետիններում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի մասնատվածությունը, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական նպատակներով հողերի յուրացման, ինտենսիվ արածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

28. *Falcaria falcarioides* (Bornm. & H. Wolff.) H. Wolff

Միբեխ սիբեխանման  
Резак фалькариевидный



**Կատեգորիա.** CR\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Ներկայումս աճում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում: Հայտնի էր նաև Սևանի ֆլորիստիկական շրջանից (լիճ Գիլի), սակայն այդ պոպուլյացիան, հավանաբար, անհետացել է լճի ցամաքեցումից հետո: Ընդհանուր արեալը խիստ մասնատված է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության զարգացման, մելորացիայի, ճահիճների չորացման, բուսականության այրման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Կատեգորիան բարձրացվել է մինչև CR, քանի որ տեսակը չափազանց հազվագյուտ է: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Երկամյա թույլ ճյուղավորված խոտաբույս 30-50 սմ բարձրության: Տերևները կաշենման, արմատամերձները՝ ամբողջական, տափակացած կոթուններով և ձվաձև-երկարավուն կամ գծալին-երկարավուն, հիմքում թեթևակի սրտաձև տերևաթիթեղով: Ծածկոցը և ծածկոցիկը բացակայում են: Պտուղները նեղ երկարավուն, մոտ 3 մմ երկ:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ ավանի շրջակայք, Այդրիճ): EOO 170 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Անատոլիայում և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. աղակալված հողերի վրա, ճահճացած տեղերում և խոնավ մարգագետիններում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի խիստ մասնատվածություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման, մելիորացիայի հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Արարատի ճահիճները ներկայումս առանձնացվել են որպես բնության հուշարձան, սակայն պահպանության ոչ մի կոնկրետ գործողություն չի իրականացվում: Պոպուլյացիան կարիք ունի հատուկ ուշադրության: Պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

29. *Ferula szowitziana* DC.

**Նարդես Շովիցի**  
**Ферула Шовица**



**Կաստեգորիա.** VU\* B 1ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Աճում է Երևանի և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքներն են սահմանափակ արեալը և հողերի յուրացումը՝ գյուղատնտեսական հանդակների համար: Պոպուլյացիան սահմանակից է Հայաստանից դուրս գտնվող մոտակա պոպուլյացիայի հետ, հետևաբար սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմաշաքարակ ցողուններով խոտաբույս մինչև 50 սմ բարձրության: Արմատամերձ տերևների թիթեղը կրկնակի-եռակի փետրածև հատված սեզմենտներով: Ծայրային մասերը ձվաձև, կտրված բլթակավոր: Կենտրոնական հովանոցը 7-11 ճառագայթներով: Պսակաթերթերը արտաքինից թավոտ: Պտուղը լայն թևանման եզրով, ակոսիկներում բազմաթիվ եթրայուղային խողովակներով:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի (Քարակերտ, Երասխ) և Դարեղեգիսի (Խաչիկ) ֆլորիստիկական շրջանում: EOO 400 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Անատոլիայում, Իրանում, Միջին Ասիայում, Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 800-1800 մ բարձրությունների վրա, ադակաված չոր կիսասանապատում և տափաստանում, քարքարոտ և խճաքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի ուժեղ դիզյունկցիա, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակներով հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

30. *Froriepia subpinnata* (Ledeb.)Baill.

**Ֆրորիպիա փետրավոր**

**Фрорипия почти-перистая**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii); D

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն 1 ոչ մեծ պոպուլյացիա Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Երկամյա խոտաբույս մինչև 150 սմ բարձր.: Արմատները տերևները կրկնակի

փետրածև հատված: Հովանոցները 3-4 ճառագայթներով: Ծածկոցի և ծածկոցիկի թերթերը 3-5:

Պսակաթերթերը սպիտակավուն, համարյա կլոր: Պտուղը 3 մմ երկ., թելամման կողերով, առանց եթերալուղային խողովակների:

**Տարածում.** Հայաստանում աճում է Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Մեծ Կովկասում, Արևելյան Անդրկովկասում, Թալիշում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1000 մ բարձրությունների վրա. անտառի եզրերին, ճանապարհների մոտ: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, հասուն անհատների փոքր թիվ (50-ից պակաս):

**Պահպանության միջոցառումներ.** Աճում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

### 31. *Grammosciadium pterocarpum* Boiss.

Գրամոսցիադիում քևապտուղ

Граммосциadium крылоплодный



**Կասեգորիա.** EN\* B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v)

**Վտանգված տեսակ:** Հայաստանում հայտնի է միայն մեկ ոչ մեծ պոպուլյացիա Վերին Ախուրյանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանի մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքներն են՝ սահմանափակ արեալը, գյուղատնտեսական հանդակների ընդլայնումը և ճանապարհաշինությունը: Պոպուլյացիան սահմանակից է Հայաստանից դուրս գտնվող (Հյուսիս-արևելյան Թուրքիա) պոպուլյացիաների հետ, որի պատճառով սպառնալիքի կասեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Երկամյա կամ բազմամյա բույս 30-60 սմ բարձր.: Հովանոցները 5-14 ճառագայթներով: Պտուղները գծային-երկարավուն, մեջքի կողմից սեղմված, 10-14 մմ երկ., 4-5 մմ լայն., 1.5-2 մմ լայն. թևերով: Ծաղկման ժամանակ գեղազարդային է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի ֆլորիստիկական շրջանում (Ամասիայի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Արևելյան և Հարավային Անատոլիայում և Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800-1900 մ բարձրությունների վրա՝ քարքարոտ լանջերին, մարգագետնատափաստանում: Տեսակին բնորոշ է մոնոկարպիան՝ կյանքի ընթացքում մեկ անգամ ծաղկելու և պտղաբերելու հատկությունը: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդլայնման և ճանապարհաշինության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**32. Hohenackeria exscapa (Stev.) K.-Pol.**  
**Հոհենակերիա անցողուն**  
**Гогенакерия бесстебельная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Աճում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում: Արեալը մասնատված է, բաղկացած 3 լոկալիտետներից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հիմնական սպառնալիքներն են քաղաքաշինությունը, գյուղատնտեսական հանդակների ընդարձակումը, անասունների կողմից բուսածածկի տրորումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավաքյալ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա անցողուն բույս 5-10 սմ բարձր.: Տերևները գծային-նշտարած:

Ծաղկաբույլը գլխիկանման, տեղավորված համարյա արմատավզիկի մոտ: Պտուղները 5-6 սմ երկ., խմբված, հակաբրգածև, դժվարությամբ բաժանվող մերիկարպերի:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երևանի շրջակայք, Կոշ, Ուջան, Վեդի գյուղեր): EOO 600 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 3:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Սիջերկրածովյան ավազանի երկրներում, Անատոլիայում և Հարավային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է

ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1500 մ բարձրությունների վրա կավային քարքարոտ լանջերին, կիսասնապատում, տափաստանում, երրորդական կարմիր կավերի վրա: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ քաղաքաշինության, ճանապարհաշինության, գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**33. *Oenanthe silaifolia* M. Bieb.**  
**Գինեձաղիկ գազարատերև**  
**Омежник морковколиственный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Հիմնական սպառնալիքներն են սահմանափակ տարածման շրջանը, մելիորացիան, գյուղատնտեսական հանդակների ընդլայնումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 25-50 սմ բարձր., պալարանման հաստացած արմատներով: Արմատամերձ տերևները կրկնակի-եռակի փետրածև հատված: ճառագայթները 3-10, պտղի ժամանակ թեթևակի հաստացած և սեղմված: Ծածկոցը 7-11 թերթիկներով, հովանոցիկներից կարճ: Բաժակի ատամները նշտարածև, պտղի ժամանակ պահպանվող: Պտուղները պրիզմաձև, 2-2,5 մմ երկ., առանց ազատ սյունի:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում, Արտաշատի շրջակայքում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Մեծ Կովկասի վրա, Արևելյան Անդրկովկասում, Թալիշում, Եվրոպայում, Հյուսիս-արևմտյան Աֆրիկայում, Անատոլիայում, Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրության վրա. գետերի և ջրանցքների ափերին, ճահճացած հողերի վրա: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ մելիորացիայի, գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, տնտեսական գործունեության ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ներկա վիճակը ճշտելու համար, մոնիթորինգ:

### 34. *Oporanax persicus* Boiss.

#### Ճավշիր պարսկական Опопанакс персидский



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա Ապարանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ ռեկրեացիայի տարածքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավելագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս մինչև 150 սմ բարձրության: Արմատները տերևները կրկնակի փետրածև հատված, ձվաձև անհավասարակողմ մասերով: Հովանոցները 6-10 ճառագայթներով: Պտուղները նեղ-էլիպսաձև, ակոսներում միայնակ կանալներով:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Ապարանի ֆլորիստիկական շրջանում (Ծաղկաձոր, Բուժական): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտները՝ 2, որոնց միջև տարածությունը 20 կմ է:

Հայաստանից բացի աճում է Արևելյան Անատոլիայում, Արևմտյան և Հարավ-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1800-1900 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, անտառների եզրերին և բացատներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին: Եթերայուղատու բույս է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ ինտենսիվ ռեկրեացիայի և բնակավայրերի ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ և նոր աճելավայրերի որոնում:



35. *Peucedanum caucasicum* (M. Bieb.) K. Koch (= *Cervaria caucasica* (M. Bieb.) M. Pimen.)  
**Մարգացնձու կովկասյան**  
**Горичник кавказский**



**Կատեգորիա.** VU B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Հանդիպում է Իջևանի և Չանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Տեսակը աճում է ինտեսիվ տնտեսական գործունեության ենթարկվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավաքյալ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 40-120 սմ բարձր.: Արմատավզիկը փաթաթված մահացած տերևների մազոտ մնացորդներով: Տերևների ծայրային մասերը լայն, սեպաձև հիմքով: Հովանոցները 6-10 ճառագայթներով: Ծածկոցը բացակայում է: Ծածկոցիկը 2-3 խոզանանման տերևիկներով՝ հավաքված մի կողմում: Բաժակի ատամները աննկատ: Պսակաթերթերը կանաչավուն-դեղին: Պտուղները մեջքի կողմից ուժեղ սեղմված: պտղի ակոսներում երկրորդ կարգի կանալները միայնակ:


**Տարածում.** Հայաստանում աճում է Իջևանի (Գ-անձաքար, Ախթալա, Սևանի լեռնանցք) և Չանգեզուրի (Շուռնուխ գյուղի շրջակայք, լեռնագագաթ Խուստուփ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 6030 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Արևմտյան և Հարավային Անդրկովկասում, Թաիլանդում, Անատոլիայում, Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1800 մ բարձրությունների վրա՝ անտառի եզրերին, թփուտներում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի խիստ մասնատվածություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակով հողերի յուրացման, ճանապարհաշինության, անտառտնտեսական գործունեության ծավալման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Գիլիճան» Ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**36. Peucedanum pauciradiatum Tamamsch. (=Zeravschania pauciradiata (Tamasch.)M. Pimen.).**  
**Մարգացնձու սակավաճառագայթ**  
**Горичник малолучевой**



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում լեռնա-արդյունահանող արդյունաբերության և գյուղատնտեսական հանդակների ընդլայնման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 40-80 սմ երկ.: Տերևները կուտակված ցողունի հիմքում, կրկնակի-եռակի փետրաձև հատված, պինդ թխակապույտ; ծայրային մասերը կլորավուն ուրվագծով, եռաբլթակ, 8-10 մմ երկ.: Հովանոցը 3-6 ճառագայթներով: Ծածկոցի և ծածկոցիկի թերթերը 5-6, նշտարաձև: Պսակաթերթերը վառ-դեղին: Պտուղները մեջքի կողմից ուժեղ սեղմված, երկրորդ կարգի կանալները պտղի ակոսներում միայնակ, եզրային կողերը նեղ-թևավոր:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Ագարակ և Ալդարա գյուղերի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտերը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Ադրբեջանի Չանգելանի շրջանում:



**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. չոր ժայռոտ լանջերին, քարաթափվածքների վրա, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հանքարդյունահանող արդյունաբերության, գյուղատնտեսական հանդակների ընդլայնման, ճանապարհաշինության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

37. *Seseli leptocladum* Woronow  
 Կապնդեղ նրբաճյուղ  
 Жабрица тонкоцветистая



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը բնակավայրերի ընդարձակումն է և ճանապարհաշինությունը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 60-100 սմ բարձր., բարակ վերև ուղղված ճյուղիկներով: Արմատամերձ տերևները երկար կոթերով, գծային ծայրային մասերով: Հովանոցի ճառագայթները բարակ, 2-4 հատ, խիստ անհավասար: Հովանոցիկները համարյա գլխիկանման: Ծածկոցիկի թերթերը ձուլված: Պտուղները երկարավուն, 5 լավ արտահայտված կողերով:

**Տարածում.** Աճում է Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արենի և Խաչիկ գյուղերի շրջակայք): AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետը՝ 1:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1850 մ բարձրությունների վրա՝ կրաքարային քարքարոտ լանջերին և ժայռին: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ բնակավայրերի ընդլայնման և ճանապարհաշինության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

38. *Smyrniopsis armena* Schischk.

Մմիրնիոպսիս հայկական  
Смирновидка армянская



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Գեղնա-կանաչավուն բազմամյա բարձր խոտաբույս մինչև 2,5 մ բարձր.:

Տերևները մերկ, կրկնակի-եռակի փետրածև հատված, մեծ ձվաձև ծայրային մասերով: Պտուղները ձվաձև, կողքերից սեղմված, բազմաթիվ խոշոր պղպջակաձև սեկրետոր գետեղարաններով:

**Տարածում.** Աճում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Մելիմի լեռնանցք, Ջերմուկ, Գետիկվանք, Աղավնաձոր, Սպիտակավոր, Յախսած Քար): EOO 450 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 6:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 2000-2500 մ բարձրությունների վրա բաց քարքարոտ և խճաքարոտ լանջերին, տափաստանային թփերի մացառուտներում, շատ հաճախ պատմական հուշարձանների մոտ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդլայնման, պատմական հուշարձանների վերականգնողական և շինարարական աշխատանքների ժամանակ աճելավայրերի խախտման, ռեկրեացիոն տրորման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ



**40. Szovitsia callicarpa Fisch. & C.A.Mey.**  
**Շովիցիա գեղապտուղ**  
**Шовиция красивоплодная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացումն է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա բույս 20-50 սմ բարձրության: Տերևի մասերը նեղ-գծային:

Հովանոցները տերևներին հակադիր: Պտուղը ծածկված լայնակի, միմյանց վրա հենված ծալքերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում («Էրեբունի» պետական արգելոց, Նուբարաշեն, Ողջաբերդ, Շորբուլախ գյուղերի շրջակայք): EOO 60 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Գարաբաղում, Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 900-1500 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ և կավոտ լանջերին, երրորդական ժամանակաշրջանի կարմիր կավերի վրա, աղակալած տեղերում, կիսաանապատում և տափաստանում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակով հողերի յուրացման և բնակավայրերի ենթակառուցվածքի զարգացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը գտնվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:







43. *Aristolochia iberica* Fisch. et C.A.Mey. ex Boiss.  
 Արիստոլոխիա վրացական  
 Кирказон грузинский



**Վաստեզորիա.** EN B 1 ab(i,iii,iv) +2 ab(i,iii,iv)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ խիստ մասնատված պոպուլյացիա հյուսիսային Հայաստանի անտառներում: Տարածման և բնակության շրջանները՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի տարածման և բնակության շրջաններին սպառնում է կրճատում՝ կապված անտառտնտեսական աշխատանքների իրականացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս: Ցողունները 25-45 սմ բարձրության, պարզ, չճյուղավորված, ուղիղ կանգնած: Տերևները խոշոր, ամբողջական, լայն սրտաձև-օվալ: Ծաղկապատը խոշոր, 3,5-4,5 սմ, սպիտակականաչավուն, ձագարած, կորացած, ծաղիկը տեղավորված է տերևի տակ: Գեղազարդային տեսակ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում: EOO՝ 310 քառ. կմ, AOO՝ 30 քառ կմ: Լոկալիտետները՝ 5. Տեսակը, բացի Հայաստանից, աճում է նաև Վրաստանում և հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 600—1300 մ բարձրությունների վրա՝ անտառի ծածկոցի տակ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական աշխատանքների իրականացման և արածեցման հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, անտառշինական աշխատանքների ժամանակ տեսակը ընդգրկող էկոհամակարգերն առանձնացնել որպես հատուկ նշանակություն ունեցող անտառներ:



#### 45. *Asphodeline taurica* (Pall.) Kunth

Թաղադու դրիխյան

Асфоделина крымская



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն երկու ֆլորիստիկական շրջաններից, թեև աճելավայրերում բավականին առատ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից փոքր:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս, տերևակալված հաստ ցողունով 60-80 սմ բարձր.: Տերևները բազմաթիվ, 1-2 մմ լայն., ցողունը խիտ ծածկող մինչև ծաղկաբույլը, լայն թաղանթային եզրով, ցողունագիրկ: Ծաղկաբույլը խիտ երկար ողկույզի տեսքով: Ծաղկակիցները խոշոր, թաղանթային, արծաթավուն-սպիտակ, ձգված սրացած գագաթով, ծաղիկները շրջապատող: Ծաղիկները սպիտակ: Տուփիկը ձվաձև կամ գնդաձև, 12-15 սմ երկարության, փեղկերը անկանոն խոշորակնճիռ: Սերմերը գորշավուն, 6 մմ տրամագծով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի (Ջաջուրի լեռնաշղթա, Բագրավան) և Լոռու (Սպիտակի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 820 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ. Լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Չերքեսիայում, հարավ-արևմտյան Անդրկովկասում, Գրինում, Բալկանյան թերակղզում և արևմտյան Սիրիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու 1200—2000 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ տեղերում, տափաստանում, մարգագետնատափաստանում, տափաստանային թփերի մացառուտներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրատացիա՝ կապված հողերի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Շիրակի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Asteraceae - Բարդածաղկավորներ – Сложноцветные**

**46. Amberboa amberboi (L.) Tzvel.**

**Վարդատերեփուկ սովորական**

**Амбербоа обыкновенная**



**Վաստեգորիա.** CR B 1 ab (i,ii,iii,iv) + 2ab (i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Հայտնաբերվել է 2001թ.: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա ուղիղ կանգնած բույս՝ 20-60 սմ բարձրության: Յողունները ծածկված կարճ-գանգուր մազիկներով: Արմատամերձ տերևները քնարածկ-փետրածև, ցողունային տերևները՝ փետրածև-բլթակավոր կամ փետրածև բաժանված: Չամբյուղները երկար ծաղկակոթերի վրա, միայնակ, գազաթմային: Ընդհանուր ծածկոցը լայն-ձվածև, սկզբում բարակ սարդոստանման թավոտությամբ, հետագայում՝ մերկ: Եզրային ծաղիկները շատ մեծացած, դեղին: Սերմիկները, պապուսի հետ միասին, 4-6 սմ երկարության:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն մեկ աճելավայր Երևանի ֆլորիստիկական շրջանում (Խոր Վիրապ ամրոցի շրջակայքից): AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Բացի Հայաստանից տեսակը հանդիպում է Նախիջևանում, արևելյան Անդրկովկասում, լեռնային Թուրքմենիայում, հյուսիս-արևելյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա չոր քարքարոտ լանջերին, խայտաբղետ կավերի վրա, կիսաանապատային բուսականության կազմում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին: Գեղազարդային տեսակ է:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ/դեգրատացիա կապված գյուղատնտեսական նպատակով տարածքների օգտագործման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Խոր Վիրապ արգելավայրի սահմանների ընդարձակում, հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ներկա վիճակը ճշտելու համար և փոփոխությունների մոնիթորինգ:

**47. *Amberboa iljiniana* Grossh.**  
**Վարդասերեպուկ Իլյինի**  
**Амбербоа Ильина**



**Վաստեզորիա.** EN B 1 ab (i,ii,iii) + 2 ab (i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Արեալը դիպյունկտիվ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա ոչ բարձր կամ անցողուն բույս՝ 2-15 սմ բարձրության: Չամբյուղը ոչ մեծ, միայնակ, նստած արմատամերձ վարդակի կենտրոնում կամ զամբյուղները՝ 4-20, դասավորված եզրային, անհավասար, վեր բարձրացող, ճյուղավորված կարճացած ցողունների գագաթներին: Եզրերի ճագարածև ծաղիկները վարդագույն, միջին դեղին ծաղիկներին մի քիչ գերազանցող: Մերմերը, պապուսի հետ միասին, 4-5 մմ երկարության:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Երևանի (Վեդի, Գաշտաքար, Երասխ) և Մեղրու (Նախիջևանի սահմանի մոտ) Ֆլորիստիկական շրջաններից: EOO՝ 1660 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3. Հայաստանի սահմաններից դուրս հանդիպում է Ղախիջևանում, արևելյան Անդրկովկասում հյուսիս-արևմտյան Իրանում և Թուրքմենիստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրության վրա. երրորդական դարաշրջանի կարմիր կավերի, գետի հոլկված քարերի վրա, քարքարոտ լանջերին, էֆեմերա-աղածաղկային կիսաանապատում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Բնակության և տարածման շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ/դեգրատացիա կապված հողերի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության համար գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ազարակ բանավանի մոտակայքում (Մեղրու շրջան), պտույլացիայի ներկա վիճակի ճշտում և մոնիթորինգ:

48. *Amberboa moschata* (L.) DC.

Վարդասերեփուկ մուշկային  
Амбербоа мускусная



**Կատեգորիա.** EN B 1 ab (i,ii,iii) + 2ab (i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից, որտեղ աճում է թեև սահմանափակ տարածքում, սակայն շատ առատ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3՝ կրճատվող տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա բույս՝ 20-70 սմ բարձր., ուղիղ կանգնած, թույլ ճյուղավորված ցողուններով: Տերևները փոփոխական՝ ամբողջականից մինչև ատամնավոր կամ փետրածև բաժանված կամ փետրածև հատված: Չամբյուղները գագաթնային, խոշոր, լայն-ձվածև կամ կիսագնդածև, երկար կոթերի վրա՝ ծածկված գանգուր մագիկների թավոտությամբ: Ծածկոցը գանգուր-բրդոտ: Եզրային ծաղիկները՝ ձագարածև, վարդագույն կամ ծիրանեգույն-վարդագույն, կենտրոնական խողավակավոր, սպիտակ ծաղիկներին գերազանցող: Մերմերը խոշոր, 6-7 մմ երկ., պապուսը՝ 5-7 մմ երկ.:

**Տարածում.** Հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից (Երևանի շրջակայք): EOO՝ 560 քառ. կմ, AOO՝ 100 քառ. կմ: Լուկալիտետները՝ 3. Բացի Հայաստանից աճում է Նախիջևանում և հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1500 մ բարձրությունների վրա՝ չոր կավային, գիպսակիր, խճաքարոտ, քարքարոտ տեղերում, օշինդրային կիսաանապատում, համադայում, ցանքսերում: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա կապված հողերի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը աճում է «Էրբբունի» պետական արգելոցի տարածքում: Պոպուլյացիան կարիք ունի է մեծ ուշադրության և մոնիթորինգի իրականացման:

**49. Amberboa sosnovskyi Iljin**  
**Վարդասերեպիով Մսնովակու**  
**Амбербоа Сосновского**



**Կատեգորիա.** EN B 1ab (i,ii,iii) + 2ab (i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա նուրբ բույսեր՝ 2-15 սմ բարձրության, բարակ, սովորաբար մերկ, միայնակ, հազվադեպ թույլ ճյուղավորված ցողուններով: Տերևները պարզ, հաստավուն, երկարավուն-նշտարած, ատամնաեզր, թեթևակի գանգուր-բրդոտ: Չամբյուղները գազաթնային, երկարավուն-ձվաձև կամ գլանաձև, բարակ երկար կոթերով: Եզրերի ծաղիկները վարդագույն, թեթևակի մեծացած, 3-7 մմ-ով կենտրոնական ծաղիկներին գերազանցող: Մերմիկները նշտարած, բաց-դարչնագույն, խիտ մետաքսանման մազոտ; պապուսը 2 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից (Մուրենավան, Արմաշ, Երասխ, Ուրծի լեռնաշղթա): EOO՝ 210 քառ. կմ, AOO՝ 40 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Բացի Հայաստանից աճում է Նախիջևանում, արևելյան Անդրկովկասում և հյուսիս-արևմտյան Իրանում.:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Հայաստանում աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1700 մ բարձրությունների վրա. քարքարոտ, խճաքարոտ, քարաթափվածքային լանջերին, մերգելային կրաքարերի վրա, օշիկոսային կիսաանապատի աղակալված տեղերում, ֆրիգանոիդ բուսականության կազմում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ՝ դեգրատացիա կապված հողերի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության համար գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել տեսակի հատուկ պահպանություն, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**50. *Amberboa turanica* Iljin**  
**Վարդատերևիմուկ թուրանական**  
**Амбербоа туранская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ է: Հայտնի է Երևանի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Հայտնաբերվել է 2001թ.: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս՝ 2-15 սմ բարձր.: Ցողունները շատ կարճ մերկ կամ ծածկված կարճ-գանգուր մազիկներով: Արմատամերձ տերևները ամբողջական եզրերից ատամնավոր, ցողունային տերևները՝ փետրածն-բլթակավոր կամ փետրածն բաժանված: Չամբյուղները կարճ ծաղկակոթերի վրա, միայնակ, գագաթնային: Ընդհանուր ծածկոցը լայն-ձվածն, սկզբում բարակ սարդոստանման թավոտությամբ, հետագայում՝ մերկ: Եզրային ծաղիկները սակավաթիվ, բաց-դեղին: Մերմիկները, պապուսի հետ միասին, 4-5,5 սմ երկ:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Երևանի (Խոր Վիրապ ամրոցի շրջակայքից) և Մեղրու (Կարչևան, Ագարակ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 560 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ: Լոկալիտետները՝ 2: Բացի Հայաստանից տեսակը հանդիպում է հարավային և արևելյան Անդրկովկասում, Ռուսաստանում, Իրանում, Կենտրոնական և Միջին Ասիայում, Աֆղանիստանում, Պակիստանում, առևտյան Սիբիրում

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա չոր քարքարոտ լանջերին, կիսաանապատային բուսականության կազմում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա կապված գյուղատնտեսական նպատակով տարարածքների օգտագործման հետ;

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ընդարձակել Խոր Վիրապ արգելավայրի սահմանները, իրականացնել հետազոտական աշխատանքներ, պոպուլյացիայի վիճակը մոնիթորիզ:



51. *Anthennaria caucasiaca* Boriss.

Կատվատոտիկ կովկասյան  
Кошачья лапка кавказская



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակչության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ց պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հատկապես կլիմայի գրգռված փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա սպիտակ թաղիքե թափոտությամբ բույս՝ (2)5-15(20)սմ բարձրությամբ, սողացող կոճղարմատով և փոփոխ արմատակալվող ընձյուղներով: Արմատամերձ վարդակի տերևները լայն թիասե, վերևում՝ բութ, երկու կողմից ծածկված առսեղմ սպիտակ մազիկներով: Չամբյուղները 6-10 մմ տրամագծով, 3-6-ական՝ խմբված խիտ վահանիկանման ծաղկաբույլերում, կամ հազվադեպ միայնակ: Ծածկոցի թերթերը հիմնականում սպիտակ, շատ հազվադեպ թեթևակի վարդագույն: Մերմիկները մանր, գլանիկանման, բազմաթիվ բարակ հիմքում ձուլված խոզաններից կազմված պապուտով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի (լեռնագագաթ Գուկասյան Մեծ), Ապարանի (լեռնագագաթներ Քյորոզլի և Հալաբ) և Գեղամի (Գրիձոր, լեռնագագաթ Սպիտակսար) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 1650 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետներ՝ 5: Ընդհանուր արեալը բացի Հայաստանից ընդգրկում է Նախակովկասը, Գաղստանը, արևմտյան և արևելյան Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտում ծ. մ. 2900-3200 (3500) մ բարձրության վրա՝ մարգագետիններում, քարքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակչության շրջաններ, կլիմայի գրգռված փոփոխություն, արածեցում:

**Պահպանության միջոցառումներ.** Աճելավայրերից մեկը գտնվում է «Սևան» ազգային պարկի պահպանման գոտում, մյուսը՝ «Ռեյիկտային կրկես Քյորոզլի լեռան մոտ» բնության հուշարձանի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ և մոնիթորինգ:

**52. Anthemis caucasiaca Chandjian**  
**Անթեմ կովկասյան**  
**Пупавка кавказская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տեսակի ընդհանուր տարածման ծայր արևելյան հատվածը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում՝ կապված գյուղատնտեսական գործունեության և կլիմայի գլոբալ փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 20-25(30)սմ բարձրության, ամբողջությամբ ծածկված առտեղմ սպիտակավուն կամ երբեմն շեկավուն մազիկների խիտ թավոտությամբ: Տերևները փետրաձև հատված, կազմված (6)8-12 գույգ սեզմենտներից: Ցողունները գազաթնային մեկ զամբյուղով, դեղին միաշարք լեզվակավոր եզրային ծաղիկներով: Ծածկոցի թերթերը լայն թաղանթային, բաց գույնի ալիքավոր եզրով: Մերմիկները երկայնակի կողերով, վերևում թաղանթային շատ կարճ պսականման պսպուսով:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Վերին Ախուրյանի ֆլորիստիկական շրջանում (լեռնագագաթներ Գուկասյան Մեծ և Օքսյուզ, բնակավայրեր Դարաքսա և Չիվինլի): EOO՝ 80 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետներ՝ 4: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Արևմտյան Կովկասը, Արևմտյան, Հարավ-արևմտյան Անդրկովկասը և Անատոլիայի Հյուսիս-արևելյան հատվածը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին և ենթալպյան լեռնային գոտիներում՝ ծ. մ. 1700-2600 մ բարձրությունների վրա. քարաթափվածքներին, խճաքարոտ և քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին: Գեղագարդային տեսակ է: Կարելի է օգտագործել կանաչապատման բնագավառում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, փոքրաթիվ աճելավայրեր, տնտեսական գործունեություն, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Հայաստանում տեսակի աճելավայրերը պահպանվում են «Արփի Լիճ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել մոնիթորինգ բնական աճելավայրերում, պահպանություն ազգային պարկի ցուցադրական հողամասում, բուսաբանական այգիներում, ներդնել ծաղկագործության մեջ:

53. *Calendula persica* C.A.Mey.  
**Վաղենակ պարսկական**  
**Календула персидская**



**Կաստեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Calendula arvensis* 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա նուրբ բույսեր 5-25 սմ բարձրության: Ցողունները հիմքից ճյուղավորված, վեր բարձրացող կամ փռված, մանր գեղձային թավոտությամբ: Տերևները երկարավուն-հակաձվածևից մինչև երկարավուն-նշտարածև: Եզրային լեզվակավոր ծաղիկները ոսկեփայլ-դեղին: Չամբյուղները 7-8 մմ լայն., պտղի ժամանակ գնդաձև: Մերմերը օղակաձև կորացած, խիտ գեղձային թավոտությամբ:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Չանգեգուրի (Ներքին Հանր) և Մեղրու (Շվանհձոր, Նյուվաղի) ֆլորստիկական շրջաններից: EOO 230 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Աճում է Արևելյան և Հարավային Անդրկովկասում, հարավ-արևմտյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու 500-700 մ բարձրությունների վրա՝ չոր, խճաքարոտ, քարքարոտ կամ կավային լանջերին, կիսաանապատային բուսականության մեջ, երբեմն որպես մուլախոտ ցանքերում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված հողատարածքների յուրացում հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորիգ:

54. *Carpesium abrotanoides* L.

Ագագու օշինդրանման  
Карпезиум полынный



**Կաստեգորիա.** EN\* B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնաբերվել է վերջերս Երևանի ֆլորիստիկական շրջանի միակ աճելավայրը: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս: Տեսակի կաստեգորիան իջցվել է մինչև EN, քանի որ տարածման հիմնական շրջանը գտնվում է հանրապետությունից դուրս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս հզոր խիտ մազուտ արմատով: Յոդունը 50-80 սմ բարձր., վերին կեսում հուրանաձև ճյուղավորված, ճյուղերը երկար, ճիպտաման, մինչև վեր տերևակալված: Տերևները երկարավուն, ամհավասար կարճ սղոցա-ատամնավոր եզրերով: Չամբյուղները բազմաթիվ, մանր, ձվաձև-երկարավուն, տերևածոցերում: Եզրի ծաղիկները թելանման պսակով, դժգույն դեղին:

**Տարածում.** Հայաստանում հայտի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից, Լուկաշին գյուղի շրջակայքից: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի հանդիպում է Նախակովկասում, Արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Թալիշում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Կենտրոնական և Արևելյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա առուների ափերին, խոնավ ձորակներում, խոնավ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ հողատարածքների յուրացում հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական գործողություններ տեսակի արեալի հաստատման ուղությամբ, պոպուլյացիայի վիճակի ճշտում և մոնիթորինգ:

55. *Centaurea alexandrii* Bordz.

Տերեփուկ Ալեքսանդրի  
Василек Александра



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Համդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, մարդածին ուժեղ ազդեցության տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս: Յողունները ճիպոտանման, բազմիցս ճյուղավորված, նոսր տերևակալված: Տերևները 1-2 փետրածև բաժանված, գծային-նշտարածև սեզմենտներով:

Չամբյուղները երկարավուն-ձվաձև: Ծածկոցի թերթերը սպիտակավուն կամ դեղնա-դարչնագույն:

Ծաղիկները սպիտակ կամ վարդագույն: Մերմիկները 2 մմ երկ.: Պապուսը 1-1,5 մմ երկ:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանից (Մեղրի, Ալդարա, Ծվանիձոր, Նյուվաղի): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 400-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին ժայռերի միջև, չոր հուններում, գետերի ափերի ավազների վրա, կաղնու կամ գիհու նոսրանտառներում, Ֆրիգանոիդներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված հողատարածքների յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորիգ:

56. *Centaurea arvensis* (Czer.) Wagenitz.

Տերեփուկ արփայի  
Василек арпинский



**Կաստեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Աճում է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ սնտեսական գործունեության տեղերում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յողունները բարակ ճիպտանման, բազմաթիվ անգամ ճյուղավորված, թեք դեպի վեր ուղղված, խիտ տերևակալված: Տերևները գծային-նշտարած, ամբողջական, նեղ: Չամբյուղները 14-15 մմ երկ., երկարավուն; փաթեթի թերթերը թաղանթային, կիսակլոր, սանրածև-թարթիչավոր եզրերով: Ծաղիկները սպիտակավուն: Սերմիկները երկարավուն, 5-6 մմ երկ., սպիտակավուն-կրեմագույն: Պապուսը 5-6 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է Երևանի (Վեդի, Տիգրանաշեն, կանյոն Չանդամ-դարա) և Գարեղեգիսի (Եղեգնաձորի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 600 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1100-1500 մ բարձրությունների վրա. չոր կավային, խճաքարոտ բլուրների վրա, քարաթափվածքներից, գիհու նոսրանտառում, ֆրիգանոիդներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված հողատարածքների յուրացում հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**57. Centaurea elbrusensis Boiss & Buhse**  
**Տերեփուկ էլբուրսյան**  
**Василек эльбурсский**



**Կասեզորիա.** EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Իրանական այս տեսակը Հայաստանում աճում է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի տարածքում շատ հազվագյուտ է, թեև աճում է որևէ սպառնալիքի քիչ ենթարկվող տեղերում և հիմնական տարածման շրջանը գտնվում է Իրանում: Այդ պատճառով տեսակի կասեզորիան նվազեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Ցողունը փռված, խիտ տերևակալված, միշտ մեկ զամբյուղով: Տերևները խիտ մոխրագույն թավոտ, նշտարած, սուր, վարդակալիները՝ կոթուններով, միջինները՝ նստադիր: Փաթեթը գավաթաձև մուգ-դարչնագույն հավելուկներով: Ծաղիկները սպիտակ-կրեմագույն, առէջային խողովակը և վերնակապը վարդամանուշակագույն: Մերմիկները կարճ պապուսով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեզուրի (Ողջի գետի վերնագավառ) և Մեղրու (Լիճքի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 2: Հայաստանից բացի աճում է Հյուսիսային և Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում ծ. մ. 2300-3000 մ բարձրությունների վրա մարգագետիններում, ժայռերի միջև: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

58. *Centaurea erivanensis* (Lipsky) Bordz.

Տերեփուկ երևանյան  
Василек ереванский



**Կասեզորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab (i,ii,iii)

Խոցելի տեսակ: Աճում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակչության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճելավայրերում բավականին առատ է, հետևաբար կարգավիճակը իջեցվել է մեկ աստիճանով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յողունը առնչվում մոխրագույն թավոտ, նոսր տերևակալված: Չամբյուղները ձվաձև: Ծածկոցի թերթերի հավելուկները, սրոցա-ատամնավոր: Ծաղիկները սպիտակավուն-կրեմագույն: Մերմիկները ասիմետրիկ, բաց դարչնագույն-կանաչավուն, լավ նկատելի սերմնաթիկնոցով և կարճ թարթիչավոր պսպուսով:

**Տարածում.** Հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից (Երևան, Շորաղբյուր, Չովաշեն, Գեղաղի, Ենգիջա, Ուրծի լեռնաշղթա, «Էրեբունի» պետական արգելոց): EOO 970 քառ. կմ է, AOO՝ 100 քառ կմ, լոկալիտետները՝ 8: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում (Ազնաբերդ), Թուրքական Հայաստանում և հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտի, ծ. մ. 700-2000 մ բարձրությունների վրա չոր քարքարոտ, կավային կամ գիպսակիր, աղակալված լանջերին, կիսաանապատում, տափաստանում, ֆրիգանանման բուսականության մեջ տրագականտային համակեցություններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին: Չափազանց բազմաձև տեսակ է:

**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված հողերի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Էրեբունի» պետական արգելոցների տարածքներում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորիգ, «Էրեբունի» պետական արգելոցի տարածքի ընդարձակում՝ կարմիր կավերի ընդգրկմամբ:



59. *Centaurea leuzeoides* (Jaub. & Spach) Walp.

Տերեփուկ լեզեանման

Василек левзеоподобный



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Կարող է անհետանալ չափազանց հազվագյուտ լինելու պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա 20-85 սմ բարձրության բույս՝ ծածկված սպիտակ կամ մոխրագույն փունջ-փունջ ուստայնաման թավոտությամբ: Ստորին տերևները 9-17 սմ երկ., 3-7 սմ լայն., 1-4 գույգ նեղ-նշտարած և եզրային սեգմենտներով, 3-5 սմ երկ. կոթունով: Չամբյուղները համարյա գնդաձև: Ծածկոցի թերթերը բազմաշարք՝ ուռուցիկ, հավելուկներով: Ծաղիկները վարդագույն, Սերմիկները 6-8,5 մմ երկ: Պապուսը 6-9 մմ երկ.:

**Տարածում.** Հայտնի է Դարեղեգիսի (Մարտիրոս գյուղի շրջակայք) և Չանգեգուրի (Տաթև գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններից: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 45 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1700-1900 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, տափաստանում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածում, հողատարածքների յուրացում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:



**61. Centaurea rhizocalathium (K.Koch) Tchich.**  
**Տերեփուկ արմատագանձրյուղային**  
**Василек корнекорзинковый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից, որտեղ հանդիպում է շատ հազվադեպ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս, 2-5 սմ բարձր., երկար խիստ ճյուղավորված կոճղարմատով: Տերևները երկարավուն, փետրածև հատված,: Չամբյուղները միայնակ, տեղավորված արմատամերձ տերևների վարդակի կենտրոնում, 15-36 մմ լայն.: Ծածկոցի թերթերը առանց հավելուկի կամ դրանք ռեդուկցված են, մինչև 2 մմ երկ.: Ծաղիկները դեղին:

**Տարածում.** Աճում է Երևանի (Չովաշեն և Գառնի գյուղերի միջև) և Չանգեգուրի (Գորիս և Սիսիան քաղաքների միջև, լեռնագագաթ Խուստուփ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2560 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 1200-1600 մ բարձրությունների վրա կիսաանապատում, տափաստաններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածում, հողերի յուրացում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

62. *Centaurea schelkovnikovii* Sosn.  
**Տերեփուկ Շելկովնիկովի**  
**Василек Шелковникова**



**Կասեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է Մեղրու ֆլորիստիկական շրջանից, որտեղ հանդիպում է չափազանց հազվադեպ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը է 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յոդունները թեթևակի աղեղնաձև թեքված, տերևների վարդակի կենտրոնից բարձրացող: Տերևները խոր քնարածև-փետրածև բաժանված, գոգավոր-ատամնավոր, կանաչավուն-մոխրագույն նուրբ թավոտ: Չամբյուղները միայնակ, ձվաձև: Ծածկոցի թերթերի հավելուկները սև կամ շականակագույն եզրերով: Եզրային ծաղիկները մանուշակագույն-կապույտ, երկնագույն կամ սպիտակ-վարդագույն, միջինները՝ մանուշակագույն: Մերմիկները երկարավուն, կարճ պապուսով:

**Տարածում.** Աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Վարդանաձոր, Լիճք, Տաշտունի լեռնանցք): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է նաև Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2200-2700 մ բարձրությունների վրա. քարքարոտ, խճաքարոտ տեղերում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածում, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:

63. *Centaurea takhtajanii* Gabrielian & Tonjan.

Տերեփուկ Թախտաջյանի  
Василек Тахтаджяна



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից, որտեղ հանդիպում է չափազանց հազվադեպ, ինտենսիվ յուրացվող տեղերում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս, ուղիղ կանգնած, ճյուղավորված ցողուններով: Տերևները նեղ-գծային, առանց կոթունի: Չանբյուրները գազաթնային, միայնակ: Ծածկոցի թերթերի հավելուկները մանր, մուգ-դարչնագույն, կաշենման, 5-9 համարյա հավասար երկարությամբ մանր փշերով: Սերմիկները 5-6 մմ երկ.: Պապուսը շատ կարճ, 1,5-2,5 մմ երկ.:

**Տարածում.** Հայտնի է միայն Շիրակի ֆլորիստիկական շրջանում (լեռնազագագաթ Արտեմի, Հակկո, Քարակերտ, Չարինջա, Յամաքասար և Հացաշեն գյուղերի միջև): AOO՝ 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1600-1800 մ բարձրությունների վրա՝ չոր քարքարոտ լանջերին, տափաստանում, ցանքերում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածում, հողերի յուրացում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

64. *Centaurea vavilovii* Takht. et Gabrielian  
**Տերեփուկ Վավիլովի**  
**Василек Вавилова**



**Կասեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + B 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակը աճում է ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության զոնայում, որը ենթադրում է միակ պոպուլյացիայի զգալի կրճատում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 100-175 սմ բարձրության., ուղիղ կանգնած ցողուններով: Տերևները ամբողջական, ներքև սահող: Ընդհանուր ծաղկաբույրը վահանիկա-հուրանաձև, գազաթնային միայնակ ծաղիկներով: Ծածկոցը գլանաձև կամ երկարավուն-ձվաձև 2,5-4 սմ երկ., 1,5-2 սմ լայն.: Ծածկոցի թերթերը մուգ-կանաչ, ձվաձև-եռանկյուն, ոչ մեծ սանրաձև-թարթիչավոր հավելուկներով: Սերմիկները 5-6 մմ երկարության, պապուսը 7-8 մմ երկ.:

**Տարածում.** Հանդիպում է Ուրծի լեռնաշղթայի հյուսիսային դրքադրության լանջերի վրա, Երևանի ֆլորիստիկական շրջանում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800-2000 մ բարձրությունների վրա՝ չոր խոտածածկ լանջերին, լեռնային տափաստանում, մարգագետնա-տափաստանում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակով հողերի յուրացման և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոտարովի անտառ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**65. Cephalorrhynchus kirpicznikovii Grossh.**  
**Գլխակառուց Կիրպիչնիկովի**  
**Цефалоринхус Кирпичникова**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + B 2 ab(iii); D

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ խիստ մասնատված պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանները 500քառ. կմ-ից փոքր է, ընդ որում հասուն անհատների թիվը չի գերազանցում 250-ը: Տեսակի տարածման և բնակության շրջաններին սպառնում է կրջատում՝ կապված գյուղատնտեսական աշխատանքների հետևանքով աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավաքյալ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, հանգույցավոր-կոնաձև արմատներով: Յոդունները 30-50 սմ բարձր., սովորաբար գեղձային թավոտությամբ: Չաբյուղները 15-18 ծաղիկներով՝ հավաքված վահանիկանման-հուրանաձև ծաղկաբույլերում: Ծաղիկները դեղին:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Տիգրանաշենի շրջակայք) և Դարեղեգիսի (Եղեգիս գետի կիրճ) ֆլորստիկական շրջաններում: AOO 12 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2:

Հայաստանից բացի, պոպուլյացիայի տարածումը շարունակվում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1500—1800 մ բարձրությունների վրա. նոսրացած անտառներում, տափաստանային թփերի մացառուներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական տարածքների ընդարձակման և արածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Պոպուլյացիան արժանի է մեծ ուշադրության, պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

66. *Chardinia macrocarpa* K.Koch  
 Շարդինիա խոշորապտուղ  
 Шардения крупноплодная



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Խոցելի տեսակ է: Ներկայումս հայտնի են երեք պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից փոքր է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից փոքր է: Տեսակի տարածման հիմնական շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազել է մինչև VU: Տեսակի տարածման և բնակության շրջաններին սպառնում է կրճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման պատճառով առաջացած աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս՝ 25-50 սմ բարձր., մոխրա-կանաչավուն թափուտայնաբ: Յողունը հիմքից ճյուղավորված: Չամբյուղները բազմածաղիկ: Ծաղիկները սպիտակավուն, համարյա չեն գերազանցում ընդհանուր ծածկոցի թերթերին: Մերմիկները մեծ, 1 սմ երկ. պլապուսով, հաճախ վարդագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Երևանի շրջակայք և Ուրծի լեռնաշղթա) և Դարեղեգիսի (Արփա գետի կիրճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 700 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախիջևանում, Անատոլիայում, Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 1000—1800 մ բարձրությունների վրա տափաստաններում, երրորդական ժամանակաշրջանի կարմիր կավերի վրա: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և արածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիան պահպանվում է «Էրբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**67. Cichorium glandulosum Boiss. et Huet**  
**Ճարճատուկ գեղձավոր**  
**Цикорий железистый**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Խոցելի տեսակ: Ներկայումս հայտնի են երեք պոպուլյացիաներ: Տարածման շրջանը 5000 քառ. կմ-ից պակաս, բնակության շրջանը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի տարածման հիմնական շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև VU: Տեսակի տարածման և բնակության շրջաններին սպառնում է նվազում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ մտ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս սպիտակավուն ցողունով 20-60 սմ բարձր., ծածկված գեղձալին մազիկներով: Ցողունները սովորաբար խիստ ճյուղավորված, ճյուղիկները վերջում հաստացող: Չամբյուղները բազմաձաղիկ: Ծաղիկները բաց-երկնագույն կամ հազվադեպ սպիտակավուն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Երևանի շրջակայք և Ուրծի լեռնաշղթա) և Դարեղեգիսի (գյուղ Ռինդ) ֆլորստիկական շրջաններում: EOO՝ 940 քառ. կմ, AOO՝ 30 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախիջևանում, Անատոլիայում, Սիրիայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 900—1400 մ բարձրության վրա. տափաստաններում, երրորդական ժամանակաշրջանի կարմիր կավերում, քարաթափվածքների վրա: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և արածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիան պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

68. *Cirsium alatum* (S. E. Gmel.) Bobr.

Տառասկ թևավոր  
Бодяк крылатый



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii); D

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտի է ընդամենը մեկ փոքրիկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա դեղնա-կանաչ մերկ բույս՝ 20—100 սմ բարձրության: Յոդունները կտրատված-թևավոր, ճյուղավորված: Տերևները վերևից մանր գորտնուկավոր: Չամբյուղները երկար կոթերով, սովորաբար նոսր հուրարանաձև-վահանիկանման ծաղկաբույլերում: Ծածկոցի թերթերը եզրերից թեթևակի ոստայնանման մազոտ, գազաթին փշով, 0,5—1 մմ երկարության: Պսակը վարդագույն:

**Տարածում.** Աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում, Արարատ ավանի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Արևելյան Կովկասում և Արևելյան Անդրկովկասում, Եվրոպայում, արևմտյան Սիբիրում, Միջին Ասիայում, Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. մոտ 800 մ բարձրության վրա. աղակալված ճահիճներում: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-նոյեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, սահմանափակ էկոլոգիական հարմարողականություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ ճահիճների չորացման և բուսականության այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** 2008թ. Արարատի աղակալված ճահիճները ընդգրկվել են բնության հուշարձանների ցանկում: Անհրաժեշտ է իրականացնել աճելավայրի պահպանության կազմակերպում, պոպուլյացիայի վիճակի մոնիտորիզ:

69. *Cousinia erevanensis* Bornm.

Խոզանափուշ երևանյան  
Кузиния ереванская



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում, որոնք քայքայվում են լեռնահանքարդյունաբերական և դրանց հետ կապված ճանապարհաշինության աշխատանքների կատարման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ 40-50 սմ բարձրության: Տերևները հերթադիր, փետրածև հատված, կոշտ, խիտ ոստայնաման թավոտությամբ, սուր կոշտ փշերով՝ ջղերի ծայրերին: Չամբյուղները գնդաձև՝ ճյուղերի ծայրերին: Ծածկոցի թերթերը խիտ ոստայնաման թավոտությամբ, մեղ ուղիղ փշանման հավելուկներով: Ծաղիկները դեղնավուն, դուրս ցցված վարդագույն վերնակապով:

Պտուղը սեպածև, հարթ: Պապուսը թափվող:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Գուդեմնիս, Ագարակ, Լեվիագ, Վահրավար, Մեղրի, Կարչևան, Կուրխ): EOO 90 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետը՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (Օրդուբադ):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա՝ ժայռոտ և քարքարոտ լանջերին, թփուտներում, ֆրիգանաման բուսականության մեջ: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ տնտեսական գործունեության ծավալման պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ծավալի և կառուցվածքի ճշտման նպատակով, նոր աճելավայրերի որոնում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակ ավանի շրջակայքում:

70. *Cousinia fedorovii* Takht.  
 Խոզանափուշ Ֆյոդորովի  
 Кузиния Федорова



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակը կարող է տուժել «Սևան» ազգային պարկի ռեկրեացիայի գոտու ընդլայնման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ 20-30 սմ բարձրության: Տերևները հերթադիր, փետրածև հատված, հիմնական ջղերի վերջում սուր կոշտ փշերով: Ջամբյուղները գնդաձև, հավաքված ողկույզանման ծաղկաբույլում: Ծածկոցի թերթերը խիտ խավոտությամբ, թեթևակի հետ թեքված, փշոտ սրածայրերով: Ծաղիկները վարդագույն-մանուշակագույն:

**Տարածում.** Հանդիպում է միայն Սևանի ֆլորիստիկական շրջանում (Արեգունու լեռնաշղթա, Նորադուզի հրվանդան): EOO 700 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետներ՝ 6:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1900-2000 մ բարձրությունների վրա՝ տափաստանային թփերի մեջ, տափաստաններում, չոր լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ: Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանրակների ընդլայնման և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիան պահպանվում է «Սևան» Ազգային պարկի տարածքում, մեկ լոկալիտետ գտնվում է արգելոցային գոտում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

71. *Cousinia gabrieljanae* Takht. et Thamanjan  
 Խոզանափուշ Գարրիելյանի  
 Кузиния Габриэляна



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա Սյունիքի մարզում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակը աճում է ինտեսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կիսաթփիկ 30-40 սմ բարձր.: Տերևները հերթադիր, փետրածև հատված, հիմնական ջղերի ծայրերին սուր կոշտ փշերով: Ջամբյուղները տանձաձև, ճյուղերի ծայրերին; կենտրոնական զամբյուղը միշտ եզրայիններից մեծ: Ծածկոցի թերթերը համարյա մերկ, նիզականման հավելուկով, թեթևակի հետ թեքված, փշոտ սրածայրով: Ծաղիկները ծիրանեգույն: Մերմիկները սև, կոնուսաձև, 3 կողերով, թմբիկավոր: Պապուսը թափվող:


**Տարածում.** Հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապանի շրջակայք): AOO` 12 քառ. կմ, լոկալիտետը` 1: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անդրկովկասում (Չեքրաի):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա շիբլյակում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում` հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա` գյուղատնտեսակա հանդակների ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել նոր աճելավայրերի որոնում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

72. *Cousinia megrica* Takht.  
**Խոզանափուշ մեդրիի**  
**Кузиния мегринская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հարավ Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ 40-50 սմ բարձր.: Տերևները հերթադիր, փետրածև բաժանված, կաշենման, փայլուն, հիմնական ջղերի ծայրերին սուր կոշտ փշերով: Չամբյուղները երկարավուն-գնդաձև, ճյուղերի ծայրերին: Ծածկոցի թերթերը մերկ, սրացած, վերևում երկար սուր կտրուկ հետ թեքված փշով: Ծաղիկները ծիրանագույն: Մերմիկները սև, կոնուսաձև, 3 կողերով, հարթ:

**Տարածում.** Հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Վարդանաձոր, Լեռվազ, Մեղրի): EOO 150 քառ. կմ է, AOO` 30 քառ. կմ, լոկալիտետները` 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (Չուլֆա, Օրդուբադ):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա շիբլյակում, նոսրանտառներում, չոր լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում` հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ: Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա` գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



74. *Cousinia tenella* Fisch. & C.A.Mey.

Խոզանափուշ բարալիկ  
Кузиния тоненькая



**Կաստեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է Արարատյան գոգավորության երեք լոկալիտետներից, որոնք գտնվում են ինտենսիվ տնտեսական գործունեության տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս, բարակ գեղմատարած ճյուղերով 30-40 սմ բարձր.:

Տերևները երկարավուն, ամբողջաեզր, թեթևակի ոստայնանման թավոտությամբ: Չամբյուղները մանր, 0,5-1 սմ տրամագծով, գնդաձև: Ծածկոցի թերթերը նեղ-նշտարածև-բզաձև, վերևում թեթևակի հետ թեքված, բարակ: Ծաղիկները դժգույն-ծիրանեգույն: Մերմիկները մանր, սեպաձև, հարթ: Պապուսը թափվող:

**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Իլան-դաղ, Գ-վին, Խորվիրապ): EOO 140 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անդրկովկասում, Իրանում և Ա.Ֆրանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա կիսաանապատում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ ռեգրադացիա՝ շինարարության և գյուղատնտեսական համար տարածքների յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել նոր աճելավայրերի որոնում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



75. *Crupina intermedia* (Mutel) Walp.

**Վերեփան միջանկյալ  
Крупина промежуточная**



**Վատեզորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000.քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500.քառ. կմ-ից պակաս: Աճում է մարդածին գործոնների անմիջական ազդեցությանը չենթարկվող տարածքներում: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU.

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ մաս CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս բարակ ուղիղ կանգնած ցողունով 20-80 սմ բարձր.: Տերևները հերթադիր, խոր փետրածև: Չամբյուղները բազմածաղիկ, հիմքի մոտ կլորավուն: Ծաղիկները ծիրանեգույն: Երկսեռ ծաղիկների պսակի խողովակը համարյա հարթ մագիկներով: Սերմիկները հակաձվածև-գլանաձև:

**Տարածում.** Հանդիպում է Գարեդեգիսի (Մարտիրոս և Խնձորուտ գյուղերի միջև) և Մեղրու (Լեհվազ, Այգեձոր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 870 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Ալժիրում, Ամատոլիայում, Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 1000-1700 մ բարձրությունների վրա՝ չոր քարքարոտ լանջերին, գիհու և կաղնու նոսրանտառներում, ժայռերի միջև, խճաքարոտ թափվածքներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ: **Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



77. *Echinops polygamus* Bunge (= *E. grossheimii* Iljin; *E. leucographus* auct. non Bunge)  
 Ոգնագլխիկ բազմատուն  
 Мордовник многодомный



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ՝ 5000 քառ. կմ-ից պակաս տարածման շրջանի մակերեսով և 500 քառ. կմ-ից պակաս բնակության շրջանի մակերեսով: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 40—60 սմ բարձր.: Յոդունները խոր-ակոսավոր, ճյուղավորված, ամբողջ երկարությամբ տերևակալված, ուտայնանման և գեղձային թավտությանբ: Տերևները գոգավոր-փշոտ-ատամնավոր, ցողունագիրկ, վերինները՝ կտրուկ փոքրացող, վերևից՝ գեղձավոր, տակից՝ սպիտակ-թաղիքային թավով, գեղձերով ծածկված շղերով: Խոզանների փունջը խիտ, զամբյուղի երկարության 3/5-ին հավասար: Ծածկոցի ներքին թերթերի 2/3-ը միաձուլված հնգանիստ խողովակի ձևով և սերտաճած սերմիկի հետ:

**Տարածում.** Հանդիպում է Գարեդեգիսի (գյուղ Արփա) և Մեղրու (Շվանիձոր, Կուրիս, Կարչևան, Լեհվազ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 830 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային և Կենտրոնական Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա չոր խճաքարոտ, ժայռոտ լանջերին, ֆրիգանանման բուսականության մեջ և աղբոտ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ հողատարածքների յուրացման և լեռնա-արդյունահանող արդյունաբերության զարգացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել ԲՀՊՏ ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի մոտ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**78. Echinops ritro L.**  
**Ոգնագլխիկ սովորական**  
**Мордовник обыкновенный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii); D

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Տեսակի ընդհանուր տարածումը շատ լայն է, սակայն լոկալիտետը Հարավային Անդրկովկասում մեկուսացված է արեալի մյուս մասերից:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 20—60 սմ բարձրության: Ցողունը բարակ, սպիտակ-թաղիքավոր: Տերևները մանր և թույլ փշոտ, փետրածև հատված, վերևից՝ մերկ կամ ոստայնանման թավոտությամբ, տակից սպիտակ-թաղիքավոր: Չամբյուղները 12-17 մմ երկարության, խոզանների փունջը զամբյուղի երկարության 1/4-ը: Ծածկոցի բոլոր թերթերը ազատ, առանց գեղձային մագիկների: Պսակը՝ կապույտ:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանից (Բարձրունի գյուղի շրջակայք): AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Նախակովկասում, Դրիմում, Միջին և Հարավային Եվրոպայում, Անատոլիայում, հյուսիսային Սիբիրում և Միջին Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1800 մ բարձրության վրա՝ չոր կրաքարային լանջերին, մարգագետնա-տափաստանային բուսականության մեջ: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ հողատարածքների յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**79. Echinops tournefortii Trautv.**  
**Ոգնագլխիկ Տուրնեֆորի**  
**Мордовник Турнефора**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որը գտնվում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս մինչև 1 մ բարձր.: Յողունը սպիտակ թաղիքային թավոտությամբ, զամբյուղների տակ չտերևակալած: Տերևները շատ փշոտ, զոգավոր կամ փետրածև հատված, վերևից՝ ոստայնանման, տակից թաղիքային թավոտությամբ, գեղձերով ծածակված ջղերով: Վրձինը՝ խոզանների փունջը ոչ խիտ հասնում է զամբյուղի կեսը: Ծածկոցի բոլոր տերևները՝ արտաքինները և միջինները երկար կոշտ ցցված փշոտ-թարթիչավոր եզրերով, գազաթում հազվադեպ փոքր կարճտիկ գեղձերով: Պսակը դժգույն-երկնագույն:

**Տարածում.** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի և Բերդի շրջակայք): EOO 430 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է արևելյան Անատոլիայում և հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1400 մ բարձրությունների վրա. անտառների եզրերին: Ծաղկում է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ղեգրադացիա՝ հողատարածքների յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**80. *Grossheimia caroli-henrici* (Gabrielian et Ditttr.) Gabrielian**  
**Գրոսհեյմիա Կարլ-Հենրիի**  
**Гроссгеймия Карла-Генриха**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + B 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված Ջերմուկ առողջարանի շրջակայքում իրականացվող տնտեսական գործունեության ինտենսիվացման հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս մինչև 1 մ բարձրության, հաստ ցողուններով: Չամբյուղները համարյա գնդաձև, 20-25 մմ տրամագծով, չժածակված գազաթնային տերևներով: Ծաղիկները դեղին:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Ջերմուկի շրջակայք): AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ենթալպյան գոտու ծ. մ. մոտ 2000-2200 մ բարձրությունների վրա բարձրախոտում, անտառի եզրերին: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, ռեկրեացիոն տրորման, արածեցման, կլիմայի գլոբալ փոփոխության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Պոպուլյացիան արժանի է մեծ ուշադրության, անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

81. *Gundelia rosea* M.Hossain & R.A.Al-Taey.

Կանգար վարդագույն

Гунделия розовая



**Կաստեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված է որպես *Gundelia tournefortii* 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 15-60 սմ բարձրության, կաթնահյութով: Տերևները խոշոր, կաշեման, փշոտ, փետրածև հատված: Չամբյուղները 4-8(10) ծաղիկներով, հավաքված մեծ երկարավուն-էլիպսաձև կամ գնդաձև գլխիկներում՝ շրջապատված կոշտ փշոտ ծաղկակից տերևներով: Ծաղիկները երկսեռ, ծիրանեգույն կամ դարչնագույն: Սերմիկները պինդ թաղանթում՝ դիասպորայում, հասուն պտղի ժամանակ օվալ կամ հակաձվածև, մոխրագույն կամ դարչնագույն, վերին մասում փշիկներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ջրվեժից մինչև Գեղարդ, և Ջովաշեն): EOO 300 քառ. կմ է, AOO՝ 100 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեալը ընդգրկում է Նախիջևան, Միջին Ասիան, Կիպրոս կղզին, Անատոլիան, Սիրիան, Իրաքը, Իրանը, Աֆղանստանը և Պակիստանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1600 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճաքարոտ, հազվադեպ խոտածածկ լանջերին, առավելապես տափաստաններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ: Աճելավայրերի խախտում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, «Էրեբունի» պետական արգելոցի սահմանների ընդլայնում:

82. *Hieracium pannosum* Boiss.

**Ճուռակախոտ փրչոտ**  
**Ястребинка лохматая**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի ընդհանուր լայն տարածման պատճառով սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.**

Բազմամյա բույս 15—35 սմ բարձրության, վերին մասում համարյա անտերև: Տերևները լայն-նշտարած, ամբողջաեզր կամ մանր-ատամնավոր, մտադիր, մոտեցած ցողունի հիմքում կամ մի փոքր վերև՝ կեղծ վարդակ առաջացնող: Ամբողջ բույսը, հատկապես, ցողունը ներքևի կեսում և տերևները տակից ու ջղերի ուղղությամբ խիտ ծածկված երկար (5—12 սմ երկ.), կոշտ շիկակարմիր և սպիտակ մազիկներով: Ծաղկաբույլը խոր և երկար եղանակով ճյուղավորված: Չամբյուղները 8—15 սմ երկ. կոթերով: Մերմիկները 2,5—4 սմ երկ., 10 հարթ կողերով՝ վերևում միացած օղակաձև գլանիկի ձևով:

**Տարածում.** Հանդիպում է Շիրակի (լեռնագագաթ Արտենի) և Գարեդեգիսի (Խաչիկ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լուկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 150 կմ է: Հայաստանից բացի աճում է Արևելյան Միջերկրածովյան ավազանում և Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1600-2200 մ բարձրությունների վրա՝ չոր քարքարոտ լանջերին, տափաստաններում, մարգագետնա-տափաստանում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ արածեցման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Արտենի լեռնագագաթի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



83. *Inula acaulis* Schott. & Kotschy ex Boiss.

Վդմուխ անցողուն

Девясил бесстебельный



**Վատեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Սևանի և Դարեղեգիսի շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ենթալպյան և ալպյան մարգագետիններում, որոնք ենթարկվում են ինտեսիվ արածեցման և որոնց սպառնում է խախտում՝ կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր, համարյա մերկ, սովորաբար անցողուն, հազվադեպ՝ ցողուններով բույս, 5 (15) սմ բարձր.: Տերևները մեծ մասամբ արմատամերձ վարդակում: Ջամբյուղը միայնակ, 3,5-4 սմ տրամագծով: Ծածկոցի թերթերը և ծաղիկների լեզվակները եզրերից և ջղերի երկարությամբ հաճախ մանուշակագույն-կարմրավուն: Սերմիկները թավոտ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Սևանի (Արեգունու ափ, Լճաշեն գյուղի շրջակայք) և Դարեղեգիսի (Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3970 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 4:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2300-2800 մ բարձրությունների վրա. մարգագետիններում, ժայռերի միջև, խոնավ տեղերում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված ինտեսիվ արածեցման և գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանման գոտում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

84. *Inula aucheriana* DC. (= *I. seidlitzii* Boiss.)

Վդմուխ Օշեի  
Девясил Оше



**Վատեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Ստույգ հայտնի է (հաստատված է հերբարիումային նյութով) 1 պոպուլյացիա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Նշվում է մաս Իջևանի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանների համար, սակայն Հայաստանի ԳԱԱ-ի Բուսաբանության ինստիտուտում հերբարիումային նյութերը բացակայում են: Տեսակին սպառնում է անհետացում՝ աճելավայրի ինտենսիվ մելիորացիայի և աղազրկման պատճռով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա դժգույն-կանաչ խոտաբույս 15-60 սմ բարձր.:

Կոճղարմատը հանգույցավոր, ծածկված կոճիկանման գորտնուկային թմբիկներով: Տերևները թեթևակի մալի: Չամբյուղները 5-8 սմ տրամագծով, հավաքված փուխր ողկույզներում: Լեզվակավոր ծաղիկները 1-4 ստամինոդիումներով՝ ծաղկափոշի չառաջացնող առէջներով: Սերմերը մերկ կամ հազվադեպ մազիկներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ ավանի շրջակայք, Մասիս, Երախի լեռնաշղթա): EOO 580 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Անատոլիայում և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա տրավերտիններում, հանքայնացած ճահճային տեղերում, խոնավ աղուտներում, հանքային աղբյուրների մոտ: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, ճահիճների չորացման, գերարածեցման, բուսականության այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** 2008թ. Արարատի ճահիճներին տրվել է բնության հուշարձանի կարգավիճակ՝ «Աղակալած ճահճուտ», սակայն պահպանության ոչ մի կոնկրետ գործողություն չի իրականացվում: Պոպուլյացիան կարիք ունի հատուկ ուշադրության: Պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ստեղծել ԲՀՊՏ Երախ լեռնաշղթայի վրա:

85. *Jurinea elegans* (Stev.) DC.

Յուրինեա նրբագեղ

Наголоватка изящная



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը կապված է լեռնա-արդյունահանող արդյունաբերության ընդլայնման և դրանից բխող ենթակառուցվածքների զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս մինչև 30 սմ բարձրության, ճիպտանման ցողուններով և բրդոտ փնջերով՝ մահացած տերևների անութներում: Չամբյուղները 5 սմ տրամագծով: Ծածկոցը մերկ, ծաղիկները վարդագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Նախիջևանի սահմանից մինչև Շվանիձոր): EOO 70 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ: լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 500-1000 մ բարձրությունների վրա՝ չոր քարքարոտ լանջերին, ժայռոտ տեղերում, ֆրիգանանման համակեցություններում:

Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված լեռնա-արդյունահանող արդյունաբերության և ճանապարհաշինության զարգացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է ստեղծել ԲՀՊՏ Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, սրբալույսացիայի վիճակի մոնիթորինգ:

86. *Jurinea praetermissa* Galushko & Nemirova  
 Յուրինեա չնկատված  
 Наголоватка пропушенная



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում անելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բազմամյա բույս: Վարդակի տերևները վերևից կանաչ, տակից՝ մոխրագույն-խավոտ, փետրածև հատված: Ցողունները սլաքանման, ուղիղ կանգնած 7—20 սմ բարձրության, երկարամագոտ, զամբյուղի տակ սպիտակ-թաղիքավոր: Չամբյուղները միայնակ, 2 սմ տրամագծով: Ծաղիկները վարդագույն:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Լոռու (Կուրթան գյուղի շրջակայք) և Իջևանի (Հաղպատ, Դսեղ, Չորագյուղ, Շահալի, Փամբակ գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 120 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1100-2300 մ բարձրությունների վրա անտառների ժայռոտ տեղերում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, անելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ տնտեսական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

87. *Lactuca takhtadzhianii* Sosn.

Կաթնուկ Թախտաջյանի  
Латук Тахтаджяна



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Վտանգված տեսակ: Ներկայումս հայտնի են երեք պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման հետևանքով աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 50-70 սմ բարձրության, ամբողջական մալի տերևներով: Չամբյուղները փոքր, վահանաձև-հուրանային, հաճախ փռված ծաղկաբույլերում: Ծաղիկները կապույտ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ագատ գետի հովիտ և Ուրծի լեռնաշղթա) և Գարեդեգիսի (Խաչիկ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 400 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 3: Տեսակը բացի Հայաստանից հանդիպում է Նախիջևանում և հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 1000—1600 մ բարձրությունների վրա կիսաանապատում, տափաստաններում, գիպսակիր, կավային, խճաքարոտ լանջերին: Շատ լավ բազմանում է վեգետատիվ եղանակով, առաջացնելով երկար կոճղամատներ, իսկ սերմնային բազմացումը ընկճված է: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և գերարածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**88. Psephellus debedicus (Gabrielian) Gabrielian**  
**Պսեֆելլուս դեբեդի**  
**Псефеллюс дебедский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ է: Հյուսիսային Հայաստանի էնդեմիկ: Հայտնի է մեկ պոպուլյացիա՝ մասնատված արեալով: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 70-105 սմ բարձրության: Արմատամերձ և ստորին ցողունային տերևները 24-42 սմ երկաչության, փետրածև հատված, միջինները՝ ամբողջական կամ 3-5 նեղ-նշտարածև բլթակներով, վերինները՝ ամբողջական:

Չամբողջները միայնակ, գազաթնային, եզրային ծաղիկների հետ միասին 3-4 սմ տրամագծով: Ծաղիկները վարդագույն, եզրայինները՝ մեծացած, 5(7) նեղ-բլթակավոր: Սպին վերևում 2 բթավուն բլթակներով, ներքևում՝ լայնացած, կարճ մագիկներով:

Մերմերը 4-5 մմ երկ., 2-2.5 մմ լայն, բաց դարչնագույն, պապուսը 1-1.5 մմ երկարության:

**Տարածում.** Աճում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի շրջակայք, Սևանի լեռանանցք, Դեբեդ, Չորագետ, Դսեդ): EOO 1475 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտի, ծ. մ. 900-2000 մ բարձրությունների վրա, տափաստանում, մարգագետնա-տափաստանում, թփուտների մացառուտներում, անտառի եզրերին և բացատներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս- սեպտեմբերին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակներով հողերի օգտագործման և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կատարել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**89. Psephellus zangezuri Sosn.**  
**Պսեֆելլոս զանգեզուրի**  
**Псефеллюс зангезурский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ է: Հարավային Հայաստանի էնդեմիկ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա՝ մասնատված արեալով: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 12-35 սմ բարձր., պառկած կամ աղեղնաձև վեր բարձրացող, տերևակալված ցողուններով: Արմատամերձ ցողունները փետրածևից մինչև փետրածև -բաժանված, վերինները՝ ամբողջական: Եզրի ծաղիկները բաց-վարդագույն, նեղ բլթակներով և թելամման ստամինոդիումներով: Սռնակը բթավուն-երկբլթակ, փոշեհատիկները դուրս նետող մագիկների նկատելի օձիքով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Գորիս, Բարձրավան, Տաթև, Կապան, Գեղի): EOO 285 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1700 մ բարձրությունների վրա չոր քարքարոտ և խոտածածկ լանջերին, տրագականտային համակեցություններում, տափաստաններում, անտառների եզրերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակներով հողերի օգտագործման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կատարել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

90. *Rhaponticoides hajastana* (Tzvelev) Agababian et Greuter (= *Centaurea hajastana* Tzvelev.)

Տերեփուկ հայաստանյան  
Василек айастанский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է միայն Շիրակի ֆլորիստիկական շրջանից: Աճելավայրերում բավականին առատ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Ցողունները ուղիղ կանգնած: Չամբյուղները լայն ձվաձև, խոշոր, 25-32 մմ երկարության, 20-40 մմ լայն.: Ծածկոցի թերթերը լայն թաղանթային հավելուկով, 2-4 մմ երկարության: Եզրային ծաղիկները 46-50 մմ երկարության, դեղին: Սերմիկները երկարավուն սպիտակավուն կամ գորշավուն-մոխրագույն, 9-11 սմ երկարության:

**Տարածում.** Հայտնի է Շիրակի ֆլորիստիկական շրջանից (Չաջուռ, Անի, Բագրավան, Սարակապ): EOO 260 քառ. կմ է, AOO՝ 30 քառ. կմ, լոկալիտետները՝ 3:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում ծ. մ. 1400-2000 մ բարձրությունների վրա չոր քարքարոտ լանջերին, տափաստանում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Հողատարածքների յուրացում և աճելավայրերի խախտում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է կատարել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



91. *Rhaponticoides tamanianae* (Agababian) Agababian et Greuter (=Centaurea tamanianae Agababian)

Տերեփուկ Թամանյանի  
Василек Таманян



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Արեալը խիստ մասնատված է և կազմված 2 լոկալիտետներից: Ենթադրվում է պոպուլյացիաների անհատների թվաքանակի կրճատում գյուղատնտեսական գործունեության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս մինչև 80 սմ բարձր.: Յոդունները ստորին մասում կարմրավուն-ծիրանեգույն: Տերևները փետրածև բաժանված, մոխրագույն-դժգույն-կանաչ, նեղ բլթակներով, կռճիկանման-սղոցաեզր: Ծաղկաբույլերը փուխր, վահանիկանման: Չամբյուղները համարյա գնդաձև, 20-30 սմ տրամագծով: Ծածկոցի թերթերը 8 շարքով, ուռուցիկ, նեղ թաղանթային եզրով: Եզրի ծաղիկները պարուրած և ոլորված բլթակներով: Սերմիկը և պապուսը համարյա սև կամ մուգ-դարչնագույն: Չափազանց գեղազարդ բույս է:

**Տարածում.** Հանդիպում է Շիրակի (Կրաշեն գյուղի շրջակայք) և Դարեղեզիսի (Խաչիկ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 176 կմ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1800-1900 մ բարձրությունների վրա տափաստանում, տափաստանային թփերի մացառուտներում, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեզրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդլայնման և գերարածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն արժանացնել երկու լոկալիտետները, կազմակերպել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

92. *Scorzonera gorovanica* Nazarova

Խինձ գորովանի  
Козелец горованский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Հայաստանում հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ մասնատված արեալով: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 4-15(18) սմ բարձր.: Տերևները մինչև ծաղկելը սեղմված են հողին, խիստ ալիքավոր-գանգրահեր, 6-10 մմ լայն.: Արմատը 4-9(15) սմ խորքում առաջացնում ընկույզանման կամ երկարավուն-ձվաձև պալար: Յոդունները 1-2 (հազվադեպ 3): Ամբողջ բույսը փոքր ի շատե խիտ ոստայնանման թավոտությամբ: Չամբյուղները նեղ-գլանաձև: Սերմիկները 15 մմ երկարության, կողերի երկարությամբ թմբիկավոր, երբեմն մերկ: Պապուսը սպիտակավուն կամ դեղին:

**Տարածում.** Աճում է Երևանի (Գոռավան, Վեդի, Արարատ, Երասխ) և Դարեղեգիսի (Վերնաշեն գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 870 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա չոր քարքարոտ և խոտածածկ լանջերին, տրագականտային համակեցություններում, կիսաանապատում և ավազային անապատում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակներով հողատարածքների յուրացման և ավազուտները օգտագործելու հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի՝ «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

93. *Scorzonera szovitzii* Grossh.

Խինձ Շովիցի  
Козелец Шовица



**Վատեզորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանում՝ խիստ մասնատված արեալով: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 15-25 սմ բարձրության: Արմատը երկար գլանաձև, ծայրին կլորավուն, պալարանման հաստացումով: Յողունը սովորաբար միայնակ, համարյա մինչև 2/3-ը տերևակալած, մեկ զամբյուղով: Տերևները գծային, տափակ, 2-5 սմ լայն.: Ծաղիկները դեղին, զամբյուղը գլանաձև, պտղի ժամանակ մինչև 3 սմ երկարության: Սերմերը 15-20 մմ երկարության, գլանաձև, թմբիկավոր մակերեսով:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի (Երանոսի լեռնաշղթա, Խոսրով գետի կիրճ) և Դարեղեգիսի (Վայքի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 155 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-2000 մ բարձրությունների վրա. խճաքարոտ տեղերում և քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

94. *Sonchus araraticus* Nazarova et Barsegian

Իշամառու արարատյան

Осот араратский



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հիմնականում գյուղատնտեսական գործունեության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 150-230 սմ բարձրության: Կոճղարմատը բազմազմբեթ: Ցողունը պարզ, մերկ, վերին մասում թավոտ: Ստորին ցողունային տերևները մակույկանման, վերինները՝ գծային-նշտարած, մանր սպիտակատամնավոր եզրերով: Ծաղկաբույլը բազմաթիվ (40-50) ծաղիկներից կազմված զամբյուղներով: Ծաղիկները դեղին: Սերմերը 2-3 մմ երկարության, 3-4 նիստերով, դարչնա-մոխրագույն:

**Տարածում.** Աճում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (ավան Արարատ): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 850 մ բարձրությունների վրա. հանքայնացած և թույլ աղակալած միայն կնյունի համակեցությամբ պատված ճահիճներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին: Հիդրոհալոֆիտ բույս է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակներով հողատարածքների յուրացման, ճահիճների չորացման, գերարածեցման, բուսականության այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** 2008թ. Արարատի ճահիճները ընդգրկվել են բնության հուշարձանների ցանկում, սակայն պահպանության գործողություններ դեռևս չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**95. Steptorhamphus czerepanovii Kirp.**  
**Ստեպտորամֆուս Չերեպանովի**  
**Степторамфус Черепанова**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միայնակ ցողունով բույս 25-55 սմ բարձրության: Ցողունային տերևները ամբողջական: Ծաղկակիրները բարակ: Մերմիկները էլիպսաձև, մուգամուշակագույն, մեկ միջին կողով, ամբողջությամբ ծածկված սպիտակ ծծիչանման մազիկներով՝ ուղղահայաց տեղավորված սերմի մակերեսին:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի («Խոսրովի անտառ» պետական արգելոց) և Դարեղեգիսի (Հորադիս և Խնձորուտ գյուղերի միջև) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 70 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1400-1800 մ բարձրությունների վրա քարաքափվածքներին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի ծավալի և կառուցվածքի ուսումնասիրություն, նոր աճելավայրերի հայտնաբերում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

96. *Steptorhamphus persicus* (Boiss.) O. et B. Fedtsch.

Ստեպտորամֆոս պարսկական  
Степторамфус персидский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է գյուղատնտեսական հանդակների համար ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, ամբողջական, մեծ ստորին տերևներով

մինչև 30 սմ երկ. և հզոր արմատով: Ծաղկակիրները գեճային թավոտությամբ:

Մերմիկները սրացած էլիպսաձև, դեղնավուն, արտահայտված միջին կողով: Պապուսի արտաքին պսակը լավ զարգացած, կազմված բազմաթիվ հաճախ բազմաշարք ոսկեգույն մազիկներից:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երանոսի լեռնաշղթա, Ուրցաձորի շրջակայք): EOO 80 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Իրանում, Թուրքմենիստանում, Աֆղանստանում, Պակիստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1400 մ բարձրությունների վրա. չոր ժայռոտ լանջերին և խճաքարոտ քարաթափվածքների վրա: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական նպատակներով հողատարածքների օգտագործման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, պոպուլյացիայի ծավալի և կառուցվածքի հետազոտում, նոր աճելավայրերի որոնում:

**97. Tanacetum zangezuristicum Chandjian**  
**Լվածադիկ Չանգեզուրի**  
**Пижда зангезурская**



**Կատեգորիա.** EN B1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է միայն հարավային շրջաններից՝ Չանգեզուրի, Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաներից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին Հայաստանում սպառնում է տարածման և բնակության շրջանի կրճատում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 10-20(30)սմ բարձր.: Տերևները մերկ, փետրածև հատված, թեթևակի մսալի՝ սրածայր մասերով: Յողունները բազմաթիվ, գազաթնային մեկ զամբյուղով, սպիտակ միաշարք լեզվակավոր եզրային և կենտրոնական խողովակաձև, քառատամ դեղին ծաղիկներով: Ծածկոցի թերթերը նեղ թաղանթային մուգ գույնի երիզով: Մերմիկները 5-6 երկայնակի կողերով, վերևում երկար թաղանթային ամբողջական պապուսով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում (Չանգեզուրի, Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաներ): EOO՝ 580 քառ. կմ, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Ընդհանուր արեալը ընդգրկում է Գարաբաղը (Մռավի լեռնաշղթա):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ալպյան գոտում ծ. մ. 2500-3600 մ բարձրությունների վրա ժայռոտ լանջերին, քարքարոտ, խճաքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին: Օժտված է գեղազարդային հատկանիշներով:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի պայմանների փոփոխություն, քոչվոր անասնապահություն, տրորում՝ արածեցման հետևանքով, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ, մոնիթորինգ, արհեստական պայմաններում վերարտադրություն:

98. *Tomanthea carthamoides* (DC.) Takht.

Տոմանթեա կանճրականնան

Томантея сафлоровидная



**Կատեգորիա.** CR A 2 abc; B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2ab(I,ii,iii,iv,v); C 1+2(i); D  
Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտեսիվ յուրացվող տարածքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս, ուղիղ, պարզ կամ թույլ ճյուղավորված փղոսկրյազույն ցողուններով 15-40 սմ բարձրության: Տերևները ամբողջական, էլիպսաձև կամ նշտարաձև, երկար ներքև սահող, ցողունագիրկ, կաշենման, հաստ լավ արտահայտված ջղերով: Չամբյուղները մեծ, գազաթնային, մեկական, բազմածաղիկ, ձվաձև; ծածկոցի թերթերը կաշենման, հարթ, նեղ-եռանկյուն հավելուկներով: Ծաղիկները ոսկեգույն-դեղին, կաշուն: Վերնակապը վարդա-մանուշակագույն, մեծ, 5 մմ երկ.; սալին դեղին, մանր-մազոտ, դուրս ցցված առէջի խողովակից: Պապուսը կրկնակի, բարակ թարթիչավոր խոզաններով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ուրծի լեռնաշղթայի ստորոտ, Սուրենավանի շրջակայք): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է հյուսիս-արևելյան Անատոլիայում :

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-900 մ բարձրությունների վրա՝ չոր քարքարոտ, կրաքարային լանջերին, օշինդրային կիսաանապատում, ֆրիգանոիդներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ հողատարածքների յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անրաժեշտ է իրականացնել նոր աճելավայրերի որոնում, հայտնաբերելու դեպքում սահմանել խիստ հսկողություն, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:






100. *Tragopogon armeniacus* Kuth.

Մինձ հայկական

Козлобородник армянский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է արեալի կոճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ակտիվացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա կամ երկամյա բույս՝ 25-75 սմ բարձրության: Տերևները գծային, կիսացողունազիրկ: Ցողունը ուղիղ, ճյուղավորված: Ծաղկակոթերը զամբյուղների տակ չհաստացած կամ թեթևակի հաստացած: Չամբյուղները ծաղիկներին հավասար կամ դրանցից աննշան կարճ, 5-8 ծածկոցի թերթերով, մուգ յասամանագույն ծաղիկներով: Մերմիկները երկայնակի կողերով, արտաքինները՝ 5 քևանման կողերով և ակոսներով, վերին մասում հանկարծակի փոխակերպվող երկար կտուցի, ներքինները՝ ավելի թույլ արտահայտված կողերով, բոլորը համարյա սերմիկին հավասար փետրածև մագիկներից կազմված, հիքում օղակածև միաձուլված պապուսով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի ֆլորիստիկական շրջանում (Չաջուռ, Սպանդարյան, Աղին, Բագրավան): EOO՝ 480 քառ. կմ, AOO՝ 16քառ. կմ, լոկալիտետները՝ 4:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտու 1400-1900 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիսին-հուլիսին: Փորձարարական հողամասում աճեցված բույսերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պսակի գույնը մուգ-յասամանագույն է, ընդհանուր ծածկոցի թերթերի թիվը նույնիսկ մեկ բույսի մոտ փոփոխական է՝ 5-8 հատ, իսկ ցողունը կարող է լինել 25-75 սմ բարձրության:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես տնտեսական գործունեության զարգացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության համար միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել մոնիթորինգ բնական աճելավայրերում:

**101. Tragopogon collinus DC.**  
**Մինձ բլրակային**  
**Козлобородник холмовой**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հանդիպում է Հայաստանի ծայր հարավում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հատկապես հողատարածքների յուրացման և ճանապարհաշինության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա ցածրահասակ բույս՝ 5-25 սմ բարձր.: Տերևները նեղ-գծայինից մինչև նշտարած, սպիտակավուն ալիքավոր կամ ուղիղ եզրերով: Յողունը ուղիղ, չձյուղավորված: Ծաղկակոթերը զամբյուղների տակ չհաստացած: Ծաղիկները մուգ վարդագույն: Ծածկոցի թերթերը ծաղիկներից երկար: Մերմիկները երկայնակի կողերով, վերին մասում աստիճանաբար փոխակերպվող հաստավուն համարյա հարթ, կարճ կտուցի: Պապուսը կազմված հիմքում օղակաձև ձուլված փետրածև մազիկներից:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Շվանիձոր, Նյուվաղի, Աստագուր): EOO՝ 40 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Արևելյան Անդրկովկասը և Իրանը: Ամենուրեք հանդիպում է հազվադեպ:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 550-650 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա հողերի յուրացման և ճանապարհաշինության պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության համար միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ, մոնիթորինգ:

102. *Tragopogon tuberosus* K. Koch  
**Մինձ պալարակիր**  
**Козлобородник клубненосный**



**Կատեգորիա.** VU B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Խոցելի տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում ներկայումս հայտնի են երեք լոկալիտետներ հանրապետության տարբեր մասերում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության մակերեսի կոճատում՝ կապված տնտեսական գործունեության, հատկապես քաղաքաշինության և ճանապարհաշինության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս՝ 35-70 սմ բարձրության, որոշ խորության վրա պալարանման հաստացած արմատով: Արմատամերձ տերևները երկար, գծային, ցողունայինները՝ հիմքի մասում շատ լայնացած, դեպի վեր աստիճանաբար նեղացող: Ցողունը ուղիղ, չճյուղավորված: Ծաղկակոթերը զամբյուղների տակ չհաստացած կամ պտղի ժամանակ թեթևակի հաստացող: Ծաղիկները վառ-դեղին: Ծածկոցի թերթերը ծաղիկներին հավասար: Սերմիկները թմբիկավոր-թեփավոր, կտուցը սերմիկի լայնացած մասից կարճ կամ դրան հավասար: Պապուսը կազմված հիմքում օղակաձև ձուլված փետրաձև մազիկներից:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Իջևան), Լոռու (Շահնագար) և Չանգեզուրի (Կապան) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 6230 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախակովկասը, Դաղստանը, Արևելյան Անդրկովկասը: Ամենուրեք հանդիպում է հազվադեպ:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 800-1600 մ բարձրություններին վրա. տափաստաններում և մարգագետներում, թփուտների մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավարրի կորուստ կապված քաղաքաշինության և ճանապարհաշինության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության համար գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել նոր պոպուլյացիաների հայտնաբերում, հետազոտում և մոնիթորինգ

**Berberidaceae – Ծորենազգիներ - Барбарисовые**

**103. Leontice armeniaca Boiv.**

**Առյուծաթաթ հայկական**

**Леонтика армянская**



**Կաստեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Ներկայումս հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության մակերեսի կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ, առաջին հերթին տարածքները գյուղատնտեսական նպատակով օգտագործելու պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս պալարաման փքված ստորերկրյա մասով և եռմասնյա տերևներով: Թխակապույտ բույս 10-25 սմ բարձրության: Ծաղիկները դեղին, հավաքված ողկույզում: Պտուղը օվալ տուփիկ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատյան հարթավայր, Երախի լեռնաշղթա, Ուրծի լեռնաշղթայի ստորոտ): EOO 460 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում և հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 900-1200 մ բարձրությունների վրա կիսասանապատում, չոր քարքարոտ, աղային-կավոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և գերարածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Միակ պոպուլյացիան արժանի է մեծ ուշադրության, պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

**Boraginaceae - Գաղտրիկազգիներ - Бурачниковые**

104. *Myosotis propinqua* Fisch. et Mey. ex DC.

**Անմոռուկ ցեղակից**

**Незабудка родственная**



**Կասեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է անտառային գոտում և կարող է հեշտությամբ անհետանալ անտառների հատումների պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս, տերևները վարդակով, երբեմն ուղիղ բարձր ցողուն առաջացնող:

Յողունի թավոտությունը ստորին մասում խառնված-բրդոտ՝ հորզոնական երկար մազիկներից:

Ծաղկաբույլը բազմածաղիկ, ցողունի տերևակալած մասից մի փոքր հեռացած: Ծաղկակոթերը

գերազանցում բաժակին ոչ ավելի քան 1-2 անգամ: Պսակը երկնագույն 4-5 մմ տրամագծով,

տափակ ետծալով: Պտուղը՝ երեմը հիմքի մոտ սպիտակ մսալի հավելուկով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) և Մեղրու (Գողթանի լեռնանաճյուղեր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 125 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային Իրաքում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1100-1800 մ բարձրությունների վրա. անտառներում: Ծաղկում է մայիս-հունիսին ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, անտառների հատում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող»

պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է. պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

105. *Nonea polychroma* Selvi et Bigazzi  
**Նոնեա բազմագույնանի**  
**Нонея многоцветная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակը նկարագրվել է 2001 թ-ին Թուրքական Հայաստանից և հայտնաբերվել Հայաստանում 2002 թ.:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ մաս CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Երկամյա կամ բազմամյա բույս 35 սմ բարձր., կոշտ թավոտությամբ:

Յողունները բազմաթիվ փոված կամ բարձրացող: Ծաղկերույլը պտղի ժամանակ երկարացող:

Տերևները կանաչավուն, մատաղիք, նշտարած, սուր: Ծաղիկները բազմաթիվ 5 մմ երկարության,

ներսից դեղնավուն դեպի վերև՝ վարդագույն-կապույտի փոխվող: Պտուղները մանր, երիկամած:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Խոր-Վիրապ, Արարատ, Վեդի, Երախի լեռնաշղթայի կիրճ): EOO 42 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, կիսասանապատում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է. պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Երախի լեռնաշղթայի վրա:

106. *Nonea rosea* (M.Bieb.) Link.  
**Նոնեա վարդագույն**  
**Noneя розовая**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանում տեսակին սպառնում է սահմանափակ արեալը և էկոլոգիական առանձնահատկությունը՝ աճում է ռուդերալ՝ աղբոտ տեղերում: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Երկամյա կամ բազմամյա կոշտ թավոտությամբ բույս մինչև 25 սմ բարձր.:

Ծաղկերույր ծածկված ծաղիկներից երկար, կանաչ գեղձավոր տերևակիցներով: Ծաղիկները բազմաթիվ, միմյանցից հեռացած: Բաժակը խողովակաձև, 5 մմ երկ., մինչև կեսը բաժանված 5 նեղ ատամիկների: Պսակը պնակաձև, մանուշակա-վարդագույն կամ կապտավուն: Փոշանոթները դեղին: Պտուղները գլանաձև:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Մեղրու (Շվանիձորի և Ալդարայի շրջակայք, լեռնագագաթ Բերդաքար) և Չանգեգորի («Շիկահող» պետական արգելոց, լեռնագագաթ Խուստուփ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 935 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևելյան Կովկասը, Անդրկովկասը, Հյուսիս-արևելյան Անատոլիան, Հյուսիսային Իրաքը և Հյուսիսային Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1500 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն, բնակավայրի կորուստ կամ դեգրադացիա կապված տարածքի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է. պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



107. *Paracaryum laxiflorum* Trautv.  
**Պարակար նոսրածաղիկ**  
**Паракариум рыхлоцветковый**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ ֆլորստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը արեալի սահմանափակությունն է և գերարածեցումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Երկամյա կամ բազմամյա ոչ խիտ խոզանածև-մազոտ բույս, 20-40 սմ բարձր.: Արմատամերձ և ստորին ցողունային տերևները երկար կոթերով, երկարավուն-նշտարածև:

Ծաղկաբույլը հուրանածև 2 զազաթնային և մի քանի եզրային ոլորքներով: Բաժակը համարյա

մինչև հիմքը բաժանված նեղ-նշտարածև մասերի: Պսակը մանր, սովորաբար մուգ-ծիրանեգույն:

Ընկույզիկները տափակած-գնդածև, չփքված, տափակ, մանր-սրատամ և կարճ փշիկներով

ծածկված թևով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Շիրակի ֆլորիստիկական շրջանում (Ջաջուռի լեռնանցք, լեռնագագաթ Յլասար): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 7,5 կմ է: Հայաստանից բացի աճում է Արևելյան Ամստոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1700-2000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, հողերի աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է. պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ջաջուռի լեռնանցքի տարածքում:

108. *Rochelia cardiosepala* Bunge  
**Ռոչելիա սրտաձևարժակ**  
**Рохелия сердцевидночашечная**



**Կասեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հանդիպում է երկու ֆլորստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական վտանգներն են սահմանափակ արեալը և գերարածեցումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 5-20 սմ բարձր., առետմ կամ թեթևակի հեռացած խոզաններով:

Արմատամերձ տերևները էլիպսաձև, ցողունայինները՝ նեղ նստադիր, վերինները՝ գծային, երկու կողմից առետմ խոզանավոր: Խոզանները նստած թմբիկների վրա: Պտղատու ողկույզները փուխր: Ծաղկակոթերը բարակ, թեքված: Պսակը կապույտ, համարյա բաժակին հավասար: Բաժակաթերթերը պտղի ժամանակ մեծացող, ուղիղ սրտաձև-եռանկյուն, բրգաձև մոտեցող: Ընկույզիկները 2-ական, միասերմ:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի (Երանոսի լեռնաշղթա, լեռնագագաթ Կոտուց) և Դարեղեգիսի (Վայքի թջակայք) ֆլորստիկական շրջաններում: EOO 175 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավային Անդրկովկասը, Անատոլիան, Միջին Ասիան, Իրաքը, Իրանը, Աֆղանստանը և Պակիստանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1400-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Brassicaceae – Խաչածաղկավորներ - Крестоцветные**

109. *Alyssum hajastanum* V. Avet.

**Վառվռուկ Հայաստանի**

**Бурачек айастанский**



**Վաստեզորիա.** EN B 1ab(ii)+ 2 ab(ii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի են երկու լոկալիտետներ Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված ռեկրեացիայի ակտիվացման և արածեցման հետ: Ընդգրկված էր Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ 2՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 8-15 սմ բարձր., ծածկված առսեղմ թեփանման մագիկներով: Տերևները հականշտարածևից մինչև գծային: Յողունները պարզ, չճյուղավորված: Պտղաբույլը թեթևակի երկարավուն, կղմինդրաձև չդասավորված ծաղիկներով և առանցքից հեռացած պտղակոթերով: Պսակաթերթերը գունատ-դեղին: Կարճ առէջները հիմքում ամբողջական հավելուկով, երկար առէջները ստորին մասում միակողմանի ատամնաձև թևով: Պատիճակները օվալ, 3,5–4 մմ երկ., սունակի տակ զոգավոր, ծածկված առսեղմ թեփանման բազմաճառագայթ մագիկներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Սևանի ֆլորիստիկական շրջանում (Արտանիշ., Բաբաջան և Դարա գյուղերի միջև): AOO 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Տարածությունը աճելավայրերի միջև 10 կմ է: Ընդհանուր արեալը, Հայաստանից բացի, ընդգրկում է Հարավ-Արմտյան (Մեխիսթիա) Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտու 2000 - 2300 մ բարձրությունների վրա, չոր լանջերին, գիհու նոսրանտառում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման շրջանի սահմանափակություն, փոքրաթիվ աճելավայրեր, ռեկրեացիոն ազդեցություն, արածեցում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանական գոտում:

Անհրաժեշտ է. հատուկ հսկողություն, մոնիթորինգ, որոնողական աշխատանքներ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով:

110. *Arabis laxa* Sibth. & Smith  
 Արարախտս փխրուն  
 Резуха рыхлая



**Կասեգորիա.** CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա Չանգեգորից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված անտրոպոգեն գործոնների՝ ռեկրեացիայի ակտիվացման և արածեցման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվոնցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա կամ երկամյա բույս՝ 30-60 սմ բարձր.: Յողունները ճյուղավորված:

Արմատամերձ տերևները քնարածկ, միջինները՝ երկարավուն, սուր, հիմքի մոտ սրտաձև ցողունագիրկ: Պսակաթերթերը 7-9 մմ երկ., սպիտակավուն: Պատիճները 6-12 սմ երկ., քառանիստ տափակացած հարթ փեղկերով, առանցքից թեքված, կախված, ուղիղ կամ կորացած:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Չանգեգորի ֆլորիստիկական շրջանում (Սրաշեն և Նեքին Հանդ գյուղերի շրջակայքում): AOO 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Արևելյան Նախակովկասը, Արևելյան Անդրկովկասը, Թալիշը, Հարավային Եվրոպան (Բուլղարիա), Հարավ-Արևմտյան Ասիան (Անատոլիա, Արևմտյան Սիրիա):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու 800-900 մ բարձրությունների վրա, անտառի եզրերին, թփուտներում, ստվերոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի դեգրադացիա կամ կորուստ՝ կապված տնտեսական գործունեության ակտիվացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Աճելավայրերից մեկը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, ներկա վիճակի ճշտում, նոր աճելավայրերի հայտնաբերում, մոնիթորինգ:

111. *Asperuginoides axillaris* (Boiss. et Hohen.) Rauschert (= *Buchingera axillaris* Boiss. et Hohen.)

**Բուխինգերա անութային**  
**Бухингера пазушная**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասում հայտնի է Հայաստանից, որտեղ հանդիպում է միայն Երևանի տարբեր շրջաններում: Հայտնի են երեք լոկալիտետներ: Տարածման շրջանի մակերեսը 100 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված քաղաքաշինական գործունեության ընդլայնման և Երևանի սահմանների ընդարձակման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա բույս, գետնատարած փոված կամ բարձրացող ճյուղերով, պատված խարխիսանման մազիկներով: Յողունները 7–70 սմ բարձրության: Տերևները երկարավուն կարճ կոթուններով: Ծաղիկները միայնակ սպիտակ պսակաթերթերով: Պտուղը պատիճակ կլորավուն, տափակ, տերևների անոթներում, միասերմ բներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ Երևան քաղաքի տարածքում (Հրազդան գետի կիրճ, Նորքի այգիներ, Ջրվեժ): EOO՝ 30 քառ. կմ, AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Իրանը և Միջին Ասիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1000 - 1500 մ բարձրության վրա չոր լանջերին, մոսրանտառում: Ծաղկում է ապրիլ ամիսին, պտղաբերում՝ մայիսին-հունիս:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների կորուստ կամ դեգրադացիա՝ քաղաքաշինության զարգացման պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել հատուկ հսկողություն տեսակի նկատմամբ, որոնողական աշխատանքներ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով, մոնիտորինգ:

112. *Crambe armena* N.Busch  
**Ծովակաղանք հայկական**  
**Катран армянский**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) +B 2ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Հայաստանում հայտնի են երկու լոկալիտետներ, իսկ Նախիջևանում՝ մեկ, որտեղից նկարագրվել է (Նախիջևանի աղահանքեր): Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ց պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում տնտեսական գործունեության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Բացակայում է նաև CITES-ի և Բեռնի կոնվոնցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, բոլորովին մերկ բույս՝ մինչև 60 սմ բարձրության: Յողունները բարակ, ճյուղավորված: Արմատները տերևները հակաձվածև, ատամնաեզր, կարճ կոթուններով: Պսակաթերթերը սպիտակ, 3.5-4 մմ երկարության: Պատիճակները չբացվող, երկանդամ. ստորինը՝ առանց սերմի, կարճ ծաղկակոթի նման, վերինը՝ մեկ սերմով, խոշոր, գնդաձև կամ ձվաձև:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի (Արեգ գյուղի շրջակայք) և Երևանի (Գոռավան գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետները՝ 2, միմյանցից հեռացած են 95 կմ: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավային Անդրկովկասը:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. կավոտ լանջերին, կիսասանապատներում : Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման սահմանափակություն, տնտեսական գործունեություն:

**Պահպանության միջոցառումներ.** Աճելավայրերից մեկը պահպանվում է «Գոռվանի ավազուտներ» արգելավայրում, որը ընգրկված է «Խոսրովի անտառ» արգելոցի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ, մոնիթորինգ:

113. *Didymophysa aucheri* Boiss.

Չուխտակ Օշեյի  
Двойчатка Оше



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի են երկու պոպուլյացիաներ Արագած լեռնազանգվածից և Գեղամա լեռնաշղթայից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության և հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Ընդգրկված էր Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա գետնատարած բույսեր՝ փուխր ճիմեր առաջացնող, բարձրացող ընձյուղներով: Ծաղկացողունը թելանման, 5–10 սմ բարձրության: Տերևները հաստավուն, հիմքում սեպաձև, գազաթնային մասում 3–5 գծային մասերով: Ծաղիկները սպիտակ պսակաթերթերով:

Պատիճակները 4–8 մմ երկարության, 8–13 մմ լայնության, գնդաձև փքված բարակապատ բներով և շատ նեղ միջնորմով, (2)4 սերմերով;

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի (Արագած լեռան խառնարան) և Գեղամի (Գեղամա լեռնաշղթայի Աղուսարք լեռան գագաթ) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2. իրարից հեռացած են 72 կմ: Ընդհանուր արեալը ընդգրկում է Մեծ Կովկասի արևելյան մասը (լեռնագագաթ Շախ-դաղ), Փոքր Կովկասը (բացի Հայաստանից նաև լեռնագագաթ Գյամիշ), արևելյան Անատոլիան, Իրանը, Իրաքը և Միջին Ասիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում ծ. մ. 3450-3900 մ բարձրությունների վրա. լեռների գագաթնամերձ քարաթափվածքներին, քարքարոտ լանջերին: Ծաղկում է հուլիս ամիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

114. *Diptychocarpus strictus* (Fisch.) Trautv.

Երկպտղիկ սեղմված

Двоякоплодник прижатый



**Կասեզորիա.** CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն Նախիջևանին սահմանամերձ մեկ լոկալիտետից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում անտրոպոգեն գործոնների ազդեցության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա բույս՝ 10–40 սմ բարձրության., ստորին մասում հաճախ թավոտ, հազվադեպ՝ մերկ: Տերևները գծային կամ փետրաձև բաժանված՝ գծային մասերի: Ծաղկաթերթերը գծային, ինչպես նաև սերմերը ծիրանագույն: Պատիճները նեղ գծային, ուղիղ կանգնած, 25-80 սմ երկարության, կարճ՝ 3-10 մմ երկ. կտուցով, ստորինները՝ չբացվող, վերինները՝ բացվող կամ բոլոր պատիճները միանման՝ չբացվող կամ բացվող (սովորաբար պոպուլյացիայում ներկայացված են բոլոր տարբերակները՝ դրանցից մեկի գերակշռությամբ): Սերմերը միաշարք, թևավոր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում, Երասխի շրջակայքում: AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավային Անդրկովկասը, այդ թվում՝ Նախիջևանը (Նախիջևան, Նեգրամ, Ջուլֆա), Միջին Ասիան, Իրանը, Աֆղանստանը Պակիստանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ.մ. 700-800 մ բարձրությունների վրա, կավային, թույլ աղակալած հողերում, աղբոտ տեղերում: Ծաղկում է մայիս ամիսին, պտղաբերում՝ հունիսին:


Բնության մեջ կատարված ուսումնասիրությունները և փորձնական ցանքերը հաստատում են, որ այս մոնոտիպ ցեղի համար հայտնի հետերոկարպիան՝ տարածն պտուղների առկայությունը, կապված է միջավայրի պայմանների, հատկապես խոնավության հետ: Հաստատվել է, որ միևնույն պոպուլյացիայի անհատների մոտ բացվող պատիճները միանման չեն: Այսպես, ցողունի վերին պատիճները հասունանում են ավելի շուտ, քան ստորինները: Բացի այդ, վերին պատիճները բացվում են հեշտությամբ և թևավոր սերմերը թափվում են մայր բույսի մոտ կամ տարածվում քամու միջոցով, իսկ ստորինները՝ բացվում են դժվարությամբ կամ չեն բացվում և մնում են ցողունի վրա մինչև վերջինիս չորանալը:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի դեգրադացիա կամ կորուստ՝ հողատարածքների յուրացման և ոռոգման պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կատարել մոնիթորինգ, որոնումներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով:



115. *Draba araratica* Rupr.  
**Ճարտարունկ Արարատի**  
**Крупка араратская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասում հայտնի է միայն Հայաստանից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա խիտ ճիմեր առաջացնող բույս: Տերևները ամբողջական, արմատամերձ վարդակով, խիտ ծածկված երկար պարզ և կարճ եղանաձև մազիկներով: Ծաղիկները դեղին: Ծաղկասլաքները մերկ, 0,5–1,5(2) սմ երկարության: Պատիճակները օվալ կամ համարյա կլորավուն, 2,5–4 մմ երկարության, բները 2–4-սերմերով: Տեսակը նկարագրված է Արարատ լեռնագագաթից:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի (Արագած լեռնագագաթ) և Գեղամի (Գեղամա լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 550 քառ կմ, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեալը բացի Հայաստանից, ընդգրկում է նաև հյուսիս-արևելյան Անատոլիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում ծ. մ. 2300-3300 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Գեղամա լեռնաշղթայի աճելավայրերի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանման գոտու սահմանային հատվածում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

116. *Draba hispida* Willd.  
**Ճարտարուկ խոզանավոր**  
**Крупка шетинистая**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հավաքվել է միայն Արագած լեռնազանգվածից: Տարածման և բնակության շրջանի մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված կլիմայի փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Յածրահասակ բույսեր՝ փուխր ճիմերով: Ծաղկալաքները անտերև 2,5–15 (25) սմ բարձրության: Տերևները հակաձվածև, 1–3,5 սմ երկ., 3–12 սմ լայն., 1–3(7) խոշոր ատամիկներով, հիմքում ձգված կոթունով: Ծաղիկները քառատիպ, դեղին պսակաթերթերը: Պատիճակները 6-13 մմ երկարության, մերկ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի ֆլորիստիկական շրջանում (լեռնազանգված Արագած): AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Մեծ Կովկասը, Արևմտյան, Կենտրոնական, Արևելյան, Հարավ-Արևելյան Անդրկովկասը, հյուսիս-արևելյան Անատոլիան:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում ծ. մ. 3000-3300 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում, խճաքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս ամիսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել նոր աճելավայրերի որոնում , պոպուլյացիայի վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:



118. *Erysimum eginense* Bornm.  
 (= *E. fedorovii* Kassumov)  
 Չագախտ էգինյան  
 Желтушник эгинский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված անտրոպոգեն գործոնների հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Երկամյա խոտաբույս: Յողունը 30-60 սմ բարձրության: Տերևները նեղ-գծային, ամբողջաեզր, ծածկված 2-3- բաժան մագիկներով: Ծաղիկը քառատիպ: Պսակաթերթերը դեղին, 7-8 մմ երկ.: Պտուղները՝ պատիճները ծաղկաբույյի առանցքից մի փոքր հեռացած, հավասարաչափ քառանիստ, ծածկված 3-5-բաժան մագիկներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ապարանի (Արախլեռ), Գեղամի (Չար և Քյանքան գյուղ. շրջակ.) և Երևանի (Էլար, Արզնի, Քանաքեռ, Ջրաբեր, Ողջաբերդ գյուղերի շրջակայքում) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 240 քառ. կմ, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախիջևանը և Անատոլիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1000-1600 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, տափաստաններում: Ծաղկում է մայիս-հունիս ամսներին, պտղակալում՝ հունիսին-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված բնակավայրերի սահմանների ընդարձակման և գյուղատնտեսական գործունեության ակտիվացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Արժանի է հատուկ ուշադրության, պետք է իրականացնել մոնիտորինգ:



120. *Erysimum macrostygma* Boiss.

(= *Erysimum wagifii* Kassumov)

Չագախտ խոշորասպի

Желтушник крупнорыльцевый



**Վատեզորիա.** EN B 1 ab(iii)+ 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն հարավային Հայաստանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված տնտեսական գործունեության ընդլայնման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Բացակայում է նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բարձիկանման ճմեր առաջացնող խոտաբույս: Յողունները բարակ գետնատարած-փռված կամ վեր բարձրացող, ծաղկման ժամանակ 5-15 սմ բարձրության., պտղաբերման ժամանակ՝ մինչև 35 սմ բարձրության: Տերևները նեղ հականշտարածև, համարյա գծային, ամբողջաեզր կամ մանր-ատամնավոր, գազաթի մոտ սրացած, հաճախ հետ թեքված: Ծաղիկները քառատիպ, դեղին պսակաթերթերով: Ծաղկակոթերը պտղի ժամանակ 4-5 մմ երկարության: Պտուղը՝ պատիճ, 2-3,5 սմ երկարության, 3-4 մմ լայնության:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Մեղրու (լեռնագագաթ Գողթան, Բուղաբար, Կարչևան) ֆլորիստիկական շրջանում: EOO՝ 80 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լեռկալիտեսներ՝ 2: Ընդհանուր արեալը ընդգրկում է Նախիջևան, հյուսիս-արևելյան Անատոլիան, հյուսիսային Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և բարձր լեռնային գոտում ծ. մ. 1250-2000 մ բարձրության վրա. չոր լանջերին, ժայռոտ տեղերում, ժայռաճեղքերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղակալում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ կապված տնտեսական գործունեության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, մոնիթորինգ:

121. *Eunomia rotundifolia* C. A. Mey.

Էվնոմիա կլորատերև

Эвномия круглолистная



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված հատկապես կլիմայի գյոթալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա գետնատարած բույս՝ 3-15 սմ բարձրությամբ: Տերևները հակադիր, կոշտավուն, հակաձվածև կամ կլորավուն, ամբողջաեզր, մստադիր, 6-20 սմ երկարությամբ:

Ծաղիկները խմբված՝ գագաթնային, կարճացած, հովանոցանման ողկույզներում:

Բաժակաթերթերը կարմրավուն: Պսակաթերթերը վարդագույն, 8-10 մմ երկարությամբ:

Պատիճակները մոտ 8 մմ երկարության, 3—4 մմ լայնության, ձվաձև-երկարավուն, թթևակի գոգավոր: Սունակը պտղի ժամանակ մոտ 1 մմ:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ապարանի (լեռնագագաթ Բյորոլի) և Գեղամի (Սպիտակ սար, Ակնասար, Եռաթմբեր, Ակնա լիճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 200 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ, լեռնալիտեսներ՝ 2: Ընդհանուր արեալը ընդգրկում է Մեծ և Փոքր Կովկասյան լեռնաշղթաները:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում ծ. մ. 2950-3400 մ բարձրությունների վրա. բարձր լեռների գագաթնամերձ քարաթափվածքներին, քարքարոտ լանջերին: Ծաղկում է հուլիս ամիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես կլիմայի գյոթալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիան պահպանվում է «Ռեյկտային կրկես Բյորոլի լեռան մոտ» բնության հուշարձանի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել մոնիթորիզ, ex-situ պահպանություն:

122. *Hesperis persica* Boiss.  
**Երեքօրնիկ պարսկական**  
**Вечерница персидская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանների մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում, կապված հատկապես, գյուղատնտեսական գործունեության հետևանքով աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 50-60 սմ բարձրությամբ, խիտ ծածկված երկար պարզ, վերին մասում նաև գեղձավոր մազիկներով: Տերևները արմատամերձ: Ծաղիկները միմյանցից հեռացած: Պսակաթերթերը երկարավուն-բլթակավոր ետծալով, մուգ մորեգույն, չորացած՝ գորշ դեղնավուն: Ծաղկակոթերը ներքև թեքված, պատիճները կախված, դժվարությամբ բացվող:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Վեդի, Արարատ, Չովաշեն, Երանոսի և Երախի լեռնաշղթաներ) և Դարեղեգիսի (Արենի, Արփա, Մարտիրոս, Գյուլիդուզ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 1640 քառ. կմ, AOO՝ 32 քառ. կմ, լեռնալիտեսներ՝ 5: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախիջևանը, Թալիշը, Հյուսիս-Արևելյան Անատոլիան, Հյուսիսային Իրաքը, Իրանը և Թուրքմենիան:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 700-1600 մ բարձրությունների վրա, քարքարոտ լանջերին, քարաթափվածքներին, ավազոտ հողերում, ֆրիգանոփոններում և տափաստաններում: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության սահմանափակ շրջանները, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական տարածքների ընդլայնման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Երանոսի լեռնաշղթայի և Չովաշենի պոպուլյացիաների տարածքում ստեղծել պահպանվող տարածք, իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:



123. *Isatis karjaginii* Schischk.  
**Լրջուն Կարյագինի**  
**Вайда Карягина**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է ընդամենը երկու պոպուլյացիաներից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված տնտեսական գործունեության և ռեկրեացիայի զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յոդունը մինչև 40 սմ բարձրության: Տերևները երկարավուն, հազվադեպ ծածկված մագիկներով: ցողունային տերևները եզրերից և գլխավոր ջղի ուղղությամբ ավելի խիտ ծածկված առսեղմ մագիկներով: Ծաղիկները դեղին խմբավորված փոքր խիտ ծաղկաբույլերում: Պտուղը՝ պատիճակ (լայնությունը գերազանցում է երկարությանը), 25–28 մմ երկարության, 29–35 մմ լայնության, մերկ, լայնակի-օվալ, ալիքավոր թևով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ուրծի լեռնաշղթա) և Զանգեզուրի (Շաքիի ջրվեժ) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2, միմյանցից հեռացած են 107 կմ: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է նաև Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1300-1500 մ բարձրության վրա. Ժայռոտ լանջերին: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի սահմանափակություն, միջավայրի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես ռեկրեացիայի զարգացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

124. *Isatis sevangensis* N. Busch  
**Լրջուն Սևանի**  
**Вайда севанская**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հանդիպում է միայն Սևանի հյուսիս-արևելյան ափին: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված տնտեսական գործունեության և ռեկրեացիայի զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակներ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա թխակապույտ խոտաբույս: Ցողունը 30-50 սմ բարձրության: Տերևները հաստ, կաշենման, արմատամերձները՝ երկարավուն – հակաձվածև, ցողունայինները բութ ականջուկներով: Ծաղիկները դեղին՝ խմբված երկարավուն ծաղկաբույլերում: Պտուղը՝ պատիճակ (լայնությունը գերազանցում է երկարությանը), 20–22 մմ երկարության, 7–8,5 մմ լայնության, լայն-էլիպսաձև, հիմքի և գագաթի մոտ լայն-կլորացած, խիտ կարճաթավ, հասունանալիս մուգ գույնի:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Սևանի (Գարանակ, Արդանիշ) ֆլորիստիկական շրջանում: EOO՝ 40 քառ. կմ, AOO՝ 8 քառ. կմ լոկալիտետները՝ 2:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում ծ. մ. 2000-2200մ բարձր. վրա. Ժայռոտ տեղերում, չոր լանջերին: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի սահմանափակություն, միջավայրի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես ռեկրեացիայի հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Տեսակի աճելավայրերը պահպանվում են «Սևան» ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ: Պետք է իրականացնել որոնողական աշխատանքներ նոր պոպուլյացիաներ հայտնաբերելու նպատակով և մոնիթորինգ:

125. *Isatis takhtajanii* V. E. Avet.  
**Լրջուն Թախտաջյանի**  
**Вайда Тахтаджяна**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակեցման շրջանների նվազում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակներ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս՝ մերկ կամ խիտ թավոտ: Յողունը 25–50 սմ բարձրության: Տերևները բարակ, արմատամերձները՝ երկարավուն-էլիպսաձև, զազաթի մոտ սրացած, ցողունային տերևները՝ բութ ականջուկներով: Ծաղիկները դեղին՝ խմբված երկարավուն ծաղկաբույլերում: Պտուղը՝ պատիճակ, 11–15 մմ երկարության, 3–4 մմ լայնության, նեղ-էլիպսաձև, դեպի վեր և դեպի հիմքը կարճ նեղացող:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի (լեռնագագաթ Արագած Գեղարտտի կիրճ) և Ջանգեզուրի (լեռնագագաթներ Մեծ Իշխանասար, Կապուտջուղ, Գազանասար, Յաղլու-դարա և Գոգի լիճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 4890 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Ղարաբաղը և հյուսիս-արևելյան Անատոլիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում ծ. մ. 2200–3300 մ բարձրության վրա. Ժայռոտ լանջերին. քարակուտակներին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղակալում՝ հուլիսին-օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ.** հիմնականում միջավայրի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես կլիմայի փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

126. *Lepidium lyratum* L.  
Նվարդակ քնարածն  
Клоповник лировидный



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ, հայտնի է հիմնականում Երևանից և հարակից բնակավայրերի շրջակայքից, ինչպես նաև Դարեղեգիսից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում և անհետացում՝ կապված բնակավայրերի ընդարձակման և տնտեսական գործունեության զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յոդունը չոլած-ճյուղավոր, 20–60 սմ բարձրության: Տերևները կաշենման; ստորինները՝ քնարածն-փետրածն, ցողունայինները՝ գծային, վաղ չորացող, որի պատճառով ցողունը թվում է անտերև: Ծաղիկները քառատիպ, սպիտակ պսակաթերթերով: Պատիճակները ձվաձև կամ էլիպսաձև, անթև, 1,5–2 մմ երկ., 1,5 սմ լայն.; առնակը նստադիր:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ջրվեժ, Նորք, Դավնայի այգիներ, Փարաքար, Խաթունարիս, Այդր լիճ, Լենուդի գյուղերի շրջակայք) և Դարեղեգիսի (Ջերմուկ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 1500 քառ. կմ, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Ընդհանուր արեալը ընդգրկում է արևելյան Նախակովկասը, Հայաստանը և Նախիջևանը, ինչպես նաև հյուսիս-արևելյան Անատոլիան ու հյուսիս-արևմտյան Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 800-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճուտ, ժայռոտ լանջերին: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** հիմնականում միջավայրի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված, հատկապես, բնակավայրերի տարածքների ընդարձակման, գյուղատնտեսության զարգացման և ճանապարհաշինության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

127. *Leptaleum filifolium* (Willd.) DC.  
**Նրբախոտ քելատերև**  
**Лепталеум нителистный**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ, հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում և անհետացում՝ կապված բնակավայրերի ընդարձակման և տնտեսական գործունեության զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս: Յողունը հիմքից չաված ճյուղավորորված, 3–15 սմ բարձր.: Տերևները գծալին, թելանման, ամբողջական կամ փետրածև բաժանված 3-5 մասերի: Ծաղիկները քառատիպ; պսակաթերթերը սպիտակ կամ թեթևակի վարդագույն: Պատիճները գծալին, տափակած, դժվար բացվող, 15–30 մմ երկ. և 2–3 մմ լայն.: Մերմերը բազմաթիվ, երկարավուն, երկշար:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ուրծի և Երախի լեռներ, Վեդի, Երասխ Արարատ) ֆլորիստիկական շրջանում: EOO՝ 330 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Ընդհանուր արեալը ընդգրկում է արևելյան Նախակովկասը և Նախիջևանը, ինչպես նաև Հարավ-Արևմտյան և Միջին Ասիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է հիմնականում ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-1100 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճոտ լանջերին, կիսաանապատային բուսականության կազմում: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ մայիսին:

**Մահմանափակող գործոններ.** հիմնականում միջավայրի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված, հատկապես, բնակավայրերի տարածքների ընդարձակման, գյուղատնտեսության զարգացման և ճանապարհաշինության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

128. *Pachyphragma macrophyllum* (Hoffm.) N. Busch

**Պախիֆրագմա խոշորատերև  
Пахифрагма крупнолистная**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 18-45 սմ բարձր.: Կոճղարմատը հաստացած, հորիզոնական: Արմատամերձ տերևները մինչև 18 սմ երկ., կոթերով՝ սրտաձև կամ սրտաձև-երիկամաձև տերևաթիթեղով: Պսակաթերթերը սպիտակ, 8–10 սմ երկ.: Ծաղկակոթերը պտուղների ժամանակ հորիզոնական թեքված, 15-20 մմ երկ.: Պատիճակները լայն-հակասրտաձև, 12–18 մմ լայն., շատ լայն թևերով և ուժեղ հաստացած միջնորմով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Թեղուտ): AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է Նախակովկասում, արևմտյան, հարավ-արևմտյան, կենտրոնական Անդրկովկասում, հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700–1000 մ բարձրությունների վրա անտառներում: Ծաղկում է ապրիլ- մայիս ամիսներին, պտղակալում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, լեռնահանքային արդյունաբերության զարգացում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Պոպուլյացիան արժանի է մեծ ուշադրության. պետք է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

129. *Peltariopsis grossheimii* N. Busch  
**Վահանակերպ Գրոսհեյմի**  
**Щитник Гроссгейма**



**Կատեգորիա.** CR B1 ab(iii) + 2 ab (iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է ընդամենը մեկ լոկալիտետից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի կորստի և փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա նուրբ խոտաբույս՝ (5)10-20 սմ բարձր.: Յողունը հիմքից փռված ճյուղավորված: Ստորին տերևները կլորավուն, երկար կոթուններով, ցողունային տերևները երկարավուն-թիավուն, հիմքում նեղացած: Ողկույզները խիտ: Ծաղիկները սպիտակ, քառատիպ: Պտուղը պատիճակ, 4-6 (8) մմ երկ., 2-3 մմ լայն., զգված թելամման կոթուններով:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու (Ագարակի շրջակայք) ֆլորիստիկական շրջանում: AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է նաև Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 500-900 մ բարձրությունների վրա. Չանգեզուրի լեռնաշղթայի ուղղադիզ ժայռալանջերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանապակություն, բնակավայրի կորուստ կամ դեգրադացիա կապված լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետ

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ: Պետք է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ծավալի և կազմի ճշտման նպատակով, ստեղծել պահպանվող տարածք Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում:

130. *Peltariopsis planisiliqua* (Boiss.) N. Busch  
**Վահանակերպ տափակապատիճակ**  
**Щитник плоскостручковый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված տեսակի բնակության միջավայրի փոփոխության և արածեցման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Երկամյա խոտաբույս՝ 30-60 սմ բարձր.: Յողունը ճիպոտաման, միջին մասից ճյուղավորված: Ստորին տերևները ցողունի հիմքում վարդականման խմբված, հակաձված, մսալի, կարմրավուն, թիթեղին հավասար կոթուններով: Ողկույզները նոսր: Ծաղիկները սպիտակ, քառատիպ: Պտուղը պատիճակ, (4)7 – 8(10) մմ երկ., 3-5 մմ լայն., թելաման կոթուններով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Դարեղեգիսի (Աուշ, Շատին, Թերփ, Խաչիկ, Բարձրունի, Ալայազի կիրճ, Հեր-Հեր) և Ջանգեզուրի (Անգեղակոթ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 890 քառ. կմ, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է նաև Նախիջևանում, հյուսիս-արևելյան Անատոլիայում, հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է հիմնականում միջին լեռնային գոտում ծ. մ. 1300-1900 մ բարձր. վրա. լեռնալանջերի քարքարոտ, երբեմն ավազոտ տեղերում, չոր նոսրանտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղակալում՝ մայիսին-հունիսին:

**Մահմանափակող գործոններ.** միջավայրի կորուստ կամ դեգրադացիա գյուղատնտեսական տարածքների ընդարձակման և արածացման պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:


Անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել տեսակը, իրականացնել մոնիթորինգ:



131. *Physoptychis caspica* (Hablitz) V.V. Botschantz.

Գնդապտուղ կասպիական

Шарогнездка каспийская



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հատկապես կլիմայի փոփոխության պատճառով բնակության միջավայրի փոփոխության: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: Ընդգրկված է նաև ՍՍՍՀՄ Կարմիր գրքում: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյան մոխրագույն բույս, աստղաձև մազիկների խիտ թավտոությամբ: Ցողունը 5-15 սմ բարձր.: Տերևները ցողունի հիմքում խմբված, Էլիպսաձև-նշտարաձև, ներքևից դուրս ցցված միջին ջղով: Ծաղիկները քառատիպ, պսակաթերթերը դեղին: Պտուղը պատիճակ, փքված, գնդաձև, 15--20 մմ տրամագծով, նուրբ մոխրագույն թավտոությամբ: Պտղի բները 4 սերմերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեզուրի (Չանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաներ) և Սեդրու (Գոխտան սար) ֆլորիստիկական շրջաններից: EOO՝ 135 քառ. կմ, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է նաև Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, հյուսիսային և հյուսիս-արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում ծ. մ. 2900-3200 մ բարձրությունների վրա ժայռոտ, քարքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս ամիսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանապակություն, կլիմայի գլոբալ փոփոխություն

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, իրականացնել պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:



133. *Pseudovesicaria digitata* (Boiss.) Rupr.  
**Կեղծափուչիկ մատնածև**  
**Лжепузырник пальчатый**



**Կասեզորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասի էնդեմիկ: Հայտնի է միայն Արագած լեռնազանգվածից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: Ընդգրկված է նաև ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Երկամյա մերկ, թխակապույտ բույս՝ 5-10 (20) սմ բարձր. ցողունով: Տերևները մսալի, վերին մասում 3–5 կլորացած բլթակներով: Ծաղկաբույլը խիտ ողկույզ: Ծաղիկները քառատիպ, պսակաթերթերը սպիտակ, ամբողջական: Պտուղը պատիճակ, փքված, էլիպսաձև կամ հակաձվաձև, 7–10 (15–25) մմ երկ., թաղանթալին, ցանցազգիղ միջնորմով բացվող: Պտղի բները 2-4 (6) սերմերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի ֆլորիստիկական շրջանում՝ խառնարանում, հյուսիսային լեռնազագաթի ստորոտին և հյուսիսային ու արևմտյան լեռնազագաթների միջև գտնվող լեռնաթմբի վրա: AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Տեսակը աճում է Կովկասում՝ ընդգրկելով Մեծ Կովկասը և Հարավային Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում՝ ծ. մ. 3600-3900 մ բարձրությունների վրա քարաքափվածքներում և քարափլուզումներում: Ծաղկում է հուլիս ամիսին, պտղակալում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն, միջավայրի կորուստ կամ դեգրադացիա կապված կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, իրականացնել պոպուլյացիայի վիճակի և կազմի հետազոտություններ, մոնիթորինգ:

134. *Rorippa spaskajae* V.I.Dorof.  
**Բողկուկ Սպասկայի**  
**Жерушник Спасской**



**Կասեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հիմնականում կլիմայի փոփոխության հետ կապված՝ աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս ուղիղ կանգնած ցողունով 30-40 սմ բարձր.: Տերևները պարզ: Ծաղիկները դժգույն դեղին: Պատիճները երկարավուն-էլիպսաձև, 5-7 մմ երկ., 3-4 մմ լայն:

**Տարածում.** Հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Որոտան գետի վերնագավառում: AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտու ծ. մ. մոտ 2000 մ բարձրության վրա՝ գետերի ափերին: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալի ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

135. *Sameraria cardiocarpa* Trautv.  
 (= *Sameraria odontophora* Bordz.)  
 Մոմալըջուն սրտապտուղ  
 Самерария сердцеплодная



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հանդիպում է միայն Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված տնտեսական գործունեության զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա մերկ, թխակապույտ բույս, ճյուղավորված ցողուններով 25-35 սմ բարձր.: Յողունային տերևները լայն-նշտարած, հիմքում խոր-սրտածև, լայն ականջուկներով, արմատամերձները՝ երկարավուն-նշտարած: Ծաղիկները քառատիպ, պսակաթերթերը դժգույն դեղին: Պտուղը պատիճակ, չբացվող, կլորավուն-ձվածև, հիմքում սրտածև, զագաթում թեթևակի գոգավոր, եզրերից կարերի ուղղությամբ նեղ թևերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արենի, Չայքենդ): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտները՝ 2: Դրանց միջև տարածությունը 33 կմ է:

Հայաստանից բացի հանդիպում է նաև արևելյան Նախակովկասում և Միջին Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1300-1500 մ բարձր. վրա չոր լանջերին տափաստաններում և ֆրիգամոֆիտներում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն, բնակավայրի կորուստ կամ դեգռադացիա կապված տարածքների օգտագործման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ: Պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

136. *Samerararia glastifolia* (Fisch. & C.A.Mey.) Boiss.  
**Մոմալրջուն լրջունատերև**  
**Самерария вайдолистная**



**Կատեգորիա.** CR B1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հանդիպում է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հանքարդյունաբերության զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա մերկ, թխակապույտ բույս, ճյուղավորված ցողուններով 15-40 սմ բարձր.: Ցողունային տերևները երկարավուն, հիմքում խոր-սրտաձև, լայն ականջուկներով, արմատամերձները՝ երկարավուն: Ծաղիկները քառատիպ, պսակաթերթերը դժգույն դեղին: Պտուղը պատիճակ, չբացվող, կլորավուն, հիմքում սրտաձև, զագաթում թեթևակի գոգավոր, եզրերից կարերի ուղղությամբ լայն կաշենման թևերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Գարեղեգիսի (Արենի) և Մեղրու (Ագարակ) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետները՝ 2: Տեսակը բացի Հայաստանից աճում է նաև Նախիջևանում, հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 400-900 մ բարձր. վրա, չոր, աղային, կավային հողերի վրա ֆրիգանոփիլներում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղակալում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն, բնակավայրի կորուստ կամ դեգրադացիա կապված հանքարդյունաբերության արդյունաբերության զարգացման և ճանապարհաշինության հետ

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

137. *Thlaspi umbellatum* Stev.  
**Շնկոտեն հովանոցավոր**  
**Ярутка зонтичная**



**Կասեզորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հանդիպում է միայն Հայաստանի ծայր հարավում՝ Ջանգեզուրում: Երկու լոկալիտետները միմյանցից հեռացած են 17 կմ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 100 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության և տնտեսական գործունեության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Միամյա նուրբ բույս, բազմաթիվ ցողուններով 5–15(30) սմ բարձր.: Տերևները լայն-նշտարած կամ երկարավուն, հիմքում սրտաձև, ականջուկներով: Ծաղիկները քառատիպ, պսակաթերթերը սպիտակ, խմբված վահանիկանման կարճացած զագաթնային ողկույզում:

Պտուղը պատիճակ, 4–6 մմ երկ., հակառեանկյունաձև, կողքերից տափակացած, հիմքում սեպաձև, զագաթում թեթևակի գոգավոր, անկյունավոր ճառագայթաձև ջղավորված թևերով,

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ճակատեն, Ներքին Հանդ): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետներ՝ 2: Դրանց միջև տարածությունը 17 կմ: Հայաստանից բացի հանդիպում է նաև արևելյան Նախակովկասում և արևելյան Անդրկովկասում, ինչպես նաև հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-900 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին, թփուտների մեջ: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն, Հազվագյուտություն, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված տնտեսական գործունեության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, իրականացնել պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

138. *Thlaspi zangezuricum* Tzvel.  
**Շնկոտեն գանգեզուրի**  
**Ярутка зангезурская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է միայն Հայաստանի ծայր հարավից՝ Ջանգեզուրից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության և կլիմայի գործալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա նուրբ բույս, բազմաթիվ ցողուններով 3-10 սմ բարձր.: Տերևները ամբողջաբլթ, արմատամեծները կոթունավոր, ցողունայինները՝ նստադիր, առանց ականջուկների: Ծաղիկները քառաթիպ, վարդագույն պսակաթերթերով: Պատիճակները 6-9 մմ երկ., անթև, երկու գագաթներին նեղացած, սոնակը 1 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ջանգեզուրի (լեռնագագաթ Խուստուփ, Արավուս) և Մեղրու (Վարդանաձոր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 630 քառ. կմ է, AOO 12 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 3:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիների ծ. մ. 2000-3100 մ բարձրությունների վրա, ժայռաճեղքերում: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված կլիմայի փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ: Պետք է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ստեղծել ԲՀՊՏ Խուստուփի ենթալպյան և ալպյան գոտիներում:



139. *Zuvanda meyeri* (Boiss.) Askerova (= *Malcolmia meyeri* Boiss.)  
**Զուվանդա Մեյերի**  
**Зуванда Мейера**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հանրապետությունում հայտնի է միայն ծայր հարավից՝ Մեղրու ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում և անհետացում՝ կապված բնակավայրերի ընդարձակման և հանքարդյունաբերության զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս՝ մերկ կամ ծածկված մանր ելունդիկներով: Յողունը բարակ, ճյուղավորված, 10–25 սմ բարձր.: Յողունային տերևները ձվաձև-երկարավուն, ամբողջաեզր, ցողունագիրկ ականջուկներով: Ծաղիկները քառաթիպ; պսակաթերթերը վառ-վարդագույն: Պատիճները քառանիստ, երկարավուն ակոսներով, փայլուն 4-6 սմ երկ.: Մերմերը դասավորված մեկ շարքով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրի, Ագարակ, Գուդեմնիս, Կարչևան, Շվանիձոր, Նյուվաղի): EOO 260 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Նախիջևանը, Արևելյան Անդրկովկասը և Թալիշը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտու ծ. մ. 800-1500 մ բարձրությունների վրա՝ խճաքարոտ, քարքարոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** միջավայրի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված բնակության տարածքների ընդարձակման և հանքարդյունաբերության զարգացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակի մոտ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Caesalpiniaceae – Ցեզալպինազգիներ - Цезальпиниевые**

140. **Cercis griffithii Boiss.**

**Հուդայածառ Գրիֆիթի**

**Иудино дерево Гриффита**



**Կասեզորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Ներկայումս հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ կազմված 2 լոկալիտետներից, որոնց միջև տարածությունը 20 կմ է: Ընդ որում տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից փոքր: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության, պտղատու և խաղողի այգիների հիմնման պատճառով տարածքների յուրացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միջին (3-4 մ) բարձրության ծառ, պարզ ամբողջական տերևներով և թափվող տերևակիցներով: Ծաղիկները զիգոմորֆ, համարյա թիթեռնանման, փնջերով, պայծառ վարդագույն կամ կապտավուն: Գեղազարդային տեսակ է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Շվանիձոր և Նյուվաղի): AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Ադրբեջանում, Միջին Ասիայում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 700-900 մ բարձրությունների վրա. կիսաանապատներում, չոր քարքարոտ լանջերին, երբեմն սահմանաշերտերում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղակալում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Callitrichaceae – Վարսագեղազգիներ - Болотниковые**

141. **Callitriche hermaphroditica L.**

**Վարսագեղ հերմաֆրոդիտ**

**Болотник гермафродитный**



**Կասեզորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասում հայտնի է միայն Հայաստանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության, կլիմայի գլոբալ փոփոխության և անտրոպոգեն գործոնների հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ամբողջությամբ ջրում սուզված միամյա լողացող բույս: Տերևները մանր, գծային, մուգ-կանաչ, թափանցիկ, մեկ ջրով: Ծաղիկները տերևների անոթներում, առանց ծաղկակիցների: Ծաղկապատը բացակայում է: Պտուղը չոր, լայն-թեևավոր չորս բլթակներով, և չորս սերմերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ապարանի ֆլորիստիկական շրջանում, Չիլի լճում: AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է բարեխառը Եվրասիան և Հյուսիսային Ամերիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտու ծ. մ. 2000 մ բարձրությունների վրա. լճակներում, ճահճացած տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտություն, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Պետք է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալի ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Campanulaceae - Չանգակազգիներ - Колокольчиковые**

142. *Campanula caucasica* M. Bieb.

**Չանգակ կովկասյան**

**Колокольчик кавказский**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնաբերված է վերջերս, հայտնի է մեկ պոպուլյացիա տեսակի ընդհանուր արեալի հարավային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս, լոկալիտետը՝ 1: Տեսակին սպառնում է աճելավայրերի պայմանների փոփոխություն Սոտքի ոսկու արդյունահանման կոմբինատի գործունեության ընդլայնման և արածեցման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճարմատավոր խոտաբույս: Յողունները ուղիղ կանգնած, 10-20 սմ բարձր.: Ծաղիկները (1)3-7(10) հատ, մանուշակա-կապույտ, խմբված հուրանանման ծաղկաբույլերում: Վարդակի և ստորին ցողունային տերևները (լայն-) նշտարած, ձգված կոթունի, թիթեղի երկարության 1-2-ին հավասար: Ծաղիկները զանգականման կապտա-մանուշակագույն:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Սևանի ֆլորիստիկական շրջանից Սոտք գյուղի շրջակայքից: АОО 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Կովկասի էնդեմիկ է: Տեսակի հիմնական պոպուլյացիան գտնվում է Կովկասի Գլխավոր լեռնաշղթայի արևելյան ծայրամասում: Հայտնի են նաև 2 աճելավայրեր Ղարաբաղում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2150-2250 մ բարձրությունների վրա. մարգագետնա-տափաստանում քարերի մեջ: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ լեռնա-արդյունահանող արդյունաբերության և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է միակ պոպուլյացիան արժանացնել հատուկ ուշադրության: Պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

143. *Campanula massalskyi* Fomin  
 Չանգակ Մասալսկու  
 Колокольчик Массальского



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում մարդածին գործոնների ազդեցության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ, խիտ թաշյա թավոտությամբ: Յողունները 4--20 սմ բարձր.: Ծաղիկները 1—5, հավաքված վահանիկանման-ողկույզային ծաղկաբույլերում, կապույտ:

Տերևները ձվաձև-սեպաձև, մսալի, ալիքավոր եզրերով: Ծաղիկները բաց երկնագույն:

Գեղագարդային բույս:

**Տարածում.** Հայաստանում հայտնի միայն Արտենի (Բոգուտլու) լեռնագագաթից, Շիրակի ֆլորիստիկական շրջանից: EOO 12 քառ. կմ է, AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից դուրս հայտնի են 2 աճելավայրեր Հյուսիս-արևելյան Անատոլիայում, որոնցից 1 (Դիգոր-չայ, Բեշկիլիսա)՝ մոտիկ է հայկականին:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1100-1700 մ բարձրությունների վրա. հրաբխային ժայռերի վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ Արտենի լեռից օբսիդիանի և պեռլիտի արդյունահանման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է. պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ և արգելավայրի ստեղծում Արտենի լեռնագագաթի վրա:

144. *Campanula minsteriana* Grossh. (= *C. karakuschensis* Grossh.)  
**Չանգակ Մինստերի**  
**Колокольчик Минстера**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է, լոկալիտետները՝ 3:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր *C. karakuschensis* Grossh. անվանումով 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ, բարձիկանման ճիմ առաջացնով բույսեր: Յոդունները վեր բարձրացող, 4--16 սմ բարձր.: Վարդակային տերևները թիանման, սեպածև ձգված կոթունի: Ծաղիկները 1—4, վահանիկանման ծաղկաբույլերում, մանուշակագույն-կապույտ:

Գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Տիգրանաշեն և Չանգակատուն գյուղերի միջև, Խաչիկ, Գնիշիկ, Գանձակ, Խնձորտ): EOO 380 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, Հյուսիս-արևմտյան Իրանում, որտեղ նույնպես հազվագյուտ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջինից մինչև արևալայն գոտի, ծ. մ. 1200-3000 մ բարձրությունների վրա. կրաքարային ժայռերին: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

145. *Campanula propinqua* Fisch. & C. A. Mey.

Չանգակ ազգակից

Колокольчик родственный



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա տեսակի ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում, ինչպես նաև միջավայրի պայմանների վատացում, մարդածին գործոնների ազդեցության հետևանքով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանից դուրս, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Եղանածև ճյուղավորված միամյա խոտաբույս 3-15 (30) սմ բարձր.: Ստորին ցողունային տերևները թիանման, ձգված ոչ պարզ երևացող կոթունի: Ծաղիկները գազաթնային և ճյուղավորված ցողունների անկյուններում, կարճ կոթերով, զանգականման-ձագարածև, կապտամանուշակագույն, հիմքում՝ դեղնավուն: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Դարբ գետի հովիտ, Արփա, Եղեգիս): EOO 360 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 4:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հարավային և Արևելյան Անատոլիայում, Սիրիական կիսաանապատում, Հյուսիս-արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1600 մ բարձրությունների վրա. խճաքարոտ և ավազային թափվածքների վրա: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ Արփա և Դարբ գետերի կիրճերում հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

146. *Campanula zangezura* (Lipsky) Kolak. & Serdyuk.  
**Չանգակ Չանգեզուրի**  
**Колокольчик зангезурский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Մահմանափակ արեալով տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա Չանգեզուրի լեռնաշղթայի հարավում և Մեղրու լեռնաշղթայի վրա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հանքերի բաց շահագործման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Symphyantra zangezura* Lipsky. 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յողունը 10-40 սմ բարձր., պարզ կամ թույլ ճյուղավորված, 1 կամ սակավաթիվ ծաղիկներով: Վարդակային և ցողունային տերևները, մատնածև-հատված, կոթունավոր: Պսակը ծիրանի-վարդագույն, համարյա անիվանման; փոշանոթները միաձուլված: Գեղազարդային տեսակ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում (Չանգեզուրի լեռնաշղթայի հարավային մաս, Մեղրու լեռնաշղթա, դեպի արևելք մինչև Խուստուփ): EOO 430 քառ. կմ է, AOO՝ 60 քառ. կմ, լոկալիտետը՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (Չանգեզուրի լեռնաշղթայի հարավային հատված) և Հյուսիս-արևմտյան Իրանում (Կարադաղ լեռնաշղթա):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջինից մինչև ալպյան գոտի, ծ. մ. 1600-3200 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ղեկառահայի լեռնա-արդյունաբերական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:





148. *Arenaria brachypetala* (Grossh.) T. N. Popova  
 Որմնաբույս կարճաթերթիկավոր  
 Песчанка коротколепестная



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջաններով: Տեսակին սպառնում է աճելավայրերի պայմանների կորուստ՝ կապված տնտեսական գործունեության ակտիվացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 20-40 սմ բարձր.: Պսակաթերթերը բաժակաթերթերից կարճ, դեղնավուն-կանաչավուն: Բաժակաթերթերը բթացած: Բույսը ներքևի մասում մահացած տերևների մնացորդներով:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից (Երասխի լեռնաշղթա, լեռնագագաթ Փոքր Իլկասար): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Հյուսիս-Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, կիսաանապատում և ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, փոքրաթիվ լոկալիտետներ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական գործունեության ակտիվացման և անասունների կողմից տրորման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա:

149. *Bufonia takhtajanii* Nersesian  
**Դորոշախոտ Թախտաջյանի**  
**Бюфония Тахтаджяна**



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Առկա է աճելավայրերի խախտման սպառնալիք՝ անասունների տրորման և շինարարական աշխատանքների արդյունքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 15-30 սմ բարձր.: հաստացած ցողունաարմատով և բարակ, փխրուն ճյուղերով: Տերևները գծային, կոշտ: Պսակաթերթերը բաժակից երկար, սպիտակ:

**Տարածում.** Հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից (Երասխի լեռնաշղթա): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 900-1000 մ բարձրությունների վրա. քարքարոտ գիպսակիր լանջերին, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է հուլիսին ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, փոքրաթիվ լոկալիտետներ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճանապարհաշինության և անասունների կողմից տրորման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է Երասխի լեռնաշղթայի վրա ԲՀՊՏ-ի ստեղծում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



151. *Coccyganthe flos-cuculi* L. (= *Coronaria flos-cuculi* (L.) A.Br.)  
**Կլվածաղիկ**  
**Кукушкин цвет**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Աճում է ճահճացած տեղամասում, մայրուղու հարևանությամբ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է ճանապարհաշինությունը և մեխորացիոն աշխատանքների անցկացումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, համարյա մերկ բույս 30-70 սմ բարձր.: Տերևները նշտարաձև:

Ծաղիկները բաց-մանուշակագույն, կախված: Պսակաթերթերի թիթեղը 4-բաժան; բաժակը 6-8 մմ երկ.: Բարձրաժեղ գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Լերմոնտովո գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում և ամբողջ Եվրոպայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1700 մ բարձրության վրա. խոնավացած տեղերում: Ծաղկում է հուլիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճանապարհաշինության և գյուղատնտեսական հանդակների ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

152. *Coronaria coriacea* (Moench) Schischk.&Gorschk. (= *Lychnis coronaria* (L.) Desr.)  
**Կորոնարիա կաշեկերպ**  
**Коронария кожистая**



**Կատեգորիա.** EN B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է չափից ավելի հավաքը՝ որպես գեղազարդային բույս, անտառտնտեսական գործունեությունը, ճանապարհաշինությունը, գյուղատնտեսական հանդակների ընդարձակումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 30-70 սմ բարձր.: Տերևները երկարավուն կամ էլիպսաձև: Պսակաթերթերը բոսորագույն կարմիր կամ ծիրանեգույն, 20-25 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանից («Շիկահող» պետական արգելոց, Սրաշեն, Նեքին Հանդ): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 2: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում, Թալիշում, Կենտրոնական և Հարավային Եվրոպայում, Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայում, Հյուսիսային Իրանում, Սիջին Ասիայում (Թուրքմենիա):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300 մ բարձրության վրա. անտառում, անտառի եզրերին, ճամփեզրերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառտնտեսական գործունեության, ճանապարհաշինության, գյուղատնտեսական հանդակների ընդարձակման նպատակով, չափից ավելի հավաք՝ որպես բարձրարժեք գեղազարդային բույս:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորիգ:

153. *Dianthus cyri* Fisch. & C.A.Mey.

**Մեխակ քուռի**

**Гвоздика куринская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է 2 պոպուլյացիա Երևանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Ինտենսիվ տնտեսական գործունեությունը, հողերի յուրացումը գյուղատնտեսական հանդակների համար, ճահիճների չորացումը և բուսականության այրումը կարող է առաջացնել տեսակի տարածման և բնակության շրջանների կրճատում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 15-30 սմ բարձր.: Բաժակը գորտնուկավոր, 15 մմ երկ.: Պսակաթերթերը բաց-մանուշակագույն, ճեղքված-ատամնավոր, մերկ:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից (Արարատ ավանի շրջակայք, Վեդի, Աշտարակ): EOO 360 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3:


Հայաստանից բացի հանդիպում է Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Արաբական թերակղզում, Իրաքում, Իրանում և Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1200 մ բարձրությունների վրա. գետերի ավազոտ ափերին, աղակալված ճահիճներում, շիրլակում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Ներկայումս Արարատի ճահիճները առանձնացվել են որպես բնության հուշարձան, սակայն պահպանության իրական գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիան կարիք ունի մեծ ուշադրության: Պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

154. *Dianthus grossheimii* Schischk.  
**Մեխակ Գրոսհայմի**  
**Гвоздика Гроссгейма**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) +2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է երկու պոպուլյացիա Սևանի և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է աճելավայրերի պայմանների փոփոխություն՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և ռեկրեացիայի ինտենսիվացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 20-40 սմ բարձր.: Բաժակը 12-17 մմ երկ.: Ծաղիկները վահանիկանման ծաղկաբույլերում կամ միայնակ: Ծաղկակից թեփերը 4-6(8): Պսակաթերթերը վարդագույն կամ ծիրանեգույն, անհավասար ատամներ, վերևում՝ մազիկներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Սևանի (Սևան, Արգիճի) և Դարեղեգիսի (Մելիմի լեռնանցք, Քարվանսարայի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 410 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800-2200 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին, լեռնային տափաստանում և մարգագետնատափաստանում, մարգագետիններում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի մասնատվածություն, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, արածեցման, խոտհունձի, ռեկրեացիոն տրորման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանական գոտում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



155. *Dianthus libanotis* Labill.

Մեխակ Լիբանանի

Гвоздика ливанская



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Արեալը մասնատված է և կազմված 3 լոկալիտետներից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակը աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության տարածքներում, սակայն հիմնական սպառնալիքը կապված է գյուղատնտեսական հանդակների ընդլայնման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 25-60 սմ բարձր.: Բաժակը 30-40 մմ երկ: Տերևները կոշտ, փշոտ: Ծաղկակից թեփերը 4-6 հատ, հետ թեքված փշոտ սրածայրի: Պսակաթերթերի թիթեղները սպիտակ, հիմքի մոտ կարմրավուն խալով, մինչև կեսը բաժանված թելանման մասերի:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ուրծի լեռնաշղթա, լեռնագագաթ Իլկասար, Չովաշեն և Գառնի գյուղերի միջև) և Դարեղեգիսի (Արենի գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 310 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում, Հարավ-Արևմտյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա. կիսաանապատում, ֆրիգանանման բուսականության մեջ, չոր քարքարոտ և կավային լանջերին: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձկման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

156. *Gypsophila aretioides* Boiss.  
**Մալնարմատ արեցանման**  
**Качим арцеиевидный**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

**Վտանգված տեսակ:** Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հիմնական սպառնալիքը՝ աճելավայրերի խախտում ճանապարհային ցանցի զարգացման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բույսեր՝ մինչև 2 մ տրամագծով խիտ բարձիկներ առաջացնող: Տերևները լայնակի կտրվածքում եռանկյուն, 1-4 մմ երկ. 1 մմ լայն, կղմինդրաձև միմյանց վրա դասավորված: Բաժակը 2-3 մմ երկ., բութ ատամիկներով: Ծաղկակոթերը 1-3(3,5) մմ երկ.: Պսակաթերթերը բաժակից երկար, ամբողջական, սպիտակ կամ վարդագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ուրծի լեռնաշղթա, Տիգրանաշեն, Էլփին գյուղերի շրջակայք) և Չանգեզուրի (Ռոտան գետի կիրճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 600 քառ. կմ է, AOO՝ 30 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային Իրանում, Սիջին Ասիայում (Թուրքմենիայում):


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1900 մ բարձրությունների վրա. Ժայռոտ տեղերում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբերին: Հաճախ նկատվում է երկրորդ ծաղկումը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ռեգրադացիա՝ կապված ճանապարհաշինության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոտրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

157. *Gypsophila stevenii* Fisch. ex Schrank.  
 Մալնարմատ Մտեննի  
 Качим Стевена



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է 1 պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է աճելավայրերի պայմանների խախտում բնակավայրերի ենթակառուցվածքի զարգացման և ճանապարհաշինության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 20-40 (60) սմ բարձր.: Տերևները գծային, 1-3 մմ լայն.: Բաժակը 3-3.5 մմ երկ.: Պսակաթերթերը սպիտակ, 1,5 անգամ բաժակից երկար: Ծաղկաբույլի մասում բույսը ծածկված կարճ գեղձային մազիկներով:

**Տարածում.** Հայաստանում հայտնի Իջևանի ֆլորիստիկական շրջանից (Իջևանի շրջակայք, գյուղ Հովք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի հանդիպում է Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, շիբլյակում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված բնակավայրերի ինֆրաստրուկտուրայի զարգացման և ճանապարհաշինության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:  
 Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

158. *Minuartia sclerantha* (Fisch. & C.A.Mey.) Thell.

Մինուարցիա կոշտածաղիկ  
Минуарция жесткоцветная



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 3-7 սմ բարձր.: Ծաղկակիցների և բաժակաթերթերի ջղերը ծածկված բյուրեղային վահանակներով: Ծաղկակիցները կարթանման ներս թեքված, երկարությամբ ծաղկաբույլի փնջերին հավասար կամ մի քիչ դրանցից երկար: Բաժակը հիմքում հատված կամ սապատով: Պսակաթերթերը չկան կամ ռեդուկցված: Տուփիկը 2-3 սերմերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Գոռավան, Երասխ) և Մեղրու (Կարչևան, Նյուվաղի) ֆլորիստիկական շրջաններում: EOO 750 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անդրկովկասում, Թալիշում, Անատոլիայում, Իրաքում և Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտիներում, ծ. մ. 550-900 մ բարձրությունների վրա. ավազների վրա, չոր լանջերին, անապատում, կիսաանապատում, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման և ճանապարհաշինության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

159. *Scleranthus perennis* L.  
**Վարժրածաղիկ, կնճռուկ քազմամյա**  
**Дивала многолетняя**



**Վաստեզորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի են 2 պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հիմնական սպառնալիքը գյուղատնտեսական հանդակների ընդլայնումն է և ենթակառուցվածքի զարգացումը: Հայաստանի Վարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 5-10 սմ բարձր.: Բաժակաթերթերը սպիտակ լայն, (լայնությամբ համարյա հավասար կենտրոնական կանաչ շերտին), թաղանթային եզրով, պտղի ժամանակ միացող:


**Տարածում.** Հայաստանում հայտնի է Վերին Ախուրյանի (Ամասիայի շրջակայք) և Արագածի (Բայրզ և Բյուրական գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններից: EOO 930 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևմտյան, Հարավ-արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան անազանի երկրներում և Հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1900-2200 մ բարձրությունների վրա. մարգագետիններում և մարգագետնատափաստանում, չոր քարքարոտ և խճաքարոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս- հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման, ճանապարհաշինության և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

160. *Silene araxina* Trautv.  
 Ծվծվուկ Արաքսի  
 Смолевка араксинская



**Կասեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)

Վտանգված տեսակ: Հայտնի են 2 պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքները՝ ճանապարհաշինություն և ռեկրեացիոն տրոփում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 20-40 սմ բարձր.: Արմատները տերևները կոթունավոր, ցողունայինները՝ նստադիր: Ցողունների հիմքում խմբված են մահացած տերևների կոշտ չոփած հիմքերը: Պսակաթերթերը վարդագույն, ենթաբաժակով: Բարձրարժեք գեղազարդային բույս:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Գարեդեգիսի ֆլորիստիկական շրջանում (Մելիմի լեռնանոց, Ջերմուկ քաղաքի շրջակայք): EOO 120 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1900-2400 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճանապարհաշինության և ռեկրեացիոն տրոփման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

161. *Silene arenosa* K.Koch  
 Ծվծվուկ ավազուտային  
 Смолевка песчаная



**Կատեգորիա. CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)**

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ փոքր պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 5-25 սմ բարձր.: Յոդունները և ծաղկակոթերը բարակ, կոշտ: Պսակաթերքերը սպիտակ:

**Տարածում.** Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից (Գոռավան, Չվարթնոց): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Բացի Հայաստանից աճում է Նախիջևանում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում, Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. ավազային անապատում, չոր լանջերին, աղակալած հողերի վրա, աղակալած ճահիճներում, կիսաանապատում: Ծաղկում է մայիս ամսին, պտղակալում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

162. *Silene chustupica* Nersesian  
Ծվծվուկ Խուստուպի  
Смолевка хуступская



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բարձրկանման կիսաթփիկ 15-20 սմ երկ.: Տերևները գծային, կոշտավուն:

Պսակաթերթերի թիթեղը ծիրանեգույն: Բարձրաժեք գեղազարդային տեսակ:

**Տարածում.** Հանդիպում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Խուստուպի լեռնագագաթ): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 3000-3200 մ բարձրությունների վրա. քարքաթափվածքների վրա: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր ԲՀՊՏ-ի ստեղծումը Խուստուպի լեռնագագաթի վրա:



163. *Silene eremitica* Boiss.  
 Ծվծվուկ անապատային  
 Смолевка пустынная



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի են 2 փոքրիկ պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի հավաքը Մեղրու շրջանից 1903 թ-ից հետո չի կրկնվել:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 30-80 սմ բարձր.: Բաժակը 8-10 մմ երկ., մերկ: Կարպոֆորը՝ պտղակիրը ավելի քան երկու անգամ բաժակից կարճ: Պսակաթերթերը դեղնավուն-կանաչավուն, առանց պսակակիցի:

**Տարածում.** Հայտնի է Երևանի (Արարատ ավանի և Ազատի ջրամբարի շրջակայք) և Մեղրու ֆլորիստիկական շրջաններից: EOO 2200 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4:


Հայաստանից բացի աճում է Հյուսիս-արևելյան Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա. չոր լանջերին, աղակալած հողերի վրա, աղակալած ճահիճներում, կիսաանապատում: Ծաղկում է մայիս ամսին, պտղակալում՝ հունիսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի մելիորացիայի, ճահիճների չորացման, բուսականության այրման, գյուղատնտեսական հանդակների ընդլայնման և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Արարատի ճահիճները ՀՀ Կառավարության 2008թ. որոշման համաձայն ընդգրկվել են բնության հուշարձանների ցանկում որպես «Աղակալած ճահճուտ», սակայն պահպանության ուղղությամբ կոնկրետ գործողություններ դեռ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

164. *Silene meyeri* Fenzl ex Boiss. & Buhse  
 Ծվծվուկ Մեյերի  
 Смолевка Мейера



**Կասեզորիա.** EN B 1 ab(i,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)

Վտանգված տեսակ: Հայտնի են չորս շատ փոքրիկ պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 2-10 սմ բարձր.: Ցողունների հիմքում կուտակված են մահացած տերևների կոշտ, ցցված հիմքերը: Պսակաթերթերը մուգ-վարդագույն կամ մանուշակագույն: Կարպոֆորը՝ պտղակիրը ներքևի կեսում թավոտ: Բարձրաբժեք գեղազարդային բույս:

**Տարածում.** Հայտնի է Երևանի (Միլի գետի հովիտ, Չանգակատուն գյուղի շրջակայք), Դարեղեգիսի (Խաչիկ գյուղի շրջակայք) և Մեղրու (Բողաքար) ֆլորիստիկական շրջաններից: EOO 1460 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ է, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Թալիշում և Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2000-2800 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ կապված հողերի յուրացման և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիան պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է հետազոտական աշխատանքներ պոպուլյացիաների կառուցվածքի, ծավալի և ներկա վիճակի ճշտման համար, պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

165. *Silene raddeana* Trautv.  
 Ծվծվուկ Ռադդեի  
 Смолевка Радде



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 2-10 (12) սմ բարձր., բազմաթիվ կարճացած անպտղատու ընձյուղներով: Ստորին տերևները գծային, մինչև 3 սմ երկ., վերինները՝ ավելի փոքր: Բաժակը 10-15 մմ երկ.: Պսակը սպիտակ կամ վարդագույն, պսակակիցով: Բարձրարժեք գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայտնի է Ջանգեզուրի (Կապուտջուղ և Խուստուփ լեռնագագաթներ) և Մեղրու (Կուրիս) ֆլորիստիկական շրջաններից: EOO 200 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2500-3800 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

Celastraceae – Իլենազգիներ – Бересклетовые  
 166. *Euonymus velutina* Fisch. et C.A.Mey.  
 Իլենի թավշային  
 Бересклет бархатистый



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Ներկայումս հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից փոքր է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Փոքրիկ թուփ՝ 1-2 մ բարձր.: Երիտասարդ ճյուղերը ծածկված խիտ կարճ մազիկների թավշյա թավոտությամբ: Տերևները հակադիր: Ծաղիկները կանաչավուն-սպիտակ. հավաքված կիսահովանոցանման ծաղկաբույլերում:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ն. Հանդ): AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Ադրբեջանում, Սիջին Ասիայում (Կոպետդաղ) և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա. կաղնու անտառի եզրերին, սոսու պուրակում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս- սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Chenopodiaceae –Թելուկազգիներ – Маревые**

**167. Anthochlamys polygaloides (Fisch. et C. A. Mey.) Fenzl**

**Անտոխլամիս կաթնախոտային**

**Антохламис истодовый**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 15-40 (60) սմ բարձր., հիմքից ճյուղավորված, կանաչ կամ դեղնավուն (մոխրագույն)-կանաչ, մերկ: Տերևները գծային կամ օվալ: Ծաղկաբույլերը բարակ, հասկանման, կարճ-մազոտ: Ծաղկապատի մասերը վարդագույն: Պտուղը կլորավուն, տափակ, թափանցիկ թևով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Մեղրի քաղաքի մոտ, Արաքս գետի ողողատում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Թաիլանդում, Հյուսիսային և Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 620-700 մ բարձրությունների վրա. ժամանակավոր խոնավացած ավազա-գլաբարային գրունտերի վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

168. *Beta lomatogona* Fisch. et C. A. Mey.  
 Ծակնդեղ բաժանապտուղ  
 Свекла раздельноплодная



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի են ընդամենը երկու փոքր պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության զոնայում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս՝ 40 - 50 սմ բարձր., ամուր, փայտացած, ճիպոտանման արմատով: Ծաղիկները միաճուլված կծիկներով, երկար, տերևագուրկ հասկանման ծաղկաբույլերով: Ծաղկապատի մասերը կանաչ, լայն սպիտակ-թաղանթային, գազաթում անհավասար-ատամնավոր եզրով: Պտուղները հնգանիստ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի (Զարնոջա) և Երևանի (Երևվանի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 80 կմ է: Հայաստանից բացի աճում է Թալիշում, Թուրքիայում և Հյուսիս-Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 850-1500 մ բարձրությունների վրա. քարքարոտ, կավոտ լանջերին, աղակալված տեղերում, տափաստանում և կիսաանապատում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսի վերջից-սեպտեմբեր: Կուլտուրական ճակնդեղի վայրի ազգակիցն է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է. հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**169. Beta macrorhiza Stev.**  
**Ճակնդեղ խոշորարմատ**  
**Свекла крупнокорневая**



**Կաստեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ է: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական արեալը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս և մեկ պոպուլյացիան աճում է «Սևան» ազգային պարկի տարածքում, սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 30-60 (80) սմ բարձր., ուղիղ կամ պտակած ցողունով և հաստ իլիկանման, ներսում կարմիր արմատով: Ծաղկակից տերևները լայն-ձվաձև, ծաղիկները գերազանցող: Ծաղկաբույլը երկարացած, հասկանման:

**Տարածում.** Աճում է Գարեդեգիսի (Եղեգիս գետի կիրճ) և Սևանի (Արեգունի լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջաններում: EOO 410 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Դաղստանում, Արևելյան Անդրկովկասում, Կենտրոնական և Արևելյան Անատոլիայում և Հյուսիս-Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1600-2200 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, տափաստանում, մարգագետնա-տափաստանում, լճերի ավազոտ ափերին, կուտակներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին: Կուլտուրական ճակնդեղի վայրի ազգակիցն է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ղեկավարող ազդեցության հանդակների համար հողերի յուրացման և ինտենսիվ արածեցման հետևանքով, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիա պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է. հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

170. **Bienertia cycloptera Bunge**  
**Բիեներցիա շորջաթև**  
**Биенерция окружнокрылая**



**Վաստեգորիս.** CR\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Տարածման և բնակության շրջանները շատ կրճատվել են Արարատյան հարթավայրում աղակալված տարածքների յուրացման հետևանքով: Հայտնի են ընդամենը երեք լոկալիտետներ, որոնք գտնվում են ինտենսիվ տնտեսական գործունեության և հողերի աղակալման միջոցառումների իրականացման գոնայում: Այդ պատճառով սպառնալիքի կատեգորիան բարձրացվել է մինչև CR:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.**

Միամյա, սուկուլենտ, մերկ, բաց-կանաչ բույս 15-40 սմ բարձր.: Տերևները գլանաձև, բութ, աղեղնաձև կորացած, հիմքով ցողունի հետ սերտաճած: Ծաղիկները երկսեռ և վարսանդավոր: Պտուղները ափսեանման, ամբողջ շրջագծով փափուկ, թևանման, ծաղկապատի միաձուլված մասերից առաջացող եզրաշերտով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ, Երասխ, Մասիս, Երասխահուն): EOO 180 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Եվրոպայի հարավում, Արևելյան Անատոլիայում, Հարավ-արևմտյան և Կենտրոնական Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրությունների վրա. փորփոշ և խոնավ աղուտներում: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ոռոգման, հողերի աղակալման, գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Ռդան կարմիր» արգելավայրում և Գյուղատնտեսության նախարարության հողագիտության ինստիտուտի ստացիոնարի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում, նոր ԲՀՊՏ-ի ստեղծում՝ փորփոշ աղուտների ֆիտոցենոզները պահպանելու նպատակով:



171. **Halanthium kulpianum (K. Koch) Bunge.**  
**Աղածադիկ կուլպական**  
**Соляноцветник кульпский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճելավայրերի հիմնական տարածքների ուրբանիզացման և հողերի յուրացման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա մսալի բույս՝ 10-30 սմ բարձր., հերթադիր ընձյուղներով և տերևներով: Ծաղկապատի մասերը 6 մմ երկ., թաղանթային, վերևում 2-3 ատամներով: Առէջները մանր, 1.2-2.2 մմ տրամագծով, կլորավուն կամ լայն-ձվաձև, պղպջականման հավելուկներով: Պտղի ժամանակ ծաղկապատի երկու արտաքին մասերի վրա. կեսից ներքև. առաջանում են ռուդիմետային, 0.7-1.2 մմ երկ., կրեմա-դեղին, ամուր, թևանման ուռեցքներ:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում: EOO 530 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Դաղստանում, Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1300 մ բարձրությունների վրա. թեք բլրակների, երրորդական դարաշրջանի գիպսակիր կավերի վրա: Ծաղկում է մայիսի վերջից մինչև հուլիսի վերջը, պտղաբերում՝ հուլիսից-սեպտեմբեր: Հաճախ *H.kulpianum* և *H.rarifolium* աճում են անմիջական հարևանությամբ, սակայն նույնիսկ շփման զոնայում պոպուլյացիաները տարբերվում են ֆենոլոգիական առանձնահատկություններով. ծաղկումը *H.kulpianum*-ի մոտ սկսվում է 1-1,5 ամիս ավելի վաղ, քան *H. rarifolium*-ի մոտ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ քաղաքների ընդարձակման և գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

172. *Halocnemum strobilaceum* (Pall.) M.Bieb.

Մարսազան կոնածև

Сарсазан шишковатый



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աղուտների շարունակվող յուրացման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Սուկուլենտ կիսաթուփ՝ 15-70 սմ բարձր., հակադիր փոված և արմատակալվող ընձյուղներով: Առաջացնում է բնորոշ կլորություններ կամ թմբիկներ՝ փոված բազմաթիվ ընձյուղներով: Միամյա ընձյուղները մոխրա-կանաչ, անդամավոր, երիկամաձև: Հասկերը կարճ-գլանաձև, նստադիր: Ծաղկապատը 3՝ հիմքում միաձուլված մասերով, առեջը 1.

**Տարածում.** Աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արագածի, Մարգարա, Երասխահուն, Էջմիածին, Երասխ): EOO 250 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի տարածված է Արևելյան Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Եվրոպայի հարավում, Անատոլիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 850-900 մ բարձրությունների վրա. ուժեղ աղակալված փորփոշ կամ խոնավ աղուտներում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին: Հաճախ առաջացնում է մաքուր խմբավորումներ, նպաստում է աղուտի ջրաթափանցելիության ավելացմանը, աղերի թափանցմանը՝ սուբստրատի ավելի խորը հորիզոններ, ինչպես նաև թմբիկավոր աղուտների առաջացմանը:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ ոռոգման, հողերի աղազրկման և գյուղատնտեսական հանդակների համար դրանց յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի փոքր մասը աճում է Արմավիրի մարզի Երասխահուն գյուղի շրջակայքում, Գյուղատնտեսության մախարարության հողագիտության ինստիտուտի ստացիոնարի տարածքում և «Որդան կարմիր» արգելավայրի տարածքում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

173. **Halostachys belangeriana (Moq.) Botsch.**  
**Աղահասկիկ Բելանժեի**  
**Соляноколосник Беланже**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աղուտների շարունակվող յուրացման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Սուկուլենտ, կարճ բնիկով, ուղիղ կանգնած թուփ՝ 100–150(200) սմ բարձր.:

Ընձյուղները հակադիր, մսալի, անդամների բաժանված, երիտասարդները՝ մեծամասամբ գորտնուկավոր: Տերևները թեփանման, զույգ-զույգ սերտաճած: Հասկերը ուղիղ, անդամավոր ոտիկներով: Ծաղկապատը 3, երկարության է չափով միաձուլված մասերով, առէջը՝ 1:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արագափ, Մարգարա, Երասխահուն, Երասխ): EOO 350 քառ. կմ է, AOO՝ 18 քառ. կմ, լրկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Անատոլիայում, Իրանում, Պակիստանում, Սիջին և Կենտրոնական Ասիայում, Չինաստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. ուժեղ աղակալված հողերի վրա, փորփոշ կամ չոր աղուտներում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին: Տեսակը ունի էկոլոգիական լայն ամպլիտուդա և երբեմն հանդիպում է թույլ աղակալված հողերի վրա:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ ոռոգման, հողերի աղազրկման և գյուղատնտեսական հանդակների համար դրանց յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի փոքր մասը աճում է Արմավիրի մարզի Երասխահուն գյուղի շրջակայքում, Գյուղատնտեսության նախարարության հողագիտության ինստիտուտի ստացիոնարի տարածքում և «Ուրդան կարմիր» արգելավայրի տարածքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

174. **Kalidium caspicum (L.) Ungern-Sternb.**

**Վալախոտ կասպիական  
Поташник каспийский**



**Վաստեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աղուտների շարունակվող յուրացման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր կիսաթուփ՝ 15-75 սմ բարձր., մոխրա-կանաչ, հերթադիր, անդամներից կազմված ընձյուղներով: Տերևները սուր, մսալի թմբիկների ձևով, հերթադիր, ներքև սահող, ցողունագիրկ: Հասկիկները 5-10 մմ երկ., հիմնակում նստադիր, զագաթնալին:

Ծաղկապատը 4 բարձր սերտաճած մասերով, 2 առէջներով:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արագափ, Մարգարա, Երասխահուն, Էջմիածին, Երասխ): EOO 800 քառ. կմ է, AOO՝ 48 քառ. կմ, լոկալիտները՝ 4:

Հայաստանից բացի տարածված է Արևելյան Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, Իրանում, Աֆղանստանում, Թուրքմենիայում, Մոնղոլիայում, Ջունգարիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնալին գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. փորփոշ աղուտներում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ոռոգման, հողերի աղազրկման և գյուղատնտեսական հանդակների համար դրանց յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի փոքր մասը աճում է Արմավիրի մարզի Երասխահուն գյուղի շրջակայքում, Գյուղատնտեսության նախարարության Հողագիտության ինստիտուտի ստացիոնարի տարածքում և «Որդան կարմիր» արգելավայրի տարածքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

175. **Microcnemum coralloides (Loscos et Pardo) Font-Quer**  
**Միկրոկեննում մարգանանան**  
**Мелкокочольник коралловый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում նախ և առաջ գյուղատնտեսական գործունեության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում:

CITES-ի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 5-10 սմ բարձր.: Տերևները ռեդուցված, թեթևակի ցողունագիրկ, բթացած: Ծաղիկները շատ մանր, բարակ թաղանթային ծաղկապատով, հասկանման ծաղկաբույլերում՝ 1-3 սմ երկ.: Ծաղկակից տերևները ցողունայիններին նման, հիմքում 2-3 ծաղիկներով: Առէջը՝ 1: Մերմերը սև, կիսակլոր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ բանավանի, Մասիսի և Բուրաստանի շրջակայքում): EOO 220 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Տեսակի ընդհանուր արեալը շատ դիզյունկտիվ է: Հայաստանից բացի հանդիպում է Իսպանիայում և Անատոլիայում (Կոնիա)։


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 800-850 մ բարձրությունների վրա. աղակալված ճահիճներում և աղուտներում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիսին-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված հանդակների ընդարձակման, ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման հետ, ընդհանուր արեալի մեծ ընդհատվածություն:

**Պահպանության միջոցառումներ.** Արարատի աղակալված ճահիճը ներկայումս առանձնացված է որպես բնության հուշարձան: Սակայն պահպանության իրական գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն պոպուլյացիայի նկատմամբ: Պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

176. *Salsola aucheri* (Moq.) Bunge ex Iljin  
 Օշան Օշեի  
 Солянка Оше



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որն աճում է Արարատյան դաշտավայրի ինտենսիվ յուրացվող հողերի վրա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթուփ 20-40 սմ բարձր., կարճ փայտացած ճյուղերով և ճյուղավորված կոտրատվող միանյա ընձյուղներով: Յողունները և տերևները ծածկված ուղիղ կարճ առսեղմ մազիկներով: Տերևները 20-25 մմ երկ., կիսագլանիկանման: Ծաղկապատի մասերը 6 մմ երկ., քաղանթային, նշտարաձև, վերևում՝ սրացած, պտղի ժամանակ սևավուն-ծիրանեգույն թևերով: Առէջները մեծ նշտարաձև հավելուկներով՝ ծածկված շատ մանր սուր ծծիչներով:


**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արևշատ, Չովաշեն, Վեդի, Շահումյան, Երասխ, Երախի լեռնաշղթա): EOO 320 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային Իրանում, Թուրքմենիայում և Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. քարքարոտ, գիպսակիր, կավային և չոր աղակալված լանջերին, կիսաանապատում: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման, բնակավայրերի տարածքների ընդարձակման և ենթակառուցվածքի զարգացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է. պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա:

177. **Salsola soda L.**  
**Օշան սողակիր**  
**Солянка содоносная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, խիստ մասնատված արեալով: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է գյուղատնտեսական հանդակների համար ինտենսիվ յուրացման տարածքներում: Աճելավայրերը ենթարկվում են աղազրկման և ոռոգման:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա, սուկուլենտ, մերկ բույս 10-70 սմ բարձր.: Ծաղիկները ծաղկաբույլերում հեռացած, միայնակ կամ 3-ական: Ծաղկակիցները 12 - 15 մմ երկ., վերևում՝ կոճիկանման խոզանով, լայն-ձվաձև հիմքով: Պտուղները 3-6 մմ տրամագծով, բաժականման, կարծես թե հատված գագաթով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երասխահուն, Երասխ): EOO 150 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի տարածված է Նախակովկասում, Գաղստանում, Արևելյան Անդրկովկասում, Կենտրոնական և Հարավային Եվրոպայում, Փոքր և Արևելյան Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա. աղակալված հողերի վրա, առավելապես խոնավ աղուտներում; Ծաղկում է հունիսից մինչև օգոստոս (սեպտեմբեր), պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման և էկոլոգիական պայմանների փոփոխության (գրունտային ջրերի իջեցում, հողերի լվացում, ոռոգում) հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է. հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Արարատյան դաշտի աղուտներում:

178. *Salsola tamamschjanae* Iljin  
 Օշան Թամամշյանի  
 Солянка Тамамшян



**Կատեգորիա.** EN B 1 ab(iv) + 2 ab(iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է գյուղատնտեսական հանդակների համար ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա, հիմքից ճյուղավորված բույս, բաց-կանաչ, սպիտակավուն-ակոսավոր ցողուններով: Տերևները թելանման-գծային, մերկ, փշոտ: Ծաղկապատի մասերը 2.8-3.8 մմ երկ., նշտարածև, գազաթում՝ սուր, պտղի ժամանակ՝ մեծ, բաց-դարչնագույն, թաղանթային թևերով, պարզորոշ դուրս ցցված մուգ ջղերով: Սերմը 3 մմ տրամագծով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմավիր, Վեդի, Գոռավան, Երասխ, Երևան, Չվարթնոց): EOO 190 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (Օրդուբադ, Ջուլֆա) և Արևմտյան Իրանում (Ուրմիա լճի ավազան):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրությունների վրա. անապատում և կիսաանապատում, ավազային հողերի վրա, երրորդական դարաշրջանի գիպսակիր կարմիր կավերի վրա: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-նոյեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար ավազային հողերի յուրացման, ինչպես նաև որպես շինարարական նյութ ավազների դուրս հանելու հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



179. *Salsola tomentosa* (Moq.) Spach

Օշան քաղիքային

Солянка войлочная



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ Հայաստանում: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է գյուղատնտեսական հանդակների համար ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մոխրագույն կիսաթուփ 10-30 սմ բարձր., պտուկած կամ վեր բարձրացող ընձյուղներով: Յողունները և տերևները ծածկված կիսաառսեղմ, խորդուրդոլ կամ ճյուղավորված մազիկներով: Տերևները 5-10 մմ երկ., կիսազլանիկանման: Ծաղկապատի մասերը 2.4-2.7 մմ երկ., նշտարած, դեղնավուն, թաղանթային, վերևում՝ սրացած, պտղի ժամանակ՝ սևավուն-ծիրանեգույն թևերով: Առէջները մեծ նշտարած հավելուկներով, խիտ ծածկված շատ մանր սուր ծծիչներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմավիր, Արևշատ, Ջովաշեն, Գառնի, Երախ, Վեդի, Շահումյան): EOO 320 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային Իրանում, Թուրքմենիստանում և Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. քարքարոտ գիպսակիր, կավային լանջերին, կիսաանապատում: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման, բնակավայրերի տարածքների ընդլայնման և ենթակառուցվածքի զարգացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա:

**Colchicaceae – Շնդեղազգիներ - Безвременниковые**

**180. Colchicum goharae Gabrielian**

**Շնդեղ գոհարի**

**Безвременник Гоар**



**Կաստեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հյուսիսային Հայաստանի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Արեալը մասնատված է և կազմված երեք լոկալիտետներից: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմայա անցողուն պալարատիտակավոր բույս: Պալարատիտակի արտաքին թեփերը սևավուն, ներքիններ՝ վառ նարնջագույն-դարչնագույն: Տերևները երկարավուն կամ գծային-նշտարած, կաշենման, փայլուն, մերկ: Ծաղիկները սպիտակ, ետծալի մասերը լայն-էլիպսաձև կամ հակաձվաձև, բթավուն: Տուփիկը երկարավուն: Մերմերը գնդաձև-նիստավոր, բաց-դարչնագույն՝ փոքրիկ արիլոիդով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի շրջակայք՝ լեռնագագաթ Աղայա և Աբեղաբար, Հաղարծին գյուղի շրջակայք): EOO 150 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1400-1500 մ բարձրությունների վրա. խոտածածկ լանջերին, կրաքարերի վրա, հաճարենու-բոխու անտառներում, մարգագետիններում ժայռերի միջև: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառների հատման և հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:

181. **Colchicum ninae Sosn.**  
**Շնդեղ Նինայի**  
**Безвременник Нины**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Արեալը խիստ մասնատված է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի աճելավայրերի վրա շարունակվող մարդածին ագրեցության պատճառով, հնարավոր է միջավայրի որակի վատացում և տեսակի բնակության շրջանի կրճատում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն պալարատխուկավոր բույս: Տերևները 3(4), պտղի ժամանակ շատ մեծացող, գոտիանման, հիմքում նեղացող, թխակապույտ: Ծաղիկները 2-7, վարդագույն, 10-15 լավ նկատելի դարչնագույն կամ նարնջագույն ջղերով, մեջքի կողմից ողնուցի ուղղությամբ ծիրանեգույն գլուխ կամ ամբողջությամբ բաց-ծիրանեգույն: Տուփիկը ոտիկի վրա, ձվաձև, կողերով, 3-4 մմ երկ. կտուցով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Գարեղեգիսի (Ջերմուկ, Գուշչի, Բարձրունի, Գնիշիկ) և Սեղրու (Վերին Վարդանաձոր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 200 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 2000-2100 մ բարձրությունների վրա. գերխոնավացած և ճահճացած տեղերում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ հեղափոխության կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

182. *Colchicum umbrosum* Stev.

Շնդեղ սավերային  
Безвременник теневой



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հնարավոր է տեսակի բնակության շրջանի մակերեսի կրճատում և միջավայրի որակի վատացում աճելավայրերի էկոհամակարգերի վրա շարունակվող ազդեցության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն պալարատխուկավոր բույս: Պալարատխուկը ծածկված սևավուն-գորշ կաշենման թեփերով: Տերևները 2-5, պտղի ժամանակ շատ մեծացող, գոտիանման, հաստավուն, վերևում և ներքևում նեղացող: Ծաղիկները 1-3, ծիրանեգույն-դժգույն-վարդագույն: Տուփիկը երկարավուն-էլիպսաձև, սրացած, 5 մմ երկ. կտուցով, կարմրավուն-դարչնագույն, մերկ: Մերմերը համարյա գնդաձև, մանր-կնճռոտ, դարչնագույն, 2 մմ տրամագծով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Թումանյանի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 25 կմ է: Հայաստանից բացի աճում է Կովկասում (Արևմտյան Նախակովկաս, Մեծ Կովկաս, Արևմտյան և Արևելյան Անդրկովկաս), Ռումինիայում, Սև ծովի առափնյա շրջաններում, Գրիմում և Հյուսիսային Անատոլիայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աշնանը ծաղկող բույս է: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1400 մ բարձրությունների վրա. նոսրացած անտառներում, անտառային բացատներում և մարգագետնիկներում, թփերի մացառուտներում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ հեղեղադաշտի կապված անտառտնտեսական գործունեության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:

183. *Merendera greuteri* Gabrielian  
**Խլրպուղ Գրոյսերի**  
**Мерендера Грейтера**



**Վաստեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի միայն Շիրակի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է բնակության շրջանի կրճատում՝ աճելավայրերի վրա շարունակվող մարդածին գործոնների հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն, պալարաստիկավոր խոտաբույս 3-6 սմ բարձր.: Պալաստիկը 1-1,5 սմ երկ., 0,5-1,0 սմ լայն, ծածկված մուգ-դարչնագույն կաշվեմման թեփուկներով: Տերևները միշտ 3, կապտավուն, նեղ-նշտարած, սրացած: Ծաղիկը 1, , բաժականման, սպիտակ, կամ երբեմն վարդագույն: Տուփիկը երկարավուն-ձվածև, համարյա ամբողջությամբ ստորգետնյա: Մերմերը օվալ-գնդաձև, դժգույն-դարչնագույն 2-3 մմ տրամագծով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Շիրակի ֆլորիստիկական շրջանում (լեռնագագաթ Արտենի, Թալինի և Կաթնաղբյուրի միջև, Իրինդ գյուղի շրջակայք): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանի էնդեմիկ է:

**Վենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1500-1900 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, տրագականտային համակեցություններում, լեռնային տափաստանում: Ծաղկում է մարտ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Արտենի լեռնագագաթի վրա:

184. *Merendera sobolifera* Fisch. & C.A.Mey.

**Խլրպուզ ընձյուղավոր**  
**Мерендера отпрысковая**



**Կաստեգորիա.** CR\* B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնացող մարդածին ուղղակի վտանգը Արարատյան հարթավայրի ճահիճների չորացումն է և հողերի աղազրկումը: Նկատի ունենալով տեսակին սպառնացող իրական վտանգը սպառնալիքի կատեգորիան բարձրացվել է մինչև CR:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն պալարատիպակալոր ստորոններ՝ ստորգետնյա ընձյուղներ առաջացնող բույս 12-16 սմ բարձր.: Տերևները 3, գծային-նշտարած, ծաղկին հավասար կամ դրան գերազանցող: Ծաղիկները 1-2, սպիտակ-վարդագույն: Առէջները հիմքի մոտ լայնացած; փոշանոթները բաց-դեղին կամ սև: Տուփիկը ձվաձև, դեպի վերև նեղացող, սրացած, դարչնագույն: Մերմերը բազմաթիվ մեծ սպիտակավուն սերմնաթիկնոցով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ, Մարմարաշեն, Երևան): EOO 270 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3:

Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևելյան Կովկասը, Կենտրոնական և Հարավային Անդրկովկասը, Բուլղարիան, Սիրիան, Փոքր և Միջին Ասիան, Իրանը, Ադանստանը, Պակիստանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-850 մ բարձրությունների վրա. աղակալած ճահճացած տեղերում, ճմակալած խոնավ մարգագետիններում: Ծաղկում է փետրվար-մարտ ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ ճահիճների չորացման և հողերի աղազրկման՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման, բուսականության այրման, արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** ՀՀ Կառավարության 2008թ. որոշմամբ Արարատի ճահիճները ընդգրկվել են բնության հուշարձանների ցանկում որպես «Աղակալած ճահճուտ», սակայն իրական պահպանություն դեռ չի իրականացվում:

Անհրաժեշտ է ուժեղացված պահպանություն, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

Cornaceae – Հոնազգիներ - Кизильниковые

185. Swida iberica (Woronow) Pojark. ex Grossh.

Ճապի վրացական

Свидина грузинская



**Կատեգորիա** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Ստույգ հայտնի է միայն մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ոչ մեծ ծառ կամ թուփ 2-3 մ բարձր.: Տերևները հակադիր, նեղ, երկարավուն, երկար սրացած: Ծաղկաբույլը առանց փաթեթի, հովանոցանման: Ծաղիկները սպիտակ:

Պտուղները կլորավուն, հյութալի:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Ներքին Հանդ գյուղի շրջակայքում: AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Վրաստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա. անտառի եզրին, սոսու պուրակում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկախող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է միակ պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Corylaceae – Տխրազգիներ - Лещинные**  
186. **Corylus colurna L.**

**Արջատխելենի**

**Лещина древовидная или Медвежий орех**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բարեկազմ, ուղիղ բնով, խիտ սաղարթով, հսկա ծառեր՝ 25-30 մ բարձր.: Կեղևը մուգ-մոխրագույն, խոր-ճեղքավորված: Ընձյուղները դեղին կամ դժգույն նարնջագույն մինչև գորշավուն, թույլ սրտաձև, կրկնակի ատամնավոր, վերինները՝ բլթակավոր ատամնավոր, կոթերը երկար, 3-5 սմ երկ.: Պտուղները միասին հավաքված 3-20 -ական: Պտղագավաթը կազմված հատված, պտուղները գերազանցող, նեղ, կորացած, նշտարածև մասերից: Ընկույզը փոքր, գնդաձև կամ հակա-ձվաձև, կողքերից սեղմված, կճեպը՝ հաստ:

**Տարածում.** Աճում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Սևքար գետի վերնագավառ, Գետահովիտ, Ենոքավան, Ոսկեպար): EOO 60 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Գաղստանում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Թալիշում, Բալկանյան թերակղզում, Փոքր Ասիայում, Իրանում և Հիմալայներում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1500 մ բարձրությունների վրա. կաղնու-բոխտու անտառներում: Ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, պտղաբերում՝ մայիս-օգոստոսին: Գեղեցիկ ծառ է ուղիղ բնով, ուտելի ընկույզներով և շատ գեղեցիկ վարդագույն բնափայտով: Արգելավայրում լավ բազմանում է բնական վերածով՝ սերմերից:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառահատումների հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արջատխելենու» արգելավայրում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Crassulaceae – Թանձրատերևազգիներ – Толстянковые**

**187. Rosularia chrysantha (Boiss.) Takht.**

**Վարդակուկ ոսկեզոզ**

**Розеточница золотистая**



**Կաստեզորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված է 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 6-13 սմ բարձր.: Վարդակուկի տերևները երկարավուն-թիան, մերկ, վերևում՝ բթավուն, հիմքում՝ սեպածև, մինչև 2 սմ երկ., ցողունայինները՝ ավելի փոքր, նշտարածև, գեժերով պատված: Ծաղկակիր ցողունները 5-6 սմ բարձր.: Ծաղկաբույլը քիչ ծաղիկներով: Ծաղիկները ոսկյա-դեղին, կարճ, 2 մմ երկ. կոթերով: Բաժակը մինչև հիմքը ազատ, սուր-նշտարածև, գորշավուն, մասերը՝ մեջքի կողմից գեղձերով պատված: Առէջները 10 դժգույն-նարնջագույն փոշանոթներով:

**Տարածում.** Աճում է միայն Գարեդեգիսի ֆլորիստիկական շրջանում (Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայք): AOO 16 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Փոքր Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2100-2800 մ բարձրությունների վրա. կրաքարային ժայռերի ճեղքերում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին: Գեղազարդային տեսակ է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**188. Rosularia persica (Boiss.) Berger**  
**Վարդակույկ պարսկական**  
**Розеточница персидская**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ Հայաստանում: Հայտնի է մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջաններով: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մերկ բույս 7-15 սմ բարձր.: Վարդակույկ տերևները երկարավուն-թիաձև, բուրբ, թաղանթային մանրատամ եզրով; ցողունային տերևները գծային-նշտարաձև, բթավուն:

Ծաղիկները հավաքված վահանիկանման-հուրանաձև ծաղկաբույլերում՝ հասկանման ճյուղիկներով, ծաղկակոթերը կարճ: Բաժակը համարյա մինչև հիմքը հատված, մերկ: Պսակը վարդագույն, նեղ-գանգակաձև, մինչև 1/3-ը հատված, երկարավուն-նշտարաձև մասերով:

Առէջները 10, դեղնավուն փոշանոթներով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Շվանիձոր գյուղի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Փոքր Ասիայում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-1000 մ բարձրությունների վրա. ժայռերի ճեղքերում, քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**189. Sedum stoloniferum Gmel.**  
**Թանթանիկ ընձյուղակիր**  
**Очиток побегоносный**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500քառ. կմ-ից պակաս: Կովկասում տեսակի լայն տարածման պատճառով սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ցողունները սողացող կամ վեր բարձրացող; ծաղկակիր ընձյուղները ճյուղավորված, 8-20 սմ բարձր.: Տերևները հակադիր, հակաձված, լայն-սեպաձև հիմքով, կարճակոթ, կարճ-ատամնա-փշիկավոր եզրերով: Ծաղկաբույլը փուխր, վահանիկանման, տերևակալված: Բաժակաթերթերը գծային, բթավուն: Պսակաթերթերը վարդագույն, նշտարած, 5-7 մմ երկ.: Հասուն պտուղները աստղաձև-փռված:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ապարանի (լեռնագագաթ Թեղենիս) և Չանգեգուրի (Ծավ, Ներքին Հանդ և Շիկահող գյուղերի շրջակայք, լեռնագագաթ Խուստուփ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2590 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Արևմտյան և Արևելյան Կովկասում, Կովխիդայում, Կենտրոնական և Հարավային Անդրկովկասում, Թաիլանդում և Հյուսիսային Իրանում:



**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 750-1800 մ բարձրությունների վրա. ժայռերի ճեղքերում, քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մեծ մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

190. *Sedum tetramerum* Trautv.  
 Թանթրանիկ քառաչափ  
 Очиток четырехмерный



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի հիմնական արեալը Հայաստանի սահմաններից դուրս գտնվելու պատճառով, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ցողունները միայնակ, բարակ, 2-5 սմ բարձր.: Տերևները կիսազլանաձև, համարյա ձվաձև, մերկ կամ թեթևակի թարթիչավոր: Ծաղիկները համարյա նստադիր, հասկանման ծաղկաբույլերով: Բաժակաթերթերը բթավուն, 4-6 մմ երկ., հիմքում հավելուկով: Պսակաթերթերը սպիտակ, ձվաձև-նշտարաձև, սուր, մինչև 3.5 մմ երկ.: Հասուն պտուղները բաժակին հավասար, թեթևակի հեռացող մասերով, գծային-նշտարաձև, ուռուցիկ, գեղձային-թմբիկավոր, կտուցով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Աշտարակ, Արարատ) և Մեղրու (Մեղրի գետի ափերին) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1020 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Տեսակի ընդհանուր արեալը ընդգրկում է Արևելյան Կովկասը, Արևելյան և Հարավային Անդրկովկասը և Միջին Ասիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1100 մ բարձրությունների վրա. կիսասանապատի քարքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանում, Ագարակ ավանի շրջակայքում:

**Cucurbitaceae - Գդնագգիներ - Тыквенные**

191. **Citrullus colocynthis (L.) Schrad.**

**Չմերուկ վայրի**

**Арбуз дикий**



**Վատեզորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հավաքվել է մեկ անգամ 1977 թ.: Հիմնական սպառնալիքն է տարածման և բնակության շրջանների փոքր մակերեսը (10 քառ. կմ-ից պակաս): Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս՝ փռված կամ մագլցող ընձյուղներով 1-2 մ երկ.: Տերևները խորդուբորդ, հիմքում սրտաձև, խոր-եռբաժան, 1-2 փետրաձև բաժանված մասերով: Պսակը արտաքինից կանաչ, խավոտ: Պտուղը 7 - 12 սմ տրամագծով, բաց-կանաչ, բազմասերմ, պտղամիսը՝ չորոտ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու (Արաքս գետի ողողադաշտ Մեղրի քաղաքի մոտ) ֆլորիստիկական շրջանում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Առաջավոր և Միջին Ասիայում, Աֆրիկայում և Հնդկաստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-700 մ բարձրությունների վրա. ժամանակավոր խոնավացող ավազա-գլաքարային գրունտերի վրա: Ծաղկում է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

Cyperaceae - Բոշխազգիներ - Осоковые

192. Carex bohemica Schreb.

Բոշխ բոհեմական

Осока богемская



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասում հայտնի է միայն Հայաստանից՝ Լոռու սարահարթից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Կարճացած կոճղարմատով խիտ ճիւղ առաջացնող խոտաբույս՝ 5-30 (50) սմ բարձր.: Տերևները 2-4 մմ լայնության: Ծաղկաբույլը գլխիկանման, խիտ, խոզանաձև, 1-2 սմ տրամագծով: Ստորին ծածկող տերևը 8-20 սմ երկար., բազմաթիվ անգամ ծաղկաբույլից երկար, մյուսները 1-2-ը՝ ավելի կարճ: Պարկիկները խոշոր, 7-9 մմ երկարության, մինչև 1 մմ լայնության, երկարավուն-նշտարաձև, կանաչավուն; կտուցը 5 մմ երկարության, խորը ճեղքված, երկատամ:

**Տարածում.** Հանդիպում է Լոռու ֆլորիստիկական շրջանում, Լոռու սարահարթի լճերում (Ժանգոտ, Կլոր և Յոլակի լճեր): AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Եվրոպան, Սիբիրը, Հեռավոր Արևելքը, Սիջին Ասիան, Մոնղոլիան, Հյուսիսային Կորեան և Ճապոնիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1300-1500 մ բարձրությունների վրա. ռելիեֆային լճերի ճահճացած ափերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ լճերի բուսածածկման պատճառով:

**Պահպանության միջոցառումներ** Պահպանության համար միջոցառումներ չեն իրականացվում:


Անհրաժեշտ է Լոռու սարահարթում նոր պահպանվող տարածքի ստեղծում:

Իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

193. *Carex capitellata* L.

Բոշխ մանրագլխիկ

Осока мелкоголовчатая



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Ներկայումս հայտնի է 3 լոկալիտետներից մեկը գտնվում է հանրապետության հյուսիսում, իսկ մնացածը՝ ծայր հարավում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Փուխր Ծիմ առաջացնող բույս՝ 8-20 սմ բարձր.: Տերևները 1-1.5(1.8) մմ լայն., ցողուններից կարճ: Ծաղկաբույլը կազմված 1 գագաթնային հասկիկից: Ծածակող տերևները դարչնագույն: Պարկիկները 2.5-3 մմ երկ., երկարավուն-ձվաձև, նստադիր, ուռուցիկ-եռանիստ, կանաչ, վերին մասում՝ դարչնագույն, գագաթին հազիվ նկատելի ուղիղ կտուցով:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Մրխուզի լեռներ), Չանգեզուրի (Մեղրու լեռնանցք) և Մեղրու (Վահրավար գետի ափ, Լիճք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 670 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևմտյան և Արևելյան Կովկասը, գրեթե ողջ Անդրկովկասը և Հյուսիսային Անատոլիան: Ամենուրեք հազվադեպ է հանդիպում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիների ծ. մ. 2100-2900 մ բարձրությունների վրա. խոնավ մարգագետիններում, խոնավացած ձորակներում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդավայրերի ընդարձակման և քոչվոր անասնապահության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

194. *Carex cilicica* Boiss.

**Բոշխ կիլիկիական**  
**Осока киликийская**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Կովկասում հայտնի է միայն Հայաստանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Սողացող կոճղարմատով բազմամյա խոտաբույս՝ 45-75 սմ բարձր.: Տերևները նուրբ, 3-4 սմ լայն., զգալիորեն ցողունից կարճ: Ծաղկաբույլերը կազմված առէջավոր և վարսանդավոր հասկիկներից: Ծածկող թեփերը նշտարած, սրագագաթ, կանաչավուն կենտրոնական ջրով և եզրից մուգ-դարչնագույն շերտով: Պարկիկը 4-5 սմ երկ., դեղնավուն; կտուցը 2 սմ երկ. դարչնագույն, գագաթում թեթևակի ճեղքված:

**Տարածում.** Հանդիպում է Գարեդեգիսի ֆլորիստիկական շրջանում, Խաչիկ և Գնիշիկ գյուղերի միջև գտնվող լեռնային ճահճացած մարգագետիններում: AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավային Անդրկովկասը, Արևելյան Անատոլիան և Հյուսիսային Իրանը: Ամենուրեք հանդիպում է հազվադեպ:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտու ծ. մ. 2400-2600մ բարձրությունների վրա. ճահճացած լեռնային մարգագետիններում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրի կորուստ՝ դեգրադացիա՝ քոչվոր անասնապահության և կլիմայի փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ստեղծել ԲՀՊՏ Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայքում:



195. *Carex depauperata* Curtis ex With.  
**Բոշխ աղքատացած**  
**Осока обедненная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է 2 միմյանցից խիստ հեռացած լոկալիտետներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազում է մինչև EN: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ տնտեսական գործունեության և անտառների հատման պատճառով, աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Խիտ ճիւղ առաջացնող բույս՝ 15-30 սմ բարձր.: Տերևները 2-4 մմ լայն., նուրբ, ցողունից կարճ: Հասկիկները 1-2 հատ, վարսանդավորները՝ 1-1.5 սմ երկ., առէջավորները՝ 2-3 սմ երկ.: Ծածկող թեփերը պարկիկներից կարճ, կանաչ միջին ջղով և սպիտակ-թաղանթային եզրերով: Պարկիկները 7-8 մմ երկ., փայլուն, եռանիստ, բազմաթիվ ջղերով; կտուցը 3 մմ երկ., առջևից խորը, մեջքի կողմից՝ թեթևակի ճեղքված:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Բագրատաշեն) և Ջանգեզուրի (Ներքին Հանդ, Սրաշեն, Ծավ) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ, կմ է: Լոկալիտետները՝ 2, միմյանցից հեռացած 280 կմ: Ընդհանուր արեալը ընդգրկում է Սիջին և Հարավային Եվրոպան, Արևմտյան Նախակովկասը, Դաղստանը, համարյա ամբողջ Անդրկովկասը, Անատոլիայի հյուսիս-արևելյան շրջանը: Ամենուրեք հանդիպում է հազվադեպ:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 445-900 մ բարձրությունների վրա. անտառում, գետահովիտներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ տնտեսական գործունեության և անտառների հատումների արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մեծ մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ստեղծել ԲՀՊՏ Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայքում:



197. *Carex pendula* Huds.  
**Բոշխ կախված**  
**Осока височая**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն Չանգեզուրից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, փուխր ճիմ առաջացնող խոտաբույս, 80-120 սմ բարձր.: Տերևները գծալին, 1-1.6 սմ լայնության: Ծաղկաբույլերում վարսանդավոր հասկիկները 10-17 սմ երկ., աղեղնաձև թեքված: Ծածկող թեփերը ձվաձև, պարկիկներին հավասար կամ մի փոքր կարճ, 1 մմ երկ. սրածայրով: Պարկիկները 3-3.2 մմ երկ., դժգույն-կանաչ, ուռուցիկ նիստերով և 2-3 ջղերով; կտուցը հազիվ ճեղքված, 0.1-0.2 մմ երկ:

**Տարածում.** Հանդիպում է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Սրաշեն, Շիկահող (կենու պուրակ) և Ներքին Հանդ (սոսու պուրակ) գյուղերի շրջակայքում: AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, Արևմտյան և Միջին Եվրոպան, Միջերկրածովյան ավազանը, Անատոլիան, Իրաքի, Իրանի հյուսիսային հատվածները և Հյուսիսային Աֆրիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. մոտ 900 մ բարձրության վրա. ստվերոտ անտառներում, գետերի խոնավ ափերին, աղբյուրների մոտ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ տնտեսական գործունեության և անտառների հատումների արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիան պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



199. *Carex pyrenaica* Wahlenb. subsp. *micropodioides* (V. I. Krecz.) Chandjian  
**Բոշխ պիրենեյան**  
**Осока пиренейская**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է երկու լոկալիտետներից, որոնք միմյանցից հեռացած են 60 կմ: Բնակության շրջանի մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված քոչվոր անասնապահության և կլիմայի փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, խիտ ճիւղ առաջացնող խոտաբույս՝ 6-12 (20) սմ բարձր.: Տերևները գծային, 1-1.5 սմ լայնության, ցողուններից մի փոքր կարճ: Ծաղկաբույլը կազմված մեկ գագաթնային հասկիկից: Ծածկող թեփերը սևավուն, սուր, բաց գույնի նեղ թաղանթային եզրով: Պարկիկները 2.8-3 մմ երկ., ձվաձև-նշտարաձև, կանաչավուն, վերին կեսում՝ սևավուն, կարճ ոտիկով և գոգավոր երկատամ կտուցով:

**Տարածում.** Հանդիպում է Ապարանի (Թեժլեռ) և Գեղամի (լեռնագագաթ Աժդահակ) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասի բարձրադիր շրջանները և Հյուսիս-արևմտյան Անատոլիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտու ծ. մ. 3000-3200 մ բարձրությունների վրա. քարքարոտ, խճաքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա, տրորում, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

200. *Eriophorum latifolium* Hoppe  
 Կիզիստ լայնատերև  
 Пушица широколистная



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է 3 ֆլորիստիկական շրջաններից, սակայն ամենուրեք հանդիպում է շատ հազվադեպ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ չէր ընդգրկված:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կարճացած կոճղարմատով բույս, 20-70 սմ բարձր.: Տերևները լայն-գծային, 3-8 մմ լայնության: Հասկիկները 3-10 (12), տարբեր երկարության կոթուններով՝ խմբված հովանոցանման, ներքև թեքված ծաղկաբույլերում: Ծածկող թեփերը մանր, 0.5-0.8 մմ երկ., ձվաձև-նշտարաձև, սևավուն: Ծաղկակից խոզանները բազմաթիվ, փափուկ սպիտակ-մետաքսանման մագիկներից, պտղի ժամանակ երկարացող մինչև 1.5 սմ երկ.: Պտուղը 2-3 մմ երկ.:

**Տարածում.** Հանդիպում է Լոռու (Չքնաղի լեռնաշղթա), Ապարանի (լեռնագագաթ Քյոթողլի) և Դարեղեգիսի (Վայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 790 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Մեծ Կովկասյան լեռնաշղթան, համարյա ամբողջ Անդրկովկասը, Եվրոպան, Փոքր Ասիան, Արևելյան Սիբիրը, Հեռավոր Արևելքը և Հյուսիսային Ամերիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջինից միջե ալպյան գոտու ծ. մ. 1500-3000 մ բարձրությունների վրա, ենթալպյան և ալպյան մարգագետիններում, առուների խոնավ ափերին: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված քոչվոր անասնապահության և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** ՀՀ Կառավարության 2008թ. որոշմամբ Քյոթողլի լեռան մոտ գտնվող ռելիկտային կրկեսը հայտարարված է բնության հուշարձան:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացել մեծ ուշադրության, իրականացնել մոնիթորինգ:



**Dipsacaceae - Ալքանազգիներ - Ворсянковые**

202. **Cephalaria nachiczevanica** Bobr.

**Ձիվան նախիջևանի**

**Головчатка нахичеванская**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է և Հանրապետությունում ներկայումս հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանները՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված Ջերմուկ առողջարանի շրջակայքում աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս մինչև 60 սմ բարձր.: Ստորին ցողունային տերևները ամբողջական, մնացածը՝ 1-2 գույգ եզրային մանր մասերով: Ամբողջ բույսը խիտ ծածկված խոզանանման մազիկներով: Ծաղիկները դժգույն-դեղին, հավաքված գլխիկանման ծաղկաբույլերում:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Ջերմուկի շրջակայք): AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում ծ. մ. մոտ 2200 մ բարձրության վրա. ենթալպյան բարձրախոտում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղակալում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, ռելիեֆային ազդեցություն, խոտհում:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Ericaceae – Հավանրգազգիներ - Вересковые  
203. Rhododendron caucasicum Pall.**

**Մրտավարդ կովկասյան  
Рододендрон кавказский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Վտանգված տեսակ: Ներկայումս հանրապետությունում ստույգ հայտնի են ընդամենը երկու պոպուլյացիաներ, որոնց տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Երկու լոկալիտետների միջև տարածությունը 30 կմ է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում, հատկապես կլիմայի գրքավ փոփոխության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Ոչ բարձր թուփ 50-60 սմ բարձր.: Տերևները մշտադալար: Ծաղիկները խոշոր, սպիտակ կամ թեթևակի կրեմագույն, ավելի քան 5 սմ տրամագծով, հովանոցանման ողկույզներում:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Լոռու (Բագունի լեռնաշղթա) և Իջևանի (Փամբակի լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջաններում: AOO 24 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2:

Հայաստանից բացի աճում է Մեծ Կովկասում, Դաղստանում, Անդրկովկասում, Հյուսիս-Արևելյան Թուրքիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտու ծ. մ. 2000-2400 մ բարձրությունների վրա, մարգագետիններում, առաջացնելով այսպես կոչված ռոդոդենտներ: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, խոտհումձ, կլիմայի գրքավ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիան պահպանվում է «Կովկասյան մրտավարդի» արգելավայրում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել է մեծ ուշադրության. իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

204. *Vaccinium uliginosum* L.  
**Հապալասենի ճահճային**  
**Голубика**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հանրապետությունում ստույգ հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Երկու լոկալիտետների միջև տարածությունը 160 կմ է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում գլխավորապես կլիմայի փոփոխության հետ կապված աճելավայրերի կորուստի պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Տերևաթափ գետնատարած փոլած թուփ 30-60 սմ բարձր.: Տերևները խոտային, բաց կապտավուն-կանաչ, մանր մոտ 1 սմ երկ.: Ծաղիկները համարյա նստադիր, 1-4-ական տերևների անոթներում: Բաժակը հնգատան: Հատապտուղը կապույտ, հյութալի:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Գեղամի (Գռիձոր) և Վերին-Ախուրյանի (լեռ Ղուկասյան Մեծ) ֆլորիստիկական շրջաններում: AOO 12 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Կենտրոնական և Հարավ-արևմտյան Անդրկովկասում, Եվրոպայում, Հյուսիս-արևելյան Թուրքիայում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիների ծ. մ. 2500-3300 մ բարձրությունների վրա. մարգագետիններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի-լիճ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Euphorbiaceae – Իշակաթնուկազգիներ - Молочайные**

**205. *Andrachne rotundifolia* C.A.Mey.**

**Անմեռուկ կլորատերև**

**Андрохне круглолистная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպարնում է անհետացում արեալի սահմանափակության և աճելավայրերի խախտման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա կիսաթփիկ 20-40 սմ բարձր., հիմքից ճյուղավորվող, ճիպոտանման ցողուններով: Տերևները մանր, կլորավուն, հերթադիր: Ծաղիկները մանր, միատուն, ծաղկակիցներով; արական ծաղիկները զարգացած պսակաթերթերով և 5 առէջներով, առէջաթելերը սյունաձև ձուլված; իգական ծաղիկները մանր ռեդուկցված պսակաթերթերով և կլորավուն-ռոմբաձև, բութ, բավականին մեծ, պտղի ժամանակ պահպանվող բաժակաթերթերով: Պտուղը եռանիստ, առանց հավելուկի:

**Տարածում.** Հանդիպում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրի, Ալդարա, Նյուվաղի): EOO՝ 135 քառ. կմ, AOO՝ 18 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Կովկասում հանդիպում է Դաղստանում, Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, իսկ Կովկասի սահմաններից դուրս՝ Փոքր և Միջին Ասիայում, Իրանում և Աֆղանստանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ֆրիգանոիդ բուսականության կազմում: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման շրջանի սահմանափակություն, հողերի դեգրադացիա, ճանապարհաշինության արդյունքում աճելավայրերի խախտում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում, արգելավայրի ստեղծում ստորին լեռնային գոտում՝ Ագարակ բանավանի շրջակայքում:

206. *Euphorbia aleppica* L.  
**Իջևաթնուկ հալեպական**  
**Молочай алеппский**



**Կասեզորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ ֆլորստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Սպառնացող վտանգներն են սահմանափակ արեալը և աճելավայրերի կորուստը՝ Երևան քաղաքի ընդլայնման պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 10-25 սմ բարձր.: Տերևները նեղ-գծային, 1 մմ լայն., սուր, բազմաթիվ շատ խիտ մոտեցած: Ծածկոցի թերթերը եռանկյուն-ռոմբաձև, երկար սրացած: Գագաթնային ծաղկակիրները 3-5 հատ, տարբեր երկարության, հաստավուն: Նեկտարանոցները կիսալուսնաձև, ձգված երկար եղջյուրիկների: Մերմերը խիտ-թմբիկավոր; հավելուկը՝ վոքր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն երևանի ֆլորստիկական շրջանում (Երևանի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 10 կմ է:

Հանդիպում է Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկասում, Միջերկրածովյան ավազանում (արևելյան մաս), Դրիմում, Հյուսիս-արևելյան Թուրքիայում, Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, կիսասանապատում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ շինարարության համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում, «Էրբունի» պետական արգելոցի սահմանների ընդլայնում՝ Նուբարաշենի շրջակայքի երրորդական ժամանակաշրջանի կարմիր կավերի ընդգրկմամբ:

**Fabaceae – Լոբազգիներ - Бобовые**

**207. Argyrolobium biebersteinii P. W. Ball. (=A. calicinum (M. Bieb.) Jaub. et Spach nom. superfl.)**

**Արգիրոլոբիում Բիբերշտեյնի  
Аргиролобиум Биберштейна**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

վտանգված տեսակ : Հայտնի է մեկ պոպուլյացիա՝ 5000 քառ. կմ-ից փոքր տարածման շրջանի մակերեսով: և 500 քառ. կմ-ից փոքր բնակության շրջանի մակերեսով: Տեսակին սպառնում է բնակության շրջանի կրճատում՝ կապված անտառի հատման և ինտենսիվ արածեցման հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէ:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ՝ բազմաթիվ, մի փոքր բարձրացող ցողուններով, 20—40 սմ երկ.: Տերևները եռմասնյա: Տերևիկները լայն-էլիպսաձև, վերևից մերկ, տակից թավոտ, 10—30 մմ երկ., 6-18 մմ լայն.: Ծաղկաբույլերը դասավորված են ցողունների գագաթներին և եզրային ճյուղիկների ցայրերին՝ 3-9 ծաղիկներով: Պսակը՝ վառ դեղին: Ունդը՝ լայն-գծային, կողքերից սեղմված, 20—35 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, լեռնագագաթ Խուստուփ): EOO 80 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Կովկասում, Դրիմի հարավային ափին, Հյուսիսային Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 950-1600 մ բարձրությունների վրա. անտառում, անտառի եզրերին, բացատներում և թփուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝անտառների հատման և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մեծ մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

208. *Argyrolobium trigonelloides* Jaub. et Spach (= *A. prilipkoanum* Grossh.)  
**Արգիրոլոբիում հացհամենավոր**  
**Аргиролобиум пажитниковый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է հողերի ինտենսիվ յուրացվող զոնայում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա ցածր խոտաբույս, բազմաթիվ պառկած ցողուններով, 5—20 սմ երկ.: Տերևները եռանսյա: Տերևիկները սեպաձև-հակաձվաձև, 7—20 մմ երկ., 4—15 մմ լայն., երկու կողմից թավոտ, թխակապույտ: Ողկույզները 2—5 ծաղիկներով: Պսակը դեղնա-վարդագույն: Ունդերը լայն-գծային, կողքերից սեղմված, 14—30 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրու շրջակայք, Ագարակ, Շվանիձոր, Նյուվաղի գյուղեր): EOO 105 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիս-արևմտյան և Կենտրոնական Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Բազմամյա բույս է, սակայն ծաղկում է կյանքի առաջին իսկ տարուց: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 500-950 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, գետի հղկված գլաքարերի արանքում, ֆրիգանաման բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-հունիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին, հազվադեպ սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման և լեռնա-արդյունահանող արդյունաբերության գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ստեղծել ԲՀՊՏ Մեղրու շրջանում Ագարակ գյուղի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

209. *Astragalus achundovii* Grossh.

Գազ Ախունդովի  
Астрагал Ахундова



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա ինտեսիվ տնտեսական գործունեության զոնայում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն կանաչ բույս, ծածկված մանր կոշտ երկծայր մագիկներով: Տերևները 6-30 սմ երկ.: Տերևիկները 6—10-ական գույգ, կլորավուն-էլիպսաձև, բութ, 2-11 մմ երկ., 1,5-5 մմ լայն.: Ծաղկակիրները դուրս են գալիս տերևների արմատամերձ վարդակի կենտրոնից, թույլ, գետնատարած, ծաղկաբույլի հետ միասին տերևներին հավասար կամ դրանցից կարճ: Դրոշը վարդագույն-բաց-մանուշակագույն, 16-19 սմ երկ., նավակը և թևերը ավելի բաց գույնի: Ունդերը 15-30 մմ երկ., 3-5 մմ լայն., թեթևակի կորացած:

**Տարածում.** Հանդիպում է Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արենի և Չիվա գյուղերի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հարավ-արևելյան Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1300 մ բարձրությունների վրա. չոր կավային, խճաքարոտ և քարքարոտ լանջերին, կիսաանապատում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով, բուսականության այրում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ստեղծել ԲՀՊՏ Արենի գյուղի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

210. *Astragalus agasii* Manden.

Գազ Աղասու  
Астрагал Агаси



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ կազմված երկու լոկալիտիտներից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, փուխր ճմիկներ առաջացնող, համարյա անցողուն բույս՝ 10—12 սմ բարձր.՝ ծածկված պարզ մագիկներով: Տերևները մոխրագույն խիտ թավոտ: Տերևիկները 7—18-ական գույգ, էլիպսաձև, 3—7 մմ երկ., 1,5—3 մմ լայն.: Ծաղկաբույր խիտ, գլխիկանման, պտղի ժամանակ չերկարացող: Պսակը դեղին, դրոշը 18—21 մմ երկ.: Ունդերը ձվաձև, 10 մմ երկ., խիտ, երկար, չռված մագոտ:

**Տարածում.** Աճում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Բարգուշատի և Ջանգեզուրի լեռնաշղթաների վրա Սիսիանի շրջանի սահմաններում): AOO 8 քառ. կմ է, լոկալիտները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 23 կմ է: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2900-3000 մ բարձրությունների վրա. քարքարոտ-խճաքարոտ և ժայռոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արածեցում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:


Անհրաժեշտ է տեսակի հատուկ պահպանություն, հետազոտական աշխատանքներ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



211. *Astragalus amblolepis* Fisch. ex Hohen.

Գազ քթաթեփուկ

Астрагал тупочешуйчатый



**Կատեգորիա.** CR B 1 ab (iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի են ընդամենը երկու փոքրիկ պոպուլյացիաներ 10 քառ. կմ-ից պակաս բնակության շրջանի մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Տրագականտային թուփ 10—35 սմ բարձր., ճյուղավորված, թաղիքե խավով, փշոտ: Տերևները 6—11 սմ երկ.: Տերևիկները 6—8-ական գույգ, էլիպսաձև, ուռուցիկ ջղերով, 5—13 մմ երկ., 2,5—4 մմ լայն.: Ծաղկաբույլը գնդաձև, բազմածաղիկ: Ծաղկակիցները նավականման, վերին կեսում կենտրոնի ուղղությամբ խավոտ, եզրերից մերկ: Բաժակը խավոտ, 6—9 մմ երկ., ատամիկները դեպի ներս ուղղված: Պսակը վարդագույն, դրոշը 13—14 մմ երկ., ականջուկանման: Ունդերը ձվաձև-երկարավուն, 6—8 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է Գեղամի ֆլորիստիկական շրջանում (Գեղարդ գյուղի շրջակայքում և Փրկիչ եկեղեցու ավերակներում): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 8 կմ է: Հայաստանից բացի աճում է Արևելյան և Հարավային Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1700-1900 մ բարձրությունների վրա. խճաքարոտ լանջերին, թփուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է տեսակի հատուկ պահպանություն, հետազոտական աշխատանքներ և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

212. *Astragalus basianicus* Boiss. et Hausskn.

Գագ քասիանիական

Астрагал бацианийский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Տրագականտային թուփ, 10—20 սմ բարձր., ճյուղավորված, թավոտ, փշոտ: Տերևների առանցքը բարակ, 8—22 սմ երկ., մանր փշով վերջացող: Տերևիկները 5—9-ական զույգ, էլիպսաձև, ուռուցիկ ջղերով, 9—27 մմ երկ., 4—9 մմ լայն: Ծաղկաբույր տափակացած-գնդաձև, 2—4 մմ. երկ., 2,5—3,5 մմ լայն., բազմաձաղիկ: Ծաղկակիցները նավականման, եզրերից մերկ, կենտրոնի ուղղությամբ թավոտ: Բաժակը խավոտ, 8—10 մմ երկ., ասամիկների ծայրերը դեպի ներս ուղղված: Պսակը վարդագույն, դրոշը 14—17 մմ երկ., ականջուկներով: Ունդերը ձվաձև-երկարավուն, խավոտ, 4—8 մմ երկ.:

**Տարածում.** Հանդիպում է Գեղամի ֆլորիստիկական շրջանում (Գեղարդ գյուղի շրջակայք, Փրկիչ եկեղեցու ավերակներում): EOO 50 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Հյուսիս-արևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1900 մ բարձրությունների վրա. չոր խճաքարոտ լանջերին, թփուտների մեջ: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ զբոսաշրջության տարածքների յուրացման և գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մեծ մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է տեսակի հատուկ ուշադրություն, մոնիտորինգ, որոնումներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով:

213. *Astragalus bylowae* Elenevsky

Գազ Բիլովայի  
Астрагал Быловой



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որը գտնվում է հողերի ինտենսիվ յուրացման տարածքում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, երկածայր մագիկներով ծածկված բույս: Յողունը ճյուղավորված 20—40 սմ բարձր.: Տերևները 3—6 սմ երկ.: Տերևիկները 7—12-ական զույգ, վերևից մերկ, տակից առսեղմ խավոտ, 4—8 մմ երկ., 2 մմ լայն.: Պսակը կարմրավուն, դրոշը 12—15 մմ երկ.: Ունդերը գծային, գլանաձև, կախված, 23—30 մմ երկ., 2 մմ լայն.:

**Տարածում.** Հայտնի է Չանգեգուրի ֆլորիստիկական շրջանից (Տեղ գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է, միջին լեռնային գոտում, ծ. մ. 1350 մ բարձրության վրա. տափաստաններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է տեսակի հատուկ ուշադրություն, որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով, մոնիտորինգ:

214. *Astragalus camptoceras* Bunge (= *A. bungei* Winkl. et Fedtsch.)  
**Գազ կորանեղջյուրավոր**  
**Астрагал изогнуторогий**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Արեալը խիստ մասնատված է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Սիամյա բույս՝ ծածկված (բացի տերևիկները վերևից) չոփած մագիկներով:

Տերևը 3—7 սմ երկ.: Տերևիկները 7—12-ական զուգ, 3—12 մմ երկ., 1—3 մմ լայն., սեպածև, գոգավոր զագաթով: Ծաղկակիրները 1-2 ծաղիկներով: Պսակը դեղնավուն: Ունդերը մի քիչ կորացած, գծային, 1,5—3 սմ երկ., կեռիկանման թեքված կտուցով:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի (Երևանի և Վեդու շրջակայք) և Դարեղեգիսի (Եղեգնաձորի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 200 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Անատոլիայում, Իրանում և Սիջին Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1500 մ բարձրությունների վրա. չոր կավային և աղակալված տեղերում, կիսաանապատում և տափաստանային բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման և ենթաստրուկտուրայի զարգացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

215. *Astragalus campylosema* Boiss.

Գազ կորասերո՞

Астрагал согнутосемянный



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) +2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայկական բարձրավանդակում՝ էնդեմիկ տեսակ: Հայաստանում հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության զոնայում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն խոտաբույս 30—35 սմ բարձր.՝ ծածկված երկծայր մագիկներով: Տերևները 12—25 սմ երկ.: Տերևիկները երկու կողմից խիտ առսեղմ թավոտ, 8—12-ական զույգ, 7—16(23) մմ երկ., 3—7(13) մմ լայն., էլիպսաձև, բութ գագաթով: Ծաղկաբույլերը տերևներից գերազանցող, ուղիղ ծաղկակիրներով, բազմաթիվ ծաղիկներով, պտղի ժամանակ երկարացող: Պսակը դեղին, 16—22 մմ երկ.: Ունդերը կախված, սեղմված ծաղկաբույլի առանցքին, 10—17 մմ երկ., 3 մմ լայն.:

**Տարածում.** Հանդիպում է վերին Ախուրյանի ֆլորիստիկական շրջանում (Ամասիայի, Սալուտի և Բաշգյուղի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Վրաստանում (Ախալցխայի շրջան) և Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1850-2100 մ բարձրությունների վրա. մարգագետիններում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

216. *Astragalus commixtus* Bunge  
**Գազ խառն**  
**Астрагал смешанный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասում տեսակը գտնվում է իր ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա, 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս մինչև 10 սմ բարձր.՝ խիտ ծածկված կարճ չոլած մազիկներով: Տերևները 2—7 սմ երկ.: Տերևիկները 3—7գույգ, 3—10 մմ երկ., 1—3 մմ լայն., բթացած գագաթով կամ հազիվ նկատելի փորվածքով: Ծաղկաբույրը 1—5 ծաղիկներով: Պսակը բաց գույնի: Ունդերը գծային, 1—3 սմ երկ., 3 մմ լայն., մանգաղաձև կորացած, թեքված կտուցով, կարճաթավուտ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երախի լեռնաշղթայի արևմտյան ծայրամասում): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Անատոլիայում, Հարավ-արևմտյան և Միջին Ասիայում, Իրանում, Աֆղանստանում և Պակիստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900 մ բարձրության վրա. կավոտ, խճաքարոտ լանջերին, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, պտղաբերում՝ ապրիլ-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա:

217. *Astragalus corrugatus* Bertol.

Գազ կնճռու

Астрагал морщинистый



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասում տեսակը գտնվում է իր ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Հայաստանում հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս մինչև 20 սմ բարձր., թույլ ծածկված մանր պարզ մազիկներով:

Տերևները 1,5—3,5 սմ երկ.: Տերևիկները 3—8-ական գույգ, 4—7 մմ երկ., 1—2 մմ լայն., գագաթին խոր փորվածքով: Ծաղկաբույլը 1—3 ծաղիկներով: Պսակը բաց գույնի: Ունդերը գծային, 2—4 սմ երկ., 2 մմ լայն., մանգաղաձև կորացած, փեղկերը լավ արտահայտված ցանցաձև ջղավորությամբ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երասխ գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Անատոլիայում, Հյուսիս-արևմտյան և Միջին Ասիայում, Իրանում, Աֆղանստանում, Պակիստանում և Հյուսիսային Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800 մ բարձրության վրա, աղուտներում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստը գրադացիա՝ հողերի յուրացման, ոռոգման, աղուտների աղազրկման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Չի պահպանվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի ծավալի և կառուցվածքի ճշտում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

218. *Astragalus divaricatus* Bunge

Գազ չոված

Астрагал растопыренный



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բարձրահասակ ցածր փշոտ թփիկ: Տերևները 1,5—4 սմ երկ.: Տերևիկները 4—7-ական զույգ, 2—6 մմ երկ., 1—2 մմ լայն.: Ծաղկաբույլը գլխիկանման, 2-2,5 սմ տրամագծով, 3—4 ծաղիկներով, նստած տերևների անոթներում: Ծաղկակիցները բաժակից կարճ: Բաժակը 9—12 մմ երկ., թավոտ, ատամիկները 6—8 մմ երկ., խոզանածև, թարթիչավոր: Պսակը կրեմագույն, դրոշը բաժակից երկար: Սունակը 5—8 մմ երկ., առէջաթելերի երկարությանը հավասար:

**Տարածում.** Աճում է Դարեղեգիսի (Խաչիկ, Մոզրով և Գնիշիկ գյուղերի միջև) և Ջանգեզուրի (լեռնագագաթ Խուստուփ, Սառնակունք և Սպանդարյան գյուղերի միջև) ֆլորիստիկական շրջաններում: EOO 800 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2200-2900 մ բարձրությունների վրա. խճաքարոտ տեղերում, կրաքարերի վրա, մարգագետիններում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, գերարածեցում, հողերի յուրացում:

**Պահպանության միջոցառումներ.** Չի պահպանվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Խուստուփ լեռնագագաթի վրա, որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով, մոնիտորինգ:



219. *Astragalus eriopodus* Boiss. (= *A. mandenovae* Akhv. et Mirz., ined)

Քաղ բավոտ

Астрагал пушистый



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, ծածկված երկար չոկած պարզ մազիկներով:

Ցողունները 17—50 սմ բարձր., ճյուղավորված: Տերևիկները 6—12-ական գույգ, կլոր-էլիպսաձև, վերևից մերկ, տակից խավոտ: Ծաղկաբույլը ծաղկաթափից հետո ձգվող և նոսրացող: Պսակը կարմիր-մանուշակագույն: Ունդը ոտիկով, երկարավուն-ձվաձև:

**Տարածում.** Աճում է Երևանի (լեռնագագաթ Երանոս, Չովաշեն և Գառնի գյուղերի միջև) և Դարեղեգիսի (Եղեգիս) ֆլորիստիկական շրջաններում: EOO 80 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Հարավ-արևելյան Անատոլիայում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Գիպսասեր բույս է: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա. գիպսակիր լանջերին, տափաստանում և ֆրիգանատիպ բուսականության մեջ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



221. *Astragalus grammocalyx* Boiss et Hohen.

Գազ խզնզարածակ

Астрагал исписанный



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա՝ կազմված երկու լոկալիտետներից, որոնց միջև հեռավորությունը 40 կմ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն, մոխրագույն-կանաչ, ստորգետնյա ընձյուղներով բույս՝ խիտ ծածկված չոված պարզ մազիկներով: Տերևիկները 10—16-ական գույգ, ձվաձև-էլիպսաձև: Ծաղկաբույրը խիտ, պտղի ժամանակ չերկարացող: Բաժակը խողովակաձև, ավելի ուշ ձվաձև փքված, խավոտ: Պսակը մանուշակագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Գեղամի ֆլորիստիկական շրջանում (Զառ և Քյանքան գյուղերի միջև, «Խոսրովի անտառ» պետական արգելոց): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. մոտ 2500 մ բարձրության վրա. չոր լանջերին քարաթափվածքների վրա, մարգագետնա-տափաստանում, գիհու նոսրանտառում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մեծ մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

222. *Astragalus guttatus* Banks et Sol. (= *A. striatellus* Pall. ex M. Bieb.)

Գազ բժավոր  
Астрагал крапчатый



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Արեալը մասնատված է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա մերկ բույս, 8—20 սմ բարձր.: Տերևները 2,5—5,5 սմ երկ.: Տերևիկները 4—9-ական գույգ, 4—7 մմ երկ., 1—3,5 մմ լայն.: Ծաղկաբույլը 1—3 ծաղիկներով: Պսակը բաց գույնի, դրոշը մանուշակագույն ջղերով, 6—9 մմ երկ. Ունդերը ոտիկով, կիսալուսնաձև, 12—22 մմ երկ., 4—5 մմ լայն:

**Տարածում.** Հաղիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում («Էրեբունի» պետական արգելոց, Ջրվեժի անտառպուրակ, Երախի լեռնաշղթայի արևմտյան ծայրամաս): EOO 90 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ է, լոկալիտները՝ 3: Հայաստանից բացի աճում է Դաղստանում, Արևելյան Անդրկովկասում, Դրիմում, Անատոլիայում, Հարավ-արևմտյան և Միջին Ասիայում, Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1400 մ բարձրությունների վրա. չոր կավային տեղերում, տափաստանային բուսականության կազմում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

223. *Astragalus holophyllus* Boriss.

Գազ ամբողջատերև

Астрагал цельнолистный



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Աճում է Արարատյան հարթավայրում, ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության տարածքներում: Հայտնի է մեկ խիստ մասնատված պոպուլյացիա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Անցողուն բույս՝ ծաղկակիրները դուրս են գալիս տերևների արմատամերձ վարդակից: Տերևները պարզ, կարճ տեղակոթով, ձվաձև-կլոր կամ համարյա երկվաձև, երկու կողմից խիտ առսեղմ խավոտ: Ծաղկակիրները կարճ, մինչև 5 սմ երկ., 3-7 ծաղիկներով: Պսակը դեղին: Ունդերը էլիպսաձև երկարավուն, 4-5 սմ երկ., 1,5 սմ լայն.: Տեսակը առանձնահատուկ տաքսոնոմիկ դիրք ունի՝ միակ ներկայացուցիչն է մոնոտիպ *Holophyllum* Boriss սեկցիայի:

**Տարածում.** Աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երանոս լեռնագագաթ, Երախի և Ուրծի լեռնաշղթաներ): EOO 640 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրությունների վրա. մերգելային կրաքարերից կազմված չոր խճաքարոտ լանջերին, ավազային անապատում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին: Աճելավայրերում բույսերի խտությունը՝ 1 քառ կմ-ի վրա 20-30 անհատ է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ արածեցման և գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Աճելավայրերից մեկը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

224. *Astragalus humilis* M. Bieb.

Գազ ցածր  
Астрагал низкий



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության զոնայում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս՝ խիտ ծածկված կարճ առսեղմ կամ կիսաառսեղմ երկծայր մազիկներով: Տերևները 7—15 սմ երկ., տերևիկները 7-14-ական զույգ, էլիպսաձև, 5—13 մմ երկ., 2,5—4 մմ լայն.: Ծաղիկաբույր՝ ողկույզ համարյա արմատամերձ, նոսր, քիչ ծաղիկիկներով, շատ կարճ կոթով: Պսակը 21—26 մմ երկ., դրոշը բաց-մանուշակագույն, նավակը և թևերը դեղին: Ունդերը 8-10 մմ երկ., խիտ կիսաառսեղմ խավոտ ձվաձև բութ, դեպի մեջքը թեք կորացած բզաձև կտուցով:

**Տարածում.** Աճում է Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Սիսիան քաղաքի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Վրաստանում, Արևելյան և Հարավային Անատոլիայում, Հյուսիս-արևելյան Իրաքում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800 մ բարձրության վրա. չոր քարքարոտ լանջերին, մարգագետնատափաստանում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Սիսիանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

225. *Astragalus karabaghensis* Bunge  
**Գագ դարարաղի**  
**Астрагал карабахский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ փշոտ, բարձանման ճյուղավորված, 20—30 սմ բարձր.: Տերևները 4—6 սմ երկ.: Տերևիկները 6—9-ական գույգ, 2—6 մմ երկ., 1—2 մմ լայն., համարյա մերկ: Ծաղիկները փնջերով հավաքված խիստ մոտեցած տերևների անոթներում, առաջացնելով գլխիկանման ծաղկաբույլ 2,5—3 սմ տրամագծով: Բաժակը երկար չոված, խավոտ, ատամիկները խոզանաձև, երկար թարթիչավոր, խողովակից բավականին շատ երկար: Պսակը բաժակին չգերազանցող, վառ-վարդագույն: դրոշի թիթեղը առանց ականջուկների, աստիճանաբար ձգվող լայն եղունգիկի:

**Տարածում.** Աճում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Այարի կիրճ, Խաչիկ և Գնիշիկ գյուղերի միջև): EOO 70. քառ. կմ է, AOO` 12 քառ. կմ, լոկալիտետները` 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Դարաբաղում, Արևելյան Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800-2300 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ կավային լանջերին, տափաստանում և մարգագետնատափաստանում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում` օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա` հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Չի պահպանվում:

Անհրաժեշտ է Այարի կիրճում ԲՀՊՏ-ի ստեղծում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

226. *Astragalus karakuschensis* Gontsch.

Գազ կարակուշի

Астрагал каракушский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է հողերի ինտենսիվ յուրացման գոնայում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա ստորգետնյա փայտացող ընձյուղներով բույս, 5—10 սմ բարձր.՝ խիտ ծածկված կարճ չոլած պարզ մազիկներով: Տերևները 1,5—3 սմ երկ.: Տերևիկները 8-10-ական գույգ, 3,5--5 մմ երկ., 2—3 մմ լայն., էլիպսաձև: Ծաղկակիրները 3—5 սմ երկ.: Ծաղկաբույլը 5—8 ծաղիկներով, նոսր: Բաժակը ծաղկելիս փքվող, ծիրանեգույն ջղավորված: Պսակը սկզբում բաց գույնի, հետո կարմրող:

**Տարածում.** Աճում է Երևանի (գյուղ Չաթնա) և Դարեղեգիսի (Խաչիկ, Գնիշիկ, Մոզրով գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 740 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1600-2700 մ բարձրությունների վրա. կրաքարային քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս ամսին:

Բնական պոպուլյացիաների վրա կատարված դիտողությունները և Երևանի բուսաբանական այգում աճեցված բույսերի բազմամյա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տեսակը կորցրել է գեներատիվ բազմացման ունակությունը, իսկ վեգետատիվ բազմացումը ընթանում է չափազանց/ դանդաղ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, վերարտադրության ցածր ունակություն, աճելավայրի կորուստ/դեգրադացիա՝ հողերի յուրացում գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



227. *Astragalus karjagini* Boriss.

**Գագ կարյազինի**  
**Астрагал Карягина**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

**Վտանգված տեսակ:** Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության գոնայում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ փշոտ, համարյա մերկ, բարձրկանման ճյուղավորված, 30—40 սմ բարձր.: Տերևները 3—12 սմ երկ.: Տերևիկները 4—7-ական զույգ, կաշեկերպ, թխակապույտ-կանաչ, 10—35 մմ երկ., 4—8 մմ լայն.: Ծաղկաբույլը տափակած-գնդաձև, 3—5 սմ տրամագծով: Պսակը դեղին, հազվադեպ կարմրավուն, դրոշը 17—22 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է Երևանի (Գառնի, Գողթ, Չաթմա, Բայբուրդ գյուղերի շրջակայք, Ուղտուակունք գետի կիրճ, Ուրծի լեռնաշղթա) և Գեղամի (Գելայտր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 370 քառ. կմ է, AOO` 36 քառ. կմ, լոկալիտետները` 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 900-2200 մ բարձրությունների վրա. քարափլվածքների վրա, չոր քարքարոտ և խճաքարոտ լանջերին, գիհու նոսրանտառում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում` հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա` հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մեծ մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

228. *Astragalus kirpicznikovii* Grossh.  
Գագ Կիրպիչնիկովի  
Астрагал Кирпичникова



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս ծածկված պարզ մազիկներով: Տերևները կենտփետրաձև, 8—35 սմ երկ.: Տերևիկները 8—21-ական գույգ, վերևից մերկ, տակից խավոտ, էլիպսաձև, 5—20 մմ երկ., 2—10 մմ լայն.: Ծաղկակիրները 0,5—1 սմ երկ., սակավածաղիկ.:

Ծաղիկները կարճացած, փնջաձև, համարյա արմատամերձ ողկույզներում: Պսակը դեղին: Գրոշը 18-23 մմ երկ.: Սոնակը սպիի տակ մերկ: Ունդերը 10—20 մմ երկ., խավոտ, երկար չոված:

**Տարածում.** Հանդիպում է Զանգեզուրի (Անգեղակոթ գյուղի շրջակայք, Գորիս քաղաքի և Տեղ գյուղի միջև) և Մեղրու (Շվանիձոր և Նյուվաղի գյուղերի միջև) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1460 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է նաև Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 650-1850 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, թփուտների մեջ, գիհու նոսրանտառում, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի կառուցվածքի և ծավալի ուսումնասիրություններ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ստեղծել ԲՀՊՏ Նյուվաղի և Շվանիձոր գյուղերի շրջակայքում:

229. *Astragalus lunatus* Pall.

Գազ կիսալուսնաձև  
Астрагал полулунный



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության զոնայում: Հայաստանի տարածքում հայտնաբերվել է վերջերս (2001 թ.):

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմաշա բույս, ծածկված երկծայր մագիկներով: Յողունները ճյուղավորված, մինչև 60 սմ բարձր.: Տերևիկները 9—15-ական զույգ, 5—13 մմ երկ., 1,5—2,5 մմ լայն.: Ծաղկաբույլը խիտ, ծաղկելիս փխրացող: Պսակը կարմիր: Ունդերը կախվող, երկարավուն-գծային, խիտ թավամազ, ուղիղ կամ թեթևակի աղեղնաձև կորացած, աննկատելի անցնող երկար և թավամազ կտուցի:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Վանաձորի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Դաղստանում և Իրանում (լեռնագագաթ Էլբուրս):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1400 մ բարձրության վրա. խճաքարոտ լանջերին, ժայռերի միջև: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի կառուցվածքի և ծավալի ուսումնասիրություն, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

230. *Astragalus massalskyi* Grossh.  
**Գազ Մասալսկյու**  
**Астрагал Массальского**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է, Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս՝ ծածկված երկձայր մագիկներով: Տերևները 5—20 սմ երկ.: Տերևիկները 6—9-գույգ, նշտարաձև: Ծաղկակիրները տերևներից կարճ, 2—10 սմ երկ., 3—5 ծաղիկներով: Պսակը դեղին, 22—27 մմ երկ.: Ունդը գնդաձև փքված, կաշենման, 13—20 մմ տրամագծով:

**Տարածում.** Հանդիպում է Շիրակի (Կոշավան և Խարկով գյուղերի միջև) և Երևանի (Երախի և Ուրծի լեռնաշղթա, Գոռավան գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1540 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1500 մ բարձրությունների վրա. կրաքարային լանջերին, կավոտ և ավազոտ հողերում, ֆրիգանոիդներում, տրագականտնիկներում, ավազային անապատում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է ստեղծել ԲՀՊՏ Երասխի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

231. *Astragalus montis-aquilis* Grossh.  
**Գագ արծվաաարային**  
**Астрагал орлиногорский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2ab(iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա, անցողուն թխակապույտ բույս, մինչև 8 սմ բարձր.՝ ծածկված երկծայր մագիկներով: Տերևները բազմաթիվ: Տերևիկները 5—10 գույգ, 2—6 մմ երկ., 2—4 մմ լայն. երկու կողմից , հազվադեպ միայն տակից, առսեղմ մագոտ: Ծաղկակիրները տերևներից կարճ, 2—8 սմ երկ., 4—10 ծաղիկներով: Պսակը սպիտակավուն, նավակի ծայրը մանուշակագույն պուտերով: Դրոշը 20—26 մմ երկ.: Ունդը գծային, կողքերից թեթևակի սեղմված, 12—24 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է Երևանի (Ուրծի լեռնաշղթա, Տիգրանաշեն և Չանգակատուն գյուղերի շրջակայք) և Դարեղեգիսի (Խաչիկ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 330 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1600-2000 մ բարձրությունների վրա. կրաքարային լանջերին, ժայռերի ճեղքերում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, սահմանափակ էկոլոգիական հարմարվածություն, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է հետազոտական աշխատանք՝ պոպուլյացիայի կառուցվածքը և ծավալը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

232. *Astragalus ordubadensis* Grossh.

Գազ օրդուրադի  
Астрагал ордубадский



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ լեռնահանքային արդյունաբերության և հողերի յուրացման տարածքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս, 10—20 սմ բարձր.՝ ծածկված երկծայր մագիկներով: Նախորդ տարիների տերևաթիթեղները և կոթերը ամուր, պապիանվող: Տերևիկները 5—8-ական զույգ, միմյանցից հեռացած, երկարավուն-նշտարած, 4—15 մմ երկ., 1—4 մմ լայն.:

Ծաղկակիրները տերևին հավասար, 5—20 մմ երկ., թույլ, բարակ: Ծաղկաբույլերը 3—11 ծաղիկներով, ծաղիկները միմյանցից հեռացած: Պսակը վարադա-մանուշակագույն, դրոշը 18—20 մմ երկ.: Ունդը 20—40 մմ երկ., սկզբում վերև և հորիզոնական ուղղված, հետագայում կախված:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Կարչևան և Ագարակ գյուղերի միջև: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճաքարոտ, կրաքարային լանջերին, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ լեռնա-արդյունահանող արդյունաբերության զարգացման և գյուղատնտեսական հանդակների համար՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



234. *Astragalus prilipkoanus* Grossh.

Գազ Պրիլիպկոյի  
Астрагал Прилипка



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Աճում է հողերի ինտենսիվ յուրացման գոնայում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս, ծածկված երկծայր մագիկներով: Տերևիկները 7—16-ական զույգ, 10—27 մմ երկ., 3—9 մմ լայն.: Ծաղկակիրները ամուր, ուղիղ, զգալիորեն տերևները գերազանցող, ծաղկաբույլի հետ միասին 20—40 սմ երկ.: Ծաղկաբույլը բազմածաղիկ, պտուղի ժամանակ խիստ երկարացող: Պսակը կարմրա-մանուշակագույն: Ունդերը գծային, 2,5—4 սմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Աչատինի կիրճ, Կապանի և Քաջարանի միջև, Կաթնառատ գյուղի շրջակայք): EOO 40 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Թայիշում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին, վերին և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 1000-2500 մ բարձրությունների վրա. լեռնային գետերի ափերին, հղկված գլաքարերի միջև, խոտածածկ խճաքարոտ լանջերին, նոսրանտառում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝ղեզրադասիա՝ հողերի յուրացման և գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի կառուցվածքի և ծավալի ուսումնասիրություն, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



235. *Astragalus refractus* C. A. Mey.

Գազ բեկված

Астрагал преломленный



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա՝ 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս՝ ծածկված երկծայր մազիկներով: Ծաղկակիրները դուրս են գալիս տերևների արմատամերձ վարդակի կենտրոնից, ամուր, ուղիղ կանգնած, 20—40 սմ բարձր.: Ծաղկաբույլը 20—30 ծաղիկներով, խիտ, պտղի ժամանակ շատ երկարացած: Պսակը դեղին: Ունդերը գծային, կախված:

**Տարածում.** Հայտնի է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանից (Աշոտավան գյուղի շրջակայք, ջրվեժ Շաքի): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անդրկովկասում, Թալիշում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1500-1700 մ բարձրությունների վրա. չոր մարգագետիններում, մարգագետնա-տափաստանում: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման և ինտենսիվ արածեցման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

236. *Astragalus saganlugensis* Trautv.

Գագ սողանլուղի

Астрагал саганлугский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց միջև հեռավորություն 80 կմ-ից ավելի է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր, ճիւղ առաջացնող բույս՝ խիտ ծածկված պարզ մազիկներով: Յողունները փռված: Տերևները 2—4 սմ երկ.: Տերևիկները 6—7 մմ երկ.: Ծաղկաբույլը գլխիկավոր, 12—18 ծաղիկներով: Պսակը կարմրավուն: Ունդը բաժակին հավասար:

**Տարածում.** Հանդիպում է Գարեդեգիսի (Ձերմուկի շրջակայք) և Չանգեզուրի (լեռնագագաթ Կապուտջուղ) ֆլորիստիկական շրջաններում: AOO 24 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Ղարաբաղում և Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին և ենթալպյան լեռնային գոտիներում, ծ. մ. 1800-2700 մ բարձրությունների վրա. խճաքարոտ լանջերին, մարգագետիններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման և գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և ներկա վիճակը ճշտելու համար:

237. *Astragalus sangezuricus* Boriss.

**Գագ զանգեզուրի  
Астрагал зангезурский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Տրագակամուսային թփիկ 10-15 սմ բարձր., խիստ ճյուղավորված: Տերևները մինչև 6 սմ երկ., գագաթին փոքրիկ փշիկով: Տերևիկները 5—9-ական գույգ, համարյա մերկ: Ծաղիկները նստած տերևների անոթներում, 3-5-ական: Ծաղկակիրները մինչև 8 սմ երկ.: Բաժակը ծածկված չոված կամ հետ թեքված մագիկներով 0,5—1 սմ երկ.: Պսակը երկնագույն-մանուշակագույն., դրոշը 16—23 սմ երկ.: Ունդերը երկարավուն-ձվաձև, կարճ և առսեղմ մագոտ:

**Տարածում.** Աճում է Ջանգեզուրի (լեռնագագաթներ Սարիդարա և Կապուտջուղ) և Մեղրու (Բուղաքար, Լիճք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 200 քառ. կմ է, AOO` 24 քառ. կմ, լոկալիտները` 3:

Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտուց մինչև ավայան գոտի, ծ. մ. 2100-3500 մ բարձրությունների վրա. չոր խճաքարոտ լանջերին, քարափլվածքների վրա, մարգագետիններում, կաղնուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում` հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

238. *Astragalus schelkovnikovii* Grossh.  
**Գազ Շելկովնիկովի**  
**Астрагал Шелковникова**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Աճում է Արարատյան հարթավայրում, ինտեսիվ տնտեսական գործունեության զոնայում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա ճյուղավորված բույս՝ ծածկված երկձայր խիստ անհավասարաչափ մազիկներով: Տերևիկները նեղ-գծային: Ծաղկաբույր նոսր, երկարացած, փոքրաթիվ ծաղիկներով: Պսակը կարմիր: Ունդերը կախված կամ հորիզոնական ուղղված, ցայտուն ուրվագծված սերմերով և ձգվածքով դրանց միջև:

**Տարածում.** Աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արտաշատի շրջակայք, Գոռավան գյուղ): AOO 8 քառ. կմ է, լոկալիտները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 19 կմ է: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1200 մ բարձրությունների վրա. չոր տեղերում՝ փոխար և ավազոտ մակերեսով, անապատում, կիսաանապատում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, սահմանափակ էկոլոգիական հարմարողականություն, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի՝ «Գոռավանի ավազոտներ» արգելավայրի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի կառուցվածքի և ծավալի ճշտում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

239. *Astragalus schuschaensis* Grossh.

Գազ շուշիի

Астрагал шушинский



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Անդրկովկասում՝ Էնդեմիկ տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Տեսակին սպառնում է անհետացում՝ լեռնա-արդյունահանող արդյունաբերության գործունեության ինտենսիվացման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա ճիւղաձև առաջացնող, անցողուն բույս՝ ծածկված երկծայր մագիկներով:

Ծաղկակիրները բազմաթիվ, բարակ, գետնատարած: Ծաղկաբույրը խիտ: Ծաղկակիցները նշտարած, ձգված-սրացած, համարյա բաժակին հավասար: Դրոշը 21—24 մմ երկ., դեղին, նավակը՝ մանուշակագույն: Ունդերը ձվաձև, կողքերից սեղմված, համարյա բաժակին հավասար:

**Տարածում.** Հանդիպում է Սևանի ֆլորիստիկական շրջանում (Սոսք գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի շրջակայքում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 2100-2200 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում, քարաթափվածքների վրա: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ տեղաբնակիչ լեռնա-արդյունահանող արդյունաբերության զարգացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանական գոտում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

240. *Astragalus sukaczewii* Derv. et Jelenevsky

Գազ Սուկաչովի  
Астрагал Сукачева



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Հարավային Անդրկովկասում՝ Էնդեմիկ է: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Նկատի ունենալով Հայաստանում տեսակի համեմատաբար լայն տարածումը, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս՝ ծածկված երկծայր մազիկներով: Տերևները հիմնականում պարզ, հազվադեպ 1-2 (3-4) գույգ, մոխրա-կանաչ տերևիկներով, երկու կողմից խիտ ծածկված առտեղմ մազիկներով, չթափվող՝ անբողջ վեգետացիայի ընթացքում: Ծաղկակիրները դուրս են գալիս տերևների արմատամերձ վարդակից, 4—20 սմ երկ.: Ծաղկաբույլը 5—20 ծաղիկներով: Պսակը ծաղկման սկզբում դեղին, հետագայում՝ դեղնա-դարչնագույն: Ունդերը գծային:

**Տարածում.** Աճում է Սևանի (Գարանակ և Արտանիշ գյուղերի շրջակայք) և Երևանի (լեռնաշղթա Երանոս, Արտաշատի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3030 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հանդիպում է նաև Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1200-2000 մ բարձրությունների վրա. կրաքարային և խճաքարոտ լանջերին՝ կիսաանապատային բուսականության կազմում, կաղնու և գիհու նոսրանտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ տեղափոխության հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

241. *Astragalus vedicus* Takht. (= *Astragalus karabaghensis* Bunge subsp. *vedicus* (Takht.) Takht.)

Գազ վեդու  
Астрагал вединский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է հողերի յուրացման գոնայում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ՝ քիչ ճյուղավորված, 15—35 սմ բարձր.: Տերևների առանցքը բարակ, սովորաբար նարջա-կարմիր, փոքրիկ փշիկով վերջացող: Տերևիկները հաստավուն, հետ թեքված առանցքներով, 4—6-ական զույգ, խավոտ, էլիպսաձև, 4—10 մմ երկ., 2—4,5 մմ լայն.: Ծաղիկները հավաքված խիստ մոտեցած տերևների անուփներում, 2—3մմ տրամագծով՝ գնդաձև ծաղկաբույլ առաջացնող: Բաժակը երկար չոված խավոտ, ատամիկները խողովակից բավական շատ երկար, խոզանաձև, երկար թարթիչավոր: Պսակը դժգույն-վարդագույն: Դրոշը բաժակին չգերազանցող, առանց ականջուկների, աստիճանաբար ձգված լայն եղունգիկի:

**Տարածում.** Աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երանոս, Քաղցրաշեն, Երասխ, Վեդի, Ուրծի լեռնաշղթա): EOO 120 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրությունների վրա. քարաթափվածքների, կրաքարային և տրավերտինային տեղերում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝ շեղադասիա՝ հողերի յուրացման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ստեղծել ԲՀՊՏ Երասխի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

242. *Astragalus xerophylus* Ledeb.

Գազ չորասեր

Астрагал сухолубивый



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Խոցելի տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Նկատի ունենալով Հայաստանում տեսակի համեմատաբար լայն տարածումը, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ցածր կիսաթփիկ 5—20 սմ բարձր., ծածկված երկծայր մագիկներով: Յողունները գետնատարած կամ ուղիղ: Ծաղկակիրները 1—10 սմ երկ.: Ծաղկաբույլը փոքրաթիվ ծաղիկներով:

Պսակը կապույտ, պտղի ժամանակ պահպանվող: Ունդերը 5—8 մմ երկ., պարզորոշ կտուցի անցնող, գորտնուկավոր՝ խիտ ծածկված երկար, չոփած գորտնուկների վրա նստած մագիկներով:

**Տարածում.** Հանդիպում է Վերին Ախուրյանի (Աշոցքի շրջակայք) և Սևանի (Արեգունի լեռնաշղթա, Նորադուզի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3000 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2000-2300 մ բարձրությունների վրա. չոր խճաքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, մասնատված արեալ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



243. *Astragalus xiphidium* Bunge

Գազ քրածն

Астрагал мечевидный



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է հողերի ինտենսիվ յուրացման զոնայում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթուփ՝ 30-60 սմ բարձր., մոխրա-կանաչ, ոչ բարձր փայտացող ճյուղավորված բնիկով՝ խիտ ծածկված առնեղմ երկար մազիկներով: Տերևները 3-6 սմ երկ.: Տերևիկները 3-5-ական գույգ, նեղ-գծային, 6—20 մմ երկ.: Ծաղկակիրները տերևներից բավական երկար: Ծաղկաբույլը նոսր: Բաժակը խողովակաձև, 13—15 մմ երկ., ատամները խողովակից բավական կարճ: Պսակը 20—25 մմ երկ., պսակաթերթերի վերին կեսը սպիտակ, ներքևինը՝ վարդա-բաց-մանուշակագույն: Ունդերը բզաձև-գծային, 3—6,5 սմ երկ., հորիզոնական չված կամ հետ թեքված, ուղիղ կամ կորացած:

**Տարածում.** Աճում է Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Դարբասի կիրճ, Զորաց Քարեր, Շամբ գյուղի շրջակայք): EOO 20 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Թալիշում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1800 մ բարձրությունների վրա. տափաստանում, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, անելավայրերի կորուստ՝ հեղեղադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Սիսիանի շրջանում, տեսակի հատուկ ուշադրություն և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

244. *Cicer anatolicum* Alef.

Միսեռ անատոլիական  
Нут анатолийский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ խիստ մասնատված արեալով: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ 25—70 սմ բարձր., գեղձային թավոտությամբ, ուժեղ ճյուղավորված ցողուններով: Տերևները զույգ փետրաձև, բեղիկով վերջացող: Տերևիկները 4—9-ական զույգ, կեսից վերև ատամնավոր եզրերով: Ծաղկակիրները 1—2-ական ծաղիկներով: Պսակը մուգ կապտամանուշակագույն, 17—21 մմ երկ.: Առջաթելերը գազաթի մոտ լայնացող: Ունդերը էլիպսաձև, 18—33 մմ երկ., 7—13 մմ լայն., փքված, 2—3 սև կնճռոտ սերմերով:

**Տարածում.** Հանդիպում է Գեղամի (Ուղտուակունք), Գարեղեգիսի (Մարտիրոս, Գնդևազ) և Մեղրու (Բուղաքար, Վահրավար) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1775 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 7: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Անատոլիայում, Իրաքում, Արևմտյան և Հյուսիս-արևմտյան Իրանում


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 1800-2550 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում, քարքարոտ լանջերին, քարաթափվածքների վրա, թփուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ղեգրադաջիա՝ հողերի յուրացման, լեռնա-արդյունահանող արդյունաբերության, արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Նոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում և «Բողաքարի» պետական արգելավայրում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

245. *Colutea komarovii* Takht.

Պաթականի Կոմարովի  
Пузырник Комарова



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii,iv,v); C 2a; D

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թխակապույտ թուփ 0,5—1 մ բարձր.: Տերևները 12—20 մմ երկ.: Տերևիկները 1—3-ական զույգ, համարյա կլորավուն, 2—6 մմ երկ., 2—4 մմ լայն., ծայրային տերևիկը մյուսներից ավելի մեծ: Ծաղկաբույլը 1—3 ծաղիկներով: Պսակը մուգ-կարմիր- դարչնագույն, դրոշը լայն-կլորավուն, 10—12 մմ երկ., 9—11 մմ լայն.: Ունդերը փքված, օվալ, մերկ, 15—25 մմ երկ., 15 մմ լայն., 2—6 սերմերով:

**Տարածում.** Հայաստանում հայտնի պոպուլյացիան աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Կարչևան և Մեղրի բնակավայրերի միջև, Ծիրանի Ձոր կիրճ): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, վերջերս հայտնաբերվել է Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրությունների վրա. ֆրիգանանման բուսականության մեջ՝ չոր խճաքարոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

Տեսակը հարմարված է խիստ արիդային պայմաններին, որի մասին վկայում են ընձյուղների անատոմիական կառուցվածքը և արտաքին մորֆոլոգիական առանձնահատկությունները: Այն մանրատերև թուփ է, բարդ տերևներով: Տերևիկները թափվում են ամռան սկզբում, իսկ ֆոտոսինթեզը դեռ երկար ժամանակ շարունակում է կատարել տերևի առանցքը:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

246. *Coronilla cretica* L.

Քարավույտ կրետական  
Вязель критский



**Կատեգորիա.** EN\* B 1ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ, 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Նկատի ունենալով տեսակի ընդհանուր լայն տարածվածությունը, սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս ճյուղավորված ցողուններով, 10—20 սմ բարձր.: Տերևները կենտ փետրածև: Տերևիկները 2—6-ական գույգ, երկարավուն-սեպածև: Ծաղկաբույլերը 1—4 ծաղիկներով: Պսակը վարդագույն, 3—5 մմ երկ.: Ունդերը նեղ-գծային, ուղիղ, վերև ուղղված:

**Տարածում.** Հանդիպում է Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Նեփին Հանդ գյուղի շրջակայքում: AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Անդրկովկասի այլ շրջաններում, Դրիմում, Հարավ-արևելյան Եվրոպայում, Անատոլիայում և Արևմտյան Սիրիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 1000 մ բարձրության վրա. շիբլակի չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

247. *Glycyrrhiza echinata* L.

Մատուտակ խոզանավոր  
Солодка щетинистая



**Կաստեգորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv).

**Խոցելի տեսակ:** Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի շատ մեծ ընդհանուր տարածումը սպառնալիքի կաստեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ, սակայն վերջին տարիներին հայտնաբերվել են նոր պոպուլյացիաներ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 80—100 սմ բարձր.: Յողունը ճյուղավորված: Տերևները 5—12 սմ երկ.: Տերևիկները 3—6 գույգ, էլիպսաձև, 2—4 սմ երկ., 1—2 սմ լայն., տակի կողմից բազմաթիվ գեղձերով: Ծաղկաբույլը խիտ, գնդաձև կամ օվալ: Պսակը բաց-մանուշակագույն, 5—7 մմ երկ.: Ունդերը վերին մասում խիտ և երկար խոզանաձև-գեղձային, հիմքի մոտ՝ մերկ, 1-3 սերմերով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի (Ջեյվա, Սիս գյուղերի և Էջմիածին քաղաքի շրջակայք) և Մեղրու (Լեհվազ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 490 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, Սիջին Եվրոպան, Միջերկրածովյան ավազանի երկրները, Անատոլիան, Իրանը, Արևմտյան Սիբիրի հարավ-արևմտյան մասը և Միջին Ասիայի հյուսիս-արևմտյան մասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. գետերի և առուների ափերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:


**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

248. *Hedysarum elegans* Boiss. et Huet. (= *H. bordzylowskyi* Grossh.)

Կուրկուրան հիասրանջ  
Копеечник изящный



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Աճում է ինտեսիվ տնտեսական գործունեության զոնայում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա անցողուն բույս 6-25 սմ բարձր.: Տերևիկները 1-4 զույգ, երկու կողմից արծաթավուն-մազոտ, ձվաձև-էլիպսաձև: Ծաղկաբույր խիտ, բազմածաղիկ: Պսակը ծիրանեգույն-մանուշակագույն, 14-20 մմ երկ.: Ունդը 3-6 մասերից; մասերը առանց խոզանածև փշերի, սպիտակ-թաղիքավոր, թմբիկավոր:

**Տարածում.** Հանդիպում է միայն Շիրակի (Ջաջուր, լեռնագագաթ Մեծ Սարիար), Լոռու (Սպիտակ քաղաքի շրջակայք) և Դարեղեգիսի (Խաչիկ, Գնիշիկ, Մոզրով գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2370 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 1800-2700 մ բարձրությունների վրա. տափաստաններում, քարքարոտ և խճաքարոտ լանջերին, ժայռերի ճեղքերին: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ ղեգրադացիա՝ հողերի յուրացման և ինտենսիվ արածեցման հետևանքով, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Շիրակի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

249. *Hedysarum micropteryum* Bunge

**Վորկուրան կարճաթև**  
**Копеечник мелкокрылый**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(i, ii, iii) + 2ab (i,ii,iii)

Խոցելի տեսակ: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի ընդհանուր մեծ տարածումը սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա թխակապույտ առսեղմ թավոտ բույսեր 10—30 սմ բարձր.: Ցողունները ճյուղավորված: Տերևիկները 4—9 զույգ, գծային, վերևից մերկ, ներքևից՝ թավոտ, 15—40 մմ երկ., 1,5—2 մմ լայն.: Ծաղկաբույրը սակավածաղիկ: Պսակը վարդագույն, 10—11 մմ երկ.: Ունդը 1—3 մասերով: Մասերը խիտ ալյուրաման-խավոտ և խոզանավոր-ասեղնաձև:

**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ուրծի լեռնաշղթա, Զովաշեն, Դ-վին, Երանոս, Վեդի, Երասխ, Ուրցաձոր գյուղերի շրջակայք): EOO 240 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Կենտրոնական Անդրկովկասում, Արևմտյան Իրանում, Հյուսիսային Թուրքմենիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կավային և ավազային հողերի վրա: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:





251. **Lathyrus setifolius L.**  
**Տափուռ խոզանատերև**  
**Чина шетинолистная**



**Կատեգորիա.** VU\* 1 ab(i,ii,iii) + 2 ab i,ii,iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի լայն ընդհանուր տարածման պատճառով սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս թույլ, ճյուղավորված ցողուններով մինչև 60 սմ երկ.: Տերևիկները 1 գույգ, գծային-նշտարած, 2—10 սմ երկ., 1—3 մմ լայն: Տերևի առանցքը ճյուղավորված բեղիկով վերջացող: Ծաղկակիրները 10—30 մմ երկ., 1 ծաղկով: Պսակը վարդա-մանուշակագույն, դրոշը 8-10 մմ երկ.: Ունդերը երկարավուն-օվալ, 20—30 մմ երկ., 8—10 մմ լայն., հիմքում նեղացող ոտիկով, 2(3) մեծ, գորտնուկավոր սերմերով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Որոտանի լեռնանցքի լանջերին և «Շիկահող» արգելեցում: EOO 400 քառ. կմ է, AOO` 20 քառ. կմ, լոկալիտետները` 3: Հայաստանից բացի աճում է Ղարաբաղում, Հարավային Եվրոպայում, Անատոլիայում, Արևմտյան Սիրիայում, Հյուսիսային Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 650-1000 մ բարձրությունների վրա. անտառում, շիբլյակում, խճաքարոտ լանջերին: Ծաղկում է մայիսին, պտղաբերում` մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

252. *Lathyrus sylvestris* L.

Տափուղռ անտառային

Чина лесная



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

**Վտանգված տեսակ:** Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի շատ մեծ ընդհանուր տարածումը սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս թույլ լայն-թևավոր ցողուններով 50—200 սմ երկ.:

Տերևիկները 1 գույգ, ռոմբաձև-էլիպսաձև կամ լայն-նշտարաձև, 6—14 սմ երկ., 1—4,5 սմ լայն.:

Ծաղկակիրները տերևներից երկար 3—10 ծաղիկներով: Պսակը բազմերանգ, դրոշը 13—17 մմ երկ.:

Ունդերը գծային, 5—8 սմ երկ.: Սերմերը ցանցա-քմբիկավոր:

**Տարածում.** Հայտնի է միայն Չանգեգորի ֆլորիստիկական շրջանից, «Շիկահող» պետական արգելոցից: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Կովկասի այլ շրջաններում, Եվրոպայում, Հյուսիսային Ամատոլիայում, Հյուսիս-արևմտյան Աֆրիկայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 1000 մ բարձրության վրա. անտառում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճանապարհաշինության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

253. *Lens ervoides* (Brign.) Grande

Ոսպ ոսպնյականման  
Чечевица линзовидная



**Կատեգորիա.**

VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Խոցելի տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի ընդհանուր լայն տարածման պատճառով սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝

ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա բույս, բարակ թույլ ցողունով, 10—55 սմ երկ.: Արմատային վզիկի շուրջը առաջանում են բազմաթիվ ցողունիկներ, որոնք ծաղկում են և առաջացնում ստորգետնյա պտուղներ, վերգետնյաների մնան: Տերևիկները 2-4 գույգ: Ծաղկակիրները տերևներից երկար, 1(2) ծաղիկներով: Բաժակը 3 մմ երկ.: Պսակը բաժակին գերազանցող, բաց-երկնագույն: Ունդերը կարճ-մագոտ, կլոր-ռոմբաձև, 6—7 մմ տրամագծով:

**Տարածում.** Հանդիպում է Գարեղեգիսի (Հերիեր) և Ջանգեզուրի (Կապան) ֆլորիստիկական շրջաններում: EOO 620 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Դրիմում, Հարավային Եվրոպայում, Անատոլիայում, Կիպրոսում, Արևմտյան Սիրիայում և Հյուսիս-արևմտյան Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 750-1800 մ բարձրությունների վրա. շիբլակում, նոսրանտառներում, թփուտներով ծածակված լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին: Կուլտուրական ոսպի վայրի ազգակիցն է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ղեգրադացիա՝ հողերի յուրացման և արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

254. *Medicago arabica* (L.) Huds.

Առվույտ արարական  
Люцерна аравийская



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի լայն ընդհանուր տարածման պատճառով սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա համարյա մերկ բույսեր, բարակ թույլ ցողուններով 20-60 սմ բարձր.:

Տերևակիցները խոր-ատամնավոր: Տերևիկները սրտաձև, շատ հաճախ վերևից կենտրոնում

դարչնագույն-կարմիր պուտով: Ծաղկակիրները ծածկող տերևից կարճ: Ծաղկաբույլը 1-5 ծաղիկներով:

Պսակը դեղին: Ունդը գնդաձև-գլանաձև, 5-8 մմ տրամագծով, 4-5 պտույտներով, մանր փշիկներով ծածկված:

**Տարածում.** Հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, Վահանավանքի շրջակայք): AOO 12 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 25 կմ է: Հայաստանից բացի աճում է Արևմտյան Նախակովկասում, Դաղստանում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Թալիշում, համարյա ամբողջ Եվրոպայում, Հարավ-արևմտյան Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1100 մ բարձրությունների վրա. խոնավ տեղերում, մարգագետիններում, բացատներում, անտառների եզրերին, թփերի մացառուտներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, նեղ էկոլոգիական հարմարվածություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



256. *Onobrychis major* (Boiss.) Hand.-Mazz.

Վորնգան խոշոր  
Эспарцет крупный



**Կատեգորիա.** CR 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, 50—90 սմ բարձր.: Տերևները 10—35 սմ երկ.: Տերևիկները 6—11 գույգ, երկարավուն-էլիպսաձև, 10—30 մմ երկ., 2—7 մմ լայն.: Ծաղկակիրները 15—30 սմ երկ.:

Ծաղկաբույյր բազմածաղիկ, պտղի ժամանակ երկարացող, մինչև 6—12 սմ երկ.: Դրոշը մերկ: Ունդերը նստադիր, թեթևակի տափակած, կիսակլոր, խիտ առսեղմ թավոտ, 7—9 մմ երկ., փշավոր; փշերը մանուշակագույն ծայրերով:

**Տարածում.** Հայտնի է միայն Գարեդեգիսի ֆլորիստիկական շրջանից (Մելիմի լեռնանցք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Հարավ-արևելյան Անատոլիայում, Արևմտյան և Կենտրոնական Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 2200 մ բարձրության վրա. մարգագետնա-տափաստանում: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ հողերի յուրացման, արածեցման և ռեկրեացիոն ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալի և կառուցվածքի բացահայտման համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

257. *Onobrychis meschetica* Grossh.

Կորնգան մեսխեթական  
Эспарцет месхетский



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա:

Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույսը 40—60 սմ բարձր.: Միջին և վերին տերևների տերևիկները օվալ կամ էլիպսաձև, գազաթում` բուրբ-կլորավուն: Ծաղկաբույլը բազմածաղիկ, ծաղկելուց հետո երկարացող: Պսակը դեղին, նուրբ վարդագույն շերտավոր: Դրոշը արտաքինից թավոտ, 14—17 մմ երկ.: Ունդերը երիկամաձև, ոտիկով, մերկ, փայլուն, սովորաբար մուգ թխավուն; մեջքային կարը կորացած:

**Տարածում.** Հանդիպում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Շամբ գյուղի և Տաթև ՀԷԿ-ի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները` 2, որոնց միջև հեռավորությունը 20 կմ է: Հայաստանից բացի աճում է Կենտրոնական և Հարավ-արևմտյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-1400 մ բարձրությունների վրա. շիբլյակում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում` հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, ռեկրեացիայի ազդեցություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:


Անհրաժեշտ են. հետազոտական աշխատանքներ` պոպուլյացիայի ծավալի և կառուցվածքի բացահայտման նպատակով, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:







**260. Oxytropis karjagini Grossh.**  
**Գառնափույտ Կարյազինի**  
**Острокильница Карягина**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա երկարամազ մոխրագույն անցողուն բույս: Տերևները 4—16 սմ երկ.:

Տերևիկները 6—10 զույգ, երկարավուն-էլիպսաձև: Ծաղկակիրները համարյա տերևների հավասար, 5-16 (25) սմ երկ.: Ծաղկաբույլը գլխիկանման, 4—8 (14) ծաղիկներով: Պսակը վառ-ծիրանի-մանուշակագույն, 11—14 մմ երկ.: Ունդերը երկարավուն, թույլ կորացած, 15—25 մմ երկ., երկար, խիտ, փափուկ սպիտակամազ:

**Տարածում.** Հանդիպում է միայն Գարեդեգիսի ֆլորիստիկական շրջանում (Խաչիկ գյուղի շրջակայք, Այարի կիրճ, Մելիմի լեռնանագք): EOO 150 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1200-2400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճաքարոտ տեղերում, տափաստանային և մարգագետնա-տափաստանային զոնայի քարաթափվածքների վրա: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Այարի կիրճում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

261. *Oxytropis lazica* Boiss.

Գառնաովույտ լազիստանյան  
Острокильница лазистанская



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Արեալը խիստ մասնատված է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա գետնամերձ անցողուն բույս, ծածկված երկար դեղին և սպիտակ մազիկներով: Տերևները 2—6 սմ երկ.: Տերևիկները 9—15 գույգ: Ծաղկակիրները թույլ, ծաղկաբույլի հետ միասին 2,5—8 սմ երկ.: Ծաղկաբույլը սակավածաղիկ, 4—10 ծաղիկներով, պտղի ժամանակ չերկարացող: Պսակը բաց մանուշակա-երկնագույն: Դրոշը 17—20 մմ երկ.: Ունդերը ձվաձև-երկարավուն, թեթևակի կորացած, մինչև 20 մմ երկ., կարճամազ:

**Տարածում.** Հանդիպում է Սևանի (Արտանիշի թերակղզի) և Գեղամի (լեռնագագաթներ Սևար, Զիարեթ, Հադիս, Քյանքան գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 440 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Արևմտյան Անդրկովկասում և Հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան լեռնային գոտիներում, ծ. մ. 2000-3300 մ բարձրությունների վրա.

մարգագետիններում, քարքարոտ լանջերին և քարաթափվածքների վրա: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, թույլ վերարտադրություն, ինտենսիվ արածեցում:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

262. *Sphaerophysa salsula* DC.

Մֆերոֆիզա աղուտային  
Сферофиза солонцовая



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Խոցելի տեսակ: Ներկայումս հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի լայն ընդհանուր տարածումը և Հայաստանի տարածքում նրա տարածման ընդլայնումը սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս ուղիղ կանգնած ցողուններով 30—100 սմ բարձր.: Տերևները կենտ փետրածև: Տերևիկները 6—11 զույգ, առսեղմ թավոտ, մոխրագույն, էլիպսաձև, բութ գագաթով: Ծաղկաբույլը 7—15 ծաղիկներով: Պսակը ծիրանեգույն, 10—12 մմ երկ.: Ունդը երկար ոտիկի վրա, փքված, թաղանթային, մերկ, 2—2,5 սմ երկ.:

**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմավիր, Արարատ): EOO 190 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Ռուսաստանի եվրոպական մասի հարավում, Միջին Ասիայում, Գազախստանում, Իրանում, Աֆղանստանում, Ալբայում, Տուվայում, Մոնղոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. աղակալած ճահիճներում, առուների ափերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** ՀՀ Կառավարության 2008թ որոշմամբ Արարատի աղակալած ճահիճները ընդգրկվել են բնության հուշարձանների ցանկում, որպես «Աղակալած ճահճուտ»:

Անհրաժեշտ է տարածքի պահպանության կազմակերպում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

263. **Trifolium angustifolium L.**  
**Երեքնուկ նեղատերև**  
**Клевер узколистый**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Նկատի ունենալով տեսակի լայն ընդհանուր տարածումը սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա թավոտ բույս 10—60 սմ բարձր.: Տերևակիցների միաձուլված մասում գծային-նշտարած, ազատ մասում՝ գծային-բզաձև: Տերևիկները գծային, մինչև 8 սմ երկ., 2—4 մմ լայն.: Ծաղկաբույլը միայնակ, հասկանման, 1,5—8 սմ երկ.: Բաժակը խիտ թավոտ, երախում ճեղքանման նեղացած՝ կոշտուկային հաստացումով; ատամիկները բզաձև, պտղի ժամանակ աստղաձև չլված: Պսակը վարդագույն, բաժակին հազիվ գերազանցող, 10—12 մմ երկ.:

**Տարածում.** Հանդիպում է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապանի, Ճակատենի, Ներքին Հանդի, Ծավի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 15 կմ է: Հայաստանից բացի աճում է Դաղստանում, Անդրկովկասում, Գրիմում, Միջերկրածովյան ավազանում, Մակրոնեզիայում, Անատոլիայում, Իրանում, Հյուսիսասային Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրությունների վրա. չոր լանջերին, թփերի մեջ, անտառների եզրերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



265. **Trifolium sebastianii** Savi  
**Երեքնուկ Սեբաստիանի**  
**Клевер Себастиана**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է երկու ոչ մեծ պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի մեծ ընդհանուր տարածումը սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Սիամյա բույս 15—40 սմ բարձր.: Տերևիկները երկարացած, երկու ծայրերում նեղացած: Ծաղկակիրները բարակ: Ծաղկաբույլերը նոսր, 8—20 ծաղիկներով: Ծաղկակոթերը ծաղկման սկզբում ուղիղ, այնուհետև ներքև թեքված: Բաժակը բաց մերկ երախով: Պսակը 3—4 սմ երկ., դեղին, պտղի ժամանակ կարմրավուն-դարչնագույն:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Նոյեմբերյանի շրջակայք) և Ջանգեզուրի (Ճակատեն գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 260 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Դաղստանում, Գարաբաղում, Թալիշում, Սիջերկրածովյան ավազանում, Հյուսիս-արևմտյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 1000 մ բարձրության վրա. անտառային բացատներում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստը գրագրագիս՝ կապված անտառտնտեսական գործունեության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

266. *Trigonella astroides* Fisch et C.A.Mey.

Հացիամեն աստղաձև

Пажитник звездовидный



**Կատեգորիա.** EN 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են երեք ոչ մեծ պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 5—15 սմ բարձր., բարակ, թույլ հիմքից ճյուղավորված ցողուններով: Ծաղկաբույլը հովանոցանման, 1 սմ երկ. ոտիկի վրա, 3-8 ծաղիկներով: Պսակը դեղին, 4—5 մմ երկ.: Ունդերը հորիզոնական աստղաձև չոված, ուղիղ կամ թեթևակի կորացած, 10—20 մմ երկ., 1 մմ լայն.:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի (Քաղցրաշեն գյուղի շրջակայք), Դարեղեգիսի (Եղեգնաձորի շրջակայք) և Մեղրու (Նյուվաղի գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1130 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Արևելյան Միջերկրածովյան ավազանում, Հարավ-արևմտյան Ասիայում, Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-1300 մ բարձրությունների վրա. երրորդական դարաշրջանի կարմիր կավերի վրա, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Երասխի լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



267. **Trigonella capitata Boiss.**  
**Հացհամեն գլխիկավոր**  
**Пажитник головчатый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա՝ մասնատված արեալով, որը աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա բույս սնամեջ, ճյուղավորված ցողուններով 20—50 սմ բարձր.: Տերևիկները երկարավուն: Ծաղկաբույլերը երկար ծաղկակիրների վրա, խիտ, կիսագնդաձև, ծաղկելուց հետո երկարացող, բայց չնորսացող: Պսակը սպիտակ-մանուշակագույն, 4 մմ երկ.: Ունդերը ձվաձև, մերկ, 1 սերմով, հանկարծակի ձգված բարակ, վերևում կորացած կտուցի:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Մխչյան, Խորոնք, Չեյվա գյուղերի շրջակայք): EOO 200 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Ղարաբաղում, Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. ճահիճներում և ճահճացած տեղերում, առուների ափերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով, ճահիճների չորացում, մելիորացիա:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը բացահայտելու նպատակով, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

268. **Vavilovia formosa (Steven) Fed.**  
**Վավիլովիա նրբագեղ**  
**Вавиловия изящная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես կուլտուրական ոլոռի վայրի ազգակից: Արեալը մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս սողացող կոճղարմատով: Յոդունը մինչև 20 սմ երկ.: Տերևակիցները մանր: Տերևները 1 զույգ տերևիկներից, առանց բեղիկների; տերևի առանցքը սրածայրով վերջացող:

Ծաղկակիրները տերևները գերազանցող, մեկ ծաղկով: Պսակը վառ-վարդագույն, դրոշը 16—18 մմ երկ.: Ունդը կողքերից սեղմված, նշտարած: Մերմերը հարթ:

**Տարածում.** Հանդիպում է Գեղամի (լեռնագագթներ Սևսար, Զիարեթ) և Ջանգեզուրի (լեռնագագթներ Կապուտջուղ, Փառական, Մեծ Իշխանասար, Ուխտասար) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3750 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Մեծ Կովկասի լեռնաշղթայի վրա, Արևելյան Անդրկովկասում, Հարավային և Արևելյան Անատոլիայում, Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 3000-3500 մ բարձրությունների վրա. սև հրաբխային խարամի վրա և խճաքարոտ շարժուն թափվածքների վրա: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Գեղամա լեռնաշղթայի վրա, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

269. *Vicia pisiformis* L.

**Վիկ դրոճնանան**  
**Вика гороховидная**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հազվագյուտ տեսակ է Կովկասում: Անդրկովկասում հայտնի միակ պոպուլյացիան գտնվում է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս թույլ ցողուններով մինչև 200 սմ երկ.: Տերևիկները 3—5 գույգ, ձվաձև, բուք, 30—80 մմ երկ., 20—55 մմ լայն., ներքևի գույգը ծածկում է տերևակիցները: Տերևակիցները երկար, դրանց ներքևի մասը տարբեր ձևերի, ատամնավոր, եզրերից առանց մազիկների, նեղ մասը բզաձև, եզրերից երկարամազուտ: Բեռիկը ճյուղավորված: Ծաղկաբույլը երկար ծաղկակրի վրա, բազմածաղիկ: Պսակը բաց-դեղին: Դրոշը 12—17 մմ երկ.: Ունդերը դրոճնանան, մերկ:

**Տարածում.** Հանդիպում է Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ճակատեն գյուղի շրջակայք, «Շիկահող» պետական արգելոց): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Տեսակը լայն տարածում ունի ամբողջ Եվրոպայում, հանդիպում է նաև Արևմտյան Նախակովկասում և Արևմտյան Կովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 1100 մ բարձրության վրա. անտառում, թփերի մեջ: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ անտառի հատման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Fagaceae – Հաճարազգիներ - Буковые**  
**270. Castanea sativa Mill.**  
**Շագանակենի ցանովի**  
**Каштан посевной**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii)+ 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Ներկայումս բնության մեջ հայտնի են երկու բնական պոպուլյացիաներ (Սովետական տարիներին շատ շրջաններում այս տեսակը օգտագործվել է անտառատնկման ժամանակ): Բնակության շրջանը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Երկու լոկալիտետների միջև տարածությունը 230 կմ է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ անտառտնտեսական աշխատանքների պատճառով առաջացած աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Ծառ՝ մինչև 35 մ բարձր.: Տերևները մեծ, ամբողջական, երկարավուն-նշտարած, ատամնաեզր, գագաթում սրացած: Պտուղը կաշեման պտղապատով, ընդգրկված սուր-փշոտ, փայտացած պտղագավաթի մեջ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Իջևանի շրջակայք) և Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: AOO 20 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2:

Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Անդրկովկասի տարբեր շրջաններում, Եվրոպայի հարավում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիս-Արևելյան Թուրքիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 900-1300 մ բարձրությունների վրա. անտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Սեկ պոպուլյացիան պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է արգելել հատումները, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Frankeniaceae – Ֆրանկենիազգիներ - Франкениевые**

271. **Frankenia pulverulenta L.**

**Ֆրանկենիա փոշապատ**

**Франкения порошистая**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա բույս 4—40 սմ բարձր., չոված ճյուղավորությամբ: Տերևները հակաձվածև, տակից ծածկված սպիտակ ալյուրանման փառով: Ծաղիկները ծայրային վահանիկանման դիսկազիաներով: Բաժակը գլանաձև, մերկ: Պսակաթերթերը վարդագույն, 4-5 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Արևելյան Անդրկովկասում, Արևելյան Եվրոպայի հարավային շրջաններում, Հյուսիսային, Միջին, Կենտրոնական և Արևմտյան Ասիայում, Հյուսիսային և Հարավային Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-850 մ բարձրությունների վրա. աղիավուն ճահիճներում, խոնավ աղուտներում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների հետևանքով (արածեցում, հերկում, ճահիճների չորացում, բուսականության այրում):

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիան աճում է Արարատի ճահիճներում, որը ՀՀ Կառավարության 2008թ. որոշմամբ ընդգրկված է բնության հուշարձանների ցանկում՝ որպես «Աղակալած ճահճուտ»:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Fumariaceae – Ծխարույազգիներ - ДЫМЯНКОВЫЕ**

272. *Corydalis marschalliana* Pers.

**Անձխտա Մարշալի**

**Хохлатка Маршалла**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Հյուսիսային Հայաստանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված անտրոպոգեն գործոնների՝ հատկապես անտառահատումների և անտառտնտեսական աշխատանքների հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս՝ 10-15 սմ բարձր.: Արմատը գնդաձև, անկանոն-անկյունավոր պալարով: Ցողունային տերևները 2, հերթադիր, կրկնակի եռմասնյա, կազմված է լիպսաձև կամ երկարավուն ամբողջաեզր մասերից: Ծաղիկները զիգոմորֆ, խոշոր ծաղկակիցներով՝ խմբված ողկույզ ծաղկաբույլում: Բաժակը թաղանթանման, վաղ թափվող: Պսակը տարբեր գույնի՝ դեղին, վարդագույն-դեղին, ծիրանագույնից մինչև սևավուն, լավ արտահայտված երկար խթանով: Տուփիկը երկարավուն, 1.5-2 սմ երկ., կախված: Սերմերը մանր սև փայլուն:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Բերդ, Իջևան, Աչաջուր): EOO 770 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևմտյան Նախակովկասը, Արևմտյան Կովկասը, Կենտրոնական, Հարավ-Արևմտյան և Հարավային Անդրկովկասը, Ղարաբաղը, Թալիշը, Հարավ-Արևելյան Եվրոպան, Գրիմը, Անատոլիան և Հյուսիսային Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 500-1300մ բարձրությունների վրա. կաղնու-բոխտ անտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին: Հայաստանում այս տեսակի անհատները ցուցաբերում են մեծ փոփոխականություն, որը արտահայտվում է ծաղկի գույնով՝ ծիրանագույնից մինչև սևավուն, թեև տեսակը հայտնի է դեղինի տարբեր երանգներով: Ունի գեղազարդային հատկանիշներ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, տնտեսական գործունեության ազդեցություն՝ անտառների հատում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, հատուկ ուշադրության արժանացնել անտառշինական աշխատանքների ժամանակ:

273. *Corydalis verticillaris* DC.  
**Պոպուլիկ օղակադիր**  
**Хохлатка мутовчатая**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բույս գնդաձև պալարով: Յողունային տերևները 2, հակադիր, նստադիր կամ կարճակոթ, 3 (2)-փետրածև; առաջին կարգի սեգմենտները երկար կոթերով, 3-4-ական ամեն կողմից, համարյա հակադիր; վերջին կարգի սեգմենտները խոր 2-3- բլթակով: Ծաղկաբույլը ողկույզ, 3-8 ծաղիկներով: Պսակը 16—35 մմ երկ., վարդագույն կամ բոսորագույն, զագաթին մուգ-ծիրանեգույն պուտով; խթանը 1,5-2 անգամ արտաքին պսակաթերթից երկար, համրյա ուղիղ կամ կորացած:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ջանգեզուրի (լեռնագագաթներ Գազանասար և Խուստուսի) և Մեղրու (Լեհվազ գյուղի և Բողաքարի միջև, Ճգնավոր լեռ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 220 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Հյուսիսային Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտուց մինչև ալպիական գոտի, ծ. մ. 1900-3100 մ բարձրությունների վրա.

քարափլուզուտներում, քարքարոտ և կավոտ լանջերին, տրագականտային համակեցություններում: Ծաղկում է ապրիլ-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Gentianaceae - Բոզազգիներ - Горечавковые**

274. **Gentiana olivieri** Griseb.

**Բոզ Օլիվյեի**

**Горечавка Оливье**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab (iii) + 2ab (iii)

Խոցելի տեսակ: Ներկայումս հայտնի է երեք պոպուլյացիաներ: Արեալը խիստ ֆրագմենտացված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. պակաս է: Բանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման պատճառով առաջացող աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 20-70 սմ բարձր.: Արմատներ՝ տերևները մինչև 10 սմ երկ., առաջացնում են վարդակ, ցողունային տերևները՝ սակավաթիվ (2-3 զույգ) նեղ-նշտարած: Ծաղիկները բազմաթիվ, գագաթնային կոմպակտ ծաղկաբույլերում, մեծ, կապույտ կամ մանուշակագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Երևանի շրջակայք, Ուրծի և Երախի լեռնաշղթաներ) և Շիրակի (Լուսաղբյուր գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1120 քառ. կմ. է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 5. Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախիջևանում, Փոքր և Միջին Ասիայում, Իրաքում, Իրանում, Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 900-1400 մ բարձրությունների վրա. կիսաանապատային և տափաստանային բուսականության մեջ: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին.:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, արածեցման, կլիմայի փոփոխության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



275. *Lomatogonium carinthiacum* (Wulf.) A.Br.

Լոմատոգոնիում կարինտյան  
Ломатогониум каринтийский



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Ներկայումս հայտնի են չորս պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Քանի որ, տեսակի հիմնական արեալը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված կլիմայի փոփոխության պատճառով աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս մինչև 10-15 սմ բարձր.: Յոդունները հիմքից բազմաթիվ, բարակ: Յոդունային տերևները մինչև 1 սմ երկ., ավելի մեծ ամենամերձի տերևներից: Ծաղիկները միայնակ, երկար ծաղկակոթերով, դժգույն-երկնագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Գեղամի (Գեղամի լեռնաշղթայի բարձր լեռնային հատված) և Չանգեզուրի (Ռոտան գետի վերնագավառ, Գորիսի շրջակայք, լեռնագագաթ Կապուտջիղ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2775 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ:

Լոկալիտետները՝ 4. Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախակովկասում, Ադրբեջանում, Եվրոպայում, Սիբիրում, Հյուսիս-Արևելյան Անատոլիայում, Միջին և Կենտրոնական Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիների ծ. մ. 2600-3300 մ բարձրությունների վրա. ճահճացած և գերխոնավ տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արածեցում, կլիմայի փոփոխություն:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

**Geraniaceae – Խորդենազգիներ - Гераниевые**

276. *Erodium sosnowskianum* Fedor.

**Ճաշկուռից Սոսնովսկու**

**Журавельник Сосновского**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Սպառնացող վտանգներն են արեալի սահմանափակությունը և կլիմայի փոփոխությունը

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յողունները, 5-10 սմ երկ., գեղձային թավոտությամբ:

Տերևները փետրաձև հատված, կոթունավոր, մասերը բազմաթիվ, գծային կամ սեպաձև:

Ծաղկաբույլը 3-5 ճառագայթներով: Ծաղիկները մանր, մանուշակագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի (լեռնագագաթ Արագած) և Գեղամի (Ակնա լճի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 70 կմ է: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2500-3000 մ բարձրությունների վրա. ալպյան մարգագետիններում: Ծաղկում է հունիս ամսում, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման շրջան, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

277. **Geranium albanum Bieb.**  
**Խորդենի արևելա-կովկասյան**  
**Герань восточно-кавказская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Վտանգված է հազվագյուտության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս իլիկանման հաստացած արմատներով: Յողունը 20-60 սմ երկ., ծածկված երկար ցցված մազիկներով: Տերևները 6-8 սմ լայն., երկամասն-կլոր, ստորինները՝ 7-բաժան, վերինները՝ 5 - բաժան սեպաձև եռաբաժան ատամնավոր մասերով: Ծաղիկները ծիրանեգույն, պսակաթերթերը 15-20 մմ երկ., գոգավոր: Պտղի փեղկերը մեջքի կողմից սանրաձև հաստացած ուռեցքներով, մագոտ; կտուցը թելանման, թավոտ:

**Տարածում.** Հանդիպում է միայն Չանգեգորի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, Ճակատեն գյուղի շրջակայք): EOO 35 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեարը ընդգրկում է Արևելյան Անդրկովկասը և Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. թփուտների մեջ, անտառի եզրերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի խախտում գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Grossulariaceae – Կոկոռազգիներ - Крыжовниковые**

278. **Ribes achurjani Mulk.**

**Հաղարջենի ախուրյանի**

**Смородина ахурянская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Ներկայումս հայտնի է մեկ շատ մասնատված պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Թուփ 60-70 սմ բարձր., բարակ ընձյուղներով և մոխրագույն ճյուղերով:

Տերևները կանաչ, մանր, մինչև 2-3 սմ երկ., թեթևակի եռաբլթակ: Ծաղիկները կարճ 2-4 սմ երկարություն ծաղկեբույլերով; իգական ծաղիկները 2-4-ական խմբված կարճ ողկույզներում:

Պտուղները մանր, 2-4 մմ տրամագծով, գնդաձև, բաց-կարմիր:

**Տարածում.** Հանդիպում է Վերին-Ախուրյանի (Արփի լճի շրջակայք, Ամասիայի շրջակայք) և Շիրակի (Ախուրյան գետի կիրճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 185 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին, վերին և ենթալպյան գոտիների ծ. մ. 1500—2400 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում, գետերի ժայռոտ ափերին: Ծաղկում մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գյոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

279. **Ribes armenum** Pojark.

**Հաղարջենի հայկական  
Смородина армянская**



**Կաստեգորիա.** EN B 1 ab(iii) +2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց միջև տարածությունը 200 կմ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Թուփ՝ հաճախ ավելի քան 1 մ բարձր.: Տերևները ավելի քան 5սմ երկար., պատած բազմաթիվ դեղին գեղձերով: Ծաղիկները բաց մանուշակագույն կամ վարդա-մոխրագույն պսակաթերթերով, 4-9-ական խմբված մինչև 5-6 սմ երկ. ողկույզներում: Պտուղները սև, մերկ, երկար կոթուններով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Վերին-Ախուրյանի (Ամասիայի շրջակայք) և Գարեղեգիսի (Զերնուկ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1800 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ է:

Լոկալիտետները՝ 2: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին և վերին լեռնայի գոտու ծ. մ. 1600—2200 մ բարձրությունների վրա. ժայռոտ և քարքարոտ տեղերում, անտառի եզրերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:


Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

**Hyacinthaceae – Հակինթազգիներ - Гиацинтовые**

**280. Bellevalia longistyla (Miscz.) Grossh.**

**Բելվալիա երկարաձևակ**

**Беллевалия длинностволчатая**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս 20-30 սմ բարձր., ուղիղ ամուր ծաղկասլաքներով: Տերևները 6-7 հատ, 10-20 սմ երկ., 2-4 սմ լայն., լայն նշտարածև մանր թարթիչավոր, խորդուբորտ կամ մերկ: Ծաղիկները հավաքված լայն կոնուսաձև ողկույզում; ներքևի ծաղկակոթերը վերիններից երկար: Ծաղկապատը 9-12 մմ երկ., երկարավուն զանգակաձև, դժգույն բաց մանուշակագույն-գորշավուն, ավելի բաց գույնի ետծալի մասերով: Տուփիկը 12-14 մմ երկ., 8 մմ լայն.:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ուրծի լեռնաշղթա, Ձորաղբյուր, Շորբուլախ, Ձորափ): EOO 680 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Չովանդում, Արևելյան Անատոլիայում և Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորինից սկսած մինչև վերին լեռնային գոտիներում, 600-2000 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ և խճաքարոտ լանջերին, կիսաանապատում, տափաստաններում և մարգագետնատափաստանում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման շրջան, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

281. **Hyacinthella atropatana (Grossh.) Mordak. & Zahar.**  
**Հակինթիկ ատրպատականյան**  
**Гиацинтик атропатенский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հարավային Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Scilla atropatana* 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Շատ փոքր, 3-5 սմ բարձր., սոխուկավոր բույս ձվաձև սոխուկով և քթանման մուգ-գորշ կամ մոխրագույն թեփուկներով: Տերևները փքված, բարակ, 2-5 հատ: Ծաղկալալքը 3-5 սմ երկ., պտղի ժամանակ ձգվող: Ծաղկապատը սպիտակ, բաց-երկնագույն կամ երկնագույն-մանուշակագույն, զանգականման կամ թթևակի սափորանման: Փոշանոթները կարմիր կամ մուգ-մանուշակագույն: Տուփիկը հակաձվաձև-սրտանձև կարճ կտուցիկով: Սերմերը սև:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Դարեղեզիսի (Արենի և Ամաղու գյուղերի միջև) և Մեղրու (Ագարակ, Աստագուր, Նյուվաղի գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1200 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է նաև Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1000 մ բարձրությունների վրա. չոր խճաքարոտ և քարքարոտ լանջերին: Ծաղկում է փետրվար-մարտ ամիսներին, պտղաբերում՝ մարտ-ապրիլին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ հեգրադաջիա գյուղատնտեսական գործունեության հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ և նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակ ավանի շրջակայքում:





283. **Ornithogalum gabrielianae** Agapova  
**Աստղաշուշան Գաբրիելյանի**  
**Птицемлечник Габриэлян**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր, որովհետև տեսակը նկարագրվել է 1997թ.:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս 10-25 (30) սմ բարձր., նուրբ թեթևակի պառկած ծաղկալաքով: Սոխուկը կորացած վզիկով: ստորգետնյա ընձյուղ առաջացնող: Տերևները 20-30 սմ երկ., 0,3-1,5 սմ լայն., նուրբ, տափակ կամ ակոսավոր, առանց սպիտակ երկարավուն շերտի՝ ծաղկալաքը գերազանցող: Ծաղկաբույլը նեղ, խիտ, կարճացած ողկույզ 3-6 սմ երկ., սպիտակ ծաղիկներով և շատ կարճ կոթերով: Տուփիկը փոքր ի շատե մոտեցած գույգ-գույգ բութ կողերով:


**Տարածում.** Հանդիպում է միայն Արագածի ֆլորիստիկական շրջանում (լեռնագագաթ Արագած): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 9 կմ է: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2000-2800 մ բարձրությունների վրա. հացազգային տարախոտերում, սևահողերի վրա, անտառի վերին սահմանի երկարությամբ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ինտենսիվ արածեցման և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:

284. *Scilla mischtschenkoana* Grossh.  
**Մկնաստիս Միսչենկոյի**  
**Пролеска Мищенко**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորատիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա տխուրկավոր բույս, 10-15 սմ բարձր., նուրբ, ծաղկից հետո պառկած ծաղկալաբով: Սոխուկը փոքր, 15-18 մմ երկ., 10-15 մմ լայն., մուգ-գորշ թեփուկներով: Տերևները գծային, ծաղկալաբից կարճ: Ծաղկաբույլը 2-5 ծաղիկներով: Ծաղիկները դժգույն-մանուշակագույն, կապույտ կամ համարյա սպիտակ: Տուփիկը գնդաձև: Սերմերը գնդաձև, սև, հարթ, սերմը կիսաօղակի նման գրկող սպիտակ սերմնաթիկնոցով՝ նկատելի նույնիսկ սերմի զարգացման վաղ փուլում:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորատիկական շրջանում (Կարչևան, Լեհվազ, Նյուվաղի): EOO 270 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Հյուսիս-արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1700 մ բարձրությունների վրա. բնական ծածկերի տակ, ժայռերի ճեղքերում, ֆրիգանանման բուսականության մեջ, արիղ նոսրանտառում: Ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, պտղաբերում՝ ապրիլ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված հողերի յուրացման և ճանապարհաշինության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:

285. *Scilla rosenii* K.Koch  
**Մկնաստիչ Ռոզենի**  
**Пролеска Розена**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայկական բարձրավանդակի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է երկու ֆլորստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս մինչև 20 սմ բարձր., ուղիղ կանգնած ծաղկալարով: Սոխուկը ձվաձև 3-3,5 սմ բարձր., 2-2,5 սմ լայն., մուգ-մոխրագույն թեփուկներով: Տերևները 2-3, ցողունից կարճ, լայն-գծային, բաց-կանաչ, փայլուն,: Ծաղիկները մեծ, 2-3 սմ տրամագծով, ծաղկապատի մասերը հետ թեքված, երկարավուն, կապույտ կամ վարդագույն, մի քիչ հիմքի մոտ դժգույն, միջին ջրի ուղղությամբ ավելի մուգ շերտով: Տուփիկը ձվաձև: Սերմերը 2-3 մմ տրամագծով, ձվաձև, սպիտակ գլանաձև սերմնաթիկնոցով:

**Տարածում.** Հանդիպում է Վերին Ախուրյանի (Արփի լիճ, Սարի գյուղ) և Գեղամի (Գեղամի լեռնաշղթա, Գռիձոր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1290 քառ. կմ է, AOO՝ 18 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևմտյան և Արևելյան Անդրկովկասը, Հյուսիս-արևելյան Անատոլիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 2000-2500 մ բարձրությունների վրա. խոնավ մարգագետիններում, ճահճացած տեղերում, լեռնային գետակների ափերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանրակների համար հողերի յուրացման և ինտենսիվ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիան պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանական գոտում և «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Hypericaceae – Մրոնուցազգիներ - Зверобойные**

**286. Hypericum armenum Jaub. & Spach**

**Մրոնուց հայկական**

**Зверобой армянский**



**Կասեզորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(iI,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի են երկու, միմյանցից 198 կմ հեռավորության վրա գտնվող, պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում, հատկապես անտրոպոգեն գործոնների արդյունքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 4՝ անորոշ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա, ցածրահասակ բույս՝ 7-10 (15) սմ բարձր.: Տերևները էլիպսաձև կամ ձվաձև-էլիպսաձև, ամբողջաեզր, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղկաբույլը ընդհատված հասկանման հուրան, համարյա նստադիր եզրային ճյուղերով: Բաժակաթերթերը 5, հիմքում միաձուլված, եզրերից միաշարք, խիտ դասավորված գեղձերով: Պսակաթերթերը 5, դեղին, եզրերից սև գույնի միաշարք գեղձերով: Պտուղը ձվաձև տուփիկ, բազմաթիվ մանր սերմերով:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Իջևանի լեռնաշղթա Հովք գյուղի մոտ) և Ջանգեզուրի (Գեղի գետի հովիտ) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ, լոկալիտետներ՝ 2: Աճելավայրերը իրարից հեռացած են 198 կմ: Ընդհանուր արեալը, ընդգրկում է մաս Թուրքիայի Հյուսիս-Արևելյան մասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում ծ. մ. 2000-2200 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում և ժայռաձեղքերում: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիաներից մեկը պահպանվում է «Գիլիջան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է նոր աճելավայրերի որոնում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

287. *Hypericum eleonorae* Jelen.

Մրոհունդ Էլեոնորայի  
Зверобой Элеоноры



**Կաստեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի են մեկական պոպուլյացիաներ Հյուսիսային և Հարավային Հայաստանից: Աճելավայրերի միջև տարածությունը 230 կմ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում հազվագյուտության և, հատկապես, մարդածին գործոնների արդյունքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա, ցածրահասակ բույս՝ 15-25 սմ բարձր.: Ցողունները բազմաթիվ: Տերևները ձվաձև կամ կլորավուն-ձվաձև, ամբողջաեզր, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները միայնակ, հազվադեպ 2-3, ցողունների գագաթներին: Բաժակաթերթերը 5, եզրերից միաշարք, խիտ դասավորված նստադիր կամ ոտիկավոր գեղձերով, հազվադեպ առանց գեղձերի: Պսակաթերթերը 5, դեղին, եզրերից սև գույնի միաշարք գեղձերով: Պտուղը ձվաձև տուփիկ, բազմաթիվ մանր սերմերով:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Իջևանի լեռնաշղթա լեռնագագաթ Աղայա) և Ջանգեզուրի (լեռնագագաթ Խուստուփ) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Աճելավայրերը գտնվում են 230 կմ հեռավորության վրա: Հայաստանի էնդեմիկ է:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին և ալպյան լեռնային գոտիներում ծ. մ. 2100-3100 մ բարձրությունների վրա. գագաթնամերձ ժայռոտ-քարքարոտ և կրաքարային լանջերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, տարածման և բնակության շրջանների սահմանափակություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, նոր պոպուլյացիաների հայտնաբերում, կանոնավոր մոնիթորինգ, նոր պահպանվող տարածքի ստեղծում Խուստուպ լեռան վրա:

288. *Hypericum formosissimum* Takht.

**Մրոհունդ գեղատես  
Зверобой красивейший**



**Վաստեզորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն Վայոց Ձորից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է վտանգ աճելավայրերի պայմանների փոփոխության մարդածին ազդեցության պատճառով: Գեղագարդային բույս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա, ցածրահասակ բույս 5-7 (15) սմ բարձրության: Յողունները բազմաթիվ, բարակ, համարյա թելանման, փռված: Տերևները ձվաձև կամ երկարավուն, մինչև 1 սմ երկ., ամբողջաեզր, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները սակավաթիվ, 1-3-ական ճյուղերի զագաթներին: Բաժակաթերթերը 5, հիմքում միաձուլված, եզրերից միաշարք, նոսր դասավորված գեղձերով: Պսակաթերթերը 5, դեղին, եզրերից առանց գեղձերի: Պտուղը ձվաձև տուփիկ, բազմաթիվ մանր սերմերով:

**Տարածում.** Հանդիպում է Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արենի, Արվիա, Նորավանքի կիրճ, Խաչիկ գյուղի մոտ): EOO՝ 50 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետներ՝ 3: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է նաև Նախիջևանը (գյուղ Ազնաբերդ) և Թուրքիայի Հյուսիս-արևելյան մասը (Բիթլիս):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1100-1500 մ բարձրությունների վրա. կրաքարային ժայռերի ճեղքերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտություն, բնական գործոնների, օրինակ՝ կրաքարային ժայռերի փլուզում և անտրոպոգեն գործունեության ազդեցություն, հատկապես, բնակավայրերի սահմանների ընդարձակում, ճանապարհաշինություն և այլն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:


Անհրաժեշտ է տեսակի աճելավայրերը ներառել պլանավորված պահպանվող տարածքների սահմաններում կամ Արենի գյուղի մոտ գտնվող ժայռոտ տեղամասը, որտեղից նկարագրված է այս տեսակը, վերցնել հատուկ պահպանության տակ՝ բնության հուշարձանի կարգավիճակով և իրականացնել մոնիթորինգ, կազմակերպել ex-situ պահպանություն:

Iridaceae – Հիռիկազզիներ - Касатиковые

289. *Gladiolus dzhavakheticus* Eristavi

Թրաշուշան Չավախքի

Шпажник джавахетский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճելավայրերի փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Պալարասոխուկավոր բույս: Ցողունը 40—60 սմ բարձր.: Տերևները 3, անհավասար շղավորությամբ: Ծաղկաբույլը միակողմանի կան անորոշ երկկողմ, 4-6 ծաղիկներով, բոլոր ծաղիկները ծաղկելիս վերև ուղղված: Ծաղկապատը անորոշ երկշորք, համարյա ակտինոմորֆ, մուգ-ծիրանեգույն: Գեղազարդային տեսակ է:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Վերին Ախուրյանի (Արփի լճի ավազան, Չավախքի լեռնաշղթա), Շիրակի (Մեծ Մանթաշ գյուղի շրջակայք) և Լոռու (Շահնագար, Տաշիր, ՌՒրասար գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1490 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Հարավ-արևմտյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1400-2200 մ բարձրությունների վրա. մարգագետիններում, մարգագետնա-տափաստանում, տնկարկներում, խոնավ, ճահճացած տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ արածեցման և հերկի հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

290. *Gladiolus hajastanicus* Gabrielian

Թրաշուշան հայաստանյան  
Шпажник армянский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Արեալը խիստ մասնատված է:

Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Պալարաստիսկավոր բույս: Յողունը 25—40 սմ բարձր., բարակ: Տերևները 1-2, համարյա գուգահեռ ջղերով: Ծաղկաբույլը 1—2 (3) ծաղիկներով:

Ծաղկապատը երկշորթ, ծիրանեգույն: Գեղազարդային տեսակ է:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Արագածի, Սևանի, Գարեղեգիսի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: EOO 3550 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 8: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է վերին և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 1800-2900 մ բարձրությունների վրա. մարգագետիններում, կաղնու ենթալպյան նոսրանտառներում, ժայռոտ տեղերում:

Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ արածեցման հետևանքով:



**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



291. *Gladiolus szovitsii* Grossh.

Թրաշուշան Շովիցի  
Шпажник Шовица



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ոչ մեծ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ ներքին գործոնների և աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր սխալ անունով, որպես *G. halophilus*, 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Պալարատխուկավոր բույս: Ցողունը 15--30 սմ բարձր.: Տերևները 2 (3), գուգահեռաձիգ: Ծաղկաբույլը միակողմանի կամ երկկողմանի, 2—3 (7) ծաղիկներով: Ծաղկապատը լավ արտահայտված երկշորք, լայն բացված, վարդա-մանուշակագույն: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրի, Ալյարա, Շվանիձոր): AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 15 կմ է: Հայաստանից բացի աճում է Ադրբեջանում (Չանգելանի շրջան), Հյուսիս-արևմտյան և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 400-1100 մ բարձրությունների վրա. բաց քարքարոտ և կավային լանջերին, օշինդրային կիսաանապատում, շիրյակում, կաղնու-գիհու նոսրանտառում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ տնտեսական գործունեության հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն

իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

292. *Iris atropatana* Grossh.

Հիրիկ ատրպատականյան  
Касатик атропатанский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում անելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Սոխուկավոր բույս: Տերևները տափակ, երկարությամբ ծավլված, մանգաղաձև կորացած, թխակապույտ, սպիտակ կոճիկանման ծայրերով, հիմքի մոտ 2—4 սմ լայն: Ցողունները 5—10 սմ բարձր.: Ծաղիկները 1—2, մոխրագույն-դեղին, հազվադեպ բաց-կապտավուն:

**Տարածում.** Հայաստանում տարածված է միայն Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Հերիեր, Բարձրունի, Մարտիրոս, Խնձորոտ, Մերս, Գետապ, Եղեգնաձոր, Ագարակաձոր, Մալիշկա): EOO 470 քառ. կմ է, AOO՝ 44 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1200-2000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կավային, գիպսակիր, խճաքարոտ լանջերին, տրազականտային և ֆրիգանաման բուսականության մեջ, գիհու նոսրանտառում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:





295. *Iris iberica Hoffm.*  
**Հիրիկ վրացական**  
**Касатик иберийский**



**Վատեզորիա.** CR B 1 ab(iii,iv,v) + 2 ab(iii,iv,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասի Էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա տեսակի ընդհանուր տարածման հարավային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում հողերի յուրացման պատճառով:

Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բույս: Ցողունը 8--20 սմ բարձր.: Տերևները ցողունագիրկ, սովորաբար ուղիղ կամ սրանման: Ծաղիկները մեծ; ծաղկապատի արտաքին մասերի ետծալը 4—5 (16) սմ երկ., 2,5—4 սմ լայն., խիտ ծածկված դարչնագույն ջղերով և պուտերով, կենտրոնական մասում մեծ հակաձվաձև սևավուն պուտով; ներքինները՝ 3—5 (6) տրամագծով, սպիտակավուն կամ բաց-կապտավուն, դժգույն-մանուշակագույն ջղերով: Գեղազարդային բարձրարժեք հատկանիշներով օժտված բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում, Այրում կայարանի շրջակայքում: AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում Վրաստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 400-600 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, շիրլակում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

Ներդնել ծաղկաբուծության բնագավառ:

**296. Iris lineolata (Trautv.) Grossh.**  
**Հիրիկ նեղզձային**  
**Касатик узколинейчатый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բույս 10-15 սմ բարձր.: Տերևները նեղ-մանգաղաձև, հաճախ ուժեղ ոլորված: Ծաղկապատի արտաքին մասերի ետծալը 4—5 սմ երկ. 1,5 սմ լայն., սրագագաթ բաց գույնի բարակ մուգ ջղերով, կիսակլորավուն պուտով, ներքինները՝ 4—5 (6) սմ երկ. 1,5—2 սմ լայն. սրածայր, բաց մոխրագույն, մուգ-դարչնագույն-մանուշակագույն ջղերով: Գեղազարդային բույս:

**Տարածում.** Հայաստանում տարածված է միայն Չանգեգուրի ֆլորիստիկական շրջանում (Սիսիան և Գորիս քաղաքների շրջակայք, Վաղատին, Շուրնուխ, Ներքին Հանդ, Շիկահող, Որոտան գետի կիրճ): EOO 750 քառ. կմ է, AOO՝ 28 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անդրկովկասում, Թաիլանդում, Հարավ-արևելյան Անատոլիայում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-2000 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստանում, շիբլյակում, մարգագետիններում, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ներդնել ծաղկաբուծության բնագավառ:

297. *Iris lycotis* Woronow  
 Հիրիկ գայլականջ  
 Касатик волчье ухо



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բույս: Յոդունը 10—35 սմ բարձր.: Տերևները ցողունագիրկ, մանգաղաձև կորացած: Ծաղիկները մեծ; ծաղկապատի արտաքին և ներքին մասերը դարչնագույն-ծիրանեգույն; արտաքինները 4,5—6 սմ լայն., կենտրոնում մեծ թավշյա սև պուտով; ներքինները՝ 5-8 սմ տրամագծով:

Գեղագարդային բարձրարժեք հատկանիշներով օժտված բույս է:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Երևանի (Երանոսի և Ուրծի լեռնաշղթաներ, Տիգրանաշեն և Էլփին գյուղերի միջև) և Գարեղեգիսի (Արփա և Մարտիրոս գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 685 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետը՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հարավ-արևելյան Անատոլիայում, Հյուսիս-արևելյան Իրաքում և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1000-2600 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կավային լանջերին, կիսաանապատում, լեռնային տափաստանում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հուլիսին:

**Մահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ տնտեսական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ներդնել ծաղկաբուծության բնագավառ:

298. *Iris musulmanica* Fomin  
Հիրիկ մուսուլմանական  
Касатик мусульманский



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2 ab(i,ii,iii,iv,v)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Պոպուլյացիան գտնվում է ակտիվ գյուղատնտեսական գործունեության շրջանում: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ճահիճների չորացման և հերկի պատճառով, բացի այդ ծաղիկները ինտենսիվ հավաքվում է վաճառքի համար:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված է 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բույս: Ցողունները 40—90 սմ բարձր.: Տերևները նեղ գծալին, ցողունից կարճ: Ծաղիկները 3—5, բաց-կապույտ կամ դժգույն բաց-կապույտ, հազվադեպ սպիտակավուն: Գեղազարդային տեսակ:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Երևանի (Մխչյան, Ջանգիբասար, Ռեանլու, Մասիս, Արարատ, Սուրենավան գյուղերի շրջակայք) և Ապարանի (Արաիլեռ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 810 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, ինչպես նաև Արևելյան Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1500 մ բարձրությունների վրա. աղիավուն ճահիճներում, խոնավ աղակալած մարգագետիններում, ոռոգիչ ջրանցքների ափերին: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ ճահիճների չորացման և հերկման, ինչպես նաև վաճառքի համար ինտենսիվ հավաքի հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը աճում է ՀՀ

Կառավարության 2008 թ. որոշմամբ հաստատված «Աղակալած ճահճուտ» բնության հուշարձանի տարածքում:


Անհրաժեշտ է կարգավիճակի բարձրացում և Արարատի աղակալած ճահճի իրական պահպանություն, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ներդնել ծաղկաբուծության բնագավառ:



299. *Iris pseudocaucasica* Grossh.

Հիբիկ կեղծ կովկասյան

Касатик ложнокавказский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Սոխուկավոր բույս: Ցողունը 10—25 սմ բարձր.: Տերևները տափակ, երկարությամբ ծավաժ, մանգաղաձև թեքված, սպիտակ կոճիկային ծայրերով, 1—1,5 սմ լայն.: Ծաղիկները 2—3, բաց-կապույտավուն, կեղտոտ-կապտավուն-մանուշակագույն կամ կանաչավուն-դեղնավուն:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Երևանի (Ուրծի լեռնաշղթայի միջին մաս) և Մեղրու (Այգեձոր, Վարդանաձոր, Գուղեմնիս, Շվանիձոր, Գյումարանց, Նյուվաղի) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1200 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ,

լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում, Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1600 (2000) մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կավային լանջերին և շիբլյակում և գիհու նոսրանտառում: Ծաղկում է մարտ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ղեգրադացիա՝ լեռնահանքային արդյունաբերության ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանում:




**Juncaceae – Կնյունագզիներ - Ситниковые**

**301. Juncus acutus L.**

**Կնյուն սուր**

**Ситник острый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է Արարատյան դաշտի աղակալված ճահիճներից: Տեսակի տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված կլիմայի գոբալ փոփոխության և մարդածին ակտիվ գործունեության հետ (ճահիճների չորացում, արածեցում հողի աղագրկում, բուսականության այրում):

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվոնցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Ծիմաթմբեր առաջացնող բույսեր: Յողունը (30)50 – 80 (120) սմ բարձր.: Տերևները արմատամերձ, լավ զարգացած տերևաթիթեղներով՝ 1 – 2 մմ տրամագծով, գլանաձև, ամուր, սրածայրով վերջացող, ներսում համատարած սպուգային հյուսվածքով, հիմքի մոտ կարմրավուն-շագանակագույն տերևապատյաններով: Ծաղկաբույլը 4 – 6(10) ճյուղերով, նստադիր կամ 4 – 5սմ երկ. ծաղկակիրներով: Պտուղը տուփիկ, կանաչ, 5-6 սմ մմ երկ., ձվաձև, առանց կտուցի: Մերմերը երկարավուն կամ օվալ, սպիտակավուն պոչանման հավելուկով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ, Յուվա, Շահումյան, Երախի լեռնաշղթա): EOO՝ 250քառ. կմ, AOO՝ 16 քառ կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը՝ մասնավորապես Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկասը և Թալիշը, ինչպես նաև Եվրոպան, Միջերկրածովյան ավազանի երկրները, Անատոլիան, Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 800-1000 (1200) մ բարձրությունների վրա. աղակալված ճահիճներում, հանքային աղբյուրների և տրավերտինների մոտ, աղուտային խոնավ հողերի վրա: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, մարդածին տնտեսական գործունեության ակտիվ ազդեցություն (որոգում, ճահիճների չորացում, արածեցում, հողի աղագրկում, բուսականության այրում, կլիմայի փոփոխություն):

**Պահպանության միջոցառումներ.** 2008թ. Արարատ քաղաքի մոտ հատուկ առանձնացվել է «Աղակալված ճահճուտ» բնության հուշարձանը, սակայն ներկայումս պահպանումը չի իրականացվում:

Անհրաժեշտ են պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

302. *Luzula forsteri* (Smith) DC. subsp. *caspica* (Rupr. ex Bordz.) Novikov  
 Փայուկ Ֆորսթերի  
 Ожика Форстера



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ ոչ մեծ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս էն: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված սահմանափակ տարածման և աճելավայրի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 20-40 սմ բարձր.: Տերևները 1.5-8 մմ լայն., տափակ, գծային, եզրերից ցրված մագոտ: Ծաղիկները մանր, 3.5-5 մմ երկ., միայնակ կամ խմբված դեպի վեր ուղղված հովանոցանման-հուրանային ծաղկաբույլերում:

Մերմերը, երբեմն սերմին հավասար երկարությամբ, խոշոր հավելուկով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Խուստուփ լեռան վրա: AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Փոքր Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1400—1700 մ բարձրությունների վրա.

անտառներում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է արժանացնել մեծ ուշադրության, կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Lamiaceae – Շրթնագլխիներ - Губоцветные**

**303. Dracoscephalum austriacum L.**

**Վիշապագլուխ ավառիական**

**Змееголовник австрийский**



**Վատեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում գյուղատնտեսական գործունեության արդյունքում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի «Հավելված 2»-ում:

CITES-ի կոնվենցիայի Հավելվածում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 30 – 60 սմ բարձր.: Տերևները փետրածև բաժանված 3-5 բլթակների: Ծաղիկները օղակաձև դասավորված վերին տերևների ծոցերում: Ծաղկաօղակները մոտեցած, կազմում են հասկանման նոսր ծաղկաբույլ: Բաժակը երկշորթ, վերին շուրթի միջին ատամը մյուսներից լայն: Պսակը մանուշակագույն, երախում լայնացած խողովակով և երկշորթ ետծալով: Փղանոթները մագոտ: Պտուղը 4 մասերից՝ էրեմներից: Էրեմները՝ հարթ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Սևանի (Շորժա, Բաբաջան, Դարա, Արդանիշ) և Գեղամի (Լճաշեն) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 300 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ., լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Միջին Եվրոպան, Բալկանյան թերակղզին, Կովկասը, այդ թվում Նախակովկասը, Արևմտյան և Հարավային Անդրկովկասը, ինչպես նաև Անատոլիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտիներում ծ. մ. 1940-2500 մ բարձրությունների վրա. մարգագետիններում, անտառային բացատներում, քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա, գյուղատնտեսական տարածքների լայնացման կապակցության և գերարտացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, մոնիթորինգ:

304. *Dracosephalum botryoides* Stev.

Վիշապագլուխ ողկույզային  
Змееголовник кистевой



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Տեսակի ընդհանուր արեալի ծայր հարավային հատվածը գտնվում է Հայաստանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանում տեսակին սպառնում է տարածման շրջանի նվազում և անհետացում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության և անտրոպոգեն գործոնների հետ: Գեղագրության բույս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 5- 15 սմ բարձրությամբ, ստորին մասում փայտացած ցողուններով: Տերևները փետրածև բաժանված: Ծաղկաբույլը խիտ, համարյա գլխիկանման: Բաժակը երկշորթ, վերին շորթի միջին բլթակը 2-3 անգամ եզրային նշտարածև բլթակներից լայն: Պսակը բաց-մանուշակագույն: Փոշանոթները մերկ: Պտուղը 4 մասերից՝ էրեմներից: Էրեմները մերկ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Արագածի (Գեղարտուի կիրճ) և Չանգեզուրի (Չանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաների՝ Կապուտջուղ, Գազանալեռ, Արամազդ լեռնագագաթներ, գյուղ Արավուս) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 1660 քառ. կմ, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Գաղստանը, Արևելյան Կովկասը և Հարավային Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ալպիական լեռնային գոտում ծ. մ. 2800 և ավելի բարձրությունների վրա. ժայռոտ քարքարոտ լանջերին, քարաթափվածքներին: Ծաղկում է հուլիսին, պտղաբերում՝ օգոստոսին (սեպտեմբերին): ԳԱԱ-ի Երևանի բուսաբանական այգու Հայաստանի ֆլորայի հողամասում հաճողությամբ աճել է երկար տարիներ: Յուցաբերել է մեծ հարմարողականություն Երևանի կիսաանապատային գոտու միջավայրի նկատմամբ:

**Մահմանափակող գործոններ.**

Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության և տնտեսական գործունեության, հատկապես, արածեցման հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, մոնիթորինգ, ex-situ պահպանություն ցուցադրական էքսպոզիցիաներում:



306. *Nepeta lamifolia* Willd.

Կատվադաղձ խուլեղինջատերև  
Котовник яснотколистый



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են 2 պոպուլյացիաներ՝ Սևանա լճի ավազանի բարձրադիր տարածքներից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 20-50 սմ բարձրությամբ: Տերևները եռանկյուն-կլորավուն, սրտաձև հիմքով, ստորինները՝ երկար կոթուններով: Ծաղիկները խմբված խիտ կիսահովանոցային ծաղկաբույլերում, ստորինները՝ իրարից հեռացած, վերինները՝ համարյա գլխիկանման խմբված: Բաժակը 8-10 մմ երկ., թեք հատված, 5 ատամիկներով: Պսակը մինչև 20 մմ երկ, գույնը, երկշուրթ: Էրեմները մերկ, եռանիստ: **Տարածում.** Հայաստանում հանդիպում է Սևանի (Սևանի լեռնաշղթա) և Գեղամի (Ակնա լճի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 495 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Տեսակը, բացի Հայաստանից, հանդիպում է Արևելյան Կովկասում, Փոքր Ասիայում և Իրաքում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ենթալպյան և ալպյան գոտում ծ. մ. 2000-3200 մ բարձրությունների վրա. քարքարոտ տեղերում, քարաթափվածքների վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտություն, սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:



307. *Salvia spinosa* L.

**Եղևապակ փշուտ**  
**Шалфей колючий**



**Վատեզորիա.** EN\* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ: Հազվագյուտ տեսակ է նաև Կովկասում, որտեղ հայտնի է միայն Հայաստանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում՝ կապված անտրոպոգեն գործոնների հետ: Տեսակի շատ լայն Հայաստանից դուրս տարածման պատճառով կարգավիճակը իջեցված է՝ EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 40-50սմ բարձրությամբ: Տերևները պարզ, խոշոր, ստորինները և վերինները մատաղիք, հարթ, երկու կողմից դեղնավուն: Ծաղկաբույլերը հուրանաձև: Ծաղիկները երկշորթ, ավելի քան 20 մմ երկ.: Վերին շուրթի միջի ատամը եզրիններից կարճ: Պսակը սպիտակ, երկար խողովակով, երկշորթ ետծալով: Էրեմները մոտ 3 մմ երկարությամբ, համարյա սև:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Հացավան, Ջովաշեն) ֆլորիստիկական շրջանում: AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է նաև Նախիջևանը, ինչպես նաև Միջերկրածովյան ավազանի հարավային մասը, Փոքր և Միջին Ասիան, Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 1000-1300 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստանի չոր քարքարոտ տեղերում: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին: Եթերայուղատու բույս է՝ հաճելի բուրմունքով:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանի սահմանափակություն:, Հազվագյուտություն, աճելավայրերի կորուստ կապված գյուղատնտեսական տարածքների լայնացման հետ



**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ են որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով, պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ:

308. *Salvia suffruticosa* Moentbr. & Auch. ex Benth.

**Եղեսպակ կիսաթփային**

**Шалфей полукустарниковый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում հիմնականում անտրոպոգեն գործոնների պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կիսաթուփ՝ մինչև 50 սմ բարձրությամբ, հիմքի մոտ ճյուղավորված և փայտացած ցողունով: Տերևները փետրածև: Ծաղկաբույլը պարզ, կազմված 4-8 իրարից հեռացած, օղակաձև դասավորված 6-10 ծաղիկներից: Ծաղիկները երկշուրթ, վերին՝ սաղավարտածև և ստորին՝ եռաբլթակ շուրթերով: Բաժակը կանաչավուն, ծուլված խողովակով, վերևում՝ եզրերից կարճ, հաստ, բաց գույնի (երբեմն դեղնավուն) գեղձերով պատված ատամիկներով: Պսակը դեղնավուն 15-18 մմ երկարությամբ: Պտուղը կազմված 4 մասերից՝ Էրեմներից:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Գեղադիր, Գառնի, Հացավան, Երանոսի լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջանում: EOO՝ 60 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է նաև Նախիջևանը, Անատոլիան, Հյուսիսային Իրաքը, Հյուսիսային և Արևմտյան Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1200-1700 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստանների չոր քարքարոտ, խճաքարոտ լանջերին: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին: Եթերայուղատու բույս է: Եթերայուղը ունի մշկընկույզի հոտն հիշեցնող հաճելի բուրմունք:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված անտրոպոգեն գործունեության, հատկապես, տարածքների յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել մոնիթորինգ, ինչպես նաև որոնողական աշխատանքներ՝ նոր պոպուլյացիաների հայտնաբերման նպատակով:

309. *Teucrium canum* Fisch. & C.A.Mey.

Լերդախոտ ալեհեր  
Дубровник седой



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանում հայտնի է միայն Շիրակից: Կովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված անտրոպոգեն գործոնների հետ, հատկապես տուֆի արդյունահանության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս, ամբողջությամբ սպիտակա-մոխրագույն կարճ առնետն մազիկների թավոտությամբ, ավելի լավ արտահայտված տերևների ստորին մակերեսին: Տերևները պարզ, երկարավուն-էլիպսաձև, աղեղնաձև, սեպաձև հիմքով, կարճ կոթերով: Ընդհանուր ծաղկաբույլը հասկանման, սակավաթիվ ծաղիկների միմյանցից մի փոքր հեռացած օղակներով: Բաժակը համարյա կանոնավոր, զանգակաձև, 5 ատամիկներով: Պսակը վարդագույն-ծիրանագույն, հնգատամ, թվում է միաշուրթ, քանի որ վերին շուրթը ճեղքված է մինչև հիմքը և դրա բլթակները մոտեցած են ստորին շուրթին: Պտուղը կազմված 4 մասերից՝ հակաձվաձև էրեմներից:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Շիրակի ֆլորիստիկական շրջանում (Արթիկ, Պեմզաշեն): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արիալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Դաղստանը, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1750-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կավային լանջերին տափաստաններում: Ծաղկում է հունիսին-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված անտրոպոգեն գործունեության հետ՝ տուֆի հանքի բաց շահագործում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ճշտել պոպուլյացիաների ներկա վիճակը, իրականացնել վիճակի մոնիթորինգ, որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով:

**310. *Teucrium hyrcanicum* L.**  
**Լերդախոտ հիրկանիական**  
**Дубровник гирканский**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է միայն Հարավային Հայաստանից՝ Չանգեգորից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում, նախ և առաջ, գյուղատնտեսական գործունեության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի համաշխարհային մասշտաբով լայն տարածման պատճառով և պոպուլյացիայի բավական լավ վիճակի Շիկահողի պետական արգելոցում, կատեգորիան իջեցված է մեկ աստիճանով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 60-80 սմ բարձր.: Տերևները կոթունավոր, ձվաձև-երկարավուն, աղեղնաեզր, սրտաձև հիմքով: Ընդհանուր ծաղկաբույրը նեղ, համարյա զլանաձև, հասկանման, բազմաթիվ ծաղիկների միմյանց շատ մոտեցած օղակներով: Բաժակը համարյա երկշորք, վերին շորթը լայն-ձվաձև միջին աստամիկով: Պսակը մուգ-ծիրանեգույն, հնգատամ, թվում է միաշորթ, քանի որ վերին շորթը ճեղքված է մինչև հիմքը և դրա բլթակները մոտեցած են ստորին շորթին: Պտուղը կազմված 4 մասերից՝ հակաձվաձև էրեմները:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեգորի ֆլորիստիկական շրջանում (Կապանի շրջակայք, Ծավ գետի հովիտ, լեռնագագաթ Խուստուփ): EOO՝ 200քառ. կմ, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Արևմտյան և Արևելյան Անդրկովկասը, Թալիշը, Անատոլիան և Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ներքին և միջին լեռնային գոտում ծ. մ. 700-1800 մ բարձրությունների վրա. անտառներում, անտառի եզրերին, բացատներում, թփուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին: Օժտված է գեղազարդային հատկանիշներով:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ անտրոպոգեն գործունեության՝ հողերի յուրացում գյուղատնտեսության համար, անտառտնտեսական աշխատանքներ, արածեցում և խտտում:

**Պահպանության միջոցառումներ.** Աճելավայրերը հիմնականում պահպանվում են «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է կազմակերպել ex-situ պահպանություն, մոնիթորինգ, ներդնել կուլտուրայում:

**Lentibulariaceae – Ջրապղուկազգիներ - Пузырчатковые**

**311. Utricularia intermedia Hayne**

**Ջրապղուկ միջին**

**Пузырчатка средняя**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Լոռու սարահարթի լճերում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված, հատկապես, կլիմայի փոփոխության պատճառով աճելավայրերի պայմանների փոփոխության և լճերի բնական բուսածածկման հետ: Տեսակի համաշխարհային մասշտաբով շատ լայն տարածման պատճառով կատեգորիան իջեցված է մեկ աստիճանով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա, առանց արմատների, կարճացած ընձյուղներով ջրային բույս: Ցողունները 10 – 30 սմ երկ., երկձև ընձյուղներով; մի քանիսը՝ կանաչ թելանման բաժանված տերևներով, առանց բշտիկների, մյուսները՝ բշտիկ կրող անգույն տերևներով: Ծաղկակիրները 2 – 4 (6) ծաղիկներով: Ծաղկակոթերը պտղի ժամանակ ուղիղ բարձրացող: Պսակը դժգույն - դեղին: Պտուղը գնդաձև տուփիկ, չբացվող կամ ճեղքերով բացվող:

**Տարածում.** Հանդիպում է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանում (Կլոբ և Կիզ-Կալա լճեր): AOO՝ 8 քառ. կմ, աճելավայրերը՝ 2: Աճելավայրերը իրարից հեռացած են 18 կմ: Ընդհանուր արեալը ընդգրկում է արկտիկական և տրոպիկական Եվրասիան, Հյուսիսային Ամերիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1500-1700 մ բարձրությունների վրա. լճերում, ճահճացող ջրերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին: Միջատակեր բույս է:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված կլիմայի փոփոխության և լճերի բուսածածկման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:


Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ, պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ, ստեղծել նոր «Լոռու լճակներ» արգելավայր:

**Liliaceae – Շուշանազգիներ - Лилейные**

**312. Fritillaria collina Adam (=F. lutea auct. non Mill.)**

**Արքայածաղիկ բլրակային**

**Рябчик холмовой**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է հինգ ֆլորիստիկական շրջաններից, սակայն ամենուրեք շատ հազվագյուտ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Fritillaria lutea* 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա տխուկավոր բույս, սպիտակ գնդաձև տխուկով: Ցողունը 12-20 սմ բարձր., մերկ, ստորին մասում անտերև, կեսից վերև 4-6 հերթադիր նեղ-նշտարած տերևներով: Ծաղիկը բաց-դեղին, խոշոր, 30-40 մմ երկ., լայն-զանգականման: Տուփիկը օվալ-գուրգաձև, բութ-եռանիստ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Շիրակի, Լոռու, Իջևանի և Սևանի ֆլորիստիկական շրջաններում: EOO 2790 քառ. կմ է, AOO՝ 60 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Ընդհանուր արեալը ընդգրկում է Մեծ Կովկասը և Արևմտյան, Հարավ-Արևմտյան, Կենտրոնական, Արևելյան և Հարավային Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1700-2500 մ բարձրությունների վրա. կաղնու և կաղնու-բոխու անտառների եզրերին, անտառային մարգագետնիկներում, կեչու կորաբուն անտառում, ենթալպյան մարգագետնիկների ժայռոտ տեղերում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ կապված հողերի յուրացման, ինտենսիվ արացեծման, ռեկրեացիոն տրոփման հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Բիլիճան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն և պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

313. *Gagea lutea* (L.) Ker Gawl.

Սագաախակ դեղին

Гусиный лук желтый



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Արեալը Հայաստանում մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է անտառային գոտում, որը ենթարկվում մարդածին զգալի ճնշման և ինտեսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա սխուկավոր բույս 15-20 սմ բարձր.: Սոխուկը ոչ մեծ, երկարավուն-ձվաձև, թղթանման մոխրա-դարչնագույն թեփուկներով: Արմատները տերև մեծ, լայն-նշտարած: Ծաղկաբույլը 5-10 ծաղիկներով, հովանոցանման: Ծաղկակից տերևները 3-4 հատ: Ծաղիկները մեծ, ծաղկապատի մասերը 1,4-1,6 սմ երկ., գծային, արտաքինից՝ կանաչավուն, ներսում՝ վառ-դեղին: Տուփիկը լայն-հակածված:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Վանաձորի և Նոյեմբերյանի շրջակայք) և Գարեղեգիսի (Ձառիթափ և Խնձորուտ գյուղերի միջև) ֆլորիստիկական շրջաններում: EOO 4230 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Նախակովկասը, Արևմտյան, Հարավ-Արևմտյան, Կենտրոնական և Հարավային Անդրկովկասը, Եվրոպան, Սիբիրը, Հեռավոր Արևելքը, Հյուսիսային Իրանը և Աֆղանստանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1500 մ բարձրությունների վրա.

անտառներում, թփերի մացառուտների մեջ: Ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, պտղաբերում՝ ապրիլ-մայիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառտնտեսական աշխատանքների և հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր պոպուլյացիաների որոնում:

314. **Rhinopetalum gibbosum (Boiss.) Losinsk. et Vved.**

**Կնճիթաթերթիկ սապատավոր**  
**Ринопеталюм горбатый**



**Կատեգորիա.** CR\* B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աղետալի անհետանում է աճելավայրերի խախտման պատճառով՝ ավազուտներից ավազի դուրս բերման և Արարատյան հարթավայրում՝ հողերի յուրացման հետևանքով: Նկատի ունենալով տեսակին սպառնացող իրական վտանգը սպառնալիքի կատեգորիան բարձրացվել է մինչև CR: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս փոքր գնդաձև տխուկով: Յողունը 6-20 սմ բարձր., ներքևում մերկ, վերևում մանր ծծիչներով: Տերևները նշտարաձև կամ ձվաձև: Ծաղկապատի մասերը 13-15 մմ երկ., 6-10 մմ լայն., բաց- կամ մուգ-վարդագույն, ներքևի մասում մուգ-մանուշակագույն: Տուփիկը հորիզոնական տափակացած, 12-14 մմ երկ., 16-20 մմ լայն.:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից (Երախի լեռնաշղթա, Վեդի, Գոռավան, Արարատ): EOO՝ 85 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Իրանում, Սիջին Ասիայում, Աֆղանստանում և Պակիստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 850-1000 մ բարձրությունների վրա. չոր կավա-խճաքարոտ, ավազոտ, քարքարոտ լանջերին, ավազային անապատում, կիսաանապատում: Ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների ընդլայնման համար հողերի յուրացման և շինարարության համար անապատային տարածքից ավազի դուրս բերման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիա մի մասը պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կազմում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



315. *Tulipa confusa* Gabrielian

Վարդակակաչ խճճված  
Тюльпан запутанный



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայաստանում հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աղետալիորեն անհետանում է ծաղկեփնջերի համար իրականացվող գիշատիչ հավաքի պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա 20-30 սմ բարձր., լայն-ձվաձև մինչև 30 մմ լայն.

սոխուկով և սևավուն-գորշ կամ մուգ-դարչնագույն կաշենման, ներսից արծաթավուն-մազոտ թեփուկներով: Ստերիլ ընձյուղների տերևները օվալ, միշտ ուղղահայաց կանգնած: Ծաղիկը 5-7 սմ տրամագծով գավաթանման, ֆուքսիինի-վարդագույն կամ լիմոնի-դեղին, նուրբ բուրմունքով, կամ, հազվադեպ, կարմիր՝ առանց հոտի: Առեջները սև կամ դեղին առեջաթելերով, թեթևակի լայնացած: Սպին նստադիր: Պտուղը 4-6 սմ երկ., 2 սմ լայն: Բարձրարժեք գեղազարդային տեսակ է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեգուրի (Քաջարան, լեռնագագաթ Խուստուփ, «Շիկահող») պետական արգելոց, Ծավ, Ներքին Հանդ) և Մեղրու (Գյումարանց, Մեղրու լեռնաշղթայի կատարի երկարությամբ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 600 քառ. կմ է, AOO՝ 44 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Աճում է Հարավային Անդրկովկասում և Ղարաբաղում:



**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1800-2700 մ բարձրությունների վրա. բացատներում, ժայռոտ տեղերում, կաղնու-բոխու անտառում, անտառի եզրերին, փոքր ի շատե խոնավ լանջերին, ենթալպյան մարգագետիններում, լեռնային սևահողերի վրա: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հուլիսին: Մեզոֆիլ տեսակ է: Բնության մեջ հանդիպում են երեք ձևեր: լիմոնի-դեղին ծաղիկներով, ֆուքսիինի-վարդագույն՝ նուրբ լիմոնի բուրմունքով և կարմիր՝ առանց հոտի: Վերջինիս հասուն բույսի մոտ առաջանում է բազմաթիվ սոխուկներ-ձագուկներ: Միշտ ծաղկում է երկու շաբաթ ուշ քան *Tulipa sosnovskyi* տեսակը, որը աճում է նույն վայրերում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով, հավաք ծաղկեփնջերի համար:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անիրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

316. **Tulipa florenskyi Woronow**  
**Վարդակակաչ Ֆլորենսկու**  
**Тюльпан Флоренского**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աղետալիորեն անհետանում է ծաղկեփնջերի համար իրականացվող գիշատիչ հավաքի պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա տխուկավոր բույս 10-20 սմ բարձր.: Սոխուկի թեփուկները առսեղմ-մագրտ: Ցողունը բարակ մերկ: Տերևները թխակապույտ, ալիքավոր եզրերով, սրանման, հաճախ հետ թեքված, 8-10,5 սմ երկ., սովորաբար երկարությամբ ծավված: Ծաղիկը մեծ, 3-5 սմ տրամագծով միայնակ, մուգ-կարմիր կամ լիմոնի-դեղին; ծաղկապատի մասերը կարմրածաղիկ ձևի մոտ՝ դեղին, դեղնածաղիկի մոտ՝ մոխրագույն պուտով կամ առանց պուտի: Առէջաթելերը մերկ, սև: Տուփիկը սրացած կտուցով: Բարձրարժեք գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Ագարակ, Մեղրի, Կարչևան, Շվանիձոր, Նյուվաղի): EOO 350 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հարավ-արևմտյան Ադրբեջանում և Արևմտյան Իրանում (Շախպուր):


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 550-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ և կավային լանջերին, շիբլյակում, արիդ նոսրանտառներում: Ծաղկում է սպրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, հավաք ծաղկեփնջերի համար:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պտպույացիայի վիճակի մոնիթորինգ, նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակ ավանի շրջակայքում: Ներդնել ծաղկաբուծության բնագավառ:

317. **Tulipa sosnovskyi Achverdov & Mirzoeva**  
**Վարդակակաչ Մսոնովսկու**  
**Тюльпан Сосновского**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աղետալիորեն անհետանում է ծաղկեփնջերի համար իրականացվող գիշատիչ հավաքի պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1

կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս 25-50 սմ բարձր.: Սոխուկը ձվաձև, բաց-դարչնագույն թույլ-կաշենման, ներսից ոսկեգույն-մագուտ թեփուկերով: Տերևները երկարավուն-նշտարաձև, վերևում և ներքևում նեղացող, միշտ կորացած: Ծաղիկը շատ մեծ 8-10 սմ տրամագծով միայնակ, գավաթանման, մուգ-կարմիր: Ծաղկապատի մասերը ձգված-սրացած: Առէջաթելերը մերկ, սև, լայնացած, մինչև 2 մմ երկ.: Տուփիկը 3-7 սմ երկ., 2-3 սմ լայն.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ջանգեզուրի (Քաջարան, Լեռնաձոր, Փխրուտ, Տաթև, Շիկահող, Կապան) և Մեղրու (Լեռնագագաթ Բերդաքար, Արծվաբերդ, Գյումարանց, Վարդանիձոր, Լիճք, Վահրավար և այլն) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1350 քառ. կմ է, AOO՝ 88 քառ. կմ, լոկալիտետները՝ 7: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (Օրդուբադ, Լեռնագագաթ Մոյուխ):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորինից մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 700-2300 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում, խոշորաքարոտ թափվածքներում և փլուզուտներում, խճաքարոտ տեղերում, կաղնու և գիհու նոսրանտառում, անտառի եզրերին և բացատներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ-դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով, ոչնչացում ծաղկեփնջերի համար:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիա պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

318. *Tulipa sylvestris* L.  
**Վարդակակաչ անտառային**  
**Тюльпан лесной**



**Վաստեզորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա սոխուկավոր բույս 20-50 սմ բարձր.: Սոխուկը ծածկված բաց գույնի, թեթևակի կաշեման, միայն վզիկի և հիմքի մասում կոշտամազ թեփուկներով: Տերևները գծային-նշտարած, սովորաբար ուղիղ կանգնած, հաճախ կարմրավուն եզրերով: Ծաղիկը մեծ 2-4 սմ երկ. ներսից վառ-դեղին, արտաքինից ծիրանի-կանաչավուն: Առէջաթելերը ամբողջ երկարությամբ լայնացած: Սերմնարանը իլիկածև: Տուփիկը երկարավուն-եռանիստ, հանկարծակի սրածայր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Այգեպար, Մոսես, Նեփին Կարմիր): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավային Անդրկովկասը, Իտալիան, Սիցիլիա և Սարդինիա կղզիները և Հյուսիսային Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրությունների վրա. խոտածածկ լանջերին, ցանքերում, անտառի եզրերին: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի հերկման պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Linaceae – Կտավատազգիներ - Льновые**

**319. Linum barsegianii Gabr. et Dittr. (=L. seljukorum auct. non P. H. Davis)**

**Կտավատ Բարսեղյանի**

**Лен Барсегяна**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Տեսակը աճում է ինտենսիվ մարդածին ազդեցության գոտում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Linum seljukorum* 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա թավոտ կան գեղձերով ծածկված բույս 7—30 սմ բարձր.:

Յոդունները երկարավուն, սովորաբար մեկական ուղիղ, վերի կեսում թավոտ: Տերևները

երկարավուն, հաստավուն, գեղձավոր եզրերով: Ծաղկաբույլը 5—14 ծաղիկներով:

Բաժակաթերթերի եզրերը գեղձերով: Պսակաթերթերը 7-8 մմ երկ., բաց-դեղին եղունգիկով: Տուփիկը 4-5 մմ երկ.:

**Տարածում.** Աճում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում, Արարատ ավանի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 850 մ բարձրության վրա. կնյունա-հիրիկային աղակալած ճահիճներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-հոկտեմբերին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, պոպուլյացիայի փոքր խտություն, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** ՀՀ Կառավարության 2008 թ. որոշման համաձայն Արարատի ճահիճները ընդգրկված են Բնության հուշարձանների ցանկում, որպես «Աղակալած ճահճուտ»:

Անհրաժեշտ է տարածքի պահպանության կազմակերպում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Lycopodiophyta - Գետնամուշկներ - Плауны**  
**Lycopodiaceae - Գետնամուշկագիներ – Плауновые**

320. **Lycopodium selago L.**  
**Գետնամուշկ**  
**Плаун баранец**



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնաբերվել է Մրդուզի լեռնաշղթայից 1982 թ: Հայաստանի ֆլորայի համար հանդիսանում էր ոչ միայն նոր տեսակ, այլև նոր ցեղի, նոր ընտանիքի և ընդհանրապես նոր կարգի պատկանող տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա մշտադալար խոտաբույս 5-10 սմ բարձր.: Յոդունները մի փոքր բարձրացող, ուղիղ, զագաթում հեշտությամբ թափվող բողբոջներով: Տերևները գծային-նշտարածև, հերթադիր, պարուրածև խիտ դասավորությամբ: Սպորանգիումները տերևների անոթներում, մեկական:

**Տարածում.** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Մրխուզի լեռնաշղթա) AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Համարյա կոսմոպոլիտ է՝ ամենուրեք տարածված բուսատեսակ:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջինից մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1000-2300 մ բարձրությունների վրա. անտառներում, խոնավ ժայռերի վրա:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Pteridophyta – Պտերոներ - Папоротникообразные**

**Adiantaceae - Ադիանտազգիներ - Адiantовые**

321. **Adiantum capillis-veneris L.**

**Ադիանտում Վեներայի վարս**

**Адиантум Венерин волос**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Արեալը խիստ մասնատված: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է բնակության շրջանի կրճատում՝ աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU, քանի որ տեսակի տարածման հիմնական շրջանը գտնվում է հանրապետության սահմաններից դուրս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1

կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բազմամյա բույս 35 սմ բարձր.: Տերևաթիթերը 2-3 անգամ փետրածև բաժանված, լայն-երկարավուն: Վերջին կարգի սեզմենտները կորունիկների վրա:

Գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Երևանի («Խոսրովի անտառ») պետական արգելոց, Ուրծի լեռնաշղթա), Դարեղեգիսի (Արփա գետի կիրճ՝ Ջերմուկ քաղաքի և Դարբ գետի միախառնման մասում) և Չանգեգուրի (Տաթև վանքի շրջակայք) Ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 2265 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանի սահմաններից դուրս տարածված է Կովկասում, Ատլանտյան օվկիանոսի ափերին, Հարավային և Հարավ-արևելյան Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Արևմտյան (Թուրքիա, Իրան) և Միջին Ասիայում, Կենտրոնական Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին, միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 700—2200 մ բարձրությունների վրա, խոնավ ժայռերի ճեղքերում, տրավերտինների վրա, ջրվեժների և ջրավազանների մոտ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ռեկրեացիոն տրորման և կլիմայի փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Երկու աճելավայրեր պահպանվում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է մոնիթորինգ, նոր աճելավայրերի հայտնաբերում:

**Aspleniaceae - Ասպլենազգիներ - Костенцовые**

**322. Asplenium woronowii Christ**

**Ասպլեն Վորոնովի**

**Костенец Воронова**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է 3 աճելավայրերից, ընդ որում մեկը գտնվում է զգալի հեռավորության վրա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բազմամյա բույս մոտ 20 սմ բարձր.: Տերևաթիթեղը փափուկ կաշեկերպ, անփայլ-կանաչ, երկարավուն-նշտարածև, կրկնակի փետրածև; կոթունը տերևաթիթեղին հավասար:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Լոռու (Սպիտակ, Բագումի լեռնաշղթա) և Ջանգեզուրի (Կապան) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2800 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի հանդիպում է Արևմտյան Կովկասում, Արևմտյան, Հարավ-արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Թուրքիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 900-2500 մ բարձրությունների վրա. բոխտուտային անտառների քարքարոտ տեղերում, ժայռերի միջև և Rhododendron caucasicum թփուտների մեջ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:



**Athyriaceae - Չարխտազգիներ - Кочедыжниковые**

**323. Athyrium distentifolium Tausch ex Opiz (=A. alpestre (Hoppe) Opiz)**

**Չարխտա բաժանատերև**

**Кочедыжник расставленнолистный**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու լոկալիտետներ Հյուսիսային Հայաստանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության հետևանքով: Սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN, քանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանից դուրս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս՝ 60—160 սմ բարձրության:

Տերևաթիթեղը փափուկ, մուգ կանաչ, երկրորդ կարգի սեգմենտները երկարավուն-նշտարած:

Տերևակոթը տերևաթիթեղից կարճ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Մրխուզի լեռնաշղթա) և Լոռու (Բազումի լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի հանդիպում է Մեծ Կովկասում, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Ղարաբաղում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Թուրքիայում, Հյուսիսային և Արևելյան Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2200-2600 մ բարձրությունների վրա. քարքարոտ կիրճերում, *Rhododendron caucasicum* թփերի մեջ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ռեգրադացիա՝ արածեցման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Botrychiaceae – Ողկուզապտերազգիներ - Гроздовниковые**

**324. Botrychium lunaria (L.) Sw.**

**Ողկուզապտեր կիսալուսնաձև**

**Гроздовник полулунный**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU, քանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է հանրապետությունից դուրս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1

կարգավիճակով ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր դեղնա-կանաչ, մսալի բույս 5-20 սմ բարձր: Տերևի ստերիլ մասը փետրածև, սեզոնները թեք կիսալուսնաձև, սեպաձև հիմքով և գոգավոր գագաթով: Տերևի պտղաբերող մասը երկակի-եռակի փետրածև, ստերիլ մասից վերբարձրացող:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Գեղամի (Ալյուս լճի շրջակայք), Սևանի (Դարանակ գյուղի շրջակայք, Վարդենիս լեռնաշղթա) և Ջանգեզուրի (լեռնագագաթներ Արամազդ և Խուստուփ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3160 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտները՝ 5: Հայաստանից բացի հանդիպում է Կովկասում, Եվրոպայում, Հյուսիսային, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Ասիայում, Աֆրիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում և Ավստրալիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2500-3300 մ բարձրությունների վրա. մարգագետիններում և ժայռերի միջև:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:



326. **Polystichum lonchitis (L.) Roth**  
**Բանալոս նիզականման**  
**Многогорядник копьевидный**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր բույս 10—45 սմ բարձր.: Տերևաթիթեղը կոշտ կաշեման, փետրածև հատված, գծային-նշտարածև, շատ կարճ կոթով: Ամենամերձևի սեզնետները եռանկյուն, հիմքում կարճ ականճուկով, մնացածները՝ լայն-սրտածև, հիմքում մեծ ականջուկով, բոլորը՝ սրասողացաեզր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Քաջարանի շրջակայք, Խուստուփ լեռնագագաթ): EOO 90 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 2,: Հայաստանից բացի աճում է Կովկասում (լայնորեն), Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Ասիայում և Հյուսիսասիին Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2200-3000 մ բարձրությունների վրա. մարգագետիններում, քարքարոտ տեղերում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գերարածեցման և լեռնահանքային արդյունաբերության ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Hydropteridaceae – Հիպոլեպիդազգիներ - Гиполепидиевые**

**327. Pteridium tauricum V. Krecz. ex Grossh.**

**Արծվապետր տավրիական**

**Орляк таврический**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա Ներքին Հանդ գյուղի շրջակայքում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս հաստ սողացող կոճղարմատով: Տերևները մինչև 2 մ բարձր., երկար կոթուններով; Տերևաթիթեղը վառ-կանաչ, կաշեման, ձվաձև-եռանկյուն, եռակի փետրածև հատված:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ներքին Հանդ գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Դրիմում, Մեծ Կովկասում, Արևմտյան և Հարավ-արևմտյան Անդրկովկասում, Թալիշում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորն լեռնային գոտում, ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա. գետերի ափերին՝ բաց տեղերում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Orhioglossaceae – Իծալեզվազգիներ - Ужовниковые**

**328. Orhioglossum vulgatum L.**

**Իծալեզու սովորական**

**Ужовник обыкновенный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii,iv) + 2ab(iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի են 2 աճելավայրեր միմյանցից 225 կմ հեռավորության վրա, որոնցից մեկը մեծ սպառնալիքի տակ է, քանի որ գտնվում է կուրորտային զոնայում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում մարդածին գործոնի հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս կարճ կոճղարմատով և երկար հորիզոնական արմատներով: Տերևի ստերիլ մասը մսալի, ձվաձև, բութ, հիմքում պատյանի ձևով շրջապատող հասկնաման ֆերտիլ մասի ոտիկը:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Ապարանի (Արգակյան գյուղի շրջակայք) և Ջանգեզուրի (Ծավ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններից: AOO 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 225 կմ է: Հայաստանից դուրս տարածվում է Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Հյուսիսային և Արևմտյան (Թուրքիա, Իրան) Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 900-1800 մ բարձրությունների վրա. կաղնու, կաղնու-բոխտու անտառներում:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ անտառտնտեսական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:




**Sinopteridaceae – Մինոպտերիդազգիներ - Синоптеридиевые**

**330. Cheilanthes pteridioides (Reichard) C. Chr.**

**Չորապտեր արծվապտերային**

**Краекучник орляковый**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանից դուրս, սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև VU: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հավաքյալ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կոճղարմատավոր բազմամյա պտեր 10-30 սմ բարձր.: Տերևաթիթերը կանաչ, կաշենման, վերևից մերկ, տակից պատած նուրբ մազիկներով, երկարավուն-ձվաձև, եռակի փետրածև հատված, վերջին կարգի սեզմենտները երկարավուն, տափակ; կոթերը բարակ, փայլուն, գորշավուն կամ սև, թաղանթներով ծածկված:

**Տարածում.** Հայաստանում տարածված է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Ագարակից մինչև Վարդանաձոր և Նյուվաղի գյուղերը): EOO 170 քառ. կմ է, AOO 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Կովկասում, Արևելյան Անդրկովկասում, Ատլանտյան և Կենտրոնական Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Արևմտյան (Թուրքիա, Իրան, Աֆղանստան) և Միջին Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 500-1800 մ բարձրությունների վրա. ժայռերի ճեղքերին, քարերի մեջ:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ լեռնա-հանքային արդյունաբերության ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Thelypteridaceae – Տելիպտերազգիներ - Телиптерисовые**

**331. Thelypteris palustris Schott**

**Տելիպտեր ճահճային**

**Телиптерис болотный**



**Կաստեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է այս ռելիկտային տեսակի մեկ պոպուլյացիա: Տարածման բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում բնակության շրջանի սահմանափակության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս երկար սողացող կոճղարմատով: Տերևները մինչև 100 սմ երկ., բարդ, 2-3 անգամ փետրաձև հատված; առաջին կարգի սեզմենտները ավելի նեղ, գծային-նշտարաձև մասերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Մարտիրոս գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տարածված է Կովկասում, Եվրոպայում, Սիջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիս-Արևմտյան (Թուրքիա, Իրան) և Սիջին Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1800 մ բարձրության վրա. ճահճացած տեղերում, լճերի ափերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Չմոյի լճի տարածքում:



**Taxaceae – Կենազգիներ - Тиссовые**

**333. Taxus baccata L.**

**Կենի հատապտղային**

**Тисс ягодный**



**Կատեգորիա.** VU B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Երրորդական դարաշրջանի այս ռելիկտային տեսակը տարածված է Իջևանի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում, առաջացնելով մի քանի համեմատաբար խոշոր պուրակներ և հանդիպելով առանձին ծառերի ձևով հաճարի և կաղնու անտառներում: Այդ պուրակներից մի քանիսը աճում են Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում: Տեսակի աճման պայմանների փոփոխությունը կարող է հանգեցնել բնակության շրջանի կրճատմանը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Մշտադալար ծառ մինչև 25 մ բարձրությամբ, կարմրա-մոխրագույն բնով մինչև 1 մ տրամագծով հարթ կամ թիթեղիկավոր: Տերևները 5-8 տարի մնացող երկարա-նշտարած և տափակ ելուստային ջղերով սուր կարճ կոթուկով, փայլուն: Հատապտուղը վառ կարմիր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի (Ախնաբադի և Ոսկեպարի կենտրոն պուրակներ և շրջակա անտառներում) և Ջանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2870 քառ. կմ է, AOO՝ 64 քառ. կմ: Լոկալիտետները՝ 11. Բացի Հայաստանից աճում է, Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հարավային Աֆրիկայում, Փոքր Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 700-1500 մ բարձրությունների վրա. գետերի ափերին, անտառներում: Ունի արժեքավոր բնափայտ:

**Մահմանափակող գործոններ.** Դժվարացած սերմնային վերականգնում, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկի «Ախնաբադի կենտրոն պուրակ» պետական արգելավայրում: Անհրաժեշտ է պոպուլյացիաների կազմի և վիճակի մոնիտորինգ:

**Malvaceae – Փիփերթազգիներ - Мальвовые**

**334. *Alcea karsiana* (Bordz.) Litv.**

**Տուղտավարդ Ղարսի**

**Шток-роза карсская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում գյուղատնտեսական գործունեության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 30-100 սմ բարձրությամբ, խիտ ծածկված ոսկեգույն պարզ աստղաձև երկձայր մագիկներով: Տերևները ներքևից գունատ ավելի խիտ թավոտությունից: Ծաղիկները մեծ՝ 5-7 սմ տրամագծով, հնգատիպ սպիտակ պսակաթերթերով: Ենթաբաժակը երկարավուն-եռանկյուն թերթերով՝ 10—12մմ երկ., բաժակից կարճ: Պտուղը տրոհվող՝ կազմված 18-40 միասերմ մերիկարպիումներից: Սերմերը երիկամաձև:

**Տարածում.** Հանդիպում է Վերին Ախուրյանի (գյուղ Գթաշեն, Կումայրի) և Շիրակի ֆլորիստիկական շրջաններում (Հռոռն, Լենգեսի շրջակայք, Քաչալ սար): EOO 300 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հյուսիս-Արևելյան Անատոլիան (Արդահան, Կարաուրգան, Քարակուրտ):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին, վերին լեռնային և ենթալպյան գոտիների 1600-2600 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստաններում, ժայռոտ լեռնալանջերին, չոր քարքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին: Գեղազարդային բույս է, նաև դեղաբույս:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական գործունեության ընդարձակման հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



336. *Malvella sherardiana* (L.) Jaub.

Մորչիկ Ժերարի  
Мальвочка Жерара



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ 10—50 սմ բարձր., թավշյա թավտոությամբ, խիտ տերևակալված, փռված կամ բարձրացող ցողուններով: Տերևները սրտաձև-երիկամաձև, աղեղնաեզր: Ծաղիկները անութային, բարակ երկար կոթերով; պսակաթերթերը մուգ-վարդագույն, երկու անգամ բաժակից երկար: Ենթաբաժակը 3 ազատ թերթերից՝ ծածկված կարճ խոզաններով: Պտուղները տրոհվող՝ միասերմ փքված մերիկարպների՝ պտղամասերի բաժանվող: Մերմերը ձվաձև:

**Տարածում.** Հանդիպում է Երևանի (Վարդաշեն, Էրեբունի) և Գարեդեգիսի (Արփի, Արենի, Եղեգնաձոր, Գետափ, Չիվա) ֆլորիստիկական շրջաններում: EOO 320 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևելյան Անդրկովկասը, Թալիշը, Միջերկրածովյան ավազանի երկրները, Դրիմը, Անատոլիան, Հյուսիսային Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ձ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. չոր կավոտ լանջերին, ցանքերում, ճանապարհների մոտ: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Աճելավայրերի կորուստ՝ դեգրատացիա՝ կապված ինֆրակարուցվածքի զարգացման, հողերի յուրացման հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Menyanthaceae – Ջրաերեքնուկազգիներ - Вахтовые**

**337. Menyanthes trifoliata L.**

**Ջրաերեքնուկ եռատերև**

**Вахта трехлистная**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Ունի ընդհատված տարածում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում և անհետացում՝ կապված հազվագյուտության և կլիմայի գործալ փոփոխության հետևանքով՝ բնակության միջավայրի կորստի հետ: Հաշվի առնելով տեսակի ընդհանուր արեալի լայն տարածումը կատեգորիան իջեցված է մեկ միավորով: Գեղագարդային տեսակ է, մաս՝ դեղաբույս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա սողացող կոճարմատով ջրային բույս: Յողունը 30 – 60 սմ երկ.: Տերևները հերթադիր, մինչև 30 սմ երկ. կոթերով; տերևիկները 3, հակաձվածև կամ էլիպսաձև, 5 – 8 սմ երկ.: Ծաղիկները 10-20, խիտ գագաթնային ողկույզներում: Բաժակը հնգաբաժան: Պսակը ձագարաձև, թթևակի մսալի, 5 բլթակներով; բլթակները ներսից խիտ-ծոպավոր, սպիտակ կամ թույլ վարդագույն, ծաղկումից հետո թափվող: Պտուղը միաբույն, երկփեղկ տուփիկ: Սերմերը խոշոր, սեղմված:

**Տարածում.** Հանդիպում է Սևանի (Գիլի լիճ), Գարեղեգիսի (Չիմոյի և Փիրոսի լճեր), Ջանգեզուրի (Վերդոյի լիճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 1540 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է համարյա ամբողջ Կովկասը, բարեխառն Եվրասիան, Հյուսիսային Ամերիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1700-2000 մ բարձրությունների վրա. լճերում, կանգնած, ճահճացող ջրերում: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված կլիմայի փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:


Անհրաժեշտ է տեսակը արժանացնել հատուկ ուշադրության, պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ, ex-situ պահպանություն, ներդնել ջրավազանների կանաչապատման համար:

**Najadaceae – Ջրահարսազգիներ - Наядовые**

338. *Najas minor* L.

**Ջրահարս փոքր**

**Наяда малая**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Ըստ Ա.Մ.Բարսեղյանի (1981) տվյալների աճում է Արարատյան դաշտավայրում, 1983 թ. հայտնաբերվել է նաև Ապարանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանում տեսակին սպառնում է տարածման նվազում կապված հազվագյուտության, էկոսիստեմների փոփոխության գյուղատնտեսության զարգացման պատճառով: Տեսակի համաշխարհային մասշտաբով շատ լայն տարածման պատճառով կատեգորիան իջեցված է մեկ աստիճանով:

Ընդգրկված էր Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ 1` ոչնչացման սպառնալիքի ենթակա կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվոնցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Ջրային, սուզված կամ լողացող միամյա բույս, խիտ ճյուղավորված, հաճախ կոտրատվող ցողուններով: Տերևները օղակադիր, դեղնա-կանաչավուն տերևաթիթեղով 0.6 – 0.9 մմ լայն., եզրերից փոքր ի շատե խոշոր, հիմքի մոտ հեռացած ատամիկներով; տերևապատյանները կարճ, լայն, վերևում՝ ավելի մուգ գույնի ատամիկներով: Պտուղը 4 մմ երկ., 1 մմ լայն, նստադիր, 3 – 4 ողնուցանման, բարակ երկայնակի կողերով և դրանց միջև հորիզոնական բաց գույնի շերտերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Էջմիածին, Մասիս) և Ապարանի (Աղավնաձոր գյուղի մոտ Մարմարիկ գետի ձախափնյակում) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 630 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, մասնավորապես Արևմտյան Նախակովկասը, Արևելյան, Հարավային Անդրկովկասը և Թալիշը, ինչպես նաև Եվրոպան, Արևմտյան Սիբիրը, Փոքր, Միջին և Արևելյան Ասիան, Իրանը, Հնդկաստանը, Հյուսիսային Աֆրիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտում ծ. մ. 800-1700 մ բարձրությունների վրա. քաղցրահամ և աղիավուն ջրերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին: Հիդրոգամ՝ ջրում փոշոտվող բույս է: Գեներատիվ եղանակով բազմանում է ավելի քիչ: Ինտեսիվ բազմանում է վեգետատիվ եղանակով, որը սակայն հաճախ ճնշվում է ջրային խոշոր բույսերի կողմից:

**Մահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա հողերի որոգման, չորցման և գյուղատնտեսության զարգացման պատճառներով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ են պոպուլյացիաների վիճակի և կազմի հետազոտություններ և մոնիթորինգ.:





**Nymphaeaceae – Հարսնամատազգիներ - Кувшинковые**

**340. Nuphar lutea (L.)Smith**

**Կոկոռ դեղին**

**Кубышка желтая**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է Արևմտյան Հայաստանի լճերի երկու լոկալիտետներից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության, լճերի բնական և տնտեսական գործունեության պատճառով ջրի մակարդակի փոփոխման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր Օ՝ անհետացած տեսակ կարգավիճակով: Վերջերս Ախուրյան գետի հին հունում հայտնաբերվել է մի փոքր պահպանված պոպուլյացիա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր ջրային բույս, ջրի մակերեսին լողացող, խոշոր լայն-էլիպսաձև, հիմքում սրտաձև տերևներով: Ծաղիկները միայնակ, ջրի մակերեսից մի փոքր բարձրացող: Բաժակաթերթերը՝ 5, դեղին: Պսակաթերթերը փոքր, նեղ, երկարավուն, բազմաթիվ, աստիճանաբար առէջների փոխակերպվող, բոլորը պարուրաձև դասավորված: Պտուղը հատապտղանման, սերմերը լորձնային՝ օդային պղպղջակներ կրող պերիկարպով՝ սերմնապատով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Վերին Ախուրյանի ֆլորիստիկական շրջանում (Արփա լճի և Ախուրյան գետի ավազաններ): Մեծ հավանականությամբ անհետացել է նախկինում հայտնի աճելավայրերից Լոռու ֆլորիստիկ շրջանում: AOO՝ 8 քառ. կմ, աճելավայրերը՝ 2: Աճելավայրերի միջև տարածությունը՝ 15 կմ է: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախակովկասը, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասը, Եվրոպան, Սիբիրը, Միջերկրածովյան ավազանը, Փոքր և Միջին Ասիան:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերինլեռնային գոտում ծ. մ. 1800-2000 մ բարձրությունների վրա. լճերում, կանգնած և դանդաղադահուս ջրերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին: Գեղազարդային տեսակ է, դեղաբույս:

**Սահմանափակող գործոններ.** Ջրի մակարդակի փոփոխում, տարածքի ցամաքեցում, հազվագյուտություն, կլիմայի փոփոխություն, անտրոպոգեն գործունեության ազդեցություն, **Պահպանության միջոցառումներ.** Աճելավայրերը պահպանվում են «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է նոր աճելավայրերի հայտնաբերում, մոնիթորինգ և ex-situ պահպանություն:

341. *Nymphaea alba* L.

**Ջրաշուշան սպիտակ**  
**Кувшинка белая**



**Վաստեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է Լոռու սարահարթի ռելիեֆային լճերից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նախկինում, մինչև 1930թ. աճում էր նաև Ապարանի ֆլորստիկ շրջանում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ձախափնյակի ողողատներում գետի գարնանային վարարումներից առաջացած փոքրիկ լճակներում: Այստեղ տեսակը ոչնչացել է բնական և մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով՝ Մարմարիկի սակավաջրության, ժամանակավոր լճակները ցամաքելու, տնտեսական գործունեության և այլ պատճառներով: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում տնտեսական գործունեության ընդարձակման և կլիմայի գլոբալ փոփոխության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3՝ կրճատվող տեսակ կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվոնցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր ջրային բույս: Տերևները խոշոր կլորավուն կամ թույլ ձվաձև, հիմքում սրտաձև, ինչպես նաև ծաղիկները ջրի մակերեսին լողացող: Ծաղիկները միայնակ, խոշոր՝ 14-16(20) սմ տրամագծով: Բաժակաթերթերը 4, հազվադեպ 3 կամ 5:

Պսակաթերթերը սպիտակ, բազմաթիվ, աստիճանաբար առէջների փոխակերպվող, բոլորը՝ պարուրաձև դասավորված: Պտուղը հատապտղանման, սերմերը՝ օդային պղպղջակներ կրող արիլուտով՝ սերմնաթիկնոցով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանում (Լոռու սարահարթի լճակներ. Ստեփանավանի և Տաշիրի միջև): EOO՝ 330 քառ. կմ, AOO՝ 16 քառ.կմ, աճելավայրերը՝ 6: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախակովկասը, Արևելյան Անդրկովկասը, Սկանդինավյան թերակղզին, Միջին Եվրոպան, Միջերկրածովյան ավազանի երկրները, Փոքր Ասիան:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1400-1900մ բարձրությունների վրա. լճերում, կանգնած ջրերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին-օգոստոսին: Կլիմայավարժեցվել և երկար տարիներ աճում էր ՀԱԱ-ի Երևանի բուսաբանական այգու Հայաստանի ֆլորայի հողամասի լճակում: Գեղագարդային տեսակ է, ներկատու, կոճղարմատը օգտագործվում է նաև ժողովրդական բժշկության մեջ:

**Մահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լիները, կլիմայի փոփոխություն, անտրոպոգեն գործունեության ազդեցություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ստեղծել նոր «Լոռու լճակներ» ԲՀՊՏ, ինչպես նախատեսված է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրով:

**Onagraceae - Ապուղանագզիներ - Кипрейные**  
**342. Chamaenerion dodonaei (Vill.) Kost.**

**Նեղոսերևույթի Գործնի**  
**Хаменерион Додона**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN, քանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս՝ մինչև 60 սմ բարձր.: Տերևները գծային-նշտարաձև, մերկ կամ տակից առսեղմ թավոտ: Պսակաթերթերը վարդագույն: Առէջները 8, որոնցից 4 ավելի կարճ, դասավորված մեկ շարքով: Սռնակը թեթևակի առէջներից երկար:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Լոռու ֆլորիստիկական շրջանում (Ստեփանավան, Տաշիր): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Սիջին և Հարավային Եվրոպայում, Սիջերկրածովյան ավազանի երկրներում, Փոքր Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտում. խոնավ տեղերում, գետերի ափերին: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար աճելավայրերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի կառուցվածքի և անհատների թվաքանակի ճշտման համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**Orchidaceae – Խորճազգիներ - Орхидные**  
**343. Cephalanthera kurdica Bornm. & Kraenzl.**

**Եղբորսին քրդական**  
**Пыльцеголовник курдский**



**Կաստեգորիա.** VU\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջաններով: Սպառնալիքի կաստեգորիան նվազեցվում է մինչև VU, քանի որ պոպուլյացիան սահմանակից է Իրանում աճող պոպուլյացիայի հետ: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ անկայուն անտառտնտեսական գործունեության և չվերահսկվող հավաքի հետևանքով (որպես գեղազարդային տեսակ):

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր (որպես *C. epipactioides* Fisch. & C.A.Mey.) 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ: Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա ստորգետնյա կոճարմատով խոտաբույս՝ 20-40 սմ բարձր.:

Չարգացած տերևները 4 սմ երկ., սակավաթիվ: Ծաղիկները վարդագույն կամ սպիտակավուն:

Ծաղկի շուրթը լայնակի նեղացումով, կարճ բուխ խթանով: Մերմնարանը հիմքի մոտ ոլորված, նստադիր, ինչպես և պտուղը վերև ուղղված: Գեղազարդային արժանիքներով օժտված տեսակ:

**Տարածում.** Հայաստանում աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Վահրավար, Լիճքվազ): AOO 12 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Հյուսիս-Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Անատոլիայում, Հյուսիսային Սիրիայում, Հյուսիսային Իրաքում և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1100-1700 մ բարձրությունների վրա. անտառներում, կրաքարային տեղերում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառների հատումների և անտառտնտեսական աշխատանքների, ինչպես նաև որպես գեղազարդային բույս չափազանց շատ հավաքելու հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

344. *Corallorhiza trifida* Châtel.

Կորալորիզ եռաբաժան  
Ладьян трехнадрезанный



**Կասեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է Իջևանի ֆլորիստիկական շրջանի 1977թ. կատարված միակ հավաքով: Տարածման և բնակության շրջանի մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակը աճում է միայն փշատերև անտառներում, որոնք Հայաստանի անտառների աննշան մասն են կազմում: Պոպուլյացիան գտնվում ռեկրեացիոն գոտում, որի հետևանքով առկա է աճելավայրի խախտման վտանգ: Այն մեկուսացված է սահմանակից երկրների մոտակա պոպուլյացիաներից:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ: Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա առանց քլորոֆիլի օրլիգատ միկոտրոֆ խոտաբույս 10-25 սմ բարձր.: կոճորմատը կարճ կորպանման՝ առանց արմատների: Յողունները բարակ, դեղնագորշավուն: Ծաղկակիցները սերմնարանից կարճ: Ծաղիկները 3-10 հատ՝ հավաքված ողկույզ ծաղկաբույլում, դեղնավուն- կամ կանաչավուն-սպիտակ: Ծաղկապատի եզրային արտաքին մասերը ներքև թեքված և միացած շուրթի հիմքի տակ՝ առաջացնելով թմբիկ: Շուրթը եզրերից ատամիկներով:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Վանաձորի շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, բացի Նախակովկասից և Թալիշից, Եվրասիայի արկտիկական և բարեխառն շրջանները և Հյուսիսային Ամերիկան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1800 մ բարձրությունների վրա. փշատերև անտառներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառտնտեսական և ռեկրեացիոն գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է միակ պոպուլյացիայի ներկա վիճակի հաստուկ ուսումնասիրություն և մոնիթորինգ:

345. *Epipogium aphyllum* Sw.  
 Էպիպոգիում անտերև  
 Надбородник безлистный



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է 2 պոպուլյացիան: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով՝ կապված անտառտնտեսական և ռեկրեացիոն գործունեության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված է նաև CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ:

Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա օրիգատ միկոտրոֆ առանց քլորոֆիլի խոտաբույս 10-20 սմ բարձր.: Կոճղարմատը կարճ մսալի կորալանման բարակ ստորլուծված՝ առանց արմատների: Ծաղկակիր ընձյուղները մերկ, հաստ (ներքևում մինչև 10 մմ հաստությամբ): Ողկույզը սկզբում ներքև թեքված, հետագայում՝ ուղիղ: Ծաղիկները դեղնավուն, երբեմն կարմիր երանգով, հոտավետ: Խթանը 4-8 մմ երկ., հաստ, բութ, բաց-մանուշակագույն

**Տարածում.** Հայաստանում աճում է Իջևանի (Դիլիջանի շրջակայք) և Լոռու (Ստեփանավանի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 205 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր առմամբ տեսակը տարածված է ամբողջ Եվրասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1700 մ բարձրությունների վրա. ստվերոտ անտառներում, հումուսով հարուստ հողերի վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս. ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-հոկտեմբերին

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, մասնատված արեալ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական գործունեության (անտառների հատում) հետ, ռեկրեացիոն տրոհում:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիաներից մեկը պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի ներկա վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

346. *Listera ovata* (L.) R.Br.

Երկտերևի ձվաձև

Тайник яйцевидный



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի աճելավայրերը կարող են տուժել անտառտնտեսական գործունեության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ: Բեռնի կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա կարճ կոճղարմատով խոտաբույս 25-60 սմ բարձր.: Յողունները տերևներից վերև գեղձային թավոտությամբ: Չարգացած տերևները 2, էլիպսաձև, 5-10 սմ երկ. 3-8 սմ լայն., հակադիր մոտեցած ցողունի կենտրոնում: Ծաղիկները կանաչավուն: Շուրթը դեղնավուն-կանաչ, հակասեպաձև, գազաթում խոր երկհատված: Բարձրարժեք գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում աճում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է համարյա ամբողջ Կովկասում, Եվրոպայում, Ասիայի սառը և բարեխառն շրջաններում, ներմուծվել է Հյուսիսային Ամերիկա:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1200 մ բարձրությունների վրա. հաճարենու և հաճարենու-կաղնու անտառներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական գործունեության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



347. *Ophrys apifera* Huds.

Մարդակիր մեղվակիր  
Офрис пчелоносная



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է գյուղատնտեսական հանդակների ընդլայնումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ:

Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 20-50 սմ բարձր.՝ ամբողջական պալարներով: Շուրթը լայն-օվալաձև, 1 դեղնավուն երիզով պուտով, հիմքում 2 կոնուսաձև խավոտ թմբիկներով, պարզորոշ եռաբլթակ, լեզվականման կամ ձվաձև եզրերի բլթակներով և համարյա կլորավուն միջին բլթակով, գագաթում՝ ներքև թեքված հավելյուկով 1,5-3,5 մմ երկ.: Կտուցանման վերնակապը 3-3,5 մմ երկ., S-աձև: Ծաղկապատի արտաքին մասերը վարդագույն կան մանուշակագույն կանաչավուն ջղերով: Բարձրարժեք գեղազարդային տեսակ է:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Կապանի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Անդրկովկասում, Թալիշում, Եվրոպայում, Սիջերկրածովյան ավազանի երկրներում, Արևմտյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-800 մ բարձրությունների վրա. շիբլակում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:



349. *Orchis stevenii* Rchb. f.

Խորճ Ստենի  
Ятрышник Стевена



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հանդիպում է մեկական անհատներով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված է նաև CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ:

Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 20-40 սմ բարձր., ամբողջական պալարներով:

Տերևները երկարավուն կամ երկարավուն-նշտարած: Ծաղկակիցները թեփանման: Սաղավարտը վերևից մոխրա-գորշա-վարդագույն: Շուրթի մասերը ամբողջաեզր; շուրթը մուգ մազիկներով:

Խթանը սերմնարանի երկարության 1/3 կամ 1/2 հավասար, ծայրում թեթևակի լայնացած:

Բարձրարժեք գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Վահրավար, Ծվանիձոր):

AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում Մեծ Կովկասի Գլխավոր լեռնաշղթայի վրա, Անդրկովկասում, Թալիշում, Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է

ստորինից մինչև վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-2000 մ բարձրությունների վրա. լուսավոր անտառներում, մարգագետիններում, երբեմն ջրավազանների ափերին: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառտնտեսական աշխատանքների, գյուղատնտեսական հանրակների համար հողերի յուրացման, ճանապարհաշինության հետևանքով: Ինտենսիվ հավաք որպես գեղագարդային բույս:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

350. *Orchis tridentata* Scop.

Խորրճ եռատամ  
Ятрышник трехзубчатый



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի մեծ ընդհանուր տարածումը, ադրբեջանական պոպուլյացիայի մոտիկությունը և արգելոցային տարածքում աճելու հանգամանքը, սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 15-30 սմ բարձր., ամբողջական պալարներով:

Ծաղկակիցները թաղանթային, նշտարած: Ծաղիկները վարդագույն կամ վարդագույն-մանուշակագույն, մուգ ջղերով: Ծաղկապատի արտաքին մասերը առաջացնում են սաղավարտ: Շուրթը 7-8 սմ երկ., մուգ պուտերով խոր եռաբլթակ, եզրերի գծային-փիածն բլթակներով և միջին ավելի երկար, հակասրտածն ուրվագծով, փոքր ի շատե գոգավոր բլթակով, մեջտեղում փոքրիկ ատամիկով: Ծաղկաբույլը 2(3) սմ երկ., կլորա-երկարավուն կամ ձվաձև: Խթանը ներքև ուղղված, կորացած, սերմնարանից կարճ: Բարձրաբժեք գեղազարդային տեսակ:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, Ծավ գյուղի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից երկրներում, Ղրիմում, Արևմտյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1000 մ բարձրությունների վրա. լուսավոր անտառներում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ: Ինտենսիվ հավաք որպես գեղազարդային բույս:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

351. *Steeniola satyrioides* (Spreng.) Schult.

Ստեվենիելա սատիրաման  
Стевениелла сатириовидная



**Կատեգորիա.** EN B 1 ab (ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 15-40 սմ բարձր., ամբողջական պալարներով, սովորաբար միատերև: Ծաղիկները կանաչ աղոտ-ծիրանեգույն երանգով: Ծաղկապատի արտաքին մասերը ամբողջությամբ միաձուլված միմյանց հետ, ներսում՝ պուտիկներով: Շուրթը պարկանման խթանով: Բարձրարժեք գեղազարդային բուս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Աղայա լեռնագագաթ) և Զանգեզուրի (Կապանի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 600 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է համարյա ամբողջ Կովկասում, Գրինում, Հյուսիսային Ամատոլիայում, Հյուսիսային Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1300 մ բարձրությունների վրա. նոսրանտառներում, անտառային բացատներում, առավելապես կրաքարային հողերի վրա: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արեալի մասնատվածություն, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառտնտեսական միջոցառումների հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Orobanchaceae – Ծրագախտազգիներ - Заразиковые**

**352. Cistanche fissa (C.A.Mey.) G.Beck**

**Դևազի հատված**

**Цистанхе рассеченная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Ներկայումս հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից փոքր: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանի կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ և առաջին հերթին աղուտների լվացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, միայնակ հաստ ցողուններով մինչև 50-60 սմ բարձր.: Ծաղկաբույլը խիտ, հաստ մինչև 20 սմ երկ. և 5-8 սմ լայն.: Պսակը բաց-երկնագույն, թեթևակի զիգոմորֆ:

**Տարածում.** Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատի շրջակայք): EOO 85 քառ. կմ է, AOO՝ 12 քառ կմ: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Ադրբեջանում, Սիջին Ասիայում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում, Իրանում, Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Սակարյժ բույս է: Ավելի հաճախ աճում է Artemisia և Tanacetum ցեղերի տարբեր տեսակների արմատների վրա: Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ . 700-900 մ բարձրությունների վրա. աղուտներում, աղակալված հողերի վրա, կիսաանապատային բուսականության մեջ: Ծաղկում է մայիս ամսին, պտղակալում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և մեխորացիայի հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ստեղծել նոր ԲՀՊՏ աղուտների վրա, իրականացնել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով, և պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Рaeoniaceae – Քաջվարդազգիներ - Пионовые**

**354. Paeonia tenuifolia L.**

**Քաջվարդ նեղատերև**

**Пион узколистный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հանդիպում է միայն Հայաստանի հարավում՝ Ջանգեզուրում: Հայտնի է մեկ ոչ մեծ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի կորուստի կամ դեգրատացիայի հետ, տարածքի լեռնահանքային արդյունաբերության զարգացման դեֆիքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով:

Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի հավելվածում:

CITES-ի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված է:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս կոնաձև հաստացած արմատներով: Յողունը մինչև 60 (90) սմ բարձրության: Տերևները կրկնակի փետրաձև, նեղ-գծային, մինչև 2 մմ լայնության մասերով: վերին տերևները շրջապատում են ծաղիկը: Ծաղիկները ցողունների գագաթների միայնակ, 6-8 սմ տրամագծով, մուգ-կարմիր պսակաթերթերով: Առէջները դեղին:

Պտղատերևիկները՝ 3, հազվադեպ 2, մոտ 2 սմ երկարության, շեկավուն թավոտությամբ: Սերմերը արիլոսով՝ սերմնաթիկնոցով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապանի շրջակայք): AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, ընդ որում Նախակովկասը, Արևմտյան, Կենտրոնական, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, ինչպես նաև Բալկանյան թերակղզին, Արևելյան Եվրոպայի հարավային մասը, Փոքր Ասիան և Հյուսիս-Արևմտյան Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա, շիբլյակներում: Ծաղկում է ապրիլ ամիսին, պտղաբերում՝ մայիսին: Օժտված է գեղազարդային բարձր արժանիքներով:

**Սահմանափակող գործոններ.** Հազվագյուտ լինելը, տարածման և բնակության շրջանի սահմանապակում, բնակավայրի կորուստ կամ դեգրատացիա, կապված տարածքի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության համար միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է հիմնել պահպանվող տարածք տեսակի աճելավայրում, կատարել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով, մոնիթորինգ:



**Platanaceae – Ստազզիններ - Платановые**

**355. Platanus orientalis L.**

**Մոսի արևելյան**

**Платан восточный**



**Կատեգորիա.** EN B 1 ab (iii) + 2ab (iii)

Վտանգված տեսակ: Ներկայումս հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ Կովկասում ամենամեծ պուրակը: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ց փոքր է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված աճման վայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Մուգ մոխրագույն բուլ սլացիկ ծառ մինչև 30 մ բարձրությամբ: Տերևները խոշոր, խորը մատնածև հնգաբաժան: Ծաղկաբույլը գնդաձև, 2-2,5 սմ տրամագծով, կախված երկար կոթունով: Պտղիկները վերևում սուր: Գեղազարդային ծառ: Հայաստանում հաճախ օգտագործվում է կանաչապատման նպատակով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Ծավ գետի ողողատում և առանձին ծառեր մոտակա անտառներում: AOO 25 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Ադրբեջանում, Բալկանյան թերակղզում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Առաջավոր և Միջին Ասիայում, Իրանում, Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 500-900 մ բարձրությունների վրա. առաջացնում է պուրակ, հանդիպում է մաս կաղնու անտառներում: Ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, պտղակալում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Մոսու պուրակ» պետական արգելավայրում, «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



357. *Acantholimon fedorovii* Tamamsch. & Mirzoeva

Ոգնաթուփ Ֆեդորովի  
Акантолимон Федорова



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Հայաստանում հայտնի է մեկ փոքրիկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճման պայմանների փոփոխության և ներքին գործոնների պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բարձրիկանման կիսազնդածև թփիկ: Ծաղկակիրները տերևներին չզերազանցող: Հասկիկները բազմաթիվ, շատ մանր, 6-7 մմ երկ., երկշարք, համարյա կոմիտրածև միմյանց ծածկող: Պսակաթերթերը սպիտակ կամ դժգույն-վարդագույն:

**Տարածում.** Աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում, ( Ագարակի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի սահմաններից դուրս հանդիպում է Նախիջևանում (մինչև Օրդուբադ քաղաք):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700--800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճաքարոտ լանջերին, ժայռերի միջև: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրադացիա՝ ճանապարհաշինության և օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրերի հայտնաբերման նպատակով, ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակի շրջակայքում:

358. *Acantholimon festucaceum* (Jaub. & Spach) Boiss.

Ոգնաթուփ շյուղախոտային  
Акантолимон овсяницевый



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում, ընդհուպ մինչև ամբողջական անհետացում՝ աճելավայրերի պայմանների փոփոխության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բարձրահասակ կիսազնդած քփիկ: Ծաղկակիրները բացահայտորեն տերևներից երկար: Հասկիկները բազմաթիվ, դասավորված ծուռումուռ, փուխր, բազմիցս ճյուղավորված ծաղկաբույլում; գլխավոր առանցքի վրա հասկիկները միմյանցից հեռացած, եզրային ճյուղիկների վրա և գագաթին՝ համարյա խմբված: Բաժակի ետծալը 8 մմ տրամագծով, անորոշ 5- կամ 10- բլթակներով, սպիտակ; ջղերը սևավուն:

**Տարածում.** Տարածված է Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Նյուվադի գյուղի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի սահմաններից դուրս աճում է Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. մոտ 500 մ բարձրության վրա. չոր քարքարոտ լանջերին, ֆրիգանանման բուսականության կազմում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճանապարհաշինության արդյունքում:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում, ԲՀՊՏ-ի ստեղծում Նյուվադի գյուղի շրջակայքում:

**Росaceae – Հացազգիներ - Злаки**  
**359. Aegilops crassa Boiss.**

**Այծակն հաստ**  
**Эгилопс толстый**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ ոչ մեծ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը ավելի փոքր քան 10 քառ. կմ և գտնվում է շինարարության համար ինտենսիվ յուրացման գոտում: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա ուղիղ կանգնած խոտաբույս 30-40 սմ բարձր.: Հասկերը խիտ թավոտ, 5-10 սմ երկ., 6-9 պտղակալող հասկիկներով: Հասկիկները 4-7 ծաղիկներով, 7-10 մմ երկ.: Ծաղկային թեփերը 7-10 մմ երկ., մինչև 8սմ երկ. քիստով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Հրազդան գետի կիրճ Երևանի շրջակայքում). AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է Հարավ-Արևմտյան և Միջին Ասիայում, Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 900-1100 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին, գետերի հղկված գլաքարերի, քարաթափվածքների վրա: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին

**Մահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրի կորուստ/դեգրադացիա, հիմնականում, կապված շինարարության, ռեկրեացիոն տրոբման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

360. *Aeluropus repens* (Desf.) Parl.

Որդանխոտ սողացող  
Прибрежница ползучая



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ փոքրիկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը ավելի քիչ է քան 10 քառ. կմ և գտնվում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս, շատ ճյուղավորված, գետնատարած և հանգույցներում արմատակալվող ընձյուղներով: Յողունները վեր բարձրացող, մինչև 30 սմ բարձր., շատ խիտ երկարավուն ծաղկաբույլերով 5-16 մմ երկ., 4-9 մմ լայն.: Հասկիկները 4-5 ծաղիկներով, սպիտակ խավոտ: Տերևապատյանները և տերևաթիթեղները խիտ խավամագոտ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմաշի և Երասխի շրջակայք): AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է Ադրբեջանում, Սիջերկրածովյան ավազանի երկրներում, Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-800 մ բարձրությունների վրա. աղակալված հողերի վրա, աղուտներում: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին, պտղակալում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ՝ ճեղքադրացիա՝ կապված մելիորացիայի, գյուղատնտեսական հանդակների և ձկնաբուծական արհեստական լճակների ընդարձակման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է ուշադրություն տեսակի միակ պոպուլյացիայի հանդեպ, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

361. *Aira elegantissima* Schur

Գնկոր նրբագեղ  
Аира изящнейшая



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու ոչ մեծ պոպուլյացիաներ հանրապետության տարբեր ծայրերում՝ հյուսիսում և հարավում, թեև ընդհանուր առմամբ շատ լայն տարածված տեսակ է: Լոկալիտետների միջև տարածությունը 285 կմ է. ընդ որում, տարածման և բնակության շրջանները՝ քիչ քան 10 քառ. կմ: Քանի որ տեսակի տարածման հիմնական մասը գտնվում է Հայաստանից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազում է մինչև EN: Հայաստանում տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս, բարակ հարթ մինչև 40 սմ բարձր. ցողուններով: Տերևապատյանները անհարթ, համարյա մինչև հիմքը ճեղքված: Ծաղկաբույլը՝ հուրանը 3-10 սմ երկ., փռված ճյուղիկներով: Հասկիկները 2 ծաղիկներով: Ստորին ծաղկային թեփը 1,5 մմ երկ., գորշավուն, ծնկաձև քիստով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Բագրատաշենի շրջակայք) և Մեղրու (Ագարակի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի տեսակը աճում է Անդրկովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիսային Իրանում, Միջին Ասիայում: Ներմուծված է Հյուսիսային Ամերիկա:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 400-1000մ բարձրությունների վրա. ավազոտ տեղերում, քարքարոտ լանջերին, շիբլակում և նոսրանտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և լեռնամետալուրգիական արդյունաբերության գործունեության ինտեսիվացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է մեծ ուշադրության արժանացնել տեսակի միակ պոպուլյացիան, պետք է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ագարակ բանավանի (Մեղրու շրջան) շրջակայքում նոր ԲՀՊՏ-ի ստեղծումը:

362. *Amblyopyrum muticum* (Boiss.) Eig

Բթաթնփուկ անքիստ  
Тупочешуйник безостый



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ ոչ մեծ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանները՝ քիչ քան 10 քառ. կմ: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա կարգավիճակով:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միմայա ուղիղ կանգնած խոտաբույս՝ մինչև 90 սմ բարձր.: Յոդունները մերկ, հարթ: Տերևապատյանները համարյա մինչև հիմքը ճեղքված: Ընդհանուր ծաղկաբույլը՝ նեղ-գծային հասկերը 20-30 սմ երկ., 3-4 մմ լայն., կազմված 10-20 հասկիկներից: Հասկիկի առանցքը չի բաժանվում առանձին մասերի: Հասկիկները 5-9 ծաղիկներով, 8-15 մմ երկ.: Հասկիկային և ծաղկային թփերը անքիստ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (վայրի ցորենների աճելավայրեր Ողջաբերդ գյուղի շրջակայքում). AOO՝ 8 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1. Տեսակը բացի Հայաստանից աճում է նաև Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1300-1400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ և կավային լանջերին, տափաստանային բուսականության մեջ: Ծաղկում է հունիսին, պտղակալում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիան պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցում:

Անհրաժեշտ է տեսակի միակ պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



363. **Bromopsis gabrielianae Ogan.**  
**Բրոմոպսիս Գաբրիելյանի**  
**Кострец Габриэлян**



**Կասեզորրիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանները՝ քիչ քան 10 քառ. կմ: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված կլիմայի փոփոխության պատճառով առաջացած աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս կարճ փայտացող մուգ-դարչնագույն կոճղարմատով: Յողունները ուղիղ կանգնած, 20-60 սմ բարձր., մերկ, թխակապույտ, հիմքում փաթափված մահացած տերևապատյանների ճեղքված մնացորդներով: Ծաղկաբույրը ողկույզանման, սեղմված, սակավահասկիկ, 3-10 սմ երկ.: Ստորին ծաղկային թեփերը բարակ քիստով 2-5 մմ երկ.:

**Տարածում.** Հանդիպում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (լեռնագագաթ Կապուտջուղ): AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում ծ. մ. 3300-3500 բարձրությունների վրա. քարաթափվածքների, քարացրոնների վրա, ժայռոտ տեղերում: Ծաղկում է հուլիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Տարածման և բնակության շրջանների սահմանափակություն, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է տեսակի միակ պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

364. **Bromopsis zangezura Ogan.**  
**Բրոմոպսիս Չանգեզուրի**  
**Кострец зангезурский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանները՝ 500 քառ. կմ-ից փոքր: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված կլիմայի փոփոխության և աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա փուխը ճիւղ առաջացնող Խոտաբույս: Յողունը ուղիղ կանգնած, 60-100 սմ բարձր., հիմքի մոտ շրջապատված մահացած տերևների արտաքինից թույլ ճեղքված դարչնագույն, ներսում ամբողջական ծիրանեգույն-մանուշակագույն տերևապատյաններով: Ծաղկաբույլը՝ հուրան, սակավահասկիկ, թույլ փռված, 8-15 սմ երկ.: Ստորին ծաղկային թեփերը բարակ մանուշակագույն քիստով՝ 7-12 մմ երկ:

**Տարածում.** Հանդիպում է Չանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում (Բարգուշատի, Չանգեզուրի և Մեղրու լեռնաշղթաներ): EOO 420 քառ. կմ է, AOO՝ 44 քառ. կմ: Լոկալիտետները՝ 6: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում՝ Չանգեզուրի լեռնաշղթայի վրա:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտուց սկսած մինչև արևալայն գոտի ծ. մ. 1500-3200 մ բարձրությունների վրա. հիմնականում ենթալպյան գոտու մարգագետիններում, քարաթափվածքներում, խճաքարոտ լանջերին և տափաստանում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

365. *Elymus transhyrcanus* (Nevski) Tzvelev  
**Տփիկ անդրկասպիական**  
**Колосняк закаспийский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված տնտեսական գործունեության ինտենսիվացման պատճառով առաջացող բնակության պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խիտ ճիւղ առաջացնող խոտաբույս: Յոդուն ուղիղ կանգնած, 40-100 սմ բարձր.: Հասկերը 7-15 սմ երկ., փուխը, կանաչ, ուղիղ: Ստորին ծաղկային թևերը նշտարած, 8-10 սմ երկ., մերկ, կարճ, խորդուբորդ քիստերով:

**Տարածում.** Հանդիպում է Չանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում (Չանգեզուրի լեռնաշղթա). EOO 140 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Ադրբեջանում, Արևելյան Անատոլիայում, Իրանում, Միջին և Կենտրոնական Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 900-1800 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին, տափաստաններում և կաղնու նոսրանտառում: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ռեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, լեռնա-արդյունահանող գործունեության և արածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

366. *Enneapogon persicus* Boiss.

Իննաքիստ պարսկական  
 Девятиостник персидский



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Քանի որ տեսակի տարածման հիմնական շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազել է մինչև VU. Հայաստանում տեսակին սպառնում է անհետացում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խիտ ճիւղ առաջացնող խոտաբույս: Յողունը ուղիղ կանգնած, 15-40 սմ բարձր: Ծաղկաբույլը խիտ հասկանման հուրան 4-9 սմ երկար., 1-3 սմ լայն.: Հասկիկները 8-14 մմ երկ., 3-6 ծաղիկներով: Ստորին ծաղկային թեփերը 8-9 կորացած, փետրածև արծաթավուն մազոտ քիստերով 10-13 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Արաքս գետի հովիտ): EOO 70 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4. Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Ադրբեջանում, Իսպանիայում, Հյուսիսային Աֆրիկայում, Իրաքում, Իրանում, Միջին Ասիայում, Աֆղանստանում և Պակիստանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 490-900 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին ժայռերի միջև՝ շիբլյակում և ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Ագարակ բանավանի (Մեղրու շրջան) շրջակայքում նոր ԲՀՊՏ-ի ստեղծում, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

367. *Erianthus ravennae* (L.) P.Beauv.

**Գեղմնախոտ ռավենյան**  
**Шерстоцвет равенский**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU.

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված է 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս՝ մեծ և հզոր ճիւղով: Ցողունները ուղիղ կանգնած, մինչև 2,5-3 մ բարձրության: Տերևաթիթեղները նեղ, մինչև 140 սմ երկ.: Ծաղկաբույլը հուրան, խիտ, մեծ, 20-70 սմ երկար., 6-10 մմ լայն.: Հասկիկային թեփերը ջղերի երկարությամբ և վերին մասում ծիրանեզույն,: Ստորին ծաղկային թեփերը թաղանթային, սուր, քիստով:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Արաքս գետի հովիտ): EOO 140 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4. Բացի Հայաստանից աճում է Նախակովկասում, Անդրկովկասում, Հարավային Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիսային Աֆրիկայում, Հարավ-Արևմտյան, Կենտրոնական և Միջին Ասիայում, Հյուսիսային Հնդկաստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 400-800 մ բարձրությունների վրա. գետերի ավազոտ ափերի երկարությամբ, տուգային անտառներում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Ազարակ բանավանի (Մեղրու շրջան) շրջակայքում նոր ԲՀՊՏ-ի ստեղծում, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

368. *Festuca drymeja* Mert. et W.D.J.Koch  
 Շյուղախոտ անտառային  
 Овсяница лесная



**Կատեգորիա.** VU B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է 4 պոպուլյացիաներ Հայաստանի հյուսիսում և հարավում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված անտառտնտեսական գործունեության պատճառով առաջացող աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս երկար սողացող կոճղարմատով: Յոդունները ուղիղ կանգնած 50-150 սմ բարձր.: Տերևապատյանները առանց ականջուկների, թիթղները հարթ, 5-15 մմ լայն: Ծաղկաբույրը փռված հուրան: Ստորին ծաղկային թելերը վերին մասում ողնուցավոր, անքիստ:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի (Նոյեմբերյան, Շամշադին, Մարգահովիտ) և Ջանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 8200 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ: Լոկալիտետները՝ 5. Հայաստանից բացի աճում է Կովկասում, Եվրոպայում, Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտուց մինչև վերին լեռնային գոտու ծ. մ. 800-2200 մ բարձրությունների վրա. անտառներում, ավելի հաճախ հաճարի անտառում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղակալում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառային էկոհամակարգերի խախտումների հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Մեկ պոպուլյացիա պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

369. **Phalaris paradoxa L.**  
**Մերինոսախոտ տարորինակ**  
**Канареечник парадоксальный**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման շրջանի մակերեսը 100 քառ. կմ-ից փոքր է: Հայաստանում տեսակին սպառնում է անհետացում, տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված աճելավայրի պայմանների փոփոխության հետ: Բանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս: Ցողունները հիմքում փնջաձև ճյուղավորված, 10-50 սմ բարձրությամբ: Վերին տերևի տերևապատյանը փքված: Ծաղկաբույլը խիտ, գուրգանման, հիմքի մոտ խիստ նեղացած հուրան, 2-7 սմ երկ. և 1-2 սմ լայն.: Ծաղկային թեփերը փայլուն, 2,5-3,5 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ողջաբերդ գյուղի շրջակայք): AOO 12 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Արևելյան Կովկասում և Անդրկովկասում, Հարավային Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Իրաքում, Իրանում, Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1200-1600 մ բարձրությունների վրա, տափաստաններում, երրորդական դարաշրջանի կարմիր կավերի վրա, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է ապրիլ-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, արածեցման, կլիմայի գլոբալ փոփոխության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցում:

Անհրաժեշտ է միակ պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:





371. *Puccinellia grossheimiana* V.I.Krecz.  
**Անողնուցուկ Գրոսհեյմի**  
**Бескильница Гроссгейма**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Վտանգված տեսակ: Համարվում էր անհետացած Գիլլի լճի չորացումից հետո: Ավելի ուշ հայտնաբերվել են նոր պոպուլյացիաներ Սևանա լճի ավազանում և Արարատյան հարթավայրում: Ներկայումս տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա ճիւղ առաջացնող խոտաբույս, ուղիղ 30-60 սմ բարձրությամբ, սովորաբար մանուշակագույն ցողուններով: Տերևաթիթեղները խոզանածև ոլորված: Ընդհանուր ծաղկաբույլը շատ փուխր հուրան, մագանման ոլորված ճյուղիկներով: Ստորին ծաղկային թեփերը 2,5-3,5 մմ երկարության, սրացած:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Սևանի (Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի ափեր) և Երևանի (Արարատ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3850 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ: Լոկալիտետները՝ 5. Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Կենտրոնական և Արևելյան Անատոլիայում և Արևմտյան Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտուց մինչև վերին լեռնային գոտու ծ. մ. 700—2100 մ բարձրությունների վրա. լճերի և գետերի ափերին, հղկված գլաբարների և մերկացած գրունտների վրա: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և մեխորացիայի հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիաների մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

372. **Rhizocephalus orientalis Boiss.**  
**Արմատագլխիկ արևելյան**  
**Корнеголовник восточный**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Խոցելի տեսակ: Հայտնի է միայն Երևանի շրջակայքից և Արարատյան հարթավայրից: Ներկայումս տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հողերի յուրացման հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Քանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա::

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Շատ փոքրիկ, մանր խիտ ճիւղ առաջացնող միամյա խոտաբույս 1-8 սմ բարձր.: Տերևաթիթեղները մինչև 6 սմ երկ., 1-4 մմ լայն.: Ծաղկաբույլերը գլխիկանման կամ գլանաձև 0.5-2սմ երկ.: Հասկիկները 3-6 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երևանի շրջակայք, Գոռավան և Ուրծի լեռնաշթախի նախալեռնային հատված): EOO 230 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Սիջերկրածովյան ավազանի արևելյան հատվածում, Հարավ-Արևմտյան և Սիջին Ասիայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտու ծ. մ. 800—1300 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ, գիպսակիր կամ կավային լանջերին, երրորդական դարաշրջանի կարմիր կավերի վրա, Ֆրիգանանման, անապատային, կիսաանապատային և տափաստանային բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, մեխորացիայի և ինֆրակարուցվածքի զարգացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրոսվի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

373. *Sclerochloa woronowii* (Hack.) Tzvelev ex Bor  
**Վարձրախոտ Վորոնովի**  
**Жесткоколосница Воронова**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են ընդամենը երեք պոպուլացիաներ հանրապետության հարավում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության և հողերի յուրացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա ճիւղ չառաչացնող խոտաբույս 6-20 սմ բարձր: Տերևաթիթեղները գծային-բզաձև, 0,5-1 մմ լայն.: Ծաղկաբույլերը միակողմանի, հասկանման հուրաններ, 4-10 սմ երկ. և 1-1,5 սմ լայն.: Հասկիկները խիստ ճյուղավորված, 4-6 ծաղիկներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Ջանգեզուրի (Միսիան, Գորիս) և Մեղրու (Ագարակ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 160 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի, տեսակը հանդիպում է Ղարաբաղում, Նախիջևանում, Իրաքում, Աֆղանստանում և Միջին Ասիայում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական անձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 800—1700 բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կավային, աղակալված հողերի, հղկված գլաքարերի, գետամերձ ավազների վրա: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և լեռնա-արդյունահանող արդյունաբերության ինտենսիվացման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Ագարակ բանավանի (Մեղրու շրջան) շրջակայքում նոր ԲՀՊՏ-ի ստեղծում, պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:

374. *Triticum araraticum* Jakubz.

**Յորեն արարատյան  
Пшеница араратская**



**Կատեգորիա.** VU\* B 1 ab (iii) + 2 ab (iii)

Խոցելի տեսակ: Հանդիսանում է ցորենի կուլտուրական սորտերի մոտիկ ազգակիցը: Հանրապետությունում հայտնի է մեկ պոպուլյացիա՝ կազմված երեք լոկալիտետներից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Քանի որ տեսակի տարածման շրջանի զգալի մասը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև VU: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ինտեսիվացման պատճառով, աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա մոմային փառով ծածկված խոտաբույս ուղիղ կանգնած ցողունով 70-110 սմ բարձր.: Հասկերը երկշարք, համեմատաբար լայն, 6-13 մմ լայն.: Հասկերի առանցքը հեշտությամբ բաժանվում է մասերի: Հասկիկները 2 հատիկով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Ողջաբերդ և Վեդի գյուղերի շրջակայք) և Դարեղեգիսի (Արենի, Արփի և Աղավնաձոր գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 820 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Ադրբեջանում, Նախիջևանում, Անատոլիայում, Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1200-1600 մ բարձրությունների վրա, տափաստաններում, չոր քարքարոտ լանջերին, ցանքերում, դաշտերի սահմանաչերտերում, ոռոգող ջրանցքների երկարությամբ: Ծաղկում է մայիս ամսին, պտղակալում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, մելիորացիայի, կլիմայի գործալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

375. *Triticum urartu* Tumanian ex Gandilyan

**Ֆորեն սրարտու**  
**Пшеница урарту**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հանդիսանում է ցորենի կուլտուրական սորտերի մոտիկ ազգակիցը: Հանրապետությունում հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ինտեսիվացման պատճառով աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս փռված ցողունով 40-100 սմ երկ: Հասկիկները 5-11 սմ երկ.:

Հասկերի առանցքը մասերի բաժանվող: Հասկիկները մինչև 30, մեկ կարմրավուն հատիկով:

Հասկիկում երկու ներքևի ծաղիկների ստորին ծաղկային թեփերը քիստերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ռոջաբերդ գյուղի շրջակայք, «Էրեբունի» պետական արգելոց): AOO 12 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում, Սիրիայում և Լիբանանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1200-1600 մ բարձրությունների վրա. տափաստաններում, կավային և քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, մելիորացիայի և կլիմայի փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Polygalaceae – Կաթնախտազգիներ - Истодовые**

**376. Polygala urartu Tamamsch.**

**Կաթնախտ ուրարտական**

**Истод урартский**



**Կասեզորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է երկու ֆլորստիկական շրջաններից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ բազմաթիվ ուղիղ խիտ տերևակալած ցողուններով, 20-25 սմ բարձր.: Տերևները նստադիր., ստորինները՝ կլորավուն, միջինները՝ ռոմբաձև, երբեմն զագաթում զոգավոր: Ողկույզը խիտ, երկար, ծաղիկները վառ-կապույտ: Պտուղը տափաքացրած տուփիկ

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Երևանի (Գառնու շրջակայք) և Ապարանի (Արախլեռ, Մարմարիկ գետի հովիտ) ֆլորստիկական շրջաններում: EOO 360 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1700 մ բարձրությունների վրա. խոտածածկ լանջերին, լուսավոր անտառներում, կաղնու հատված անտառներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ և նոր պոպուլյացիաների որոնում:

**Polygonaceae – Մատիտեղազգիներ - Гречишные**

**377. Calligonum polygonoides L.**

**Գեղածնկիկ մատիտեղանման**

**Джужгун горецевидный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ ավազների արտահանման, արածեցման և գյուղատնտեսական հողերի ընդարձակման հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Թուփ մինչև 1,5 մ բարձր., չոված-ճյուղավորված, հատվածավոր ճյուղերով և ռեդուկցված մանր տերևներով: Ծաղկապատը պարզ: Պտուղը խիտ ծածկված թևեր առաջացնող ճյուղավորված խոզաններով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Վեդու շրջակայք): AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում, Անատոլիայում, Իրաքում, Իրանում, Թուրքմենիայում և Պակիստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 850-950 մ բարձրությունների վրա. ավազային անապատում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ավազի անօրինական արտահանման, արածեցման և գյուղատնտեսական հողերի ընդարձակման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

378. *Rheum ribes* L.

**Խանձիլ հաղարջի**  
**Ревень смородинный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանում գտնվում է ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Հայտնի են 2 պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ներքին գործոնների և աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս: Յոդունները առանց տերևների, հաստ, 50—100 սմ բարձր.: Արմատներն տերևները կոթունավոր, կաշեման, սրտաձև-կլոր կամ կլորավուն, մինչև 50 սմ տրամագծով: Ծաղկաբույլը կիսագնդաձև բազմաձաղիկ հուրան: Ծաղկապատի թերթերը 6, պսակաթերթանման:

**Տարածում.** Հայաստանում աճում է Շիրակի (Արագած գյուղի շրջակայք) և Երևանի (Սուրենավան գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 120 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում, Իրանում, Աֆղանստանում և Պակիստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ տեղերում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին: Ոտելի և կերային բույս է:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:




**Potamogetonaceae – Շերեփուկախոտազգիներ - Рдестовые**

**379. Groenlandia densa (L.) Fourr.**

**Գրենլանդիա խիտ**

**Гренландия густая**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն Սևանա լճի ավազանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված հազվագյուտության, տնտեսական գործունեության պատճառով ջրերի աղտոտվածության, կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվոնցիաների հավելվածներում բացակայում է:

**Նկարագրություն.** Բազմամյա ջրային բույս՝ մինչև 40 սմ երկ., ճյուղավորված ցողուններով և սողացող արմատներով: Տերևները թափանցիկ, մանր, 1 – 2.5 սմ երկ., 0.3 – 0.8(1.5) սմ լայն., եռաջիղ, հարթ կամ թույլ ալիքավոր եզրերով: Ծաղկաբույլը հասկանման, 1.5 – 5 սմ երկ., մանրածաղիկ, 0.5 – 1(1.5) սմ երկ. կոթունի վրա: Պտուղները 2.5 – 3 սմ երկ., կլորավուն-երիկամաձև, թեթևակի տափակած, մեջքին ողնուցով, կորացած կարճ՝ 0.2 – 0.5 մմ երկ. կտուցով: **Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ Սևանա լճի ավազանում (Սևան և Լիճք լճեր, Արգիճի գետի ավազան, Ծովակ): EOO՝ 225 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, Լռկալիտետներ՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևմտյան Կովկասը, Հարավային Անդրկովկասը, Արևմտյան և Կենտրոնական Եվրոպան, Միջերկրածովյան ավազանը, Անատոլիան և Հյուսիս-Արևմտյան Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտում ծ. մ. 2000-2400 մ բարձրությունների վրա. լճերի և դանդաղահոս գետերի քաղցրահամ ջրերում.: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Տեսակի հազվագյուտություն, ինչպես նաև գյուղատնտեսության և տնտեսական գործունեության պատճառով ջրերի աղտոտվածություն, կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Տեսակի աճելավայրերը պահպանվում են «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Primulaceae - Գնարրուկազգիներ - Первоцветные**

**380. Asterolinon linum-stellatum (L.) Duby**

**Աստերոլինում աստղափձև**

**Астеролину́м звездчатый**



**Կասեգորիա.** CR B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջաններով: Տեսակին սպառնում է աճելավայրերի պայմանների փոփոխություն՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և ենթակառուցվածքի զարգացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 1-5(10) սմ բարձր.: Տերևները երկարավուն-ձվաձև, հակադիր դասավորված: Ծաղիկները տերևանոթներում: Ծաղկակոթերը մազոտ, պտղի ժամանակ աղեղնաձև կորացած: Բաժակի մասերը աստղաձև չլված: Պսակը սպիտակ-դեղնավուն:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է Մեղրու ֆլորիստիկական շրջանից (Ալդարա): AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի հանդիպում է Արևելյան Անդրկովկասում, Գրիմում, Միջերկրածովյան ավազանի երկրներում և Հարավ-Արևմտյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնալիս գոտում, ծ. մ. 900-1100 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին՝ ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ ապրիլ-մայիսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճանապարհների շինության և գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Ազարակ ավանի մոտ:

381. *Cyclamen vernum* Sweet

Արջտակ գարնանային

Дряква весенняя



**Վատեզորիա.** VU\* B 1 ab (ii,iii) + 2 ab(ii,iii)

Խոցելի տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է չափից ավելի հավաքը՝ որպես գեղազարդային տեսակ, ճանապարհաշինությունը, անտառների հատումը: Սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU, քանի որ հայկական պոպուլյացիան սահմանակից է վրացականին:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Վերջին տարիներին կրկին հայտնաբերվել է և պոպուլյացիայի վիճակը համեմատաբար լավ է:

*Cyclamen* ցեղը ամբողջությամբ ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում:

Բեռնի կոնվենցիաների հավելվածում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա պալարավոր խոտաբույս 5-10 սմ բարձր.: Պալարները 3-5, երբեմն մինչև 10 սմ տրամագծով: Տերևները լայն ձվաձև, վերևից սպիտակավուն-արծաթագույն խալերով, տակից բոտրագույն-կարմիր: Պսակի մասերը օվալ 9-12 մմ երկ., մեջտեղից վերև ամենամեծ լայնությամբ, մուգ-կարմիր-մանուշակագույն, բաց-մանուշակագույն-վարդագույն, հազվադեպ սպիտակ, հիմքի մոտ մուգ մանուշակագույն խալով և երկու սպիտակ խալիկներով՝ ետծալի վրա: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Աչաջուր, Գետահովիտ, Կողբ): EOO 460 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի հանդիպում է Մեծ Կովկասում, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1200 մ բարձրությունների վրա. անտառներում, անտառի եզրերին, բացատներում: Ծաղկում է հունվար-մարտ ամիսներին, պտղաբերում՝ փետրվար-մարտին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական աշխատանքների, հավաք՝ որպես գեղազարդային բույս:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորիգ:

382. *Primula amoena* M. Bieb.

Գնարբուկ սքանչելի  
Первоцвет прелестный



**Կատեգորիա.** VU B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Խոցելի տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 10-30 սմ բարձր.: Տերևները վերևից մերկ, տակից թավոտ, հակաձվածև կամ երկարավուն, սեպածր հիմքով: Ծաղկաբույլը հովանոցանման, երկար ծաղկասլաքով: Պսակը խոշոր, վարդագույն-ծիրանի: Բարձրարժեք գեղագարդային բույս:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Լոռու (Պրիվոլնոյե և Գերգեր գյուղերի շրջակայք), Իջևանի (Լավար լեռնագագաթ, Սրխուզի և Փամբակի լեռնաշղթաներ) և Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 8730 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 6: Հայաստանից բացի աճում է Մեծ Կովկասում, Արևմտյան, Կենտրոնական և Հարավ-արևմտյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 1900-3200 մ բարձրությունների վրա.

մարգագետիններում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ինտենսիվ արածեցման հետևանքով, կլիմայի գլոբալ փոփոխություն: Ինտենսիվ հավաք որպես գեղագարդային բույս:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիաներից մեկը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:







**Pyrolaceae – Սպնդուկազգիներ - Грушанковые**

**386. Orthilia secunda (L.) House**

**Օրտիլիա փոքր**

**Ортилия малая**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հանրապետությունում հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանները 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս 10-15 սմ բարձր.: Տերևները երկարավուն, սուր, մինչև 1 սմ երկարության կոթուններով, խմբված ցողունների հիմքում: Ծաղիկները ակտինոմորֆ, ոչ մեծ, հավաքված միակողմանի ողկույզում: Պսակաթերթերը կանաչա-սպիտակավուն, համարյա գնդաձև:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում, Մարգահովիտ գյուղի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է համարյա ամբողջ Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում, Սիբիրում, Կենտրոնական և Արևելյան Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1400-1800 մ բարձրությունների վրա, անտառներում, խոնավ մարգագետիններում և ճահճացած տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում է՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական աշխատանքների և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Ranunculaceae - Գորտնուկազգիներ - Лютиковые**

**387. Adonis eriocalycina Boiss.**

**Վուժկոտրուկ քրդաձաղկարաժակային**

**Горицвет шерстисточашечный**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի պոպուլյացիան գտնվում է ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հողերի յուրացման պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 10-15 սմ բարձր.: Տերևները 2-3- փետրածև հատված, գծային մասերով: Ծաղիկները միայնակ, ակտինոմորֆ, 20-35 մմ տրամագծով: Բաժակաթերթերը անգույն, երբեմն ծիրանեգույն, արտաքինից թավոտ: Պսակաթերթերը վառ-կարմիր:

**Տարածում.** Հայաստանում աճում է Երևանի (Կապուտան, Երասխ և Նարեկ գյուղերի շրջակայք) և Դարեղեգիսի (Խաչիկ, Ամաղու) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 1540 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտները՝ 4: Հայաստանից բացի տեսակը տարածված է Արևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում, Սիրիական անապատում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1700 մ բարձրությունների վրա. քարքարոտ, խճաքարոտ լանջերին, կիսաանապատում և լեռնային տափաստանում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

388. *Adonis wolgensis* Steven

Կուժկոտրուկ Վոլգայի  
Горицвет волжский



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 15—30 (50) սմ բարձր.: Տերևները կրկնակի մատնաձև բաժանված, երկար նշտարաձև-գծային մասերով: Ծաղիկները միայնակ, ակտինոմորֆ: Պսակաթերթերը դեղին, երկարավուն, 15-20 մմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում աճում է միայն Սևանի (Արտանիշի թերակղզի) և Ապարանի (Չարենցավանի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 2, որոնց միջև հեռավորությունը 60 կմ է: Հայաստանից բացի հանդիպում է Հյուսիս-արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Թալիշում, Կենտրոնական և Արևելյան (հարավ) Եվրոպայում, Արևմտյան Սիբիրում, Հյուսիս-արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1500-2300 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստանում, տրազականտնիկերում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին: Գեղատեսիլ բույս, արժանի է բազմացման այգեգործության համար:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Սևան» ազգային պարկի Արտանիշի արգելոցային զոնայում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ներառել կուլտուրայի մեջ:

389. *Anemone ranunculoides* L.

Վարդակակաչ գորտնուկային  
Ветреница лютичная



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է Հյուսիսային Հայաստանից՝ 3 պոպուլյացիաներից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ անտառների հատումների և ներքին գործոնների պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս 10-20 սմ բարձր.:

Ծաղիկների տակ գտնվող ծածկոցը կազմված է մատնաձև հատված ցողունային տերևներից (նման են արմատամերձ տերևներին, բայց ավելի կարճ կոթերով են):

Ծաղիկները դեղին: Գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում: EOO 980 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3. Հայաստանի սահմաններից դուրս տարածված է Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիսային Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-2000 մ բարձրությունների վրա. անտառներում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառների հատման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Իլիջան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

390. Clematis vitalba L.

Հոտոտ խաղողատերև

Ломонос виноградолистный



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է միայն 1 պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի շատ լայն ընդհանուր տարածումը, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Սողացող թուփ 2—5 մ երկ. ցողուններով: Տերևները երկար կոթուններով, փետրածև բաժանված, սրտածև հիմքով ձվածև սուր տերևիկների: Ծաղկաբույլը հուրանածև, բազմածաղիկ: Ծաղիկները ակտինոմորֆ: Ծաղկապատի տերևիկները դեղնավուն, 8-12 մմ երկ: Պտուղը բազմարևկույզիկ: Ընկույզիկները բարակ երկար աղվամագով ծածկված կտուցով:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանից (Նոյեմբերյան, Ջուջևան): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Կովկասում, Ատլանտյան Եվրոպայում, Սիբերկրածովյան ավազանի երկրներում, Գրինում, Հյուսիսային Ամատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրությունների վրա. անտառի եզրերին, թփերի մացառուտներում, ցանկապատների երկարությամբ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

391. **Delphinium foetidum Lomak.**

**Ոջլախոտ զառշահոտ**  
**Живокость вонючая**



**Կատեգորիա.** VU B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Արեալը մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս:

Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ներքին գործոնների և աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Անդուր հոտով բազմամյա խոտաբույս 15-50 սմ բարձր., խիտ ծածկված գեղձային մազիկներով: Տերևները երկար կոթուններով, կլորավուն ուրվագծով, եռաբաժան, կտրատված ռոմբաձև-կլորավուն մասերի: Ողկույզները սակավածաղիկ: Ծաղիկները զիգոմորֆ, խթանով: Ծաղկապատի մասերը մոտ 25 սմ երկ., կապույտ: .

**Տարածում.** Հայաստանում աճում է Արագածի (լեռնագագաթ Արագած) և Զանգեզուրի (լեռնագագաթներ Մեծ Իշխանասար, Կապուտջուղ, Փառական, Յաղու)

ֆլորիստիկական շրջաններում: EOO 6330 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Ղարաբաղում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2700-3600 մ բարձրությունների վրա. չինգիլների, քարաթափվածքների վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արագածի ալպյան» պետական արգելավայրի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

392. *Ranunculus cicutarius* Schlecht.

Գորտնուկ ցիկուտային  
Лютик цыкутовый



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի պոպուլյացիան գտնվում է ընդհանուր տարածման արևմտյան սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թավամազ բազմամյա բույս: Յողունը ճյուղավորված, 15—40 սմ բարձր.: Ստորին տերևները փետրաձև, 3-հատված սեգմենտներով, երկարավուն-գծային մասերով: Վերին տերևները եռակի կամ փետրաձև հատված: Ծաղիկները դեղին:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապան քաղաքի և Նեքին Հանդ, Ծավ գյուղերի շրջակայք): EOO 125 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Արևելյան Կովկասում, Արևելյան Անդրկովկասում, Գարաբաղում, Թալիշում, Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1300 մ բարձրությունների վրա. կաղնուբոխու անտառում, սոսու պուրակում, շիբլյակում, քարքարոտ լանջերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Համարյա ամբողջ պոպուլյացիան պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

393. **Ranunculus linqua L.**  
**Գորտնուկ երկարատերև**  
**Лютик длиннолистный**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս՝ սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 50—150 սմ բարձր.: Յողունային տերևները երկարավուն-նշտարածև, սրացած, մինչև 20 սմ երկ.: Ծաղիկները դեղին: պսակաթերթերը 15—18 սմ երկ.:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանից (Տաշիր քաղաքի, Սարատովկա, Նովոսելցովո, Կիզ-Կալա գյուղերի շրջակայք): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Կովկասում (ցրված), Եվրոպայում, Սիբիրում, Հյուսիսային Ամատոլիայում, Հյուսիսային Իրանում, Սիջին և Կենտրոնական Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1400-1500 մ բարձրությունների վրա.

ճահիճներում, լճերի ափերին: Ծաղկում է հունիսի ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ճահիճների չորացման և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

394. **Ranunculus villosus DC.**

**Գորտնուկ մազոտ**  
**Люттик мохнатый**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 30-80 սմ բարձր.՝ ծածկված երկար չոված մազիկների խավոտությամբ: Արմատամերձ տերևները կլորավուն 5-անկյուն, եռաբաժան, ոչ խոր հատված լայն ատամնա-սղոցաեզր սեգմենտների: Ծաղիկները դեղին:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ճակատեն գյուղի շրջակայք, լեռնագագաթ Խուստուփ): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Արևելյան Կովկասում, Ղարաբաղում, Թալիշում, Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1300 մ բարձրությունների վրա. կաղնուբոխու անտառներում և մարգագետինում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ մարդածին գործոնների և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:



395. *Thalictrum isopyroides* C. A. Mey.

Քնճճնճուկ իզոպիրոնման

Василистник изопириодный



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայաստանում գտնվում է ընդհանուր տարածման հյուսիսային սահմանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցված է մինչև VU: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 10—30 սմ բարձր.: Տերևները բազմակիփետրաձև, ձվաձև-նշտարաձև մասերով 2—3 (5) մմ երկ.: Ծաղկաբույլը հուրան, օվալաձև. փոքր, բազմաթիվ ծաղիկներով: Ծաղկումից հետո ծաղկակոթերը ոժեղ երկարացող, հորիզոնական հեռացած: Ծաղկապատը բաժականման, վաղ թափվող:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Երևանի (Երևան, Երանոսի և Երախի լեռնաշղթաներ, Ասնի գյուղ) և Դարեղեգիսի (Տիգրանաշեն և Չանգակատուն գյուղերի միջև, Խաչիկ, Գնիշիկ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 720 քառ. կմ է, AOO՝ 44 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Հարավարևմտյան, միջին և կենտրոնական Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1000-2200 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:


Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Resedaceae – Հափուկազգիներ - Резедовые**

**396. Reseda globulosa Fisch. & C.A.Mey.**

**Հափուկ գնդապտուղ**

**Резеда шарообразная**



**Կատեգորիա.** CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության ենթարկվող տարածքում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Երկամյա կամ միամյա բույս: Յողունները մերկ: Տերևները հնգաբլթակ: Բլթակները նեղ-թիաձև, փնջով հեռացող, տերևի վերին կեսում:

Ծաղկաբույլի ճյուղիկները դեպի վերև սեղմված: Բաժակաթերթերը գծային, պտղի ժամանակ պահպանվող և համարյա չմեծացող: Տուփիկը գնդաձև տափակացած, երկարությունից լայն:

**Տարածում.** Աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Ագարակ, Նյուվադի): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև տարածությունը 25 կմ է: Հայաստանից բացի հանդիպում է Նախակովկասում, Մեծ Կովկասյան լեռների վրա, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ֆրիգանանման համակեցություններում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հանքարդյունահանող արդյունաբերության, ճանապարհաշինության, գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Rosaceae - Վարդազգիներ - Розовцветные**  
**397. Amygdalus nairica Fed. et Takht.**

**Նշենի նաիրյան**  
**Миндаль наирийский**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)

Վտանգված տեսակ է: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտեսիվ տնտեսական գործունեության զոնայում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ոչ բարձր թուփ, 1-2 մ բարձր., փռված ճյուղավորված, շատ փշոտ ճյուղերով: Տերևները թույլ հաստակաշի, մերկ, երկարավուն-նշտարած, ամբողջաեզր կամ աղեղնաձև-տրոցաեզր, մանր 2-2.5(3)սմ երկ., 0.6-0.8 սմ լայն.: Կորգապտուղները ձվաձև-օվալ, բավշային, տափակած, կարճ սրածայրով: Կորիզի մակերեսը ցանցաձև-ակոսավոր կամ կնճռոտ:

**Տարածում.** Աճում է Չանգեզուրի (Ռոտտան գետի կիրճ) և Մեղրու (Արաքս գետի կիրճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 940 քառ. կմ է, AOO՝ 60 քառ. կմ, լոկալիտետները՝ 7: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, քարաթափվածքների վրա, ժայռոտ տեղերում, ֆրիգանանման բուսականության մեջ, արիդ նոսրանտառում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման և լեռնա-արդյունահանող արդյունաբերության գործունեության ինտեսիվացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

398. *Crataegus microphylla* K.Koch  
 Սզնի, Ալոճ փոքրատերև  
 Боярышник мелколистный



**Կատեգորիա.** EN B1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ՝ 2-2.5 մ բարձր., մոխրագույն կեղևով, փոքրաթիվ բարակ փշերով: Տերևները 1-3 սմ երկ., 1-1.8 սմ լայն., սկզբում երկու կողմից թափոտ, հետագայում համարյա մերկ, (3)5-7 բաժանված, մեծամասամբ երկարավուն-ձվաձև, հազվադեպ օվալ ատամնաձև կամ աղեղնաձև եզրերով: Ծաղկաբույր 4-10 ծաղիկներով: Պտուղները 9-12 մմ երկ., երկարավուն-էլիպսաձևից մինչև տանձանման:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Կիրանց, Ոսկեպար, Շամլուղ, Ախտալա) և Զանգեզուրի (Ներքին Հանդ, Վերին Խոտանան) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3500 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Արևմտյան Նախակովկասում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Թալիշում, Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. անտառի եզրերին: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստը երազագիս՝ անտառտնտեսական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է

«Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

399. *Crataegus pontica* K.Koch  
 Սզնի, Ալոճ պոնտական  
 Боярышник понтийский



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ է: Ամբողջ արեալի տարածքում հանդիպում է հազվադեպ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU, տեսակի լայն ընդհանուր արեալի պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ոչ բարձր ծառ կամ թուփ 3-6 մ բարձր.: Տերևները կաշենման, բացկանաչ, երկու կողմից փափուկ-մազոտ, պարզ, հակաձվածն կամ ռոմբաձև, խոր 5-7-բաժան, եռաբլթակ սեպաձև հիմքով.: Պտուղները դեղին, կլորավուն-օվալ կամ տանձաձև, թեթևակի կողերով, թույլ թավոտ, կորիզները 4-5.

**Տարածում.** Հանդիպում է Երևանի («Խոսրովի անտառ» պետական արգելոց, Ուրցածոր, Դագնա) և Դարեղեգիսի (գյուղ Արենի) ֆլորիստիկական շրջաններում: EOO 280 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Կենտրոնական և Հյուսիս-Արևմտյան Անատոլիայում, Իրաքում, Իրանում և Սիջին Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, կաղնու և գիհու նոսրանտառներում: Ծաղկում է մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հոկտեմբերին: Չորադիմացկուն գեղազարդային տեսակ է, լավ մեղրատու, ունի արժեքավոր բնափայտ՝ իրեր պատրաստելու համար:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական գործունեության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

400. *Crataegus szovitsii* Pojark.  
 Սզնի, Ալոն Շովիցի  
 Боярышник Шовица



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ կամ ոչ մեծ ծառ՝ 1-2 մ բարձր., գորշա-մոխրագույն կեղևով, փոքրաթիվ բարակ փշերով: Տերևները պինդ, թխակապույտ, առսեղմ թավոտ, կազմված 3-5 նեղ բլթակներից՝ լայն ձվաձև-ռոմբանման ուրվագծով: Ծաղկաբույլերը խիտ, 10-12 ծաղիկներով, սպիտակ-թաղիքավոր: Պտուղները համարյա գնդաձև, կողավոր, կարմրավուն, թեթևակի թավոտ, 3-4 կորիզներով:

**Տարածում.** Հանդիպում է Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում, Եղեգնաձորի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետները՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Ղարաբաղում, Անատոլիայում և Իրանում **Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1300 մ բարձրությունների վրա. անտառի եզրերին, թփուտներում: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է միակ աճելավայրը արժանացնել մեծ ուշադրության, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

401. *Crataegus tournefortii* Griseb.  
Ազնի, Այոճ Տուրնեֆորի  
Боярышник Турнефора



**Կատեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի լայն ընդհանուր արեալի պատճառով սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մի աստիճանով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ կամ ոչ մեծ ծառ՝ 2–2.5 մ բարձր.: Տերևները վերևից մուգ-կանաչ, ծածկված կարճ առսեղմ գանգուր մազիկներով, տակից՝ ավելի բաց գույնի, խիտ մոխրագույն թավոտությամբ; կոթերը խավամագոտ: Ծաղկաբույլը փոքրաթիվ ծաղիկներով: Պտուղները կարմիր-բալագույն:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Կոթի գյուղի շրջակայք) և Չանգեգուրի (Գորիսի և Աջաբաջ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3935 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Եվրոպայում, Դրիմում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1400 մ բարձրությունների վրա. կաղնու-բոխտու անտառների եզրերին, քարքարոտ լանջերին, թփուտներում: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:





403. *Crataegus zangezura* Pojark.

Սզնի, Ալոճ զանգեզուրյան  
Боярышник зангезурский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի են երկու պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ՝ մինչև 2 մ բարձր., բարակ, մերկ կամ թեթևակի մազոտ, գորշամոխրագույն ընձյուղներով: Տերևները մերկ, պտղաբերող ճյուղերի վրա երկարավուն-հակածված, նեղ-սեպածև հիմքով, 3-5 բլթակներով՝ սուր, վերևում խոշորաստամ: Ծաղկաբույլը փոքրաթիվ ծաղիկներով: Պտուղները մանր, 0.8-1 սմ երկ., կարճ-էլիպսաձև, սև-ծիրանեգույն, 1-3 կորիզներով:

**Տարածում.** Հանդիպում է Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, Կապանի և Գորիսի շրջակայք): EOO 320 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1800 մ բարձրությունների վրա. նոսրանտառում, շիբլյակում, կիրճերի լանջերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ են հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**404. Potentilla cryptophila Bornm.**  
**Մատուցի քարանձավային**  
**Лапчатка пещерная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ Հայաստանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէ:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում

**Նկարագրություն.** Բազմամյա մետաքսաման առնեղմ թավոտությամբ սպիտակավուն բույս մինչև 10 սմ բարձր., գլխավոր հաստ առանցքային արմատով: Արմատամերձ տերևները երկար կոթերով, փոքր, մատնաձև՝ կազմված 5 հաստավուն, հակաձվածև տերևիկներից; ցողունայինները՝ եռմասնյա: Ծաղկաբույլը նոսր, սակավածաղիկ: Ծաղիկները 3-5; պսակաթերթերը, ինչպես նաև բաժակաթերթերը 5-ական, սպիտակավուն, մուգ-ծիրանեգույն ջղերով: Պտուղը՝ բազմաընկույզիկ: Գեղազարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Գեղամի (լեռնագագաթ Սպիտակասար), Գարեղեգիսի (լեռնագագաթ Գոգի) և Ջանգեզուրի (Գարաբաս գյուղից վերև) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 2100 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Թալիշում և Իրանում (Էլբուրս): Ամենուրեք հազվագյուտ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2800-3400 մ բարձրությունների վրա. քարքարոտ խճաքարոտ գառիթափ լանջերին, քարաթափվածքների և հրաբխային ապառների վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ բնակության շրջան: Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա հատկապես կլիմայի փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Չի պահպանվում:

Անհրաժեշտ է նոր աճելավայրերի որոնում, հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, որպես գեղազարդային բույս աճեցնել բուսաբանական այգիներում, ներդնել ծաղկեգործության մեջ:

**405. Potentilla erecta (L.) Hampe**  
**Մատուցի ուղիղ**  
**Лапчатка прямостоячая**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի են երկու աճելավայրեր: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 10-30 սմ բարձր.: Յողունները նուրբ, հիմքից մեկական բարձրացող, վերևում՝ եղանաձև ճյուղավորված, մինչև գագաթ տերևակալած: Տերևները եռնասնյա, համարյա մերկ կամ ծածկված եզակի մազիկներով: Ծաղիկները վառ-դեղին, մեկական, 10-13 մմ տրամագծով, վերին տերևների անոթներից դուրս եկող, բարակ երկար ծաղկակոթերի վրա:

Բաժակաթերթերը և պսակաթերթերը 4-ական; առէջները բազմաթիվ: Ծաղկակալը կիսազնդաձև: Պտուղը կազմված բազմաթիվ ընկույզիկներից:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանում (Ձորագետի վերին հոսանք, Օրան-Լոռի Կլոր լիճ): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետը՝ 2, որոնց միջև հեռավորությունը 18 կմ է: Հայաստանից բացի աճում է Կովկասում, մասնավորապես Մեծ Կովկասի և Անդրկովկասի արևմտյան հատվածներում, հազվադեպ Դաղստանում, ինչպես նաև Եվրոպայում (բացի հարավային շրջաններից), Արևմտյան Սիբիրում և Հյուսիսային Ամերիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1500-1800 մ բարձրությունների վրա. խոնավացած տեղերում, լճերի ափերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամսին, պտղաբերում՝ հուլիս- օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ տնտեսական գործունեության ընդլայնման հետևանքով: Կլիմայի գլոբալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Չի պահպանվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Լոռու սարահարթի լճերի տարածքում:

**406. Potentilla porphyrantha Juz.**  
**Մատուցի ծիրանավոր**  
**Лапчатка порфи́ровая**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում են երկրաբանական գործոնները և կլիմայի գլոբալ փոփոխությունը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված է 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա մետաքսաման առսեղմ թավոտությամբ սպիտակավուն բույս 6-15 սմ բարձր., գլխավոր հաստ առանցքային արմատով: Արմատամերձ տերևները մատնածև՝ 5 հաստավուն, հակաձվածև, սեպածև հիմքով տերևիկներից; ցողունայինները՝ եռմասնյա: Ծաղկաբույլը նոսր, սակավածաղիկ: Ծաղիկները 5-15; պսակաթերթերը, ինչպես նաև բաժակաթերթերը 5-ական, վառ-ծիրանեգույն, լավ արտահայտված մուգ-գորշ ջղերով: Պտուղը՝ բազմարևկույզիկ: Գեղագարդային բույս է:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Գեղամի (լեռնագագաթներ Սևսար, Ագուսարկա) և Չանգեգորի (լեռնագագաթ Մեծ Իշխանասար) ֆլորիստիկական շրջաններում: AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 130 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում (Վայքի լեռնաշղթա՝ Կաչալ-դաղ, Քյուքի-դաղ, Այրի-դաղ): Արեալի բոլոր մասերում հազվադեպ է հանդիպում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 3300-3500 մ բարձրությունների վրա. քարքարոտ խճաքարոտ զառիթափ լանջերին, քարաթափվածքների վրա: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ բնակության շրջան: Աճելավայրերի կորուստ/դեգրադացիա հատկապես կլիմայի փոփոխության և երկրաբանական գործոնների հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Չի պահպանվում:

Անհրաժեշտ է նոր աճելավայրերի որոնում, հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, որպես գեղագարդային բույս աճեցնել բուսաբանական այգիներում, ներդնել ծաղկեգործության մեջ:

407. *Pyrus browiczii* Mulk.  
Տանձենի Բռովիչի  
Груша Бровича



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ծառ մինչև 15 մ բարձր., լայն բրգաձև սաղարթով, հաստ փշերով:

Տերևները էլիպսաձև, մեծ, 6-8 սմ երկ., 3-5 սմ լայն., շատ բարակ, մերկ, մանր անհավասար աղեղնա-ատամնավոր եզրերով; կոթունները մինչև 4 սմ երկ.: Պտուղները վաղ թափվող բաժակի մասերով, տանձաձև, հարթ, 3-4 սմ երկ., բարակ երկար պտղակոթերով մինչև 6 սմ երկ.:

**Տարածում.** Աճում է միայն Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Եղեգիս գետի կիրճ, Գերմոն և Վարդահովիտ գյուղերի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1700-2100 մ բարձրությունների վրա. լայնատերև անտառներում, անտառների և դաշտերի եզրերին, մարգագետիններում: Ծաղկում է սպրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն տեսակի նկատմամբ, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**408. Pyrus complexa Rubtzov.**  
**Տանձենի խառնված**  
**Груша смешанная**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ծառ մինչև 10 մ բարձր.՝ փշիկներով: Տերևները էլիպսաձև, 6,5–8 սմ երկ., 3,5–4 սմ լայն., վերևում կարճ սրացած, աղեղնա-սղոցաեզր երկու կողմից խիտ քաղիքե թավոտությամբ, սպիտակավուն, կոթերը՝ թավոտ: Պտուղները դեղնավուն, տափակացած-կլորավուն, մանր, 2–3 սմ տրամագծով, կոթերը բարակ, պտղին հավասար երկարությամբ:

**Տարածում.** Հանդիպում է Գեղամի (Միլի գետի կիրճ), Գարեղեգիսի (Խաչիկ, Եղեգիս գետի կիրճ) և Մեղրու (Գուղեմնիս, Վանք, Ջինդարա, Մուլք, Վահրավար)

ֆլորիստիկական շրջաններում: EOO 3240 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1200-2100 մ բարձրությունների վրա. լայնատերև անտառներում, անտառների եզրերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:







411. *Pyrus gergerana* Gladkova  
**Տանձենի Գերգերի**  
**Груша гергерская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մեծ փշոտ ծառ: Տերևները լայն-նշտարած, 7 սմ երկ., 2.5 սմ լայն., թեթևակի ասիմետրիկ, հիմքում նեղ-սեպածև, ամբողջաեզր կամ գագաթում թեթևակի սղոցաեզր, վերևից՝ մերկ, մուգ-կանաչ, փայլուն, տակից՝ անփայլ, երբեմն թույլ պատառոտված թավոտությամբ; կոթերը մերկ 2-3,5 սմ երկ.: Պտուղը մեծ, մինչև 3.5 սմ երկ., փնջերով, տանձածև:

**Տարածում.** Հանդիպում է Գարեղեգիսի (Հեր-Հեր, Ջերմուկ), Ջանգեզուրի (Սրաշեն) և Մեղրու (Տաշտուն) ֆլորիստիկական շրջաններում: EOO 1850 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1600-2200 մ բարձրությունների վրա. լայնատերև անտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Հեր-Հերի նոսրուտային» արգելավայրի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



413. *Pyrus hircana* Fed.  
**Տանձենի հիրկանյան**  
**Груша гирканская**



**Վառելիքային.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ծառ մինչև 25 մ բարձր., առանց փշերի: Տերևները ձվաձև, 5-8 սմ երկ., 3-5 սմ լայն., սուր մանրատամնավոր, վերևում՝ բթավուն կամ թեթևակի սրածագ, հիմքի մոտ՝ հատված կամ համարյա սրտաձև, տակից՝ բարակ-թաղիքավոր; կոթերը բարակ, երկար, թիթեղի երկարությանը հավասար: Պտուղները միայնակ կամ 2(3), կլոր-տափակացած, 2.5–3 սմ տրամագծով, բաժակի մասերը պտղի ժամանակ ուղիղ կանգնած, պսկանման, բարակ-թաղիքավոր; կոթերը կարճ:

**Տարածում.** Հանդիպում է Ջանգեզուրի (Վաչագան, Ծավ, Խուստուփ լեռնագագթի ստորոտ) և Մեղրու (Շվանիձոր) ֆլորիստիկական շրջաններում: EOO 200 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Թալիշում և Հյուսիսային Իրանում (Էլբուրս):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1200-2100 մ բարձրությունների վրա. անտառներում, անտառների եզրերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է

«Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

**414. Pyrus raddeana Woronow**  
**Տանձենի Ռադդեյի**  
**Груша Радде**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Չկա Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ անտառային էկոհամակարգերի վրա շարունակվող մարդածին ազդեցության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ծառ մոտ 5 մ բարձր., առանց փշերի: Տերևները երկարավուն-էլիպսաձև, 6-8 սմ երկ., 2-4 սմ լայն., ամենամեծ լայնությամբ մեջտեղում, երկու ծայրերում հավասարաչափ ձգված-նեղացող, սուր գագաթով, հավասարաչափ աղեղնա-սղոցավոր եզրով, ներքևից՝ խիտ թաղիքային թավոտությամբ; կոթերը թավոտ 3-4 սմ երկ.: Պտուղները մանր, 2 սմ տրամագծով, գնդաձև, կոթերը պտղից երկար:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Չանգեգուրի (Ներքին Հանդ) և Մեղրու (Վահրավար, Տաշտուն, Լիճքվազ, Լիճք) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 160 քառ. կմ, AOO 12 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է նաև Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1500-1800 մ բարձրությունների վրա. լայնատերև անտառներում, ավելի հաճախ անտառների եզրերին, երբեմն գյուղերի մոտ: Ծաղկում է սպրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է

«Շիկահող» պետական արգելոցում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

415. *Pyrus theodorovi* Mulk.  
**Տանձենի Ֆեդորովի**  
**Груша Федорова**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէ:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ծառ 5-7 մ բարձր., մանր հազվադեպ փշերով: Տերևները հակածված և կամ նեղ- էլիպսաձև, 3-5 (7) սմ երկ., 1.2-1.8 սմ լայն., ամբողջաեզր, հիմքում կլորացած կամ կարճ-լայն-սեպաձև, վերևում բթավուն շատ կարճ սրածայրով, երկու կողմից խիտ արծաթավուն-թաղիքավոր; կոթերը 1.5-2 սմ երկ.: Պտուղը միայնակ, գնդաձև, 2.5-3.0 սմ երկ., կոթերը 1 սմ երկ., բաժակաթերթերը պտղի ժամանակ լայն-եռանկյունաձև, հորիզոնական հեռացած:

**Տարածում.** Հանդիպում է Գեղամի (Գեղարդ) և Երևանի (Վեդի, Կոտուց սար) ֆլորիստիկական շրջաններում: EOO 290 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1400-1800 մ բարձրությունների վրա. արիդային նոսրանտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

416. *Pyrus voronovii* Rubtzov  
**Տանձենի Վորոնովի**  
**Груша Воронова**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,v) + 2 ab(ii,v)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Փշոտ ծառ 8-9 (15) մ բարձր., գնդաձև սաղարթով: Տերևները ռոմբաձև, 7–7.5 սմ երկ., 4–4.5 սմ բարձր., կաշեման, մերկ, մանր-աղեղնաեզր, երբեմն համարյա ամբողջաեզր, միանման նեղացած երկու ծայրերում, վերևից կտրուկ դուրս ցցված, սուր անկյան տակ հեռացող ջղերով: Պտուղները տափակացած-գնդաձև, 2.5 սմ երկ., 3 սմ լայն., կանաչ՝ կարմրաթուշ կոթերը 2 սմ երկ.:

**Տարածում.** Հայտնի է Չանգեգուրի (Գեղի գետի կիրճ, Աջաբաջ և Վաչագան գյուղեր) և Մեղրու (Արևիկ, Լիճք, Ջինդարա, Մուլք) ֆլորիստիկական շրջաններից: EOO 235 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1400-2000 մ բարձրությունների վրա. լայնատերև անտառների եզրերին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

417. **Rubus takhtadjanii Mulk.**  
**Մորենի, Մոշենի Թախտաջյանի**  
**Ежевика Тахтаджяна**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ: Տերևները բարդ, կազմված 5 տերևիկներից, վերևից մերկ, տակից կարճ-մոխրագույն-թավտոթյամբ, ջղերի երկարությամբ ծածկված փշերով, պտղաբերող ընձյուղների վրա եռմասնյա: Ծաղկաբույլը փոքրաթիվ ծաղիկներով, գազաթնային, ընդհատված, մինչև 3-4 սմ երկ., ծոցային՝ 1-3 ծաղկանի փոքրիկ ճյուղիկների վրա:

Պսակաթերթերը վարդագույն: Պտուղները գնդաձև, մինչև 1 սմ տրամագծով:

**Տարածում.** Հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ծավ և Սրաշեն գյուղերի շրջակայք): EOO 30 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա. լեռնային կիրճերի լանջերին, անտառների եզրերին, քարքարոտ հողերի վրա, թափվածքներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

418. **Rubus zangezurus Mulk.**  
**Մորենի, Մոշենի զանգեզուրի**  
**Ежевика зангезурская**



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii) + 2 ab(ii)

Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ: Արեալը խիստ մասնատված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Թուփ: Տերևները բարդ, կազմված 5 տերևիկներից, մոխրագույն-թավամագոտ, վերևից՝ առսեղմ, ոչ շատ մազիկներով: Ծաղկակիրները 50 սմ երկ., ակոսավոր-նիստավոր, ծաղկաբույլի մասում թեթևակի գալարած: Ծաղկաբույլը 7 ծաղիկներով, փոքր ի շատե նեղացած գազաթով, մինչև վեր տերևակալած:

Պսակաթերթերը վարդագույն: Պտուղները սև, փայլուն, գնդաձև 1 սմ տրամագծով:

**Տարածում.** Հանդիպում է Իջևանի (Բերդ) և Ջանգեզուրի (Գորիս, Ծավ)

ֆլորիստիկական շրջաններում: EOO 1260 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանի էնդեմիկ է:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա. լեռնային կիրճերում, անտառներում, անտառների եզրերին, թփուտներում, քարքարոտ հողերին, քարաքափվածքների վրա: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:


**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է

«Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



419. *Sorbus caucasica* Zinserl.  
 Ծոխխնձոր, Արտսենի կովկասյան  
 Рябина кавказская



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հնարավոր է արեալի կրճատում միջավայրի որակի վատացման և աճելավայրերի յուրացման հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Ծառ: Տերևները երկարավուն, խոր-բլթակավոր, բութավուն, ներքին՝ ամբողջաեզր և արտաքին՝ մանրատամ եզրերով: տերևի նուրբ մակերեսը կանաչավուն-մոխրագույն թավոտությամբ: Բողբոջները մեծ, սրացած: Ծաղկաբույլերը վահանիկանման, 5-7 սմ տրամագծով, բազմաթիվ ծաղիկներով: Առէջները պսակաթերթերից կարճ: Պտուղները օվալ, վառ-կարմիր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արփա գետի վերին հոսանք): EOO 55 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Դաղստանում, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Թալիշում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**


Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1900-2200 մ բարձրությունների վրա. լայնատերև անտառներում, ժայռոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**420. Sorbus hajastana Gabr.**  
**Արոսենի հայաստանյան**  
**Рябина айастанская**



**Կատեգորիա.** VU B 1 ab (iii) + 2 ab (iii); D 2

Խոցելի տեսակ: Ռելիկտային տեսակ է, որի արեալը Հայաստանում աստիճանաբար կրճատվում է միջավայրի որակի վատացման և աճելավայրերի յուրացման հետևանքով: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Մեծ թուփ: Տերևները էլիպսաձև, կաշեման, ամբողջական, 9-13 սմ երկ., 5-9 սմ լայն., հիմքի մոտ և գագաթին սեպաձև նեղացած, խոշորատամ եզրերով, մերկ, փայլուն, ներքևից խիտ առսեղմ ձյունափայլ թավոտությամբ: Պտուղը մուգ-կարմիր՝ ծածկված բազմաթիվ բաց գույնի ոսպիկներով:

**Տարածում.** Հանդիպում է Սևանի (Սևանա լճի ավազան), Ապարանի (Արախլեռ) և Գեղամի (Գեղարդ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 580 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի աճում է Մեծ Կովկասում՝ Գլխավոր լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջին՝ Խևսուրեթիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.**

Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1600-2400 մ բարձրությունների վրա. ժայռոտ գառիթափ լանջերին, մնացորդային անտառներում, անտառի վերին սահմանի ենթալպյան բարձրախոտերում: Գերադասում է հյուսիսային և հյուսիս-արևմտյան էքսպոզիցիաները: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-հոկտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ ռեկրեացիոն զոնայի և շինարարության ընդլայնման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:





423. *Cruciata sosnowskyi* (Manden.) Pobed.  
**Կրուցիատա Սոսնովսկու**  
**Круциата Сосновского**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Ներկայումս հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից փոքր է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ, մասնավորապես, կլիմայի փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույսեր՝ խիտ ծածկված ցցված մազիկներով: Ցողունը 5-10 սմ բարձր., փռված-տարածված: Տերևները խիստ մոտեցած օղակներով, ձվաձև կամ ձվաձև-երկարավուն, 4-7 մմ երկ., 2-3 մմ լայն.: Ծաղիկները համարյա տերևներին հավասար, խմբված ծաղկաբույլերում՝ կիսահովանոցներում, պսակը կանաչավուն-դեղին:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Գեղամի ֆլորիստիկական շրջանում (լեռնագագաթ Սևսար): AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Հարավային Կովկասում (Բալկարիա, Օսեթիա):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում ծ. մ. 3100-3200 մ բարձրությունների վրա. քարաքափվածքներին: Ծաղկում է հունիս ամսին, պտղակալում՝ հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով և իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

424. *Galium valantioides* Bieb.

**Մակարդախոտ վալանտանման**  
**Подмаренник валантиевидный**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման պատճառով առաջացող աճելավայրերի պայմանների փոփոխության հետ,:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս՝ բազմաթիվ ցողուններով 15-35 սմ բարձր.: Տերևները ցողունի վրա դասավորված օղակներով՝ 4-ական, շեղանկյունաձև, 20-30 մմ երկ.:

Կիսահովանոցները ցողունների գագաթին և եզրային ճյուղերի վրա, առաջացնում են փուխր հուրանաձև ծաղկաբույլ: Ծաղիկները սպիտակ, մանր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Լոռու (Ձորագետի վերնագավառ)

Ֆյորիստիկական շրջանում: AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախակովկասում, Դաղստանում, Արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտու ծ. մ. 1800-2000 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում, թփերի մացառուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և արածեցման հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



426. *Leptunis trichodes* (J.Gay) Schischk.

Լեպտունիս մազանճան  
Лептунис волосовидный



**Կաստեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման շրջանի մակերեսը 100 քառ. կմ-ից պակաս է: Քանի որ, տեսակի հիմնական արեալը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև EN: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ, նախ և առաջ տարածքները գյուղատնտեսական հանդակների համար յուրացման պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս, բարակ թելանման ցողուններով՝ 10-25 սմ բարձր.:

Տերևները թելանման, հավաքված 10-16-ական օղակներով: Ծաղիկները մանր, երկար խողովակով, կարմրավուն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երանոս լեռնագագաթ, Երախի լեռնաշղթա, Ջովաշեն գյուղի շրջակայք): EOO 65 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախիջևանում, Թալիշում, Իրանում, Սիջին Ասիայում և Աֆղանստանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, կրաքարային լանջերին, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման և մելիորացիայի հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Santalaceae – Սանտալագգիներ - Санталовые**  
**427. Thesium compressum Boiss. et Heldr.**

**Թեզիում սեղմված**  
**Ленец сжатый**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ինտենսիվ տնտեսական գործունեության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 15-40 սմ բարձր., ուղիղ արմատով, ճիպոտանման անկյունավոր, սեղմված ճյուղերով: Տերևները թեթևակի մսալի 1,5-6 սմ երկ., գծային, սրացած: Ծաղկաբույլը հասկանման, երկար, բարակ, փուխր: Ծաղիկները շատ մանր, 1,5 մմ երկ., սպիտակավուն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում, Արարատ բանավանի շրջակայքում: AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Կենտրոնական Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 800-850 մ բարձրությունների վրա. աղակալված ճահիճներում: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում հունիս-օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ.** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** ՀՀ Կառավարության որոշմամբ 2008 թ. Արարատի ճահճուտները առանձնացվել են որպես պահպանվող տարածք՝ «Աղակալված ճահճուտ» բնության հուշարձան: Սակայն պահպանության համար գործողություններ դեռ չեն իրականացվում: Անհրաժեշտ է միակ պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

428. *Thesium procumbens* C.A.Mey.

Թեզիում փռված  
Ленец простертый



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հանրապետությունում հայտնի է մեկ պոպուլյացիա՝ կազմված 2 լոկալիտետներից, որոնք միմյանցից հեռացած են 20 կմ: Քանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիա նվազեցվել է մինչև EN: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս փռված ճյուղավորված ցողուններով, առանց թխակապույտ փառի: Տերևները բարակ, գծային: Ծաղկաբույլը պարզ ողկույզ, բարակ եզրային ճյուղիկներով: Ծաղիկները մանր, մոտ 2 մմ երկ., համարյա նստադիր: Ծաղկապատը սպիտակավուն, լայն բաժականման:

**Տարածում.** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Սևանի լեռնանցք և Մարգահովիտ գյուղի շրջակայք): AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի տեսակը աճում է գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի վրա, Դաղստանում, Կենտրոնական Անդրկովկասում, Ղարաբաղում և Ջուվանդում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռային գոտու ծ. մ. 1800—2100 մ բարձրությունների վրա. ենթալպյան մարգագետիններում, անտառի եզրին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ/դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, արածեցման, կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի պահպանական գոտում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



Scrophulariaceae – Խլածաղկազգիներ - Норичниковые

430. Chaenorhinum gerense (Stapf) Speta

Խենորին գերեյական

Хеноринум герейский



**Կատեգորիա. VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)**

Խոցելի տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա Արփա գետի կիրճից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ներքին գործոնների և աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս կորացած կամ տարածված, գալարած, թույլ ճյուղավորված ցողուններով 2—15 սմ երկ.: Տերևները ձվաձևից մինչև լայն-նշտարած, հակադիր ու կոթունավոր՝ ցողունի ստորին մասում և հերթադիր ու նստադիր՝ ցողունի վերին մասում: Ծաղկաբույլը փուխր ողկույզանման: Ծաղիկները զիգոմորֆ, սպիտակավուն, վերևից՝ 2 մանուշակագույն շերտերով:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արենի և Արփա գյուղերի միջև): AOO՝ 8 քառ. կմ, լոկալիտերը՝ 1: Հայաստանից բացի աճում է Դարաբաղում, Կիպրոս կղզու վրա, Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1100 մ բարձրությունների վրա. ուղղաձիգ ժայռերի ճեղքերին, կրաքարերի վրա: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ռեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, նոր աճելավայրերի որոնում:

431. *Linaria megrica* Tzvelev  
**Վտավախոտ մեղրու**  
**Льяника мегринская**



**Վաստեզորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է Մեղրու լեռնաշղթայից և Զանգեզուրի լեռնաշղթայի սահմանակից հատվածից:

Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 15—35 սմ բարձր.: Յողունները բազմաթիվ, չճյուղավորված, միջին մասում խիտ տերևակալած: Տերևները հերթադիր, նշտարած-գծային: Ծաղկաբույր խիտ չճյուղավորված ողկույզ: Պսակը դեղին, սևավուն ջղերով:

**Տարածում.** Հայաստանում տարածված է Մեղրու (Տաշտուն, Լիճք, Կալեր գյուղերի շրջակայք) և Զանգեզուրի (լեռնագագթ Կապուտջուղ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 75 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 1900-2700 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ժայռերի միջև, տրազականտային համակեցություններում, գիհու նոսրանտառում: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

432. *Linaria pyramidata* (Lam.) Spreng.  
**Վտապախտ քրզածև**  
**Льянка пирамидальная**



**Վաստեգորիա.** CR B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Միակ պոպուլյացիան Արաիլեռում գտնվում է մարդածին ուժեղ ճնշման տակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 40—80 սմ բարձր., պարզ ուղիղ ցողուններով: Տերևները կիսացողունազիրկ, թիակապույտ, ձվաձև կամ երկարավուն-նշտարածև, սուր: Ծաղկաբույլը կոմպակտ, բրզածև-հասկանման: Ծաղիկները շատ մեծ, վառ-դեղին: Գեղազարդային բույս:


**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ապարանի ֆլորիստիկական շրջանում (Արաիլեռ): AOO՝ 4 քառ. կմ, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Թալիշում, Արևելյան Անատոլիայում, Հյուսիս-արևմտյան Իրանում, Թուրքմենիայում (Կոպետդաղի լեռնաշղթա):

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1500-2500 մ բարձրությունների վրա. հրաբխային ժայռեր մեջ, քարաթափվածքներին և ենթալպյան բարձրախոտում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝դեգրացիա՝ գերարածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: ԲՀՊՏ-ի ստեղծում Արալի լեռան վրա:

433. *Scrophularia amplexicaulis* Benth.  
**Խլածաղիկ ցողունագիրկ**  
**Норичник стеблеобъемлющий**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ներքին գործոնների և աճելավայրերի փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս 12-50 սմ բարձր.՝ խիտ ծածկված գեղձային մագիկներով: Տերևները ցողունագիրկ, երկարավուն սրտաձև-ձվաձև, վերևում սրացած, սուրատամ եզրերով: Ծաղկաբույլը կարճ, հասկանման, սակավածաղիկ: Պսակը 7-9 մմ երկ., կանաչավուն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (լեռնագագաթներ Կապուտջուղ և Խուստուփ): AOO 12 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Թալիշում, Հարավ-արևելյան Անատոլիայում և Իրանում:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2200-3200 մ բարձրությունների վրա. Ժայռերի ճեղքերին, մարգագետիններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կլիմայի փոփոխության պատճառով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

434. *Scrophularia atropatana* Grossh.  
**Խլածաղիկ ատրպատական**  
**Норичник атропатенский**



**Կատեգորիա.** CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Արեալը մասնատված է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Երկամյա բույս 20—30 սմ բարձր.: Տերևները Երկարավուն-ձվաձև կամ ձվաձև, խոշոր-աղեղնաեզր, երկարակոթ: Պսակը 2-3 մմ երկ., խայտաբղետ, ստորին բլթակները սպիտակավուն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Նոր Հաճն և Չիման գյուղերի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 50 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1000-1400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, գետի հոլկված գլաքարերի և քարաթափվածքների վրա, կիսաանապատում, լեռնային տափաստանում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



435. *Scrophularia takhtajanii* Gabrielian  
 Խլածաղիկ Թախտաջյանի  
 Норичник Тахтаджяна



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է մեկ փոքր պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի փոփոխության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ 8–20 սմ բարձր.: Յոդունները 1—5, սովորաբար պարզ, մուգ-մանուշակագույն: Տերևները հակադիր, 2-3 զույգերով, ձվաձև-եռանկյուն, ատմնաեզր, թեթևակի մաալի, տափակ մուգ-մանուշակագույն կոթուններով: Ծաղկաբույլը ողկույզանման, 7-15 ծաղիկներով: Պսակը վառ-կանաչ, մուգ-ծիրանեգույն վերին շուրթով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Արծվաբերդ գյուղի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանի էնդեմիկ է:


**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ենթալպյան գոտում, ծ. մ. 2300-2700 մ բարձրությունների վրա. ժայռերի ճեղքերին: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կլիմայի փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

436. *Verbascum atrovioleaceum* (Sommier et Levier) Murb.  
**Խոնդրատ մուգ մանուշակագույն**  
**Коровяк темно-фиолетовый**



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պառճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Միամյա բույս 25-30 սմ բարձր.: Ստորին տերևների թիթեղը երկար կոթուններով, երկարավուն-նշտարած և կամ երկարավուն-նեղ-եռանկյուն, հիմքում սեպաձև, հատված կամ ականջուկներով, դեպի ցողունի վերևը աստիճանաբար փոքրացող և նստադիր: Ծաղկաբույլը նեղ, երկարավուն ողկույզանման: Պսակը մաքուր մանուշակագույն:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Լոռու (Սարչապատ գյուղի շրջակայք) և Իջևանի (Բագրատաշեն, Քոբայր, Այրում, Ախթալա, Դեբեդ գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 640 քառ. կմ է, AOO՝ 30 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Հյուսիսային Օսեթիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 400-1400 մ բարձրությունների վրա.

տափաստանացած լանջերին, շիբլյակում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս- հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ արածեցման հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

437. *Verbascum erivanicum* E. Wulf

**Խոնրատ երևանյան**  
**Коровяк ереванский**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս: Յոդունները 30—60 սմ երկ., ստորին մասում մոխրագույն-թաղիքե թավոտությամբ: Արմատները տերևները կոթուններով, տերևաթիթեղը երկարավուն կամ երկարավուն-ձվաձև; ցողունային տերևները՝ նստադիր: Ծաղկաբույլը հուրանաձև, թույլ ճյուղավորված, փուխր, երկարացած, ծաղիկների փնջերը միմյանցից խիստ հեռացած: Պսակը գոգավոր, դեղին:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Ագարակ ավանի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ լեռնահանքային արդյունաբերության և շինարարության ընդլայնման հետևանքով:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է նոր ԲՀՊՏ-ի ստեղծում Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



439. *Verbascum gossypium* M. Bieb.

**Խոնդրատ բամբակաչին**  
**Коровяк хлопковый**



**Կատեգորիա.** EN\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանի մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Բազմամյա բույս: Յոդունները 20—50 սմ բարձր.: Գորշ-սպիտակ թաղիքային թավոտությամբ բույս: Միջին և վերին ցողունային տերևները ձվաձև-նշտարաձև, ներքև սահող, արմատամերձները՝ համարյա նստադիր կամ կարճ կոթերով, նշտարաձև կամ հակաձվաձև-երկարավուն: Ծաղկաբույլը հասկանման ողկույզ: Ծաղկապսակը դեղին 15-25 մմ տրամագծով: Պսակը դեղին, 15-25 մմ տրամագծով:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանից, Վարդանաձոր գյուղի շրջակայքից: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է Կովկասի բոլոր շրջաններում, Արևելյան Անատոլիայում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1500 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին, ժայռոտ տեղերում, անտառների եզրերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:


**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

440. *Verbascum megricum* (Tzvelev) Hub.-Mor.

Խոնրատ մեղրու  
Коровяк мегринский



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության հետևանքով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն.** Երկամյա բույս 30—40 սմ բարձր.: Արմատամերձ վարդակի տերևները սպիտակ թաղիքե թավոտությամբ, քնարած, փետրածև հատված, նեղ, ատամնավոր, աստիճանաբար դեպի հիմքը փոքրացող սեզմենտներով, խավոտ կոթունով: Ծաղկաբույլը ողկույզանման: Պսակը 12-18 մմ տրամագծով, դեղին:

**Տարածում.** Հայաստանում տարածված է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրի, Ալդարա, Շվանիձոր, Նյուվաղի գյուղերի շրջակայք): EOO 130 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Հյուսիս-արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1700 մ բարձրությունների վրա. պիտակենու և կաղնու-գիհու նոսրանտառներում, շիբլյակում, ավազային կիսաանապատում, չոր քարքարոտ լանջերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ մարդածին գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:




**Smilacaceae – Պարիլյակազգիներ - Павойные**

**442. Smilax excelsa L.**

**Պարիլյակ բարձր**

**Павой высокий**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v)

Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորատիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է անտառային գոտում, որը ենթարկվում է մարդածին զգալի ճնշման:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 4 կարգավիճակով՝ անորոշ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Փաթաթվող կամ սողացող երկտուն թուփ մերկ փշոտ ցողուններով:

Կոճղարմատը ամուր, երկար, սողացող: Տերևները հերթադիր, լայն-ձվաձև, վերին մասում սրացած, ցանցաջիղ: Կոթերը 1-1,5 սմ երկ., հիմքի մոտ երկու ոլորված բեղիկներով: Ծաղիկները կանաչավուն, 5-7 մմ երկ., հավաքված կիսահովանոցներում՝ 4-10-ական: Հատապտուղը կարմիր, գնդաձև:

**Տարածում.** Հիանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Այրում, Նոյեմբերյան, Բերդ, Իջևան, Այգեհովիտ, Ախթալա): EOO 360 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Ընդհանուր տարածումը ընդգրկում է Նախակովկասը, Դաղստանը, Արևմտյան, Հարավ-Արևմտյան, Կենտրոնական, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Միջերկրածովյան ավազանը, Դրիմը, Անատոլիան, Սիրիան և Հյուսիսային Իրանը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 500-1000 մ բարձրությունների վրա. խոնավ անտառներում, գետերի երկարությամբ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:






444. *Lycium anatolicum* A. Baytop. & C. Mill

Հագագ անատոլիական

Дереза анатолийская



**Կատեգորիա.** EN B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)

Վտանգված տեսակ: Հայտնի են 2 պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Թուփ 1 մ բարձր., փշոտ՝ կարճացած տերևակալած փշոտ ընձյուղներով և սակավաթիվ չտերևակալած փշերով: Տերևները նեղ-էլիպսաձև: Պսակի խողովակը ներսում մերկ, գլանաձև, զգալիորեն բաժակը գերազանցող: Առէջաթելերը ծածկված հազվադեպ մազերով: Պտուղները մուգ-գորշակարմիր:

**Տարածում.** Հանդիպում է Զանգեզուրի (Գորիսի շրջակայք) և Մեղրու (Ագարակ, Վահրավար) ֆլորիստիկական շրջաններում: EOO 935 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3:

Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ճանապարհների երկարությամբ, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ լեռնա-արդյունահանող արդյունաբերության ընդլայնման, ճանապարհաշինության և գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետևանքով:

Պահպանության միջոցառումներ. Պահպանություն չի իրականացվում:


Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի ստեղծում Մեղրու շրջանի Ագարակ ավանի շրջակայքում, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Staphyleaceae – Կռոնագիներ - Клекачковые**

**445. Staphylea pinnata L.**

**Կռոն փետրավոր, Ջոնջոլ**

**Клекачка перистая**



**Կասեգորիա.** VU\* B 1 ab(iii) + 2 ab(iii)

Խոցելի տեսակ: Հանդիպում է միայն հանրապետության հյուսիսում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված տեղական բնակչության կողմից օգտագործելու և անտառտնտեսական աշխատանքների հետ: Քանի որ Հայաստանում գտնվում է տեսակի տարածման եզրային հատվածը, իսկ հիմնական արեալը հանրապետության սահմաններից դուրս է, սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Թուփ կամ փոքր ծառ 2-6 մ բարձր., եղանածև դեղնա-գորշավուն ճյուղերով, կանաչ խոտային միանյա ընձյուղներով: Տերևները երկարակոթ, կենտ փետրածև, կազմված 5-7 լայն նշտարածև կամ էլիպսածև, մերկ, ատամնաեզր, վերևից մուգ կանաչ, ներքևի կողմից բաց գույնի տերևիկներից: Ծաղկաբույլը երկար, կախված, բարդ ողկույզ: Ծաղիկները սպիտակ, բաժակաթերթերը և պսակաթերթերը 8-10 մմ երկ.: Պտուղը փքված տուփիկ, գազաթներով հանդիպող փեղկերով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևան, Բարեկամավան, Սևրար, Բագրատաշեն, Շամշադին): EOO 600 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախակովկասում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան երկրներում, Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 600-950 մ բարձրությունների վրա. հիմնականում բոխու անտառներում, որտեղ երբեմն (Բարեկամավան գյուղի շրջակայք) հանդիսանում է ենթանտառի գերիշխող տեսակը: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված անտառտնտեսական աշխատանքների հետ, տեղական բնակչության կողմից որպես ուտելի բույս և բանջարանոցներում որպես հենարան օգտագործումը:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Բարեկամավան գյուղի շրջակայքում 40 հա մակերեսով ԲՀՊՏ-ի ստեղծում, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Tamaricaceae – Կարմրանագիներ - Гребенщиковые**

**446. Tamarix florida Bunge**

**Կարմրան պալմա**

**Гребенщик яркий**



**Կատեգորիա.** EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)

Վտանգված տեսակ Հայաստանում: Հայտնի է միայն մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Ոչ մեծ ծառ 1,5-2 մ բարձր., ծիրանեգույն կեղևով: Սաղարթը կազմված բազմաթիվ ճիպոտանման ճյուղերից: Տերևները հերթադիր, թեփանման, նստադիր, փոքր ի շատե ցողունագիրկ: Ծաղկաբույլը եզրային: Ողկույզները զարգանում են նախորդ տարվա ընձյուղների վրա մինչև տերևների հայտնվելը, միշտ պարզ, հաճախ փնջերով: Ծաղկակիցները բաժակից երկար, սակայն պսակաթերթերից կարճ: Ծաղիկները մանր, հնգանդամ, պսակաթերթերը գավաթանման բացված, թափվող:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Արաքս գետի ափին): EOO 40 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Իրանը, Միջին և Կենտրոնական Ասիան:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Տեսակի համար բնորոշ է ծաղկակիցների ձևի փոփոխությունը՝ սուր եռանկյունուց մինչև բթավուն-գծային, կախված ծաղկման ֆազայից: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-900 մ բարձրությունների վրա. գետերի ափերին, ավազային և կավային տեղերում: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, հատում վառելիքի համար:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



**Thymelaeaceae - Գոճնակազգիներ - Волчниковые**

**448. Stelleropsis magakjanii (Sosn.) Pobed.**

**Ստելերոպսիս Մագակյանի**

**Стеллеропсис Магакьяна**



**Կասեզորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում կապված՝ հողերի յուրացման և կլիմայի փոփոխության պատճառով, աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Կիսաթփիկ՝ բազմաթիվ ուղիղ կանգնած չճյուղավորված, հիմքի մասում փայտացող ցողուններով 10-15 սմ բարձր բույս: Տերևները մանր, 8-12 մմ երկ., էլիպսաձև, մերկ, թխակապույտ: Ծաղիկները մանր, արտաքինից կարմրավուն խողովակով, հավաքված համարյա գլխիկանման ծաղկաբույլերում:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Գարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում, Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայքում: AOO 8 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին լեռնային գոտու ծ. մ. 1800-2000 մ բարձրությունների վրա. մարգագետնատափաստանում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղակալում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված հողերի յուրացման և կլիմայի փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է միակ պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ: Ստեղծել ԲՀՊՏ Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայքում:

**Valerianaceae – Կատվախոտազգիներ - Валериановые**

**449. Centranthus longiflorus Stev.**

**Խթանարույս երկարածաղիկ**

**Центрантус длинноцветковый**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի տարածման և բնակության շրջաններին սպառնում է նվազում՝ կապված տարածքների յուրացման պատճառով աճման պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 (անհետացած) կարգավիճակով, քանի որ 1940 թ. հետո հանրապետությունում չի հավաքվել: Սակայն պոպուլյացիան գոյություն ունի Նախիջևանում՝ Հայաստանի սահմանի մոտ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա թխակապույտ խոտարույս մինչև 1 մ բարձր. բազմաթիվ ուղղաձիգ կանգնած ցողուններով: Տերևները ամբողջական, նշտարած: Ծաղկաբույլը 30-50 սմ երկար., ընդհատումներով: Ծաղիկները խոշոր, մինչև 3 սմ երկ., ծիրանեգույն-կարմիր:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Խաչիկ գյուղի շրջակայք): AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Հունաստանում, Բուլղարիայում, Թուրքիայում, Լիբանանում և Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1400-1500 մ բարձրությունների վրա. քարքարոտ լանջերին և քարաթափվածքների վրա, տափաստանային բուսականության մեջ: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված տարածքների յուրացման և կլիմայի փոփոխության հետ:


**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է Խաչիկ գյուղի շրջակայքում ստեղծել նոր ԲՀՊՏ, կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

450. *Valeriana eriophylla* (Ledeb.) Utkin

Վատվախտո քրդատերև

Валериана шерстистолистная



**Կատեգորիա.** EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս լավ արտահայտված երկար կոճղարմատով:

Յողունները ուղիղ կանգնած 50-200 սմ բարձրության: Տերևները մագոտից մինչև խավամագոտ: արմատամերձները՝ ամբողջական, ցողունայինները՝ քնարած փետրավոր: Ծաղիկները մանր, սպիտակ, խմբված հովանոցանման ծաղկաբույլերում:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է Վերին-Ախուրյանի (Ջավախքի լեռնաշղթա և Աղվորիկ գյուղի շրջակայք) և Շիրակի (Ջաջուռի լեռնանոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 110 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախիջևանում, ինչպես նաև Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է վերին և ենթալպյան գոտիներում ծ. մ. 1800-2200 մ բարձրությունների վրա. մարգագետիններում, Ժայռոտ տեղերում, քարաթափվածքների վրա, տափաստանային թփերի մացառուտներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված տարածքների յուրացման և կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



451. *Valerianella kotschy* Boiss.

**Աղբաղբուկիկ Կոչիի  
Валерианелла Кочи**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ գյուղատնտեսական գործունեության ինտեսիվացման հետ կապված, աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Միամյա խոտաբույս 15-20 սմ բարձր.: Տերևները ամբողջական կամ վերինները՝ թեթևակի փետրածև հատված: Ծաղկաբույլը խիտ, կիսագնդաձև: Պսակը մանր, վարդագույն: Բաժակը ավսեանման, լայն եռանկյունաձև, ցանցա-թաղանթավոր, շատ կարճ կեռանման սրածայրով վերջացող ստամներով:

**Տարածում.** Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում, Էլփին և Չիվա գյուղերի շրջակայքում: AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Թուրքիայում, Սիրիայում, Իրաքում և Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. մոտ 1000 մ բարձրության վրա. չոր լանջերի, տափաստաններում, ֆրիգանանման բուսականության մեջ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղակալում՝ հունիսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ կապված տարածքների յուրացման և արածեցման հետ:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիան արժանացնել մեծ ուշադրության, կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու և պոպուլյացիայի կարգավիճակը և ծավալը ճշտելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Violaceae – Մանուշակազգիներ - Фиалковые**

**452. Viola caucasica Kolenati ex Rupr.**

**Մանուշակ կովկասյան**

**Фиалка кавказская**



**Կատեգորիա.** CR B 1 ab(iii) + 2 ab(iii)

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն.** Բազմամյա խոտաբույս 5—10 սմ բարձր.: Տերևները կլորավուն, հիմքում խորը փորվածքով, կոթունավոր: Ծաղիկները ցողունների վրա 1-2-ական, վառ-դեղին:

**Տարածում.** Հայաստանում հայտնի է միայն Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանից, Խուստուփ լեռնագագաթից: AOO 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի տարածված է Մեծ Կովկասում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ.** Աճում է ալպյան գոտում, ծ. մ. 2800-3100 մ բարձրությունների վրա. ժայռերի տակ՝ խոնավ քարաթափվածքային լանջերին: Ծաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ.** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ՝ ղեգրադացիա՝ կլիմայի փոփոխության հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ.** Պահպանություն չի իրականացվում:

Անհրաժեշտ է պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ԲՀՊՏ-ի ստեղծում Խուստուփ լեռան վրա:

ԲԱԺԻՆ II

ՄՆԿԵՐ

## ՀՀ Կարմիր գրքում գրանցված սնկերի ցանկ

### **Agaricus tabularis**

Շամպինյոն աղյուսակաձև - վտանգված EN

### **Agaricus xanthodermus**

Շամպինյոն դեղնամաշկ - անհետացման եզրին NT

### **Amanita gemmata**

Ճանճասպան վառ դեղին - անհետացման եզրին NT

### **Amanita muscaria**

Ճանճասպան կարմիր - խոցելի VU

### **Amanita phalloides**

Դժգույն գարշասունկ - խոցելի VU

### **Asterophora lycoperdoides**

Աստերոֆորա անձրևային - տվյալներն անբավարար են DD

### **Astraeus hygrometricus**

Աստղիկ հիգրոմետրիկ - խոցելի VU

### **Battarrea phalloides**

Բատարեա թիակաձև - անհետացած EX

### **Boletopsis leucomelaena**

Բոլետոպսիս սև-սպիտակ վտանգված EN

### **Boletus edulis**

Սպիտակ սունկ, թնջուկ - խոցելի VU

### **Boletus satanas**

Սատանայասունկ, դիվասունկ- վտանգված EN

### **Clavariadelphus pistillaris**

Կլավարիադելֆուս վարսանդավոր - վտանգված EN

### **Collybia cookei**

Կոլլիբիա Կուկի - վտանգված EN

### **Cystoderma amianthina**

Ցիստոդերմա ամիանտային - խոցելի VU

### **Dictyophora duplicata**

Յանցակիր կրկնապատկված - տվյալներն անբավարար են DD

### **Hapalopilus croceus**

Հապալոպիլուս գաֆրանա-դեղին (կարմրադեղին) - կրիտիկական վիճակում գտնվող CR

### **Haploporus odorus**

Հապլոպորուս հոտավետ - կրիտիկական վիճակում գտնվող CR

### **Helvella atra**

Հելվելա սև - խոցելի VU

### **Hericium coralloides**

Ոզնասունկ բուստանման, մարջանանման - խոցելի VU

### **Hericium erinaceum**

Ոզնասունկ փշոտ, կաղնու ոզնասունկ - կրիտիկական վիճակում գտնվող CR

### **Leucoagaricus macrorhizus**

Լեուկոագարիկուս երկարարմատ - վտանգված EN

### **Macrolepiota puellaris**

Հովանոցասունկ աղջկական - վտանգված EN

Հովանոցասունկ կարմրող - վտանգված EN

### **Meripilus giganteus**

Մերիպիլուս հսկա- վտանգված EN

### **Montagnea arenaria**

Մոնտանեա ավազային - խոցելի VU

**Mutinus caninus**

Մուտինուս շնային - վտանգված EN

**M. ravenelii**

Մուտինուս Ռ-ավենելի- տվյալներն անբավարար են DD

**Myriostoma coliforme**

Միրիոստոմա ծակոտկեն - կրիտիկական վիճակում գտնվող CR

**Phallus impudicus**

Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ - վտանգված EN

**Phyllotopsis nidulans**

Ֆիլոտոպսիս բնավորվող վտանգված EN – Endangered

**Pleurotus eryngii**

Ականջասունկ, կախասունկ տափաստանային, սպիտակ տափաստանային սունկ, կայսերական սունկ - խոցելի VU

**Podaxis pistillaris**

Պոդաքսիս վարսանդային - խոցելի VU

**Rhodotus palmatus**

Ռոդոտուս բաթաձև - վտանգված EN

**Sarcosoma globosum**

Սարկոսոմա գնդաձև - կրիտիկական վիճակում գտնվող CR

**Strobilomyces strobilaceus**

Վոնասունկ փաթիլատիկ - խոցելի VU

**Suillus grevillei**

Յուղասունկ կվենու - վտանգված EN

**S. punctipes**

Յուղասունկ մայրու - կրիտիկական վիճակում գտնվող CR

**Tuber aestivum**

Գետնասունկ ամառային, ուտելի - տվյալներն անբավարար են DD

**Verpa conica**

Վերպա կոնաձև - խոցելի VU

**Volvariella bombycina**

Վոլվարիելա մետաքսանման - վտանգված EN

Կարգ **Agaricales**, ընտանիք **Agaricaceae**  
**1. Agaricus tabularis Pk**

Հոմանիշ՝ *Agaricus praerimosus* Pk

Շամպինյոն աղյուսակաձև, Шампиньон табличчатый



**Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 5-20 սմ տրամագծով, սպիտակ, սպիտակամոխրագույն, կաշեղիս դեղնում է, հաստ և մսալի է, կիսագնդաձև, հետո փռված, երբեմն մեջտեղում տափակ, ծածկված բուրգաձև կամ աղյուսակաձև թեփուկներով, ծալված եզրերով կամ հարթ, հաճախ եզրերը մասնակի ծածկոցի մնացորդներով:

Պտղամիսը սպիտակ է, կտրվածքում՝ վարդագույն, հաճելի սնկային համով և հոտով:

Թիթեղները նեղ են, սկզբում վարդագույն, հետագայում մուգ շագանակագույն, զրեթե սև:

Ոտիկը 4–5 x 1-3 սմ, սպիտակ, սպիտակավուն, կենտրոնական, թավշյա կամ մերկ,

կախված լայն, սպիտակավուն օղակով: Սպորափոշին մուգ շագանակագույն է: Սպորները 6,5-9 x 5,5-7 մկմ, շագանակագույն, լայն օվալաձև:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Հարավային Կովկաս /Վրաստան,

Հայաստան/: Եվրոպայի մի շարք երկրներում հազվադեպ է հանդիպում:

Հայաստանում հայտնաբերված է Արագածի ֆլորիստիկական շրջանում՝ Արխաշան գետի ափ, Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ Սևանի շրջակայք, արոտավայրեր:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հողի վրա, վերին լեռնային գոտում՝ ալպիական մարգագետիններում,

արոտավայրերում, 2500-3500 մ բարձրության վրա, հունիս-հուլիս ամիսներին:

Հումուսային սասպրոտրոֆ է: Պտղամարմիններն ուտելի են:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, արոտավայրերի ընդլայնումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Սևան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ **Agaricales**, ընտանիք **Agaricaceae**

**2. Agaricus xanthodermus** Genev.

Հունանիշ՝ *Psaliota xanthoderma* (Genev.) Rich. et Roze

Շամպինյոն դեղնամաշկ, Шампиньон желтокожий



**Կարգավիճակը**

Անհետացման եզրին գտնվող (NT - Near threatened):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 2-12 սմ տրամագծով, սպիտակ, սպիտակավուն, մոխրագույն, մեջտեղում ավելի մուգ գունավորված, կաշեյիս ստանում է դեղին կամ դեղնանարնջագույն գունավորում, մերկ է, հարթ, թավշյա, փայլուն, հաստ մսալի, զանգակաձև, կիսագնդաձև, հետո փռված, մեջտեղում տափակ, երբեմն ճաքճքված, ծավված եզրերով և մասնակի ծածկոցի մնացորդներով: Պտղամիսը սպիտակ է, կտրվածքում՝ վառ դեղին գունավորմամբ, տհաճ կարբոլաքթի հոտով: Թիթեղները սպիտակավուն են, վարդագույն, մուգ շագանակագույն, գրեթե սև: Ուտիկը 5-10 x 1-4 սմ, գլխարկի գույնի, կենտրոնական, մերկ, հիմքում դեղնավուն, ուռուցիկ, լայն, սպիտակավուն՝ դեղին եզրերով օղակով: Սպորափոշին մուգ շագանակագույն է: Սպորները 5,5-6,5 x 3,5-5 մկմ, շագանակագույն, կլորավուն-ձվաձև, հարթ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Ամերիկա, Եվրոպա, Աֆրիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/: Որոշ Եվրոպական երկրներում ունի լայն տարածում:

Հայաստանում տվյալ տեսակի եզակի օրինակները հայտնաբերված են Արագածի ֆլորիստիկական շրջանում՝ Սև լճի շրջակայք և Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ Երևան քաղաքի «Ծիծեռնակաբերդ» զբոսայգի:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հողի վրա, ալպիական մարգագետիններում, արոտավայրերում, այգիներում, 1000-3500 մ բարձրության վրա, հուլիս-օգոստոս ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է: Պտղամարմինները թունավոր են:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, արոտավայրերի ընդլայնումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Անհրաժեշտ է իրականացնել տեսակին բնորոշ ապրելավայրերի մոնիթորինգ:

Կարգ *Agaricales*, ընտանիք *Amanitaceae*

### 3. *Amanita gemmata* (Fr.) Bertill.

Հոմանիշ՝ *Agaricus gemmatus* Fr.

Ճանճասպան վառ դեղին, Мухомор ярко-желтый



#### Կարգավիճակը:

Անհետացման եզրին գտնվող (NT - Near threatened):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 2,5-11 սմ տրամագծով, դեղին, կիտրոնագույն, մեջտեղում ավելի մուգ գունավորված՝ դեղնագորշավուն, մսալի, սկզբում փռված, կիսազնդած, հետագայում տափակ, ընդհանուր ծածկոցի մնացորդներով, որոնք լինում են սպիտակ գորտնուկների կամ լաթերի ձևով: Պտղամիսն ու թիթեղները սպիտակ են: Թիթեղներն ազատ են, խիտ, բարակ, առկա են թիթեղիկներ: Ոտիկը 7-10 x 1-1,5 սմ, սպիտակ կամ սպիտակավուն, կենտրոնական, սպիտակավուն նեղ օղակով, հիմքի մոտ պալարածն ուռուցիկ, ազատ կամ սերտաճած պարկաճկ պատյանի (վոլվա) մնացորդներով, երբեմն վոլվան բացակայում է: Սպորափոշին սպիտակ է: Սպորները՝ 8-9 x 7-7,5 մկմ, անգույն, օվալաձև, հարթ, ոչ ամիլոիդ:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ամերիկա, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում՝ «Սոսու պուրակ» պետական արգելավայր, Կասպանի շրջակայք:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է հազվադեպ, հողի վրա, սոճու, կաղնու-բոխու անտառներում, 1200-1700 մ բարձրության վրա, հոկտեմբեր ամսին: Միկորիզագոյացնող սունկ է՝ համակեցության մեջ է մտնում փշատերև և լայնատերև ծառատեսակների հետ:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Սահմանափակ տարածվածությունը, ապրելավայրերի կորուստը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Պահպանվում է «Ծավ» արգելավայրի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիտորինգ և նոր աճելավայրերի հայտնաբերում:



Կարգ Agaricales, ընտանիք Amanitaceae

#### 4. *Amanita muscaria* (L.) Pers.

Հոմանիշ՝ *Agaricus muscarius* L.

Ճանճասպան կարմիր, Мухомор красный



#### Կարգավիճակը:

Խոցելի (VU – Vulnerable):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 5-25 սմ տրամագծով, տարբերվում է վառ գունավորմամբ՝ նարնջակարմրից մինչև մուգ կարմիր, հաստ մսալի, սկզբում կիսագնդաձև, հետագայում տափակ, փռված, հարթ եզրերով: Թարմ վիճակում կպչուն, չորացած՝ փայլուն, գլխարկի վրա պահպանված ընդհանուր ծածկոցի մնացորդներով, որոնք լինում են սպիտակ կամ դեղնավուն գորտնուկների կամ լաթերի ձևով: Պտղամիսը սպիտակ է, հաճելի հոտով և քաղցր համով: Թիթեղներն ազատ են, խիտ, լայն, սպիտակ, չորանալուց հետո դեղնավուն: Ուտիկը 7-20 x 1-3,5 սմ, սպիտակ կամ սպիտակավուն, կենտրոնական, սպիտակավուն կամ դեղնավուն օղակով: Հիմքի մոտ պալարաձև ուռուցիկ է, սպիտակավուն պարկաձև պատյանի (վովա) մնացորդներով: Սպորափոշին սպիտակ է: Սպորները՝ 9-12 x 6-8 մկմ, անգույն, լայն օվալաձև, հարթ:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Ամերիկա, Եվրոպա, Աֆրիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/: Աշխարհի մի շարք երկրներում ունի լայն տարածում, սակայն Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով: Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ Դիլիջան քաղաք, Պարզ լճի շրջակայք, Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Ծաղկաձոր, Հանքավան, Լոռու ֆլորիստիկական շրջանում:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է հողի վրա, միջին լեռնային գոտում, կեչուտներում կամ խառը անտառներում, 1500-1700 մ բարձրության վրա, օգոստոս–հոկտեմբեր ամիսներին: Միկորիզագոյացնող սունկ է՝ համակեցության մեջ է մտնում հիմնականում կեչու և սոճու հետ: Թունավոր է, առաջացնում է զգայախաբություններ /հալյուցինացիա/: Օգտագործվում է բժշկության մեջ:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Տարածման վայրերում անտառտնտեսական գործունեության հետևանքով սնկերի զարգացման համար անհրաժեշտ տեղերի կրճատումը:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիտորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Agaricales, ընտանիք Amanitaceae

**5. Amanita phalloides (Vaill.:Fr.) Secr.**

Հոմանիշ՝ *Amanitina phalloides* (Vaill.:Fr.) Gilb.

Դժգույն գարշասունկ, Бледная поганка



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU – Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 5–15 սմ տրամագծով, ձիթապտղագույն, կանաչավուն, սպիտակավուն, մեջտեղում ավելի մուգ գունավորված, կիսագնդաձև, մետաքսանման, հարթ եզրերով, ընդհանուր ծածկոցի մնացորդներով:

Պտղամիսը, թիթեղները և ոտիկը սպիտակ են: Հասուն և չորացած պտղամարմիններն ունեն տիպիկ հոտ:

Ոտիկը 6–12 x 1,5–2սմ, ունի սպիտակ թաղանթանման օղակ, հիմքի մոտ ուռուցիկ, ազատ պարկաձև պատյանի (վոլվա) մնացորդներով: Սպորափոշին սպիտակ է: Սպորները՝ 8-12 x 7-9 մկմ, անգույն, օվալաձև, հարթ, ամիլոիդ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Ասիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/: Աշխարհի մի շարք երկրներում ունի լայն տարածում, սակայն Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով:

Հայաստանում տվյալ սնկի եզակի պտղամարմինները հայտնաբերված են Լոռու ֆլոր. շրջ.՝ Ստեփանավան քաղաքի շրջակայք, Իջևանի ֆլոր. շրջ., Չանգեզուրի ֆլոր. շրջ. և Ապարանի ֆլոր. շրջ.:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոգենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հողի վրա, լայնատերև, փշատերև և խառը անտառներում, 1100-1800 մ բարձրության վրա, հուլիսից մինչև հոկտեմբեր ամիսներին: Միկորիզագոյացնող սունկ է՝ համակեցության մեջ է մտնում փշատերև և սաղարթավոր անտառների ծառատեսակների, հիմնականում կաղնու հետ: Մահացու թունավոր սունկ է: Օգտագործվում է բժշկության մեջ:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Հայաստանում չկարգավորված անտառահատումների արդյունքում անտառային տառածքների կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել տեսակին բնորոշ արգելավայրերի մոնիթորինգ:

Կարգ Tricholomatales, ընտանիք Tricholomataceae

## 6. *Asterophora lycoperdoides* (Bull.) Ditmar : Gray

Հոմանիշ՝ *Nyctalis asterophora* Fr.

Աստերոֆորա անձրևային, Астерофора дождевиковая



### Կարգավիճակը:

Տվյալներն անբավարար են (DD - Data Deficient):

### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 0,5 x 2,5 սմ տրամագծով, սպիտակավուն, ծածկված ալրանման շերտով, սկզբում ուռուցիկ, ապա գնդաձև: Թիթեղները սպիտակ են, հասունանալուց հետո մոխրագույն, հաստ մսալի, եղակի, հաճախ բացակայում են: Պտղամիսը մոխրագույն է, տհաճ հոտով: Ուղիկը 1-4 x 0,2-0,5 սմ, սպիտակամոխրագույն, թավշյա: Սպորափոշին սպիտակ է: Սպորները 4-6 x 3,5-4 մկմ, անգույն, հարթ, էլիպսաձև:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնի է Լոռու ֆլոր. շրջ.՝ Ստեփանավանի շրջակայք՝ անցած դարի 20-ական թվականներին /հերբարիումային նյութը չի պահպանվել/: 2005 թ-ին հայտնաբերվել են սակավաթիվ պտղամարմիններ Իջևանի ֆլորիստիկական շրջանում, «Դիլիջան» ազգային պարկի տարածքում:

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է գլխարկավոր սնկերի *Russula*, *Lactarius* ցեղերի ներկայացուցիչների փտած պտղամարմինների վրա, խառը խոնավ անտառներում, 1100 – 1500 մ բարձրության վրա, օգոստոս ամսին: Միկոֆիլ է:

### Վտանգման հիմնական գործոնները:

Հայտնաբերված տարածքներում անտառտնտեսական գործունեության հետևանքով սնկերի զարգացման համար անհրաժեշտ տեղերի կրճատումը:

### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Sclerodermatales, ընտանիք Geastraceae

**7. *Astraeus hygrometricus* (Pers.) Morg.**

Հոմանիշ՝ *Geastrum hygrometricum* Pers.

Աստղիկ հիգրոմետրիկ, Астреус гигрометрический



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU - Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինը 2-4 սմ տրամագծով, աստղաձև, սկզբում կլորավուն, պատված բազմաշերտ թաղանթով /պերիդիում/, որը պատռվում է հասունանալուց հետո: Էկոպերիդիումը բաժանվում է 7-10 բլթակների, սպիտակ է, հաստ մսալի, ճաքճքվող: Էնդոպերիդիումը մոխրագույն է կամ շագանակագույն, կլորավուն, հարթ կամ ցանցաձև: Հասունանալուց հետո պտղամարմնի զագաթին բացվում է փոքր պատառոտված անցք: Կապիլիցիումը անգույն է, ճյուղավորված, գլեբան՝ շագանակագույն: Սպորները 8-11 մկմ տրամագծով, կլորավուն, մանր փշաձև, շագանակագույն:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Հարավային Կովկաս (Ադրբեջան, Վրաստան, Հայաստան): Հայաստանում հանդիպում է հունիս ամսին Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հայտնաբերված է ավազուտների կամ ավազակավային հողերի վրա, չոր անտառներում, 800-1000 մ բարձրությունների վրա: Հումուսային սապրոտրոֆ է կամ պսամոտրոֆ:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Կլիմայի փոփոխության հետևանքով համապատասխան համակեցությունների անապատացումը կհանգեցնի սնկատեսակի անհետացմանը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Tulostomatales, ընտանիք Battarreaceae

## 8. *Battarrea phalloides* Dicks.: Pers.

Հոմանիշ՝ *Lycoperdon phalloides* Dicks.

Բատարեա քիակաձև, Баттарея веселковидная



### Կարգավիճակը:

Անհետացած (EX - Extinct):

### Համառոտ նկարագրությունը:

Պտղամարմինը 5 սմ տրամագծով, սկզբում ձվաձև, փակ, հասունանալուց հետո պատռվում է և պահպանվում ոտիկի ստորին մասում պարկաձև պատյանի (վոլվա) ձևով՝ հիմնականում հողի տակ: Ունի երկշերտ թաղանթ: Էկոպերիդիումը սպիտակավուն է, կաշվենման, արագ անհետացող: Էնդոպերիդիումը թեփուկաթելիկաձև, փայտացած ոտիկի վրա, պատռվելուց հետո զանգակաձև է, հարթ: Ոտիկը 15-20 սմ բարձրությամբ և 1 սմ հաստությամբ, մազմուկներով, շագանակագույն: Կապիլիցիումը անգույն է, կազմված բարակ թելիկներից: Սպորափոշին ժանգագույն է: Սպորները 4-6 մկմ, կլորավուն, շագանակագույն կամ թույլ գորշավուն:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Հարավային Կովկաս (Ադրբեջան, Վրաստան, Հայաստան): Ըստ հնէաբանական տվյալների կավե դարաշրջանի ռեկոկտ է: Հայաստանում հայտնաբերվել է Լոռու ֆլորիստիկական շրջանում՝ Ախթալայի շրջակայք, 1915 թվականին (հերբարիումային նյութը չի պահպանվել):

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է ավազակավային հողերի, ավազուտների վրա, կիսաանապատներում, սեպտեմբեր ամսին, 800 մ բարձրության վրա: Պատկանում է հումուսային սապրոտրոֆների կամ պսամոտրոֆների էկոլոգիական խմբերին:

### Վտանգման հիմնական գործոնները:

Համապատասխան բիոտոպերի վերացումը: Տեսակի վերաբերյալ տվյալներն անբավարար են:

### Բնապահպանական միջոցառումներ:

Անհրաժեշտ է տարածման շրջանի զննում, նոր ապրելավայրերի հայտնաբերում:

Կարգ Aphyllophorales, ընտանիք Boletopsidaceae

## 9. *Boletopsis leucomelaena* (Pers.) Fayod

Հոնանիշ՝ *Boletopsis subsquamosa* (L.:Fr.)Kotl. et Pouz.

Բոլետոպսիս սև-սպիտակ, Болетопсис черно-белый



### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

### Համառոտ նկարագրությունը:

Պտղամարմինները միամյա են, կենտրոնական կամ կողքային գլխարկով: Գլխարկը 5-12 սմ տրամագծով՝ սկզբում մոխրագույն, ապա գորշավուն, կլորավուն, տափակ կամ ուռուցիկ, երբեմն կենտրոնում գոգավոր, սուր հաստ եզրերով, որոնք երիտասարդ վիճակում ներս են ծալված, հաճախ ալիքաձև են, մակերեսը պատված է բարակ թաղանթով, հասունանալուց հետո ճաքքում է՝ առաջացնելով թեփուկներ: Պտղամիսը սկզբում սպիտակ է, կտրելուց՝ վարդագույն, մանուշակագույն երանգով, հետո մոխրագույն կամ գորշավուն: Հիմենոֆորը խողովակաձև, խողովակները միաշերտ են, կարճ, սպիտակ, մոխրագույն, գորշավուն, մինչև 4 մմ երկարությամբ, կազմված են բավականի մանր անցքերից (միջինը 1-2 անցք 1 մմ վրա), որոնք կլորավուն են, երբեմն հասունանալուց հետո լաբիրինթաձև: Ոտիկը 2-4 x 1-3 սմ, գլխարկի գույնի, կենտրոնական կամ կողքային, գլանաձև, ամուր, հարթ, դեպի հիմքը երբեմն ուռուցիկ, պտղամիսը կանաչավուն: Սպորափոշին սպիտակ կամ գորշավուն է: Սպորները 4,5-7 x 3,5-5 մկմ, բաց շագանակագույն, կլորավուն կամ էլիպսաձև, գորտնուկավոր:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս (Հայաստան): Ունի լայն տարածում բորեալ գոտում:

Հայաստանում հայտնաբերվել են տվյալ սնկի եզակի պտղամարմինները Իջևանի ֆլորիստիկական շրջանում, «Բիլիջան» ազգային պարկում, «Ախնաբադի կենու պուրակ» պետական արգելավայրում:

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է հողի վրա, խառն անտառներում, 1600 մ բարձրության վրա, սեպտեմբեր ամսին: Միկրոբիոգոյացնող սունկ է՝ համակեցության մեջ է մտնում կաղնու, բոխու, սոճու հետ: Պտղամարմիններն ուտելի են:

### Վտանգման հիմնական գործոնները:

Մարդու տնտեսական գործունեությունը՝ չկարգավորված անտառահատման հետևանքով սնկերի զարգացման համար անհրաժեշտ տեղերի կրճատումը:

### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Ախնաբադի կենու պուրակ» պետական արգելավայրի համապատասխան էկոհամակարգերի կազմում:

Կարգ Boletales, ընտանիք Boletaceae

## 10. Boletus edulis Bull.:Fr.

Սպիտակ սունկ, Բնջուկ, Белый гриб, боровик



### Կարգավիճակը:

Խոցելի (VU – Vulnerable):

### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 3-15 (30) սմ տրամագծով, բարձրկաճև, մսալի: Գույնը հաճախ կախված է անման տեղից և էկոլոգիական պայմաններից. օրինակ՝ սոճուտներում այն մուգ գորշ կամ գորշաշագանակագույն է, երիտասարդ պտղամարմիններն ավելի բաց գույնի են, սաղարթավոր անտառներում՝ բաց, դժգույն դեղնագույն: Գլխարկի ստորին մասը սպունգանման է՝ մանր ծակոտիներով, սկզբում՝ սպիտակ, հասուն տեսակներինը՝ դեղնականաչավուն երանգով: Պտղամիսը սպիտակ է, ամուր: Ուղիկը 7–12 x 2–6 սմ, բաց գորշավուն, վերևի մասում՝ ցայտուն արտահայտված սպիտակ, ապա՝ կեղտոտ սպիտակ կամ գորշավուն ցանցիկով: Գավազանաձև է, դեպի հիմքը հավասար լայնացած: Սպորափոշին դեղնաշագանակագույն է: Սպորները 15-18 x 3,8-5 մկմ, իլիկաձև, հարթ, բաց շագանակագույն:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/:

Աշխարհի մի շարք երկրներում ունի լայն տարածում, սակայն Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկում, Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջանում՝ Գորիսի շրջակայք, Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Մարմարիկ գետի ափին, Լոռու ֆլորիստիկական շրջանում՝ Թումանյան կայան:

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հայաստանում հանդիպում է հողի վրա, սաղարթավոր, փշատերև ու խառը անտառներում, 1000–1900 մ բարձրություններում, մայիսից մինչև ուշ աշուն: Միկորիզագոյացնող է, համակեցության մեջ է մտնում հիմնականում կաղնու, սոճու, բոխու հետ: Ամենաարժեքավոր և համեղ սնկերից է, հարուստ է սպիտակուցներով: Ունի բուժիչ հատկություններ. հակաբիոտիկ ակտիվություն, պտղամարմինների մեջ հայտնաբերվել են հակաուռուցքային նյութեր:

### Վտանգման հիմնական գործոնները:

Ինտենսիվ անտառաշահագործումը, չկարգավորված ծառահատումները, ապրելավայրերի կրճատումը, պտղամարմինների հավաքը բնակչության կողմից:

### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է տարածման շրջանների զննում՝ նոր ապրելավայրերի հայտնաբերման նպատակով:

Կարգ Boletales, ընտանիք Boletaceae

## 11. *Boletus satanas* Lenz

Սատանայատունկ, դիվատունկ, Сатанинский гриб



### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 8-25 սմ տրամագծով, սպիտակա-մոխրագույն, բարձիկաձև, մսալի, հարթ, թավջանման, մերկ, չոր, երբեմն անձրևից հետո լորձնային: Գլխարկի ստորին մասը սպունգանման է՝ մանր ծակոտիներով, սկզբում՝ դեղնականաչավուն, հասուն տեսակներինը՝ կարմիր, կարմրածիթապտղագույն:

Պտղամիսը սպիտակ է, սպիտակավուն, ամուր, կտրվածքին սկզբում կարմրում է, ապա կապտում, տհաճ հոտով և քաղցր համով:

Ոտիկը 6-9 x 5-11 սմ, դեղնակարմրավուն, ցայտուն արտահայտված մուգ կարմիր ցանցիկով, կենտրոնական: Գավազանաձև է, դեպի հիմքը հավասար լայնացած:

Սպորափոշին ձիթապտղագույն է:

Սպորները 11-14 x 5-5 մկմ, իլիկաձև, հարթ, ձիթապտղագույն:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում՝ Գորիսի շրջակայք, Մեղրիի ֆլորիստիկական շրջանում՝ գյուղ Արևիկ:

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է հողի վրա, խառն անտառներում, 600-1500 մ բարձրություններում, հուլիսից մինչև սեպտեմբեր: Միկորիզագոյացնող սունկ է՝ համակեցության մեջ է մտնում փշատերև և լայնատերև ծառատեսակների, հիմնականում կաղնու և հաճարենու հետ: Թունավոր տեսակ է:

### Վտանգման հիմնական գործոնները:

Ինտենսիվ անտառշահագործումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ՝ նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:



Կարգ Aphyllophorales, ընտանիք Clavariaceae

## 12. *Clavariadelphus pistillaris* (Fr. : Fr.) Donk

Հոմանիշ՝ *Clavaria pistillaris* Fr.

Կլավարիադելֆուս վարսանդավոր, Клавариадельфус пестиковый, рогатик пестиковый



### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

### Համառոտ նկարագրությունը:

Պտղամարմինները 5-15 (20) x 0,5-4 (6)սմ, սկզբում բաց դեղին, ապա դեղնավուն գունավորմամբ, երբեմն՝ սպիտակավուն, դեղնավուն կամ գորշավուն երանգով, գավազանաձև, գլանաձև, լեզվանման կամ լախտանման, պարզ կամ բուստաձև (կորալաձև) ճյուղավորված, հաճախ՝ բաց, միամյա:

Պտղամիսը սպունգանման է, սպիտակ, կտրվածքին՝ կարմրագորշավուն:

Պտղամարմնի ամբողջ մակերեսը (բացի ոտիկի ստորին հատվածից) ծածկված է սպորների շերտով:

Սպորները 11-16 x 6-10 մկմ, սպիտակ կամ դեղնավուն, հարթ, լայն օվալաձև, ոչ ամիլոիդ:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածք, Տավուշի շրջակայք:

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Աճում է հողի վրա, խոնավ վայրերում, լայնատերև և խառն անտառներում, 1100-1800 մ բարձրություններում, օգոստոս–հոկտեմբեր ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է:

Պտղամարմիններն ուտելի են:

### Վտանգման հիմնական գործոնները:

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով ապրելավայրերի տարածքների կրճատումը, ինտենսիվ անտառաշահագործումը:

### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիտորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ, ինչպես նաև մաքուր կուլտուրաների ստացում և պահպանում հավաքածուներում:

Կարգ Tricholomatales, ընտանիք Tricholomataceae

**13. Collybia cookei (Bres.) G.R.W. Arnold**

Հոմանիշ՝ *C. cirrhata* Schumach. var. *cookei* Bres.

Կոլիբիա Կուկի, Коллибия Кука



**Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը շատ փոքր՝ 0,5 -1,5 սմ տրամագծով, փոված, փոքր թմբիկով, սպիտակ:

Թիթեղները նեղ են, սպիտակ, կլամ ոտիկին:

Ռոտիկը թելանման, կարճ, աճում է սկլերոցիումի միջից:

Սկլերոցիումները խոշոր են, վառ գունավորված՝ մարնջադեղնավուն, առաջանում են թիթեղավոր սնկերի չորացած պտղամարմինների մնացորդների վրա:

Սպորափոշին սպիտակ է:

Սպորները 4-5 x 2,5 մկմ, անգույն:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Չանգեգուրի ֆլորիստիկական շրջանում՝ Գորիս – Շուրնուխ ճանապարհին, կաղնու-բոխու անտառներում *Pholiotina appendiculata* սնկի սկլերոցիումների և պտղամարմինների վրա և Գորիսի շրջակայքի սոճուտներում *Agaricales* կարգի ներկայացուցիչների վրա:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Ունի սահմանափակ նեղ արեալ: Հանդիպում է խմբերով թիթեղավոր սնկերի պտղամարմինների մնացորդների վրա: Փոռցաշերտի, հողի, գլխարկավոր սնկերի փտած կամ չորացած պտղամարմինների վրա, լայնատերև և փշատերև անտառներում, 1200-1400 մ բարձրության վրա, սեպտեմբեր ամսին: Փոռցաշերտային, հումուսային սապրոտրոֆ կամ միկոֆիլ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Տարածվածությունը սահմանափակ տարածքներում, չկարգավորված անտառափայտումների արդյունքում տարածքների կրճատումը կամ կորուստը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Անհրաժեշտ է իրականացնել տեսակին բնորոշ ապրելավայրերի մոնիտորինգ:

Կարգ Agaricales, ընտանիք Agaricaceae

#### 14. *Cystoderma amianthina* (Scop.: Fr.) Fayod

Հոմանիշ՝ *Lepiota amianthina* (Scop. : Fr.) P. Karst.

Յիստոդերմա ամիանտային, Цистодерма амиантовая



#### Կարգավիճակը:

Խոցելի (VU – Vulnerable):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 2-5 սմ տրամագծով, դեղնավուն, դեղնասկեզույն կամ բաց շագանակագույն, սկզբում կիսագնդաձև, հետո փռված, մեջտեղում լայն տափակ թմբիկով, չոր, մանր հատիկավոր, երբեմն արանման փառով ծածկված, եզրերին՝ մասնակի ծածկոցի մնացորդներով:

Պտղամիսը սպիտակ է կամ սպիտակավուն, դեղնավուն երանգով, կտրվածքում՝ գույնը անփոփոխ է, ունի տհաճ հոտ և այլուրի համ:

Թիթեղները սպիտակ են, չորանալուց հետո դեղնավուն, ոտիկին կլայած, խիտ դասավորված, բարակ, հարթ եզրերով: Առկա են նաև թիթեղիկներ:

Ոտիկը 3-5 x 4-8 սմ, սպիտակավուն, գլանաձև, լցոնված, հետո սնամեջ, գազաթնային դեղնավուն օղակով, օղակից վերև մերկ է, իսկ դեպի ներքև՝ գլխարկի գույնի, հատիկավոր:

Սպորափոշին սպիտակ է:

Սպորները 5-7 x 3-4 սմ, անգույն, հարթ, էլիպսաձև:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա, Աֆրիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հանդիպում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, «Ախնաբաղի կենո պուրակ» պետական արգելավայր:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է փոռցաշերտի վրա, խառն անտառներում, 1700 մ բարձրության վրա, սեպտեմբեր ամսին: Փոռցաշերտային սապրոտրոֆ է: Պտղամարմիններն ուտելի են, սակայն ոչ արժեքավոր:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Բնական աճելավայրերի փոփոխությունն անթրոպոգեն գործունեության հետևանքով:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Պահպանվում է «Ախնաբաղի կենո պուրակ» պետական արգելավայրի համապատասխան էկոհամակարգում:



Կարգ Aphyllophorales, ընտանիք Poriaceae

**16. Hapalopilus croceus (Scop.: Fr.) Donk**

Հոմանիշ՝ *Auratioporus croceus* (Pers.: Fr.) Murrill

Հապալոպիլուս զաֆրանա-դեղին (կարմրադեղին), Гапалопилус шафранно-желтый



**Կարգավիճակը:**

Կրիտիկական վիճակում գտնվող (CR - Critically Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը մինչև 20 սմ լայնությամբ, 15 սմ երկարությամբ և 6 սմ հաստությամբ, սկզբում բաց նարնջագույն, զաֆրանադեղին և մազմզոտ, հետո նարնջագորշավուն և հարթ:

Պտղամարմինները կողքային են, կիսատ, բարձիկաձև կամ տափակ:

Պտղամիսը թարմ վիճակում բաց նարնջագույն է և փափուկ, չորանալուց հետո՝ դեղնավուն երանգով, կարծր կամ փխրուն:

Հիմննոֆորը խողովակաձև է, խողովակները 0,5-1 սմ երկարությամբ, պտղամսի գույնին են, կազմված են բավականի մանր անցքերից (միջինը 2-3 անցք 1 մմ վրա), որոնք կլորավուն են, նուրբ, վառ նարնջագույն եզրերով:

Սպորները 4-6 x 3-4 մկմ, անգույն, լայն էլիպսաձև:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ Գանձաքարի շրջակայք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հազվադեպ, կենդանի և մահացած կաղնու և շագանակենու բների վրա, լայնատերև և խառն անտառներում, 1100-1700 մ բարձրության վրա, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Քսիլոտրոֆ է, առաջնացնում է սպիտակ փտում:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Անհրաժեշտ է իրականացնել տեսակին բնորոշ ապրելավայրերի մոնիտորինգ:

Ընդգրկված է մակրոմիցետների ցուցակի մեջ, որոնք երաշխավորված են հաստատվելու Բեռնի կոնվենցիայի կողմից:

Կարգ Aphyllophorales, ընտանիք Poriaceae

**17. Haploporus odorus (Sommerf.: Fr.) Bondartsev et Sing.**

Հոմանիշ՝ *Haploporus suaveolens* (L.: Fr.) Donk

Հապլոպորուս հոտավետ, Aniseed Polypore Гаглопорус пахучий



**Կարգավիճակը:**

Կրիտիկական վիճակում գտնվող (CR - Critically Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները 5-15 x 3-8 սմ, սպիտակ, դեղնավուն, դեղնագորշավուն կամ մոխրագույն, ձմեռած պտղամարմինները սևանում են, սմբակաձև են, բարձիկաձև, երբեմն՝ փռված, միամյա: Գլխարկի մակերեսը սկզբում նուրբ թավշանման, հետո մերկ, հարթ, եզրերը կլորացած, հավասար: Պտղամիսը դեղնավուն է, կծու համով և անհիտնի հաճելի հոտով: Հիմննոթորը խողովակաձև է, կազմված հաստապատ, կլորավուն, սպիտակ անցքերից, միջինը 2-3 անցք 1 մմ վրա: Սպորները 4,5-6 x 3,5-4,5 մկմ, անգույն:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Հայաստան/: Հայաստանում հանդիպում է հազվադեպ, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածք, Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Մարմարիկ գետի շրջակայք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոգենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է կենդանի ծառերի բների, չորացած ծառերի ոստերի վրա, լայնատերև անտառներում, 1600-1800 մ բարձրություններում, հունիս-հուլիս ամիսներին: Զսիլտրոֆ է, առաջացնում է սպիտակ փտում:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Համապատասխան բիոտոպների վերացումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ: Ընդգրկված է մակրոմիցետների ցուցակի մեջ, որոնք երաշխավորված են հաստատվելու Բեռնի կոնվենցիայի կողմից:

Կարգ Pezizales, ընտանիք Helvellaceae

**18. Helvella atra J.Koenig**

Հոմանիշ՝ *Helvella nigricans* Pers.

Հելվելա սև, Гельвелла черная



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU – Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները 3-5 սմ բարձրությամբ: Գլխարկը 1-3 սմ տրամագծով, ազատ կամ թույլ սերտաճած եզրերով, վերին մասը սև է, ստորինը՝ մոխրագույն, թամքաձև, երկբլթականի: Պայուսակները 310-340 x 15-17,5 մկմ, գլանաձև են: Պարաֆիզները 315-350 x 2,5 մկմ, բաց շագանակագույն, թելանման, ծայրերին լայլանում են մինչև 5-7 մմ: Սպորները 315-350 x 2,5 մկմ, էլիպսաձև, տափակ ծայրերով, հարթ, դասավորված են մեկ շարքով:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Հարավային Կովկաս (Վրաստան, Հայաստան):

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Պարզ լճի շրջակայք և Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Սևան» ազգային պարկի տարածք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է ավազոտ հողերի վրա, կիսասանապատներում, լեռնային գոտիներում, 1700-2200 մ բարձրություններում, մայիս-հունիս ամիսներին: Պսամոտրոֆ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Hericiales, ընտանիք Hericiaceae  
**19. Hericium coralloides (Scop.: Fr.) Pers.**

Հոմանիշ՝ *Hericium clathroides* (Pallas.:Fr.)Pers.

Ոգնասունկ բուստանման, մարջանանման, Гериций коралловидный, ежовик коралловидный



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU – Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները 4-15 սմ, երիտասարդ վիճակում սպիտակ, հասունանալուց հետո՝ վարդագույն, դեղնավուն, մարջանանման ճյուղավորված հաստ ոտիկանման հիմքով, թարմ վիճակում մսալի են, չորացածները՝ փխրուն: Պտղամիսը սպիտակ է, թելիկանման, հաճելի սնկային հոտով: Հիմենոֆորը փշածև է: Փշերը 5-10 մմ երկարությամբ, սպիտակ են, դեղնավուն կամ բաց շագանակագույն, կոնաձև: Սպորները 5-6,5 x 4,5-6 մկմ, հարթ, լայն էլիպսաձև կամ գնդաձև, ամիլոիդ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Շամշադին, Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Սևան» ազգային պարկ:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, առանձին առանձնյակների մեծ խմբերով, լայնատերև ծառատեսակների մահացած բների և կոճղերի վրա, լեռնային գոտիներում, 1800-2200 մ բարձրություններում, օգոստոս–նոյեմբեր ամիսներին: Զսիլոտրոֆ է, առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Պտղամարմինները երիտասարդ վիճակում ուտելի են: Պատկանում է դեկորատիվ սնկերի թվին: Որոշ երկրներում պահպանվում է միցելիալ կուլտուրաների հավաքածուներում:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը: Հնարավոր է դեկորատիվ պտղամարմինների հավաքը բնակչության կողմից:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիտորինգի, նոր ապրելավայրերի հայտնաբերման, միցելիալ կուլտուրաների ստացման և պահպանման ուղղությամբ:



Կարգ Hericiales, ընտանիք Hericiaceae

**20. *Hericium erinaceum* (Bull.: Fr.) Pers.**

Հոմանիշ՝ *Hydnum caput-medusae* Fr.

Ոգնասունկ փշոտ, կաղնու ոգնասունկ, Герициум ежовидно-колючий, ежовик дубовый



**Կարգավիճակը:**

Կրիտիկական վիճակում գտնվող (CR - Critically Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները միամյա, աճում են խոշոր խմբերով՝ մինչև 25 սմ տրամագծով, երբեմն երկարավուն, նստած կարճ ոտիկի վրա կամ կպած բնափայտին, երիտասարդ վիճակում սպիտակ են, վարդագույն երանգով, կլորավուն կամ տանձաձև, մակերեսը չոր վիճակում դեղին է, գորշավուն, եզրերի մոտ պատված կոշտ, ծռնոված փշաձև ելուստներով:

Պտղամիսը թարմ վիճակում մսալի է, սպիտակ, չորանալուց հետո դեղնավուն, բավականի խիտ: Հիմենոֆորը փշաձև է: Փշերը երկար են, սպիտակ, վարդագույն երանգով, չորանալուց՝ գորշավուն, գլանաձև, սրածայր, ուղիղ կամ ծռնոված: Սպորները 5-7 x 4,5-6 մկմ, լայն լիպսաձև կամ գնդաձև, համարյա ձվաձև, յուղի խոշոր մեկ կաթիլով:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/: Եվրոպական մի շարք երկրներում ունի լայն տարածում, սակայն Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ և Չանգեզուրի ֆլորիստիկական շրջանում:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոգենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է կաղնու և հաճարենու կենդանի բների, կոճղերի վրա, լայնատերև անտառներում, 1000-1400 մ բարձրություններում, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Քսիլոտրոֆ է՝ թույլ մակարոյծ: Երիտասարդ պտղամարմիններն ուտելի են, երբեմն հավաքվում են բնակչության կողմից: Տվյալ տեսակը փոքր քանակությամբ արհեստականորեն աճեցվում է և վաճառվում որոշ Եվրոպական շուկաներում: Ունի սահմանափակ կիրառական նշանակություն, այդ թվում, օժտված է բուժիչ հատկություններով՝ հիմնականում ունի հակաուռուցքային ակտիվություն:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիտորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ: Ընդգրկված է մակրոմիցետների ցուցակի մեջ, որոնք երաշխավորված են հաստատվելու Բեռնի կոնվենցիայի կողմից:

Կարգ Agaricales, ընտանիք Agaricaceae

**21. *Leucoagaricus macrorhizus* Locq. : E. Horak**

Հոնանիշ՝ *Lepiota macrorhiza* (Locq.) Kuehn. et Romagn.

Լեուկոագարիկուս երկարարմատ, Лейкоагарикус длиннокорнево́й



**Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 5-15 սմ տրամագծով, սպիտակ, կենտրոնում մոխրագույն կամ մոխրաշագանակագույն, սպիտակավուն եզրերով, թավշյա, թելանման, ծածկված թեփուկներով: Պտղամիսը սպիտակ է, հասունանալուց հետո ստանում է բաց շագանակագույն երանգ, մսալի է: Համը և հոտը հաճելի են:

Թիթեղները թարմ վիճակում սպիտակ են, իսկ չորացածները՝ բաց շագանակագույն, ազատ, խիտ դասավորված, հարթ եզրերով: Ոտիկը 5-8 x 1-2 սմ, կենտրոնական, գլանաձև, արմատաձև երկարացած, ներքևի մասում թեթևակի նեղացող, օղակից վերև սպիտակ, իսկ ներքևի մասում գլխարկի գույնի, սպիտակավուն պարզ օղակով: Սպորափոշին սպիտակավուն է: Սպորները 7-8 x 4,5-5,5 մկմ, անգույն, լայն էլիպսաձև, հարթ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, Հարավային Կովկաս /Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ Ջելվա, Այդր լճի շրջակայք, Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Մարմարիկ գետի ափ, խառն անտառների բացատներ:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հողի վրա, այգիներում, դաշտերում, անտառների բացատներում, 860-1500 մ բարձրություններում, հուլիս, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Ուսումնասիրված չեն:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Բնական պոպուլյացիաների պահպանման համար անհրաժեշտ է միջելիալ կուլտուրաների ստացում, ինչպես նաև աճման վայրերի մոնիթորինգ:

Կարգ Agaricales, ընտանիք Agaricaceae

## 22. *Macrolepiota puellaris* (Fr.) M.M.Moser

Հոմանիշ՝ *Leucocoprinus puellaris* (Fr.) Rea

Հովանոցաառնակ աղջկական, Гриб-зонтик девичий



### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 4-10 սմ տրամագծով, սպիտակ, մեջտեղում ավելի մուգ գունավորված, սկզբում ձվաձև, հասունանալուց հետո հովանոցանման, վերին մասը ծածկված է եռանկյունաձև, սպիտակ թեփուկներով: Գլխարկի եզրերը ծուփավոր են: Թիթեղները սպիտակ են, խիտ դասավորված, ազատ: Պտղամիսը սպիտակ է, կտրվածքի դեպքում՝ ոտիկի հիմքում կարմրում է: Ունի բողկի հոտ: Ոտիկը 5-10 x 0,5-1 սմ, սկզբում կեղտոտ սպիտակ, հետո շագանակագույն, հիմքում պալարաձև հաստացած մինչև 1,2 սմ, կաթնագույն, լայն, շարժուն, նուրբ օղակով, չորանալուց հետո և ոտիկը, և գլխարկը գորշագույն են: Սպորափոշին սպիտակավուն է: Սպորները 8-9 x 5-5,5 մկմ, անգույն, էլիպսաձև, հարթ, ծլման ծակոտիներով:

### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հարավային Կովկաս /Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածք, Լոռու ֆլորիստիկական շրջանում՝ Ստեփանավանի շրջակայք:

### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հանդիպում է հազվադեպ, երբեմն խմբերով, հողի վրա, լայնատերև անտառներներում, 1100-1800 մ բարձրություններում, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է: Պտղամարմիններն ուտելի են, արհեստականորեն աճեցվում է որոշ երկրներում քիչ քանակությամբ:

### Վտանգման հիմնական գործոնները:

Մարդու տնտեսական գործունեությունը:

### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիտորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ: Հնարավոր է սնկի միցելիալ կուլտուրայի ստացումը և արհեստական աճեցումը:

Կարգ Agaricales, ընտանիք Agaricaceae

### 23. *Macrolepiota rhacodes* (Vittad.) Singer

Հոմանիշ՝ *Lepiota rhacodes* (Vittad.) Quel.

Հովանոցաառնակ կարմրող, Гриб-зонтик краснеющий



#### **Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

#### **Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 10-18 սմ տրամագծով, մոխրագորշավուն, մեջտեղում շագանակագույն, գնդաձև, հետո կիսագնդաձև, ճաքճքվող, ծածկված խոշոր, նոսր թեփուկներով: Պտղամիսը սպիտակ է, կտրվածքի դեպքում կարմրում է:

Թիթեղներն ազատ են, նշտարաձև, կոլարիումով, սկզբում սպիտակ, հետո կարմրող: Ոտիկը 10-25 x 1,5-2 սմ, բաց շագանակագույն, հիմքի մոտ պալարաձև հաստացած: Օղակը սպիտակ է, հետո գորշավուն, թեփուկներով:

Սպորափոշին սպիտակ է: Սպորները 13,5-15 x 6-8 մկմ, անգույն, էլիպսաձև, հարթ, ծլման ծակոտիներով, յուղի 1-2 կաթիլներով:

#### **Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Վանաձորի շրջակայք, Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում՝ «Մոսու պուրակ» պետական արգելավայրում:

#### **Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, հողի վրա, լայնատերև անտառներում, ջերմոցներում, 1150-1700 մ բարձրության վրա, հունիս, հոկտեմբեր ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է: Պտղամարմինները ուտելի են:

#### **Վտանգման հիմնական գործոնները:**

Մահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

#### **Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի և «Մոսու պուրակ» պետական արգելավայրի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Aphyllophorales, ընտանիք Albatrellaceae

**24. Meripilus giganteus (Pers.: Fr.) P. Karst.**

Հոմանիշ՝ *Polypilus giganteus* (Pers.:Fr.)Donk

Մերիպիլուս հսկա, Мерипилус гигантский



**Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինը 0,5-0,8 մ տրամագծով, կլորավուն, կազմված բազմաթիվ ճյուղավորված, կարճ ոտիկների վրա նստած գլխարկներից, որոնք ամրացած են ուռուցիկ, պալարածն հաստացած ընդհանուր ոտիկին: Գլխարկները կիսագնդաձև են, կղմինդրաձև դասավորված, մսալի, չորանալուց հետո փայտացած, մակերեսը գորշագույն կամ բաց շագանակագույն, կնճռոտված, մանր թեփուկներով, առանց փայլի, եզրերն ալիքաձև: Պտղամիսը կոշտ մսալի է, բաց գունավորմամբ, կտրվածքին արագ մգանում է՝ ստանալով սև գույն, ունի յուրահաստուկ սնկի հոտ:

Խողովակները կարճ են՝ մինչև 6 մմ երկարությամբ: Անցքերը սպիտակ են կամ մոխրագույն, մանր՝ միջինը 3-4 անցք 1 մմ վրա, կլոր, նուրբ ծովքերով: Սպորները 5-6 x 4,5-5 մկմ, լայն էլիպսաձև, համարյա գնդաձև, յուղի 1 կաթիլով:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսասյին Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/: Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Բերդի և Նոյեմբերյանի շրջակայք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոգենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, մեծ խմբերով, հաճարենու և կաղնու բների ստորին մասերում, լայնատերև անտառներում, 1200-1800 մ բարձրությունների վրա, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Քսիլոտրոֆ է, առաջացնում է սպիտակ փտում: Պտղամարմինների քաշը հասնում է մինչև 10, հազվադեպ 20 կգ: Տվյալ տունկը պատկանում է հարավային տեսակներին և հանդիպում է հիմնականում հաճարենու աճման վայրերում:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Մահմանափակ տարածվածությունը, ապրելավայրերի կորուստը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Agaricales, ընտանիք Coprinaceae

**25. *Montagnea arenaria* (DC.: Fr.) Zeller**

Հոմանիշ՝ *M. candollei* Fr., *M. radiosa* (Pallas) S. Rauschert

Մոնտանեա ավազային, *Монтанея песчаная*



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU – Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինը երիտասարդ վիճակում մինչև 3 սմ տրամագծով, սպիտակավուն կամ դեղնավուն, կլորավուն:

Պերիդիումը թաղանթաձև է, պատռվելուց հետո ոտիկը վեր է բարձրանում: Գլխարկը 1-6 սմ տրամագծով, դեղնավուն, ճառագայթաձև ճաքճքված, թեփուկավոր, թիթեղաձև բլթակներով: Թիթեղները 0,6-0,1 սմ լայնությամբ, հասունացած վիճակում սև, փխրուն, ալիքավոր եզրերով, ծածկված հիմենիալ շերտով:

Ոտիկը 6-25 x 0,5-2 սմ, սպիտակ, դեղնավուն, երիտասարդ վիճակում մսալի, հասունանալուց հետո փայտացած, ծածկված մանր, դեղնավուն թեփուկներով, հիմքի մոտ պերիդիումի մնացորդներով՝ վոլվայով:

Սպորափոշին սև է: Սպորները 10-16 x 7-11 մկմ, սև են, ձվաձև կամ էլիպսաձև, հարթ, ծլման ծակոտիներով:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/: Հայաստանում հայտնաբերված է Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոց, Վեդիի շրջակայք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հողի վրա, ժայռոտ վայրերում, կիսաանապատներում, տափաստաններում, 900-1200 մ բարձրությունների վրա, մայիս ամսին, չորային եղանակին: Հումուսային սապրոտրոֆ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, ապրելավայրերի կորուստը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Phallales, ընտանիք Phallaceae

**26. Mutinus caninus (Huds.: Pers.) Fr.**

Հոմանիշ՝ *Phallus caninus* (Huds.:Pers) Fr.

Մուտինուս շնային, Мутинус собачий



**Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները 3-4 սմ տրամագծով, երիտասարդ վիճակում օվալաձև կամ ձվաձև: Պերիդիումը սպիտակ է, պատառոտվում է բլթակների: Ռեցեպտակուլը գլանաձև է, հոծ, սպունգանման: Ոտիկը 10-15 սմ երկարությամբ, 0,4-1 հաստությամբ, նարնջադեղնավուն, նարնջագույն, վերին մասում վեր է ածվում սրածայր գլխիկի: Գլխիկը ծածկված է լորձնային ձիթապտղագույն, ցանցաձև գլեբայով, տիան, գարշելի հոտով: Սպորները 4-5 x 1,5-2,5 մկմ, անգույն կամ բաց դեղին, էլիպսաձև:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Գիլիջան» ազգային պարկ, Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Մարմարիկ գետի շրջակայքի կաղնու-բոխու անտառ, Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Սևան» ազգային պարկ՝ Մարտունի-Գավառ ճանապարհ:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է հազվադեպ, սովորաբար խմբերով, հողի վրա, լայնատերև անտառներում, 1500-2000 մ բարձրություններում, հունիս-հուլիս ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է: Պատկանում է դեկորատիվ սնկերի տեսակներին:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Ուսումնասիրված չեն:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Գիլիջան» և «Սևան» ազգային պարկերի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աճելավայրերի հսկում:





Կարգ Lycoperdales, ընտանիք Geastraceae

**28. Myriostoma coliforme (Dicks. : Pers.) Corda**

Հոմանիշ՝ *Geastrum coliforme* With.: Pers.

Միրիոստոմա ծակոտկեն, Мирриостома дырчатая



**Կարգավիճակը:**

Կրիտիկական վիճակում գտնվող (CR - Critically Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինը 2-10 սմ տրամագծով, գորշավուն, երիտասարդ վիճակում գնդաձև: Էկոպերիդիումը հաստ է, թեփուկավոր, արագ պատռվում է, առաջացնելով 4-12 բլթակներ: Էնդոպերիդիումը գնդաձև է կամ վերևի մասում տափակ, մոխրաշագանակագույն կամ արծաթափայլ, նստած 3-5 մմ բարձրությամբ, գլանաձև, խրճերով դասավորված ոտիկների վրա: Էնդոպերիդիումի վերին մասում առաջանում են մինչև 50 հատ մանր, կլոր անցքեր: Գլեբան շագանակագույն է: Կապիլիցիումը կազմված է պարզ կամ թեթևակի ճյուղավորված 3-4 մկմ լայնությամբ թելիկներից: Սպորները 4-6 մկմ, գնդաձև, գորտնուկավոր, շագանակագույն:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/: Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Սևան» ազգային պարկ, Արտանիշ թերակղզու տարածք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է ավազոտ հողերի վրա, ալպիական գոտում, փշատերև անտառներում, 1800-2000 մ բարձրություններում, օգոստոս ամսին: Պսամոտրոֆ է: Թերմոֆիլ տեսակ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, ապրելավայրերի կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Սևան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ: Ընդգրկված է մակրոմիցետների ցուցակի մեջ, որոնք երաշխավորված են հաստատվելու Բեռնի կոնվենցիայի կողմից:

Կարգ Phallales, ընտանիք Phallaceae

**29. Phallus impudicus L. : Pers.**

Հոմանիշ՝ *Ithyphallus impudicus* (L. : Pers.) E.E. Fisher

Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ, Веселка обыкновенная, сморчок вониючий



**Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Երիտասարդ փակ պտղամարմինները 3-4 սմ տրամագծով, սպիտակ, ձվաձև, օվալաձև, երբեմն գնդաձև: Հասունացած պտղամարմինները խոշոր են, մինչև 30 սմ երկարությամբ: Պերիդիումը եռաշերտ է՝ արտաքին և ներքին շերտերը փառանման, հարթ, միջին շերտը՝ դոնդողանման: Պերիդիումը պատռվում է 2-4 մասերի՝ բլթակների, որոնք պահպանվում են պտղամարմնի հիմքում բաժականման պատյանի /վուլվա/ տեսքով: Ռեցեսսիվ ստրուկտուր է պերիդիումին սպիտակ միջեղիակ ձգանով, կազմված է գլանաձև, 15-20 x 2-4 սմ երկարությամբ ոտիկից, սպիտակ է, սպունգանման, սնամեջ, քարանձավանման կառուցվածքով:

Գլխիկը առաջացնում է զանգակաձև գլխարկ, պատված լորձնային, ձիթապտղագույն, երբեմն սպիտակ, փառակալած գլեբայով: Ունի սուր տհաճ հոտ: Սպորները 3-5,5 x 2-2,8 մկմ, բաց դեղնավուն, գլանաձև, էլիպսաձև, ընկղմված լորձի մեջ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/: Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Ծաղկունյաց լեռնաշղթա, Լոռու ֆլորիստիկական շրջանում՝ Ստեփանավանի շրջակայք:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հողի վրա, լայնատերև անտառներում, փոքր խմբերով, 1200-1960 մ բարձրություններում, հունիս-հոկտեմբեր ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է: Ուտելի է երիտասարդ վիճակում, երբ պտղամարմինը ձվաձև է: Ժողովրդական բժշկության մեջ երիտասարդ պտղամարմինների դոնդողանման զանգվածն օգտագործվում է որպես դեղամիջոց և կոչվում է «հողային յուղ»:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Ապրելավայրերի կորուստը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Tricholomatales, ընտանիք Pleurotaceae

### 30. *Phyllotopsis nidulans* (Pers.: Fr.) Singer

Հոմանիշ՝ *Crepidotus nidulans* (Fr.) Quél.

Ֆիլոտոպսիս բնավորվող, Филлотопсис гнездящийся



#### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 3-10 սմ տրամագծով, թարմ վիճակում բոտրավարդագույն կամ մարնջադեղին, չորացած՝ դեղնաշագանակագույն, տափակ կամ ուռուցիկ, թավշյա: Պտղամիսը թույլ վարդագույն, դեղնավուն, զաֆրանադեղին, չորացած վիճակում սպիտակ, տիպիկ հոտով: Թիթեղները գլխարկի գույնից ավելի վառ: Ոտիկը բացակայում է: Սպորափոշին բաց գորշավուն է: Սպորները 5-6 x 2,5-3,5 մկմ, էլիպսաձև կամ լոբաձև, հարթ:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, խմբերով, չորացած ծառերի ոստերի վրա, կաղնու-բոխու անտառներում, 1600 մ բարձրության վրա, հոկտեմբեր ամսին: Քսիլոտրոֆ է: Պտղամարմիններն ուտելի են:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Սահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Tricholomatales, ընտանիք Pleurotaceae

### 31. *Pleurotus eryngii* (DC. : Fr.) Quel.

Հոմանիշ՝ *P. fuscus* var. *ferulae* Lanzi

Ականջասունկ, կախասունկ տափաստանային, սպիտակ տափաստանային սունկ, կայսերական սունկ, Белый степной гриб, вешенка степная



#### Կարգավիճակը:

Խոցելի (VU – Vulnerable):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 4–15 սմ տրամագծով, սպիտակ, դեղնամոխրագույն, հարթ կամ թեփուկավոր, մալի տափակ կամ ուռուցիկ, թեթևակի կողքային:

Պտղամիսը սպիտակ, ամուր, հաճելի համով և հոտով:

Թիթեղները սպիտակ են՝ վարդագույն երանգով, նոսր և լայն, իջնում են ոտիկի վրա:

Ոտիկը 3–5 x 1–2 սմ, սպիտակավուն է, ամուր, ապակենտրոն, երբեմն կողքային:

Սպորափոշին սպիտակ է:

Սպորները 8–14 x 4–5,5 մկմ, անգույն, իլիկաձև, հարթ:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Կովկաս (Վրաստան, Հայաստան):

Հայաստանում հանդիպում է Ապարանի ֆլորիստիկական շրջանում՝ Արայի լեռան փեշեր, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածք /Գառնիի շրջակայք/:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հայաստանում հանդիպում է հովանոցազգի բույսերի (*Eryngium*՝ երնջնակ, *Ferula*՝ նարդես) արմատների կամ մահացած ցողունների վրա, անտառագուրկ վայրերում, ապրիլ-մայիս ամիսներին, 1300–1800 մ բարձրություններում: Հերբոտրոֆ է, մակարոյծ: Քիչ տարածված ուտելի սունկ, արհեստականորեն աճեցվում է որոշ երկրներում քիչ քանակությամբ:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Աճելավայրերի վրա ազդող մարդածին գործոնը, համապատասխան բիոտոպերի վերացումը: Սնկատեսակի անկանոն հավաքը բնակչության կողմից:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ և նոր աճելավայրերի հայտնաբերում: Հնարավոր է սնկի միջելիալ կուլտուրայի ստացումը և արհեստական աճեցումը:

Կարգ Podaxales, ընտանիք Podaxaceae

**32. Podaxis pistillaris (L. : Pers.) Morse**

Հոմանիշ՝ *Scleroderma pistillare* (L.) Pers.

Պողսաբսիս վարսանդային , Подаксис пестиковый



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU – Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները մինչև 25 սմ բարձրության: Պերիդիումը 3-6 x 1-3 սմ, ձվաձև կամ էլիպսաձև: Էկզոպերիդիումը թեփուկավոր, հասունանալուց՝ սովորաբար թափվող: Էնդոպերիդիումը բարակ է, արտաքինից սպիտակ և կաշվեգույն, երբեմն ժանգագույն, սկզբում հարթ, փայլուն կամ թելիկավոր, կնճռոտված, հասուն օրինակները՝ պատառոտված:

Ոտիկը 5-7 x 0,2-7 սմ, ծածկված սպիտակ, փխրուն, պարուրաձև ոլորված, արագ ոչնչացող թեփուկներով, հիմքում պալարաձև հաստացած, երբեմն պատյանի /վուլվա/ մնացորդներով, որը կազմված է հիֆերից և ավազի մասնիկներից և իրենից ներկայացնում է պերիդիումի մնացորդները:

Գլեբան երիտասարդ վիճակում սպիտակ է, հասունանալուց հետո՝

կարմրաշագանակագույն:

Կապիլիցիումի հիֆերը ձիթապտղագույն են, կարմրագորշ կամ շագանակագույն, միջնապատերով, լավ զարգացած, թույլ ճյուղավորված:

Սպորափոշին մուգ շագանակագույն: Սպորները 7-16 x 7-12 մկմ, մուգ շագանակագույն են, ձվաձև, էլիպտիդալ կամ գնդաձև, ծլման ծակոտիներով, հարթ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Ասիա, Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Հայաստան/: Ունի լայն տարածում արևադարձային և մերձարևադարձային գոտիներում, տափաստաններում՝ հազվադեպ: Հայաստանում տվյալ տեսակի եզակի օրինակները հայտնաբերված են միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածք: Ըստ հնէաբանական տվյալների կավե դարաշրջանի ռելիկտ է:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հանդիպում է Ժայռոտ վայրերում, ավազների վրա, 1200-1700 մ բարձրության վրա, չորային, շոգ եղանակին, մայիս ամսին: Պսամոտրոֆ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Ուսումնասիրված չեն:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ և նոր աճելավայրերի հայտնաբերում:

Կարգ Tricholomatales, ընտանիք Tricholomataceae

### 33. *Rhodotus palmatus* (Bull.: Fr.) Maire

Հոմանիշ՝ *Crepidotus palmatus* (Fr.) Gill.

Ռոդոտուս քաթաձև, Родотус дланевидный



#### **Կարգավիճակը:**

Վտանգված (EN – Endangered):

#### **Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 4-8 սմ տրամագծով, սկզբում վառ կորալագույն, կարմրավուն, կամ բուտրավարդագույն, կողքային, ներս ծավլած եզրերով, մակերեսը ջրջրոտված կամ պատված դոնդողանման թաղանթով, չորանալուց գունաթափվող, ցանցաձև կնճռոտված:

Պտղամիսը վարդագույն, ծիրանի հաճելի հոտով, կծու համով:

Թիթեղները 0,5 սմ լայնությամբ, գլխարկից ավելի վառ գունավորված, հաստափոր, ազատ կամ ոտիկին կալած:

Ոտիկը 1-5 x 0,5-1,5 սմ, վարդագույն երանգով, ծռված, կողքային, երբեմն կենտրոնական, վերևում ալրանման, ներքևում՝ գլավոր:

Սպորափոշին վարդագույն: Սպորները 5-8 մկմ, բաց վարդագույն կամ դեղնավարդագույն, կիսագնդաձև:

#### **Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ:

#### **Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, լայնատերև ծառատեսակների բնափայտի վրա, կաղնու-բոխու անտառում, 1700 մ բարձրության վրա, հոկտեմբեր ամսին: Քսիլոտրոֆ է:

#### **Վտանգման հիմնական գործոնները:**

Չկարգավորվող անտառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

#### **Բնապահպանական միջոցառումներ:**

Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ և նոր աճելավայրերի հայտնաբերում: Հնարավոր է սնկի միցելիալ կուլտուրայի ստացումը և պահպանումը հավաքածուներում:

Կարգ Pezizales, ընտանիք Sarcosomataceae

**34. Sarcosoma globosum (Schmidel : Fr.) Casp.**

Մարկոսոմա գնդաձև, Саркосома шарообразная



**Կարգավիճակը:**

Կրիտիկական վիճակում գտնվող (CR - Critically Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինը 3-12 սմ տրամագծով, թարմ վիճակում գնդաձև, թասաձև, բարակ եզրերով, մակերեսը մուգ գորշագույն, փայլուն, թեթևակի կնճռոտված: Հիմենիումը սևգորշավուն է: Խոնավ վիճակում պտղամարմինն անգույն է, ջրջրոտված, դոնդողանման պարունակությամբ: Երբեմն քաշը հասնում է մի քանի հարյուր գրամի, չորանալուց հետո ստանում է տափակ տեսք:

Սպորները 20-28 x 7-10 մկմ, անգույն, էլիպսաձև:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Սևան» ազգային պարկ:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, ավազոտ հողերի վրա, արոսենու /Sorbus sp./ տակ, լայնատերև անտառում, ավազուտներում, կիսաանապատներում, 1850-2000 մ բարձրության վրա, հունիս ամսին: Պսամոտրոֆ է:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Մահմանափակ տարածվածությունը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, արոտավայրերի ընդլայնումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Ընդգրկված է մակրոմիցետների ցուցակի մեջ, որոնք երաշխավորված են հաստատվելու Բերնի կոնվենցիայի կողմից:

Հայաստանում պահպանվում է «Սևան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել տեսակին բնորոշ ապրելավայրերի մոնիթորինգ:





Կարգ Boletales, ընտանիք Boletaceae

### 36. *Suillus grevillei* (Klotzsch) Singer

Հոմանիշ՝ *Boletus elegans* Fr.

Յուղասունկ կվենու, Масленок лиственничный



#### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 3-14 սմ տրամագծով, գորշավուն, աղյուսագույն, դեղնակիտրոնագույն կամ ժանգագույն, բարձիկաձև, սկզբում ուռուցիկ, հետո տափակ, լայն թմբիկով, լորձնային, ծածկոցի մնացորդներով, որը հասնում է մինչև կրկնակի օղակը: Օղակի ներքին մասը լորձնային է, իսկ արտաքինը՝ փառանման, հաստ:

Պտղամիսը գլխարկում բաց դեղին, ոսիկում՝ կիտրոնագույն, սնկի հաճելի հոտով և համով: Խողովակները նեղ են, դեղնավուն, կաշեյիս դառնում են մոխրագույն:

Ոսիկը 6-10 x 1,5-3 սմ, դեղին, օղակից վերև սպիտակ գույնի, օղակից ներքև՝ դարչնագույն, հատիկավոր:

Մպորավոշին դեղնաշագանակագույն է:

Մպորները 9-15 8-12x 7-12 մկմ, էլիպսաձև, հարթ:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Հայաստան/: Եվրոպայի մի շարք երկրներում ունի լայն տարածում, սակայն Հայաստանում հանդիպում է հազվադեպ, հայտնաբերված է Լոռու ֆլորիստիկական շրջանում՝ «Գյուլագարակի սոճու» պետական արգելավայրի տարածք:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հայաստանում հանդիպում է եզակի առանձնյակներով, հողի վրա, փշատերև անտառներում, 1200-1400 մ բարձրություններում, օգոստոս ամսին: Միկորիզագոյացնող է, համակեցության մեջ է մտնում հիմնականում կվենու (*Larix* sp.) հետ: Համեղ, ուտելի սունկ է:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Սահմանափակ տարածվածությունը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը: Անկանոն սնկահավաքը բնակչության կողմից:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Պահպանվում է «Գյուլագարակի սոճու» պետական արգելավայրի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է արգելել սնկի հավաքը:

Կարգ Boletales, ընտանիք Boletaceae

**37. *S. punctipes* (Peck) Singer**

Հոմանիշ՝ *Ixocomus punctipes* (Peck) Singer

Յուղասունկ մայրու, Масленок кедровый, точечноножковый



**Կարգավիճակը:**

Կրիտիկական վիճակում գտնվող (CR - Critically Endangered):

**Համառոտ նկարագրությունը:**

Գլխարկը 9-12 սմ տրամագծով, դեղնագորշավուն, լորձնային, բարձիկաձև, սկզբում ուռուցիկ հետո տափակ, երիտասարդ պտղամարմինների մոտ ծավաժ եզրերով, հասունանալուց հետո՝ եզրերը բլթակավոր:

Պտղամիսը դեղնաձիթապտղավարդագույն: Խողովակները դեղնաձիթապտղագորշավուն, երիտասարդ պտղամարմինների մոտ նեղ, հասունանալիս մինչև 2 մմ լայնությամբ: Ոտիկը 6-8 x 1-2,5 սմ, վերևում՝ դեղին, անգույն գորտնուկներով, հիմքային մասում կեղտոտ վարդագույն թաղիքե միցելիումով: Սպորափոշին դեղնավուն: Սպորները 10 x 3,5 մկմ, էլիպսաձև, հարթ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Հայաստան/: Հայաստանում հայտնաբերված է Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ քաղաք Երևան, Նորքի անտառ:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հողի վրա, փշատերև անտառում, 1000 մ բարձրությունում, օգոստոս ամսին: Միկրոբիզագոյացնող է: Ուտելի:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Մահմանափակ տարածվածությունը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների ոչնչացումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Tuberales, ընտանիք Tuberaceae

### 38. *Tuber aestivum* Vitt.

Գետնասունկ ամառային, ուտելի, Трюфель летний, съедобный



#### **Կարգավիճակը:**

Տվյալներն անբավարար են (DD - Data Deficient):

#### **Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները 2,5-10 սմ տրամագծով, շագանակագույն, ձիթապտղագույն, սև, գնդաձև կամ պալարաձև, մսալի, պատված խոշոր բրգաձև թեփուկներով 2-10 մմ տրամագծով: Պտղամիսը սպիտակ, դեղնավուն կամ մոխրագույն, սպիտակավուն, ոլորուն, մարմարանման երակագծերով, սնկի թույլ, հաճելի հոտով: Սպորափոշին մուգ շագանակագույն է: Պայուսակները պարունակում են 8 սպոր, գտնվում են պտղամարմնի ներսում, 50-65 x 60-70 մկմ, էլիպսաձև: Սպորները 24-45 x 15-30 մկմ, էլիպսաձև, ցանցաձև թաղանթով:

#### **Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/:

Մեծ քանակությամբ աճում է Ֆրանսիայում և Իտալիայում, սակայն Հայաստանում գտնվել է միայն մեկ անգամ եզակի առանձնյակներով Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Դիլիջան քաղաքի շրջակայք:

#### **Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է եզակի առանձնյակներով, հողի տակ, լայնատերև և խառը անտառներում, 1400-1800 մ բարձրություններում, սեպտեմբեր ամսին: Միկոռիզագոյացնող սունկ է, համակեցության մեջ է մտնում հիմնականում կաղնու, բոխու և հաճարենու հետ: Համեղ, արժեքավոր ուտելի տեսակ է:

#### **Վտանգման հիմնական գործոնները:**

Սահմանափակ տարածվածությունը, ապրելավայրերի կորուստը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

#### **Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ հայտնաբերված պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգի և նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:

Կարգ Pezizales, ընտանիք Morcellaceae

**39. *Verpa conica* Sw. : Pers.**

Հոմանիշ՝ *Verpa helvelloides* Krombh.

Վերպա կոնաձև, Верпа коническая



**Կարգավիճակը:**

Խոցելի (VU – Vulnerable):

**Համառոտ նկարագրությունը:**

Պտղամարմինները մինչև 10 սմ բարձրության, ուղիղ: Գլխարկը 1-3 x 1-1,5 սմ, վերևից բաց շագանակագույն, ներքևից սպիտակ, մատնոցանման, զանգակաձև կամ ձվաձև, թույլ ալիքավոր կամ ծալքավոր, ազատ եզրերով:

Պտղամիսը բարակ, մոմանման, առանց յուրահատուկ համի և հոտի: Ուղիկը 5-10 x 1-1,5 սմ, սպիտակավուն, բաց դեղնավուն, ալրանման փառով, շատ փխրուն: Պայուսակները գլանաձև, պարունակում են 8 սպոր: Պարաֆիզները մինչև 10 մկմ, շագանակագույն, թելանման, գազաթնային մասում լայնացած:

Սպորները 20-25 x 12-18 մկմ, անգույն, կլորավուն կամ էլիպսաձև, հարթ:

**Տարածվածությունը:**

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոց, Չանգեգուրի ֆլորիստիկական շրջանում:

**Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:**

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հողի վրա, լայնատերև անտառներում, 1300-1900 մ բարձրություններում, մայիս-հունիս ամիսներին: Հումուսային սապրոտրոֆ է: Պտղամարմինները պայմանականորեն ուտելի են:

**Վտանգման հիմնական գործոնները:**

Էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

**Բնապահպանական միջոցառումներ:**

Հայաստանում պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել տեսակին բնորոշ ապրելավայրերի մոնիթորինգ և նոր աճելավայրերի հայտնաբերում:

Կարգ Amanitales, ընտանիք Pluteaceae

#### 40. *Volvariella bombycina* (Schaeff. : Fr.) Singer

Վոլվարիելա մետաքսանման, Вольвариелла шелковистая



#### Կարգավիճակը:

Վտանգված (EN – Endangered):

#### Համառոտ նկարագրությունը:

Գլխարկը 7-25 սմ տրամագծով, սպիտակ, դեղնավուն, դեղնակաթնագույն, բաց դեղնակիտրոնագույն, սկզբում գնդաձև, հետո զանգակաձև կամ կիսափուլած, թմբիկով, չոր, մետաքսանման, թույլ թեփուկավոր, կենտրոնում՝ հարթ: Պտղամիսը սպիտակ է, ավտոօքսիդացիայի դեպքում թեթևակի դեղնում է, սնկի հաճելի համով, առանց յուրահատուկ հոտի: Թիթեղները սպիտակ են, հետո վարդագույն, խիտ դասավորված, բարակ, մեջտեղում հաստացած: Ուտիկը 8-25 x 1,5-2,5 սմ, սպիտակ, կենտրոնական, երբեմն ծոված, հարթ, հիմքային մասում ուռուցիկ, լայն ընդհանուր ծածկոցի մնացորդներով՝ պատյանով /վոլվա/: Վոլվան մինչև 5 սմ բարձրության, սպիտակավուն, արտաքինից գորշավուն, լայն, ազատ, բլթակաձև եզրերով: Սպորափոշին վարդագույն է: Սպորները 7-10 x 5-6 մկմ, բաց վարդագույն, էլիպսաձև, ձվաձև, հարթ:

#### Տարածվածությունը:

Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Ադրբեջան, Վրաստան, Հայաստան/:

Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ բուսաբանական այգու տարածք:

#### Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները:

Հայաստանում հանդիպում է հազվադեպ, խմբերով, կենդանի և մահացած լայնատերև ծառատեսակների /հիմնականում բարդիների, ուռենիների և հաճարենիների/ բների, փչակների վրա, լայնատերև անտառներում, 1100-1450 մ բարձրությունների վրա, հունիս-սեպտեմբեր ամիսներին: Քսիլոտրոֆ է: Պտղամարմիններն ուտելի են: Պատկանում է դեկորատիվ սնկատեսակներին:

#### Վտանգման հիմնական գործոնները:

Ապրելավայրերի կորուստը, էկոհամակարգերի դեգրադացումը և քայքայումը, չկարգավորվող ծառահատումների արդյունքում անտառային տարածքների կրճատումը:

#### Բնապահպանական միջոցառումներ:

Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում: Անհրաժեշտ է իրականացնել հայտնի պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ և նոր աճելավայրերի հայտնաբերում: Հնարավոր է միջելիալ կուլտուրաները պահպանել հավաքածուներում: